39.1/49
C 28

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ԳԱԼՍՏԵԱՆԻ № 70

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ԳՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

Յարմարեցրած իմ «Ռուսահայ գրականութեան պատմութեան»

ԹԻՖԼԻՍ
Էլէկտրատպարան որ. Ն. Աղանեանցի, Պոլից. 7
1912

891.9909
Л-28

Գ. ԳԱԼՍՏԵԱՆԻ
ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ-ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Պոմպէյի վերջին օրերը, Յ. Միրզայեանի . — 50
2. Ասպետ, Վ. Փափազեանի . . . — 15
3. Կեանքը ծովերի խորքում. 50 պատկերով Լուն-կեվիչի, թարգմ. Ստ. Մալխասեանի . — 30
4. Տրիլբի, դրամա 4 ար., թ. Լ. Մելիք-Ադամ . — 25
5. Եաղ-սատ, վոդ. 1 արար. Յ. Ղազարեանի — 25
6. Դարվինիզմ, Դարվինի պատկերով, Ս. Բալա-դեանի. Բ. տպագր. . . . — 50
7. Ազնիւ գող, Ֆ. Մ. Դոստոեվսկու, թ. Ն. Զ. — 10
8. Ինքնավարութիւն և Զեմստվօ, Բէլօկօնսկու. թարգմ. Կ. Ջալալեանի. . . — 15
9. Տնտեսագիտական զրոյցներ. Կարիշեւի թարգմ. Կ. Ջալալեանի. . . . — 40
10. Къ введенію на Кавказѣ Земскаго Самоуправленія, Кн. Г. М. Туманова . — 20
11. Քերականութիւն մայրենի լեզուի, Ա. Բ. և Գ. մաս միասին. Ստ. Պալասանեանի . — 75
12. Ընդհանուր պատմ. Հին-Դար, Վինօգրադո-վի, թարգմ. Գ. Խաժակի. . . 1 —
13. Եւրոպա և Հայաստան, Ամֆիտէատրովի թարգմ. Ա. Մխիթարեանի . . 1 —
14. Փուչ զաւակ, դրամա 5 գործ. Գ. Ղարաջեանի. — 50
15. Արիւնի աւետարանը, թարգմ. Տ. Զաւէնի — 25
16. 18. Գծագրութեան օրինակներ, Գ. Լեոնեանի Ա. մաս. 20 կ. Բ. մաս. 20 կ. և Գ մաս. . — 35
19. Դասագիրք ընդհանուր աշխարհագրութեան, քաղաքական մաս, կազմեց Լ. Բաբայեան. — 65
20. Начальная книжка для армян. школъ. С. Мандиняна. . . . . — 55
21. Կաաւյան Հենչել, թարգմ. Լ. Բաբայեան. — 50
22. Հող և նրա մշակութիւնը, Գ. Ղազարեանի. — 25
23. Դասագիրք ընդհանուր աշխարհագրութեան, Եւրոպա. կազմեց Լ. Բաբայեան . . — 50
24. Սերմ և ցանք, Գ. Ղազարեանի. . . — 20
25. Գիքորը, պատկերազարդ մանկական գրքոյկ Յով. Թումանեանցի . . . — 20

- 6 NOV 2011

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ԳԱԼՍՏԵԱՆԻ № 70

80
391.99.09
Մ-27
կ.

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ԳՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

Յարմարեցրած իմ «Ռուսահայ գրականութեան պատմութեան»

ԹԻՖԼԻՍ
Էլէկտրատպարան օր. Ն. Աղանեանցի, Պօլից. 7
1912

2 4 JUN 2013
64.451
4560
39

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Քանի որ իմ «Ռուսահայ գրականութեան պատմութիւնը» ընդունուած է ուսումնարաններում, իբրև ձեռնարկ, և գրականութեան պատմութիւնը հասնում է իր նպատակին այն ժամանակ, երբ զուգընթացաբար կարդացւում և վերլուծւում են մատնացոյց արուած հեղինակութիւնները, ուստի անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ մի այդպիսի ձեռնարկ։ Այդ պահանջն է, որ ինձ դրդեց ձեռնարկելու մի այսպիսի աշխատութեան։ Իմ կազմած դասագիրքը յարմարեցրուած է իմ «Ռուսահայ գրականութեան պատմութեան»։

Հեղինակ

ԱԼԱՄԴԱՐԵԱՆ

ՅԵՐԿՈՒ ՁԵՌԻՆ ԵՐԿՈՒ ՄՈՄ*)

Յերկու ձեռին երկու մոմ՝
Ինձ ընդ առաջ եկ յիւր տուն.
Մի՛ հարցանէք ո՛վ էր նա,
Հրեշտա՞կ, թէ կոյս լուսադէմ։

Ամօթն գնա վարդ արար,
Ես հիացեալ դարձայ քար.
Այն ի՞նչ օր էր և ի՞նչ ժամ,
Յորում տեսի ես կեանք նոր։

Լիաճրագ յայնմիկ տան՝
Ի մարդաշատ բազմութեան,
Ի մէջ աղջկանց և հարսանց
Յատին կայր ոմն անդ յանկեան։

Այն օրիորդն էր պարկեշտ
Ինձ պատահեալ առ դրամբ տան.
Զոգիս գրաւեաց յիւր ի սէր,
Ի նմա տեսի ես կեանք նոր։

---

*) Եթէ աշակերտները գրաբար չըգիտեն, ուսուցիչը պարտաւոր է թարգմանել աշխարհաբար լեզւով։ Լ. Մ.

Մարգարտափայլ մարմինն էր,
Հասակն էր յոյժ վայելուչ.
Զոտիւքն իւր վարսք քարշ կային,
Ի գոյն քրքմոյ փայլէին։

Դիմացն չքեղ երևոյթ
Յօնից, աչաց, այտից գեղ,
Շրթանց լեզւին համ անոյշ՝
Խոստանային ինձ կեանք նոր։

Ա՜խ, ասացի, թմրեցայ,
Սիրտս սկսաւ դողդողալ.
Զաշխարհ համայն մոռացայ
Ի գեղ կուսին ապշեցայ։

Բամբ կոչելոցն յայն հանդէս
Ընդ իմ մեծ բախտ ոխային.
Զի մերձաւորք այն կուսին
Փեսայ զանձն իմ ձայնէին։

Եթէ զաշխարհ լի գանձուք
Ինձ ոք բաշխէր ի պարգև՝
Ոչ տեսանէր այնքան բախ՝
Որքան ի գոլս առ կուսին։

Արդեօք գուցէ յաշխարհի
Սիրոյ նման իր հզօր.
Սէրն ի ձեռաց Արարչին
Մեզ մահացուացս է ձիր նոր։

Հարցեր՝

Ո՞ր տողերի մէջ է նկարագրուած կոյսի հոգեկան և մարմնական գեղեցկութիւնը։

Ի՞նչպէս է ազդում կոյսի սէրը բանաստեղծի վրա։

ՈՂՋՈՅՆ ՀՐԱԺԵՇՏԻ ԶԱՒԱԿԱՑ ԻՄՈՑ·

Հայր

Հօր համայն որբոց, Փրկչին Քրիստոսի,
Յանձն առնեմ զձեզ՝ դստերք նազելի,
Սուրբ աջոյ նորա անտես հովանի
Ի գլխոց ձերոց մի՛ պակասեսցի։

Երթամ ես յաշխարհ ի ձէնջ յոյժ հեռի,
Երթամ որոնել զայն, զոր կորուսի.
Արտասուօք, ողբովք՝ ձայնիւ սրգալի
Խնդրեցից զնա յամենայն երկրի։

Մարիամ

Զի՞նչ խօսիս, հայրի՛կ, զի՞նչ դու կորուսեր,
Եւ զի՞նչ գտանել յանծանօթ երկիր
Կամիս, ասա մեզ, մի՛ թագուցաներ,
Տա՛ր և զմեզ ընդ քեզ, հա՛յր, մի՛ արտասուեր։

Աննա

Հայր մեր, ես գիտեմ, ըզմայր մեր ողբաս,
Զմահ նորա յիշեալ մորմոքիս, սրգաս.
Ե՞րբ սա մոռասցիս զանուն, զկերպ նորա,
Ե՞րբ հանգիստ տեսցուք մեք զհոգիս սորա։

Կատարինէ

Մի՛ արտասուեր, հայր, մի՛ սգար, ողբար,
Արտասուք զքեզ մաշեցին իսպառ.
Զիս ո՞ սիրեսցէ՝ զԿատեայս քո թշուառ՝
Թէ զքեզ Տէր տարցէ յիւր երկնից գաւառ։

Հարցեր՝

Ի՞նչ խորհուրդ կայ հօր խօսքերի մէջ։

Ի՞նչ է ասում իւրաքանչիւր աղջիկը։

ԳԱՐՈՒՆ

Յամսավերջն ապրիլի զպատուհանս բացի,
Ձձիւնաթաղ դաշտորայս ծաղկազարդ տեսի.
Արտասուք եռանդունք զայտս իմ այրեցին,
Զիմ անդարձ գերութիւն յուշն ի մուտ ածին։

Լեղւապէս դառնացան քիմք վհատ հոգւոյս,
Զմրեցան զգայարանքս, հատան ելք շնչոյս։
Ափսո՜ս ինձ, ասացի, բիւր անգամ յայն օր
Շատ անէծս թափեցի ի ծննդեանս վատ օր։

Մաշեցայ, թօշնեցայ, մտի խոր ի քուն,
Զչար կսկիծ հէգ այրւոյս արկի ծով յանհուն։
Դշխոյ մեծ անմահից էջ ինձ յայց տեսլեամբ,
Որպէս թէ ի փոսոյ զիս ելոյզ ձեռամբ։

Աներկմիտ մօտ մատեայ ի համբոյր ոտին,
Գերբնապէս սքանչելեօք զիս ազատողին.
Բամբ ձայնեղ թռչնակաց ճոխ դայլայլեցին,
Կենսածին Տիրամօրն փառս վերերգեցին։

Երանի՜ ասացէք կարմրաճայտ վարդիս,
Քաջալերս տո՛ւք նմա ի գով պաշտպանիս.
Աւա՜ղ ինձ, նեղսիրտ կարճամիտ լալոյս,
Զիմա՞րդ զիս կարծեցի կորուսեալ անյոյս։

Նախատինք իմ նեղչաց՝ նետ եղեն ինքեանց,
Նանրացան դաւք նոցա, անկան յիւրեանց ցանց.
Ցաւագնեալք, օրհնեցէք զանուն Տեառն յաւէտ,
Դիք զյոյս ձեր յօգնութիւն Խաչին փրկաւէտ։

Հարցեր՝

Ի՞նչ բառերով է նկարագրուած գարունը։
Ինչո՞ւ գարնան գալով բանաստեղծը արտասւում է։

ԹԱՂԻԱԴԵԱՆ

ԹԱՂԻԱԴԵԱՆԻ ՈՂՋՈՅՆԸ ՆՇԱՆԱԾԻՆ

«Սիրելի՛ Սիրվարդ իմ, բարով ողջանաս,
Թանգում օրիորդին դիտանի (այց) գրնամ,
Շատ կարօտ բարև տաս և հասկանաս,
Թէ ե՞րբ այ իր կամքն, որ իրար տեսնենք։
Ես քանի օր այ դոր (դրան) ակար տեսայ,
Սիրտս գնաց հետը, միտքս մոլոր այ.
Թէ Աստուած կսիրես, երբ տեսնես, ասա,
Որ թէ հաճենայ, իրար հետ խօսենք։
Թէ որ ինքը թանգ այ. ես էլ չեմ էժան.
Այլոց չըհաւատայ, բոլորն էլ գիժ ան.
Ինքն իմն այ, ես իւրն մինչև յաւիտեան,
Թէ կամենայ, որ իրար հետ ապրենք։
Ասա, ափսոս որ կարդալ չես գիտում,
Սիրածիդ գրածն սրտում չես գրում.
Քեզ համար պատրաստ է ազնիւ գիտութիւն,
Եթէ շուտ կամենաս իրար գտանենք,
Հայիֆ օր ջահիլ այ, ինքն սիրում չի,
Միշտ սիրել ուզում այ, ինքն սիրում չի,
Բայց և լաւ սիրելոյ կերպն կը սովրի,
Եթէ որ ցանկանայ իրար հետ ընենք»։

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆՑԻՆԵՐԻՆ

Աստուածասէր և ազգասէր հասարակութեան հայոց փրկեալ քաղաքին Երևանայ, սրբակրօն քահանայից, բարեծնունդ իշխանաց և համայն բարեպաշտօն ժողովրդոց, որդիապարտ սիրոյ Նուէր։

Աչքներդ լոյս, որ մեր քաղցր աշխարհքն Պարսից դառն չարչարանքիցն ազատուեց, Քրիստոնեի տէրութեան ներքոյ ընկաւ։ Փառք բարերարին Աստուծոյ, որ այսուհետև աւել նեղութիւն չէք ունենալու, ազատ քաղաքի քաղաքացի պիտի անուանիք, ձեր ազգասիրութեան՝ իմաստութեան լոյսն և արևատեց յառաջադիմութիւնն բոլոր աշխարհ պիտի տարածուին։

Իմ լաւ քաղաքացիք, էնպէս երջանիկ բախտի որ դուք էք պատահել, կարծեմ որ մեր նախնիքն ևս Արշակունի թագաւորութեան ժամանակումն էլ չէին պատահել, թէպէտ և թագաւորութիւնն իւրանցն էր, սակայն բարբարոսութիւն և զուլումն պակաս չէր։ Ուրեմն աղաչեմ, նախ՝ աղօթքս անէք, որ Աստուած ամենաողորմած Կայսերն Նիկողայոսի աթոռն միշտ հաստատ պահի, սուրն կտրուկ և ամեն թշնամեաց վրա յաղթող։ Ապա՝ աղաչեցէք, որ նոյն Աստուածն մեր ազգին սէր, միաբանութիւն տայ, երկար կեանք և բարի յաջողութիւն, որ կարենան ճանաչել՝ թէ ինչ է լաւն և հետևիլ նմին։

Մնաց, որ ես ծառայս ձեր թւին 1823-ումն սրբազնակատար կաթողիկոսի հրամանաւն Հաղբատիցն ելայ, շատ չարչարանքով հասի Հնդստան, մին տարի պարապ դէս ու դէն ընկայ, երկրորդ տարումն

Կալկաթու Հայոց վարժարանումն վարպետութիւն արի. յետոյ սուրբ Երուսաղէմի նուիրակ Աբրահամ վարդապետի շնորհովն ծանօթացայ Ինգլիզի եպիսկոպոսին, որոյ անունն էր "Ռիջինալդ Հիբըր". մին խիստ լաւ և ողորմած կարգաւոր, որ իւր խարճովն տուեց ինձ իւրեանց մեծ վարժատունն, և ես ներկայ Աստուծոյ ողորմութեամբ սովորում եմ լատինի, ինգլիզի, յունաց և պարսից լեզուն և այլ զանազան արհեստանի։ Վերջապէս, երբ որ լսեցի ներկայ մեր աշխարհի ազատութիւնն, սիրտս ուրախութեամբ վառւեց, ֆըռանգ ազգաց լուսաւորութիւնն տեսնելով, նախանձ մեծ ընկաւ հոգիս, և թէպէտ ես ոչ շատ փողատէր վարդապետ եմ և ոչ վաճառական, ոչ կարգ ունիմ, ոչ աստիճան, սակայն Աստուած՝ որ միշտ տկարաց ձեռքովն մեծ-մեծ բաներ այ կատարել, վստահացնում այ ինձ իմ կարեաց գեօրայ իմ ազգիս, իմ քաղաքիս և իմ ծնող աշխարհիս պիտանի լինեմ ձեր շնորհքովն։ Բայց այս իմ պիտանութիւնս ուրիշ կերպով չէ լինելու, եթէ ոչ վարժատուն հաստատէք և մեր երեխայից միտքն լուսաւորէք։

Եւ մին խնդիր գրեցի Վրաստանու Ներսէս արքեպիսկոպոսին թէ՝ որովհետև Զօրագեղի մօտի անապատն քաղաքի մէջտեղն լինելով, այսինքն Շհարի, Կոնդի և Զօրագեղի միջումն, հեշտ կլինի մանկանց համար յամէն տեղաց հաւաքուիլ անդ վասն կարդալու և որովհետև բերթին, բազարին ու գետին մօտ այ, շատ յարմար եմ համարում, որ տեղն մին քաղաքական վարժատուն հաստատուի մեր ազգի լուսաւորութեան համար և Երևանայ առաջնորդի աթոռն փոխուի, տանուի Կոզեռի մօտ սուրբ Զինաւոր եկեղեցին։ Նաև գրել եմ, որ եթէ սրբազանը հաճենայ շնորհել մեզ

էն տեղն, ուրեմն գրի ինձ, որ ես տեղից զանազան ազգի կարդալու գրքեր և տպարան, որքան իմ աղքատ զօրութիւն կը խոստանայ երբեմն և գամ անձամբ աշխատեմ վասն ձեր որդւոց և եղբարց լուսաւորութեան։

Արդ, իմ ազնիւ քաղաքացիք, խնդրեմ, որ գիրս ձեզ հասնելէն 'ի բաց շնորհ արէք շհարցիք, կոնդեցիք, կարբեցիք և ձորագետցիքդ հաւաքուիլ նոյն անապատումն, յառաջ սուրբ քահանայից խնդրել, որ աղօթք առնեն առ Աստուած վասն բարի յաջողութեան գործոյն, ապա էս իմ աղքատ դրութիւնս կարդացէք, խորհեցէք, եթէ ձեզ ընդունելի լինի իմ առաջադրութիւնս, ուրեմն միաբանութեամբ երկու արզի գրեցէք, մինն սրբազնակատար կաթողիկոսին և միւսն Ներսէս սրբազանին։ Եւ խնդրեցէք, որ էդ տեղն ազգին ընծայ շնորհեն ձեռագրով, մոհրով և ղալալայով։ Եւ երբ Աստուած կատարի ձեր խնդիրքն ի բարին, շուտ ինձ մին գիր գրեցէք, կաթուղիկոսին և սրբազանին գրած թղթերի օրինակքն նորանում փակեցէք, ուղարկեցէք Թաւրիզու ինգլիզի դեսպան Մէկդոնալդ հազաբապետի ձեռքը՝ նա շուտով Կալկաթա կը հասցնի։ Երբ ես ձեր գիրն գտնիմ, կը գամ Աստուծով և էնպէս կը գամ, որ կ'ուրախանաք։

Իմ ազնիւ քաղաքացիք, գիտեմ, որ մեր աշխարհի այսքան երկար ժամանակաց գերութեան տակ մնալն գիտութեան յարգն ոչ կարէ ներկայ լաւապէս ցուցանել ձեզ, բայց յուսամ, որ շուտով կարողանէք ճանաչել։ Գիտութիւնն էն ազնիւ թագուհին այ, որ նախ այ՝ աղքատ հագուստով բաղդաւորաց դուռնն կը դեգերի՝ ամմա՝ թագաւորաց թագին պարծանք ու փառք այ։ Տէրութիւն չկայ, որ էս անտէր գիտութեամբս

կանգնած և պահվում չլինի։ Ռուսաց էդ մեծ կայսրութիւնն, թէ յառաջ քան զսուրբ Պետրոս իւրեանց իմաստասէր թագաւորն ինչ էր և ներկայ ինչ, անյայտ է ձեզ։ Մին երեխայ եթէ գրել կարդալ գիտենայ, էն արուեստանին, որ բազում չարչարանքով վեց կամ եօթն տարումն այ սովորում, մին երկու տարումն կարէ հեշտ ու հանգիստ սովորել, էն սովորած արուեստն հնարքով հեշտացնել և նոր արուեստանի կս հնարել։

Իրաւի, արուեստից անունն յիշելով այնքան եմ ամաչում, որ կարող չեմ ասել, զերա, մեր խեղճ աշխարհքն ինչ մին լաւ արուեստ ունի, ոչինչ։ Եւ արուեստանին, որ չորս հազար տարով յառաջ աշխարհումն կային, ներկայ էլ էտոնք են մեր Հայաստանու արուեստանին և ինչպէս կոպիտ սովորում են, էնպէս էլ կոպիտ սովորցնելով գնում են։ Արուեստ պայծառացնել չեն գիտում, նոր արուեստ գտնել չեն կարում, եթէ լսում են, որ մին տեղ աղջիկ գրել կարդալ այ սովորում, զարմանում են. երբ ինգլիզ կամ ֆռանգ են տեսնում, կարծում են թէ՝ Աստուած է յերկնից իջել ոտներն ամպաթաթախ։ Եւ ինչ է պատճառն, աղաչեմ, եթէ ոչ գիտութիւնից զուրկ մնալն։ Կարծեմ ինձ վրա կը ծիծաղէք, եթէ ասեմ, որ ինգլիզի և ֆռանգի կնանիքն և դստերքն վեց և եօթն լեզուի կարդալ գրել գիտեն, մեծ մեծ գրքեր են շարադրում, տպում, աստղաբարութիւն, ձև, կար, վաճառականութիւն, լաւ սազ ածել, պար գալ և այլն։ Բայց յուսամ, երբ որ ազնուութեան հոգին կը նորոգուի ձեր միջումն և դառն գերութեան քաշութիւնն կը մոռանաք, էն վախտը կիմանաք, թէ ինչ է իմ լացն։ Ա՜խ, իմ լաւ քաղաքացիք, ախ, հոգիս հարայ այ կան-

չում, հին խմորն թողէք, նոր ազգի լուսաւորութեան և պայծառութեան հետևեցէք։

Ամօթ չէ՞ ձեր իշխանազուն որդւոց համար դադարկ քուչէքումն ման գալ կամ մենակ անտաշ գարբնութիւն, խառատութիւն, կառէպանութիւն (այգեպանութիւն) և թթի զուշ քշել սովորել։ Ամօթ չէ՞ ձեր խաթուն դստերաց համար մենակ տուն սրբել սովորել, և մին գնձոտ մինթանա (շրջազգեստ) ձևելու համար դատաքը կոնատակին զնել դուռ ընկնել։ Ո՞ւր է ձեր վեհ հոգին, ո՞ւր է ձեր ազնիւ փառքն, ո՞ւր է ձեր աշխարհի ծանօթացած անունն, կորեա՞ն արդեօք. ո՞չ։ Աստուծոյ յատուկ ողորմութիւնն բացել է ձեր վերա, իմ ազնիւ քաղաքացիք, մի՛ ասէք, թէ ջանք անենք, փող ժողովենք, լաւ ապրենք. մոխիր է մեր փողն, փուչ է մեր կեանքն, անոտի է մեր յոյսն, եթէ չենք ջանալու, որ մեր ազգի երեխայիցն էն լուսաւորութեան դուռն բանալ, որ վազն և միւս օրն կարողանան մարդի միջում մարդ երևիլ։

Պարտ է ուրեմն Աստուծոյ ողորմութիւնն ոտնատակ չտալ, Նորա ձեզ տուած ազատութիւնն անմահ փրկութիւն համարել. ջանալ, որ ձեր խանդաղատ որդիքն կարողանան իմաստութեամբ թուր բանել ընդդէմ թշնամեաց Աստուծոյ և բարերար կայսրի ձերոյ և ձեր աղջիկներին՝ գրիչ, նոքա՝ քաջութիւն առնեն և սոքա նորանց քաջութիւնն գրեն, նոքա դառնան քաջ զօրք և զօրականք, և սոքա քաջ իմաստուն և լաւ տանտիկնայք. և եթէ կարենայ մեր աշխարհն մին անգամ իւր որդիք և դստերքն էսպէս կատարելութեամբ ծաղկած տեսնել, չգիտեմ, ո՞ր մին Փրանգի աշխարհիցն պակաս կը մնայ թէ լուսաւորութեամբ, թէ արւեստով, թէ ազնուութեամբ և թէ երջանկութեամբ։

Ահա էս ա իմ ցանկութիւնս իմ քաղցր աշխարհիս համար. եթէ որ հաճելի կը լինի վերն գրածիս համաձայնիլ և կատարել, ուրեմն հեշտ է, մենք հիմի կը գնենք և Աստուած կը շինի, և ես ուրախ կլինեմ ապրել ձեզ համար՝ և մեռնել ձեզ համար։ Ապա թէ ոչ, էլ ուրիշ չեմ ու չումի պատճառ չունէք և եթէ զանց կառնէք գլխից բռադ անելու համար, առաջի ատենի Քրիստոսի պարտականն դուք էք և դուք պիտի լինէք։ Մնամ ազնուութեան ձերոյ խոնարհ ծառայ Մեսրոպ Դաւթեան Թաղիադեանց։

Ի Կալկաթա նոյ. 1. 1828 թ. Ինգլիզի եպիսկոպոսական ճեմարանում։

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԷՋՄԻԱԾՆԻ

'Ի ժամանակս բարգաւաճութեան Հին Հայաստանի, յորժամ իրաւունք նախագահութեան յիրս հոգեւորականս ազգին, սեպհական իմն էր նոցա, հազիւ կրէին անուն այսպիսի. այլ իբրև թագաւորութիւն բարձաւ 'ի միջոյ, հայրապետք ազգին 'ի շղթայս գերչացն կաշկանդեցան, և ազգն համօրէն ոտնկոխ եղեալ յազգաց օտարաց՝ սփռեցաւ յաշխարհ ամենայն, յայնժամ ծէս եղև զՅունական ի կիր առնուլ ձայն, փոխանակ ընդհանրական հայրապետի Ազգիս Հայոց. ցուցանել թէ՝ հոգևորական գլուխ իցէ նա համօրէն Ազգին՝ վտարանդելոյ 'ի հեռաւոր ծագս աշխարհաց։ Զորք էին կաթուղիկոսունք միոյ ազգի 'ի ժամանակի դառնութեան այսմիկ. Սսայն, Աղթամարայն, Աղւանիցն կամ Գանձասարայ՝ և Վաղարշապատունն։ ԶԱղուանից կաթուղիկոսութիւն եբարձ մեծանուն Ներսէս Արքեպիսկոպոս յառաջնորդել իւրում Հայոց բնակելոցն 'ի Վրաստան։ Սսոյն և Աղթամարայն գոլով մասնաւորք, թողումք. և ստորագրեմք միայն ըզշուք և զարտօնութիւն կաթուղիկոսին Էջմիածնի, որոյ իրօք և արդեամբք գոլով յաջորդ Գրիգոր Լուսաւորչին մերոյ, տիրապէս կոչի կաթուղիկոս Ազգիս։ Հոգևորական իշխանութիւնք նորա, թէ յաւուրս թագաւորութեան մերոյ և թէ զկնի նորա՝ ընդ լծով ծառայութեան Պարսից, Սկիւթացւոց, Սարակինոսաց և Տաճկաց, թէպէտև յամենայնի հարըստահարեալ, յամենայնի կեղեքեալ, և յամենայնի հարուածեալ և վտանգեալ, անխառն կացին և պարզ ի հայեցողութիւնս հոգևորական վիճակի ազգի մերում. մինչև ցհինգերորդ ամն տիրապետութեան Ռուսաց

Արարատեան աշխարհիս։ Յորում տեարակ ինչ, ընդ կեղծեօք բարեկարգութեան Եկեղեցւոյ Հայաստանեայց՝ արձակեալ ի Դրանէ Կայսեր, և տպագրեալ յէջմիածին, այնքան ճշդէ զհոգևորական իրաւունս ցայս վայր 'ի գործ եդեալս ի կաթողիկոսացն Հայաստան աշխարհի, մինչև անյարմար լինելոյ նոցա այնուհետև անուանս կաթողիկոսութեան, թէպէտև պիտակաբար թողանի նոցա։

Յորժամ արտաքս ելանէ կաթուղիկոսն 'ի վանացն Էջմիածնի, զառաջեաւ կրեն նորա երկու 'ի ծայրագոյն վարդապետաց հեծելոց զԽաչվառ և զԳաւազանն հայրապետական։ Զկնի զայ նորա տեղապահն, որ երկրորդ է նորա պատւով, յաջորդ համարեալ Աթոռոյն։ Զկնի նորա Աւագ լուսարար։ Եւ ապա Արքեպիսկոպոսունք, և ի Վարդապետացն՝ պատւականք։ Վաղարշապատ, Օշական, Եղվարդ և Մաստարա գիւղօրէք, գոլով ի վաղնջուց պատկանեալք հայրապետանոցիս, վառեն ընդ յառաջ նորա զհեծեալս ի քաջարշաւ պատանեկաց, որք ի զանազան խաղս ձիավարժութեան իւրեանց սխրալի յօրինեն ոչ միայն զփառս Հայրապետին, այլ և զհին և զքաջարարս նախահարց իւրեանց։

Յաւուրս կիւրակէից կամ հանդիսաւոր տօնախմբութեանց, յորս պարտ է ներկայ լինիլ կաթուղիկոսին, երկոտասան եպիսկոպոսաց շուրջառ ափածեալ զանձամբք՝ զան կանգնին յանդիման Ներսի դրան, և յորժամ ելանէ, խոնարհեցուցեալ նմա զգլուխս իւրեանց, վեց աստի և վեց անտի առաջնորդեալ բերեն զնա յեկեղեցի։ Յամենայն արարս կաթուղիկոսի շքեղագոյն գոլով կարգի ձեռնադրութեան եպիսկոպոսաց և օրհնութեան մեռոնի՝ արժան համարիմ մանրապատում

4560
39

սանրադրութեամբ շարայարել աստանօր, որպէս զի մերազնեայ հետաքննականն տացից խնչերանս. ինչ նախնի մեծափառութեանց ազգին։

Իբրև ամենայն հանդամանօք պատրաստի նախընծայն եպիսկոպոսութեան, հարկանին զանգականին մեծահնչիւն, ժողովին եպիսկոպոսունք, և գնան ածեն յեկեղեցի զհայրապետն սուրբ ըստ վերոյ գրեալ ծիսից։ 'Ի կատարել երեկոյեան պաշտամանցն, հաղորդին ամենեքեան հասարակաց սեղանոյ ընթրեաց։ Ապա հնչի զանգականին, և ամենեքեան յեկեղեցին փութացեալ՝ սկսանին զհսկումն, ուրանօր յետ հանգստեան աղօթից՝ կաթուղիկոսն և ժամօրհնող եպիսկոպոսն, սկսանին սաղմոսել ցհարուստ ժամս, և ապա մեկնին։ Ի վաղիւ ընդ առաւօտն զկնի գիշերային պաշտամանց, յորում ի դիմաց կաթուղիկոսին՝ բաժանին ողորմութիւնք իւրաքանչիւր վիճակի «պաշտօնէից» հարկանի ա երրորդ, ուր գնայ կաթուղիկոսն յեկեղեցի և խոստովանի զմեղս իւր։ Ապա հարկանի բ երրորդ, ուրանօր ամենայն պաշտօնեայք եկեղեցւոյ խմբին անդանօր, և կաթուղիկոսն գնայ յաւանդատուն անդր, զգեստաւորիլ։ Զգեստ կաթուղիկոսին նոյն է ընդ եպիսկոպոսական զգեստուց, կոնքեռոյն և եթ յաւելմամբ, որ է ականակուռ և ոսոնանուխա դիպակի աղիւսաձև, կախեալ զաջոյ ազդերըն նորա։ Ապա բազմի անդ յաթոռ, և ջերմեռանդագոյնք ի ժողովրդենէ մատնեն առ նա, և զժամօցս իւրեանց մատուցանելով՝ աղաչեն յիշել զանձինս իւրեանց և զննջեցելոցն, առաջի անմահ Գառինն Աստուծոյ։ Մինչ նոքա յայսմ, լուսարարք և լուսարարապետ նոցա զուն գործեն յարմարապէս և վայելչագեղ պաճուճել զերկոտասան ոգիս յեպիսկոպոսաց անտի, յաջակող-

ման խորանի եկեղեցւոյն՝ որ յանուն Յովհաննու Կարապետի։ Եւ զինչ չքնաղ տեսարան ոչ տայցէ արդեօք երկոտասան արանց սեազգեստից յանկարծ վերերևիլ այլափոխեալ զոգջեր ի ծայրագոյն փառս մարդկութեան։ Որք շուրջառ, գեմի փորոն շուրջ զանձամբք, բազպանք ի բազուկս նոցա, վակաս յուսս, թագ ի գլուխս, և գաւազան երկագլխեան ականակուռ ի ձեռս, չասացից թէ և սրբազան հպարտութիւն ի դէմս, պնեղանան անդանօր։ Զկնի նոցա զոյգ քահանայից՝ քաջ զարդարեալ և զսկիհ քօղեալ ի ձեռս նոցա։ Զոյգ Աւագ սարկաւագաց՝ տապանակ և բուրվառ ի ձեռս։ Զոյգ կիսասարկաւագաց զուրար զթեօք և բուրվառ ի ձեռս։ Զոյգ երդմնեցուցչաց՝ զաւետարան ի գիրկս, զոյգ ջահընկալաց՝ ջահս լուցեալս ի ձեռս, զոյգ դռնապանաց խուրձ բանալեաց ի ձեռս։ Զոյգ իշխանաց՝ և ապա զոյգ աղքատաց մոմ լուցեալ ի ձեռս իւրեանց և հուսկ ուրեմն՝ նախընծայն եպիսկոպոսութեան միայն շապիկ և շուրջառ զգեցեալ։ Ապա զգեցեալ և կղերիկոսացն դաս իւրաքանչիւր ըստ աստիճանի իւրում, երգեն առ դրան աւանդատան զերգն Խորհուրդ Խորին կոչեցեալ։ Իբրև ելանէ կաթուղիկոսն ի խորանէ անտի, քօղ իմն քառակուսի կալեալ ի չորից դպրաց զչորեցունց անկեանց՝ բերի ընդ յառաջ նորա. որում զհետ գայ ամենայն զարդ և շքեղութիւն խաչվառաց, կերոնացն լուցելոց և բուրվառացն խնկարկողաց և համօրէն ուխտին, որ ամենայն զօրութեամբ սկսանի երգել յայնժամ «Հրաշափառ Աստուած և միշտ բարեխնամող։” Եւ թափօրական հանդիսիւ ածեն զնա ի ձախակողմեան խորան եկեղեցւոյն եօթնաստիճանեայ, որ յանուն սրբոյն Ստեփաննոսի կառուցեալ։ Ուրանօր յետ զնելոյ յիշատակի մարմնոյ և արեան

Տեառն, բանի վարագոյր, բազմի հայրապետն յաթոռն առաքելական, զառաջեաւ որոյ սփռեալ կայ թաւիշ խորանարդ և ի կեդրոնի նորա դրոշեալ արծուի ապարուր, յօրինակ Աւետարանչին Սրբոյ Յովհաննու: Ապա սկսանի խրատականն ընթեռնուլ զթուղթ վկայութեան ընծայելոյն, որ լինի կամ ի թեմական ժողովրդոց նորա և կամ յուխտէ միաբանութեան էջմիածնի. և զհետ յարէ նմին, թէ այս ինչ եկեղեցի խնդրէ զայս ինչ անուն վարդապետ, զի ձեռնադրեսցես զնա ի տեսուչ իւր կամ իւրեանց: Հարցանէ ապա հայրապետն եթէ 1. ի Սուրբ ամուսնութենէ՞ իցէ ծնեալ. 2. Զքարոզ քաղաքավարութիւն քաղաքավարեալ. 3. Ի Սուրբ Գիրս կրթեալ: Որոց ամենայնի զայոն պատասխանելով ի հաստատութիւն բանին՝ յանդիման կացուցանէ և զհամօրէն ուխտ եկեղեցւոյն, զորս և ըստ ակնարկելոյ նորա՝ յառեան վկայութեան կոչէ զոյգ զոյգ՝ ի նոցանէ, յասելն. «Հրամայեցէք, դռնապանք, ապա երկոքին սարկաւագունք հատեալք ընդ ձայնին՝ ընթանան ընդ յառաջ նոցա և երգելով զՍուրբ Աստուածն և բուրվառելով՝ բերեն կացուցանեն զառաջեաւ սեղանոյ նորա և գոչեն.‘‘ Հրամայեա՛, Տէր, օրհնութեամբ ասել.‘‘ և նա կրկնէ. ‘‘Հրամայեալ է ձեզ ի Տեառնէ՝ խօսել:‘‘ Եւ այսպէս մինչև ցեպիսկոպոսունսն՝ որք զան միահաղոյն, կան առաջի նորա և յետ օրհնութեանն, երանեն ի սեղան անդր, և բազմին վեց յաջմէ և վեց յահեկէ հայրապետին: Զկնի նոցա կոչի և նախընծայլն, զոր սարկաւագացն ի ծունկս յառաջ մատուցեալ սակաւիկ մի՝ ասեն. օրհնեա՛, Տէր. և օրհնէ զնա Հայրապետն, միանգամ և երկիցս ցեօթն՝ մինչև գայ նա առ աստիճանս սեղանոյն: Ապա սկսանի հարցանել զմատանց

հաւատոյ և զխորհրդոցն և զկարգաց եկեղեցւոյ, եթէ տեղեակ ի՞նչ իցէ. և ի պատասխանել խրատականն փոխանակ նորա՝ ասէ. որովհետև այդպէս է, ածէք զդա յառաջին կէտն: Ապա հարցանէ. ‘‘Աշակերտե՞ս Առաքելոցն Սրբոց և առաջին լուսաւորչաց մերոց Թադէոսի և Բարդուղիմէոսի Առաքելոց՝ և այլն (թուելով զամենայն հարս եկեղեցւոյ սրբոյ.) և զայոն լսեալ, ասէ. «որովհետև այդպէս է, ածէք զդա յերկրորդ կէտն ց4»: Ապա հարցանէ, նզովե՞ս զԱրիոս և զայլ ամենայն հերձուածողս. և յընդունիլ նորին՝ ասէ. որովհետև այդպէս է, ածէք զդա ի հինգերորդ կէտն. և ի վերջոյ քան զամենայն՝ ածէք զդա ի վերայ արծուոյն. ուր տուեալ նորա զդաւանութիւն հաւատոյ եկեղեցւոյ Հայաստանեայց՝ առնու զձեռնադրութիւն Հայրապետին և երկոտասան եպիսկոպոսաց. և ընկանի պատարագն յաւագ խորանին Աստուածածնի: Ուրանօր մի ոմն յեպիսկոպոսաց անտի եկեալ թափօրական հանդիսիւ և ամենայն ուխտիւք՝ տանի անդր զաղաւնի իւղոյն օրհնութեան, մատուցանէ հայրապետին, և նորա յետ երգոց և շարականաց յառաջ մատուցեալ՝ դնէ զձեռն առաքելական ի վերայ գլխոյ ընծայելոյն, և ասէ. «Առ զհոգի Սուրբ»: Եւ ապա իւղն թափեալ աջով իւրով յափն ձախոյ իւրում, առնու անտի բթաւն աջոյ և օծանէ զճակատ նորա ասելով. օրհնեսցի, օծեսցի և սրբեսցի ճակատ այս անուն եպիսկոպոսիս, անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Եւ յօծեալն անդր հարկանէ բամբակ և ապա խոյր հայրապետական դնի ի գլուխ նորա: Նոյնպէս զաջ նորա, որ ընդ ծկոյթն ապա եդեալ և զմատանին տիրական մածանէ զերկոսին ձեռսն և տայ ի նոսա զգաւա-

զանն իշխանական։ Ապա ողջունեալ զնա՝ դառնայ ի խորհուրդ Մարմնոյ և Արեան Կենարարին, և եպիսկոպոսաց զնոյն արարեալ՝ գնան յաւանդատուն անդր և մերկանան ի փառաց։

ԹԻՖԼԻՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Տփղիս, քաղաք կառուցեալ ի ձորամիջի, ընդ որ Կուր գետ անցանէ ի հիւսիսոյ ընդ հարաւ։ Յարկից է լերանց Ծմինդայ. իսկ յարևելից՝ Հաւլաբարու լերինք։ Ունի բերդս երկու, մի ի Հաւլաբար վիմաշէն և գեղեցիկ, յորում է եկեղեցին Վարդանաշայ՝ դստեր մեծին Վարդանայ մերոյ, որ վասն գողտրութեանն՝ կոչեցաւ Շուշան։ Իսկ միւսն է ի Տափիթաղ՝ մերձ ի ջերմուկս նորա։ Եկեղեցիք ազգիս մերոյ՝ 13, յորոց ի մին՝ վանք անուանեալ՝ ի վերա գետոյն, նստէր Ներսէս Առաջնորդ։ Եկեղեցիք Վրաց և Ռուսաց ութն և պապականացն՝ մի։ Տափիթաղ յարևմտից կայ Կուր գետոյ, ուր են ապարանք կուսակալին, դատարանք Ռուսաց, վաճառանոցն և բազմութիւն տանց Հայոց, զի և անունն հայերէն ցուցանէ զընակչաց զինչութիւն։ 1200 տունք Հայոց են աստ, իսկ Վրացն՝ 400։ — Մերձ առ վանքն մեր կառոյց Ներսէս Արքեպիսկոպոս զներսիսեանն անուանեալ ուսումնարան՝ քառալեզու դպրութեանց. և ծաղկեցոյց ի նմա զուսումնականութիւնն յոյժ յոյժ։ Յառաջ քան Ներսէս, Հայք առհասարակ խօսէին վրացերէն, և չէր՝ որ գիտէր զլեզու ազգին. իսկ յետ գնալոյ նորա անդր և ծաղկեցուցանելոյ զուսումն ազգին՝ նաև Վիրք ուսան խօսել հայերէն։ Հաւլաբար յարևելից կայ Կուր գետոյ, ունի իւր բերդ և վաճառանոց ի բարձրաւանդակին. տունք Հայոց են անդ 175, ըստ մեծի մասին գաղթականք յԱյրարատեան նահանգէ։ — Արտաքոյ սորա է գերեզմանատուն Հայոց, և ի նմա եկեղեցի քարաշէն։

Ի ներքոյ Հաւլաբարայ առ եզերբ Կուրայ՝ է Կուկիա, որոյ բնակիչք են Վիրք և Գերմանացիք, որք և ունին զեկեղեցի գեղեցիկ։

Պատուականագոյնք են ջերմուկք քաղաքիս, երկոքին ևս ստացուածք Հայոց, յորոց մին երևելի և հոյակապ բաղանիք, խմբեալ յամենայն աւուր յամենայն բազմութենէ, մանաւանդ ի գեղուհեաց քաղաքին, առ ի մեծագոյն օգուտ դիմացն գեղեցկութեան՝ անուանի Մէլիքէնց համամ. զի պատկանի Տան Մինիշկարեանց, որ և զմէլիքութեան քաղաքիս զպատիւ ունին ի հնուստ հետէ։

ՎՐԱՑԻՔ ԵՒ ՀԱՅԵՐ

Այս ազգ գերեաց գնելոց համարիմ զամենայն գիւղօրէս Վրաց. և որ առաւել ցաւելին է, նաև ումանք ի հայաբնակացն, որոց տեարքն՝ պարոնք անուանին և տիրուհիք՝ աղջիկ պարոնք։ Պարոնք կամ աղջիկ պարոնք իրաւունս համարին ունել զանձինս, զընտանիս, զորդիս և զստացուածս գիւղականաց իւրեանց՝ իբրև սեպհական ժառանգութիւնս անձանց։ Հանեն զհարսն ի ծոցոյ փեսային և վաճառեն ում և կամիցինն։ Նոյնպէս զորդիս ի ծնողաց հատանեն։ Գերին՝ զոր ինքեանք ճորտ անուանեն, ոչ կարէ քահանայ կամ վանական լինել, եթէ ոչ նախ ազատեսցի դրամովք։ Եթէ պարոն ոք սիրիցէ զկոյս ոք

կամ աղջիկ պարոնն՝ զպատանի ոք ի ճուրաից անտի, չիք ինչ որ խափան արկանէ սիրոյն։ Եթէ ոք զնոյն ցանկութիւն ցանկացեալ և կամիցի գնել կամ վարձել՝ կարէ, եթէ յղփացեալ իցեն կողմանքն, զի չիք ամօթ ազնուականաց աշխարհին՝ կաւատանալ դրամոց։

Օդ տեղւոյն լեռնային է. ուստի մաքուր և առողջարար։ Բնակիչք նորա Հայք և Վիրք առ այլազգիս միահաղոյն Գուրջիս անուանեալ, հռչակաւոր են ի գեղեցկութիւնս մարմնոց իւրեանց. իրանք նոցա նոճօրէն անեալք, հերքն թուխ, աչկունքն արեգակունք, մորթք սպիտակ ու կարմիր, մէջկունքն բարակ, և լեզուք անուշախօսք՝ յօրինեն զնոսա ցանկալիս ամենայն ազգաց. մանաւանդ Պարսից և Օսմանեան Մեծամեծաց. ուստի և ի վտանգի կան միշտ կեանք նոցա, թէ յառաջ քան՝ և թէ զկնի Տէրութեան Ռուսաց։ Վասն զի Լէզգիք, որք առ ոչինչ գրեն զամենայն երկիւղ՝ յափշտակեալ ամի ամի աղջկունս և պատանիս ի նոցանէ՝ կայտառս, տանին վաճառեն մեծագնի ի Թէհրան, ի Կոստանդնուպօլիս և ի շրջակայս նոցա։ Գողտրականք են յոյժ և նազաբնոյթք կանայք նոցա, որք թէպէտև ճարտարք յուսմունս գրոց և ի պէսպէս արուեստս կանացի ձեռակերտաց, սակայն և այնպէս անձնասէրք են յոյժ, գեղոյ իւրեանց անխնայ խնամատարք։ Գրեա՛ թէ յամենայն աւուր ի ջերմուկն լուանին, որ ի սակս խառնուրդս ինչ ունելոյ հանքային բաղադրութեանց՝ մեծապէս օգտէ փափկութեան մարմնոյ և պայծառութեան դիմացս։ Վարշամակ ի գլուխ դնեն և ճակատնոց ասղարուր, զոր աստ կօտ կամ քամբարա կապեն բասպնդաւ. քօղ ի վերուստ ծա-

ւալ ցծունկ արկանելով՝ երեսանին բաց։ Պատմուճան՝ փորանկեալ. և գօտի խնձորակապ զմիջովքն՝ ծայրակախ։

Անապարծք են յոյժ և զարարս դուզնաքեայս իւրեանց գովութեամբ յօդս ամբառնան, զորօրինակ պատահեցաւ ի 1795 յաւուրս արշաւանաց Քէրիմ Խանին՝ Գօզւոյ ուրումն Շաշեանց ասել ցմի ի զօրաց նորա. «նա դուր, նա դուր»։ Այսինքն՝ ի՞նչ է, ի՞նչ է՝ «զոր ցայսվայր գովութեամբ հրատարակեն ի լուր ամենայն մարդկան, յասելն «Բարաքալլա՛ Շաշունց Գօզի, քրդին ասից՝ «նա՛ դուր. նա՛ դուր»։

Բայց առաւել քան զառաւելն զարդասէրք են առհասարակ կանայք և մանկտի նոցա միանգամայն և տուեալ զանձինս արբեցութեան և խրախճանաց։ Իցէ ոք ի նոցանէ ի վերջին կէտ տնանկութեան կամ աղքատութեան, տակաւին ջանայ որով և հնարին յինքեան՝ ունիլ պատրաստ զսար մի ազնիւ զգեստուց, որով պճնին յաւուրս կիւրակէից կամ արքունի պրազնիկաց, որ այսինքն է՝ տօնից և տարեգլխոց յաղթութեանց նոցա. յերամակս յերամակս բաժանին և առեալ իւրեանց գինի, դաւաթ, թմբուկս և զորս միանգամ գտանեն ազգս նուագարանաց՝ ելանեն ի զբօսանս դաշտաց. ուտեն և ըմպեն, խաղան և խնդան, անզգայ յամենայն հոգոց։ Ո՛չ տեսի ես քաղաք ուրախ քան զայս։ Այնքան զուարճաբանք են բնակիչք սորա մինչ ի խնծիղ հեղձուցանել զունկնդիրս բանից իւրեանց։ Փոխանակ ի կիր առնելոյ զերգս Շարականացն Աստուածայնոց ի մարմնաւոր խրախճանս՝ յօրինեալ են առ այն պէսպէս նուագս ծաղրալիս, յորոց մին առ տիկ գինւոյն այսպէս սկսանի։

Ուլ էիր և տիկ դարձար,
Տկահան չարչարեցար.
Հալվաբրի դարի դուսին
Տուինք մշակի ուսին։
Ո՛վ ով սուրբ տկճուր,
Լուլէդ բաց, մեզ ուղուրմիա։

Երգմունք նոցա հասարակօրէն անմեղադոյնք են քան զայլ ամենայն նահանգաց և գաւառացն Հայաստանի, զի են՝ «քու դէդլինումը», «ապրի քոյ մար», «խս ապրիմ» և այլ այսպիսիք։

Տփղիս քաղաք չունի բերս բաւական բնակչաց իւրոց, այգեստանք նորա բերեն խաղող ազնիւ և միրգս ազգի ազգի, այլ ի Կախէթայ օր ըստ օրէ մտանեն այսր մերձ հարիւրաւոր սայլք գինւոյ՝ բարձեալք ի տիկս գոմշոց։ Ի Սալիանայ՝ նոյնաչափ թուով սայլք ձկանց, որոց ծախք մեծ են յոյժ ի քաղաքի այսմիկ։ Մատակարարէ և Կուր գետ զանազան տեսակս համեղ ձկանց։ Առակաւ ասի, թէ Գալիանոս բժիշկի մտեալ երբեմն ի Տփղիս և տեսեալ զանբաւ առատութիւն ձկանցն՝ ասաց. «Այս տեղի է շահեկան արուեստի իմում»։ Բայց իբրև ետես և զմեծ եկամուտ գինւոյ՝ ասաց, «թէ՝ սոքա ինքնին զտին զդեղ իւրեանց», և մեկնեցաւ։ Չիք ժողովուրդ ի համօրէն Հայաստան այնքան ձկնկեր և գինախում, որքան սոքա են։ Շիրակւան մատուցանէ զիւր ցորեան. Երևան՝ զաղ, բրինձ, բամբակ և չորապտուղս ամենատեսակս. իսկ Ռուսաստան՝ շաքար մաքուր և զամենայն ձեռակերտ վաճառս իւր։ Արուեստն սկսանէր ծաղկել աստ. այլ դեռ տղայ գոլով ի խանձարուրի կայր. և ես հազիւ թէ կարացի տեսանել զերեսս նորա։

Սովորութիւն խմել կայր ի քաղաքի այսմիկ վնասակար յոյժ, զոր վերացոյց Տէր Ներսէս. զի յաւուրս կիւրակէից յինանց ժողովեալ պատանեաց թաղից թաղից քաղաքին՝ մարտնչէին ընդ միմեանս փայտեայ սուսերօք, մահակօք, պարսատեօք և այլ սոցին նման գործեօք՝ ուստի թող թէ կէս քաղաքին միականի՝ պնջատ և ձռնջատ լինէր, այլ և մահունք ևս ի տեղւոջն պատահէին։ Այժմ փոխանակ այսր՝ արշաւարան հաստատեցաւ, և պատանիք մեր ոչ սակաւ հմտութիւնս ցուցանէին յայնմիկ։

ԱԲՈՎԵԱՆ

Վ Է Ր Ք   Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ո՛չ քանի—երեսուն տարուց աւելի ա՝ իմ ազիզ հէր, իմ սիրելի ազգ, որ սիրտս կըրակ ա ընկել, էրւում, փոթոթւում ա, գիշեր—ցերեկ լացն ու սուքը իմ աչքիցս, ախն ու ուխը իմ բերնիցս չի պակսում. ա՜յ իմ արիւնակից բարեկամք, որ մէկ միտքս ու մուրազս ձեզ պատմէի ու յետոյ հողը մտնէի։ Ամեն օր գերեզմանս առաջիս տեսնում էի, ամեն սհաթ մահուան հրեղէն սուրը գլխիս պտտում էր, ամեն րոպէի ձեր սիրտն ու դարդը հոգիս էրում, մաշում էր, լսում էի ձեր քաղցր ձէնը, տեսնում էի ձեր սիրուն երեսը, իմանում էի ազնիւ միտքն ու կամքը, վայելում էի ձեր ազիզ սէրն ու բարեկամութիւնը, մտածում էի ձեր կորցրած փառքն ու մեծութիւնը, մեր առաջի, էն հիանալի թագաւորաց, իշխանաց գործն ու կեանքը, մեր հայրենեաց, մեր սուրբ աշխարքի առաջւան սքանչելիքն ու հրաշքը, մեր ընտիր ազգի աննման բնութիւնը ու արած քաջութիւնները։ Մասիս առաջիս էր կանգնած միշտ, որ մատով ցոյց էր տալիս՝ թէ ինչ աշխարքի ծնունդ եմ ես։ Դրախտը մտքումս էր կենդանի, որ ինձ երազում թէ լուրջ՝ միշտ մեր երկրի անուշն ու պատուականութիւնը՝ իմ առաջս էր բերում Հայկ, Վարդան, Տրդատ, Լուսաւորիչ՝ քնած տեղս էլ ինձ ասում էին՝ որ ես իրանց որդին եմ։ Եւրոպա թէ Ասիա ինձ անդադար ձէն էին տալիս, թէ Հայկայ զաւակն եմ ես, Նոյեան թոռը, Էջմիածնայ որդին, դրախտի բնակիչը, դաշտում թէ ժամում, չօլում, թէ տան՝ էն քարերն էլ ուզում էին՝ որ սիրտս պոկեն, հանեն ուր տեղ որ իմ ազգի ոտը կոխել ա, ու էս օր էլ կոխում ա։ Շատ անգամ մէկ հայ տեսնելիս՝ ուզում էի՝ էլած շունչս էլ հանեմ, նրան տամ. բայց ա՜խ՝ լեզուս փակ էր, աչքս բաց, բերանս բռնած, սիրտս խոր, ձեռս պակաս, լեզուս կարճ. զանձ չունէի, որ գործով ցոյց տայի ուզածս, անունս մեծ չէր՝ որ ասածս տեղ հասնի, մեր գրքերն էլ գրաբառ, մեր նոր լեզուն էլ անպատիւ, որ սրտիս հասրաթը խօսքով յայտնէի. հրամայել չէի կարող, խնդրէի, աղաչէի էլ՝ լեզուս մարդ չէր իմանալ, չո՞նքի ես էլ էի ուզում՝ որ ինձ վրա չծիծաղին, չասեն. կոպիտ ա, յիմար[6] ա, որ քերականութիւն, ճարտասանութիւն, տրամաբանութիւն չգիտի, ես էլ էի ուզում, որ ասեն. «Օ՜հ, էնպէս խոսը, խրթին շարադրել գիտի, որ սատանէն էլ միջիցը մէկ բառ չի կարող իմանալ, հասկանալ». ես էլ էի ուզում՝ որ իմ գլուխս ցոյց տամ, որ ինձ վրա զարմանան ու ինձ գովեն՝ «թէ հայերէն շատ խորը տեղակ եմ»։ Ով մէկ լեզու գիտի, ես մէկ քանիսը գիտեմ, ինչ գիրք ասես՝ որ չեմ սկսել թարգմանել ու կիսատ թողալ, ոտանաւոր, շարադրութիւն հօ՝ էնքան եմ գրաբառ դուրս տուել՝ որ մէկ մեծ գիրք էլ էն կդառնայ։ Էս միջոցումը Աստուած ինձ մէկ քանի երեխէք էլ հասցրեց, որ պէտք է կարդացնէի։

Սիրտս ուզում էր պատռի, որ էս էրեխէքանց ձեռքն էլ՝ ինչ հայ գիրք տալիս էի, չէին հասկանում։ Ռուսի, Նէմեցի, Ֆրանցուզի լեզուումը ինչ բան որ կարդում էին, նրանց անմեղ հոգուն էլ էին էնպէս բաները դիր գալիս։ Ուզում էի շատ անգամ մազերս պոկեմ, որ էս օտար լեզուքը աւելի էին սիրում, քանց մերը։ Բայց պատճառը շատ բնական էր. էն լեզուներումը նրանք կարդում էին երևելի մարդկանց գործքերը, նրանց արածներն ու ասածները, նրանք կարդում էին էն բաները՝ որ մարդի սիրտ կարող է գրաւիլ, չունքի սրտի բաներ էին՝ ով չի սիրիլ։ Ով չի ուզիլ լսիլ՝ թէ սէրը, բարեկամութիւնը, հայրենասիրութիւնը, ծնողը, զաւակը, մահը, կռիւը ինչ զատ են, բայց մեր լեզուումը՝ թէ էսպէս բանիք ըլին, թող՝ աչքս հանեն։ Էլ ընչո՞վ էրեխին քո լեզուն սիրիլ տաս։ Գեղըցու վրա ջաւահիր ծախիր, հա, շատ լաւ բան ա, ամա որ կարողութիւն չունի, մէկ կտոր ճաթի հետ էլ չի փոխիլ քո ասած անգին քարը։

Էս հօ էս՝ Եւրոպիումն էլ որ չէի կարդում բազի գրքերում, թէ հայ ազգը պէտք է՝ որ սիրտ չի ունեցած ըլի, որ էնքան բաները գլխովն անց են կացել, մէկ մարդ էլայ չի դուս էկել, որ մէկ սրտի բան գրի, ինչ կայ՝ եկեղեցու վրայ ա, Աստծու ու սրբերի, բայց հեթանոս Հոմերի, Հորացի, Վիրգիլի, Սոփոկլէսի գրքերը՝ էրեխէքն էլ գլխատակներին ունէին, չունքի բոլոր աշխարհի բաներ են։ Թէ ասէի՝ բոլոր եւրոպացիք են անխելք, անհաւատ, որ Աստծու բանը թողած, էսպէս ծուռ-մուռ բաների հետ էին ընկել, յիմարութիւն կըլէր. թէ չէ մեր Նարեկը թողած, ախր ինչպէս էին նրանք էն գրքերին հաւանում։ Լաւ գիտում էի, որ մեր ազգը էնպէս չէր, ինչպէս նրանք ասում էին, ամա ինչ անես, անաղուն ջաղացի քարն էլ չի պտիտ գալիս, ո՞ւմ ասես։ Միտք էի անում՝ որ թէ կտրիճ մարդ ասես, մեր միջումը հազարաւորն են էլել ու էս օր էլ կան. թէ խելօք խօսք ասես, մեր պառաւներն էլ հազարը գիտեն։ Թէ աղ ու հաց ասես, սէր, բարեկամութիւն, քաջութիւն, երևելի անձինք՝ ասես, մեր գեղըցոնց սիրտն էլ ա լիքը էսպէս մտքերով։ Առակ, մասալա, սուր սուր խօսքեր՝ որ ուզենաս հօ՝ էն յետին ռամիկ մարդը՝ մէկլի տեղակ հազարը կ'ասի։ Ախր ինչ պէտք էր արած՝ որ մեր սիրտն էլ ուրիշ ազգեր իմանային, մեզ էլ գովէին, մեր լեզուն էլ սիրէին, մնացել էի տարակուսած։ Լաւ գիտէի, որ թէ Օսմանցւի, թէ Ղզլբաշի երկրումը՝ ինչքան էսպէս երեւելի, խելօք, հունարով մարդ են էլել, ինչքան Խանի, Շահի, Սուլթանի դռներին սիրեկան աշըղ, լաւ խաղ ասող, ոտանաւոր շինող մարդ են էլել, շատը հայ ա էլել։ Մենակ Քէշիշ օղլին, Քեօռ օղլին բաւական են՝ որ ասածս սուտ չի դուս գայ։ Թող էս օր էլ մէկ մարդ Գրիգոր Թարխանովի հետ խօսայ, նրա ասած խօսքերն, նրա էն ճարտար լեզուն, նրա էն հիանալի բօյն ու պատկերը, նրա հէնց մէկ հունարը տեսնի, որ հարիր տեսակ զանազան մարդ ու ազգի լեզուն, շարժմունքը, նստիլ վեր կենալը էնպէս ցոյց կ'տայ, որ քօռանամ, թէ Եւրոպիոյ էն ընտիր թէատրներումն էլ տեսած ըլիմ, ու վարժատան երես հօ՝ իր օրումը՝ կարելի ա էն ժամանակն ըլի տեսած՝ որ այբբենը մեր միջումը գաբով էին բռնում, գիւղով վեր քցում, էն ժամանակը կիմանայ, թէ Հայոց միջումը ինչ հունար կայ։

Սիրտս ուզում էր պատռի, որ էս էրեխէքանց ձեռքն էլ՝ ինչ հայ գիրք տալիս էի, չէին հասկանում։ Ռուսի, նէմեցի, Ֆրանցուզի լեզուումը ինչ բան որ կարդում էին, նրանց անմեղ հոգուն էլ էին էնպէս բաները դիր գալիս։ Ուզում էի շատ անգամ մազերս պոկեմ, որ էս օտար լեզուքը աւելի էին սիրում, քանց մերը։ Բայց պատճառը շատ բնական էր. էն լեզուներումը նրանք կարդում էին երևելի մարդկանց գործքերը, նրանց արածներն ու ասածները, նրանք կարդում էին էն բաները՝ որ մարդի սիրտ կարող է գրաւիլ, չունքի սրտի բաներ էին՝ ո՞վ չի սիրիլ։ Ո՞վ չի ուզիլ լսիլ՝ թէ սէրը, բարեկամութիւնը, հայրենասիրութիւնը, ծնողը, զաւակը, մահը, կռիւը ինչ զատ են, բայց մեր լեզուումը՝ թէ էնպէս բաներ ըլին, թող՝ աչքս հանեն։ Էլ ընչո՞վ էրեխէն քո լեզուն սիրիլ տայ։ Գեղըցու վրա ջուահիր ծախիր, հա, շատ լաւ բան ա, ամա որ կարողութիւն չունի, մէկ կտոր ճաթի հետ էլ չի փոխիլ քո ասած անգին քարը։

Էս հօ էս՝ Եւրոպիումն էլ որ չէի կարդում բազի գրքերում, թէ հայ ազգը պէտք է՝ որ սիրտ չի ունեցած ըլի, որ էնքան բաները գլխովն անց են կացել, մէկ մարդ էլայ չի դուս էկել, որ մէկ սրտի բան գրի, ինչ կայ՝ եկեղեցու վրայ ա, Աստծու ու սրբերի, բայց հեթանոս Հոմերի, Հորացի, Վիրգիլի, Սոփոկլէսի գրքերը՝ էրեխէքն էլ գլխատակներին ունէին, չունքի բոլոր աշխարհի բաներ են։ Թէ ասէի՝ բոլոր եւրոպացիք են անխելք, անհաւատ, որ Աստծու բանը թողած, էնպէս ծառի-մառի բաների հետ էին ընկել, յիմարութիւն կըլէր. թէ չէ մեր Նարեկը թողած, ախր ինչպէս էին նրանք էն գրքերին հա-

սանում։ Լաւ գիտում էի, որ մեր ազգը էնպէս չէր, ինչպէս նրանք ասում էին, ամա ինչ անես, անաղուն ջաղացի քարն էլ չի պտիտ գալիս, ում ասես։ Միտք էի անում՝ որ թէ կտրիճ մարդ ասես, մեր միջումը հազարաւորն են էլել ու էս օր էլ կան. թէ խելօք խօսք ասես, մեր պառաւներն էլ հազարը գիտեն։ Թէ աղ ու հաց ասես, սէր, բարեկամութիւն, քաջութիւն, երևելի անձինք՝ ասես, մեր գեղըցոնց սիրտն էլ ա լիքը էնպէս մտքերով։ Առակ, մասալա, սուր սուր խօսքեր՝ որ ուզենաս հօ՝ էն յետին ռամիկ մարդը՝ մէկլի տեղակ հազարը կ՚ասի։ Ախր ինչ պէտք էր արած՝ որ մեր սիրտն էլ ուրիշ ազգեր իմանային, մեզ էլ գովէին, մեր լեզուն էլ սիրէին, մնացել էի տարակուսած։ Լաւ գիտէի, որ թէ Օսմանցւի, թէ Ղզլբաշի երկրումը՝ ինչքան էնպէս երևելի, խելօք, հունարով մարդ են էլել, ինչքան Խանի, Շահի, Սուլթանի դռներին սիրեկան աշըղ, լաւ խաղ ասող, ռամանաւոր շինող մարդ են էլել, շատը հայ ա էլել։ Մենակ Քէշիշ օղլին, Քեօռ օղլին բաւական են՝ որ ասածս յուստ չի դուս գայ։ Թող էս օր էլ մէկ մարդ Գրիգոր Թարխանովի հետ խօսայ, նրա ասած խօսքերն, նրա էն ճարտար լեզուն, նրա էն հիմնաւի բօյն ու պատկերը, նրա հէնց մէկ հունարը տեսնի, որ հարիր տեսակ զանազան մարդ ու ազգի լեզուն, շարժմունքը, նստիլ վեր կենալը էնպէս ցոյց կ՚տայ, որ քօռանամ, թէ Եւրոպիոյ էն ընտիր թէատրներումն էլ տեսած ըլիմ, ու մարժառան երևս հօ՝ իր օրումը՝ կարելի ա էն ժամանակն ըլի տեսած՝ որ այբբենը մեր միջումը զարով չէին բռնում, գլուխով վեր քցում, էն ժամանակը կիմանայ, թէ Հայոց միջումը ինչ հունար կայ։

Էսպէս բաները մտաբերելով, օրս ու ումբրս մաշւել էր։ Շատ անգամ ուզում էի իմ գլուխս մահու տամ։ Չէի իմանում՝ թէ սրա չարէն ինչ կըլինի։ Թո՛ղ լսողը չհաւատայ, ամա էս ցաւն էնպէս էր սիրտս առել, որ շատ անգամ գժւածի պէս ընկնում էի սար ու ձոր, ման գալիս։ մտածում, էլ եդ սիրտս լիքը տուն գալիս։ Հէնց էս էր պատճառը՝ որ մէկ օր էլ ամառւան դասատուրի ժամանակին՝ աշակերտներս՝ որ առաւնոտը թողի, ճաշից եդ՝ ընկայ էլի սարէսար։ Ծարս կտրւեց, գնացի Նեմեցի կոլոնիէն՝ մէկ նեմեց բարեկամի մօտ. նրանք էլ ինձ վրա ցաւելով՝ իրեք օր չթողին գամ քաղաքը։ Բայց քաղաքումն՝ իմ սիրելի աշակերտները ու ծանօթ, բարեկամք՝ իմ սուգս վաղուց էին արել։ Հէնց իմացել էին, թէ Քուռն եմ ընկել, չունքի ամէն առաւօտ, րիգուն գնում էի, լողանում։ Էլի իմ, իմ ազիզ, իմ սիրելի աշակերտներն էին ընկել եդևիցս՝ որ բալքի մէկ բան էլա իմանան։ Մէկ առաւօտ փանջարումը նստած՝ էլի մտքիս հետ էի ընկել՝ որ նրանք առաջովս անց կացան։ Որ չտեսայ նրանց, հոգիս տեղըհան էլաւ։ Իմ ու նրանց էն օրւան իրար տեսնիլը ո՞վ կարայ պատմիլ, ով սիրտ ունի, ինքը կիմանայ։ Բալքի թէ գերեզմանումը էս ձեր սէրը մտքիցս գնայ՝ ա՛յ իմ սիրելի, իմ ազիզ բարեկամք. թէ չէ, որքան էս կապուտ երկինքը գլխիս ա, շունչս բերնումս, ձեզ, ձեզ սուրբ պէտք է համարիմ ինձ համար, ձեր արևին մեռնիմ։

Բայց ա՜խ՝ ե՞րբ ա երկինքը մէկ կերպի մնացել՝ որ մարդի սիրտը մնայ։ Հէնց մի փոքր մտքիս արևը երևաց թէ չէ, էլի սև սև ամպերը գլխները բարձրացրին, էլի կայծակ ու որոտումն սրտումս մէյդան

բաց արին։ Ջուրն ընկնիլ՝ էլ չէի կարող, չունքի Աստծու անը մտքումս, անմեղ քուփիս ձէնը անկաջումս էր. սէրն ու ծնողական գութը ջիգեարումս, ես դինջանայի. էթըմին ո՞վ պահէր։

Բանը հէնց էս էր, որ ասում էի մտքումս՝ թէ նստեմ, ինչքան խելքս կըբերի, մեր ազգին գովեմ, մեր երևելի մարդկանց արած քաջութիւնները պատմեմ, էլի մտածում էի, թէ ո՞ւմ համար գրեմ, որ ազգը լեզուս չի հասկանայ։ Թէկուզ ռսերէն, նեմեցերէն, եա փռանցուզերէն գրած, թէկուզ գրաբառ՝ տասը կըլի որ հասկանային, բայց հարիր հազարի համար՝ թէկուզ իմ գրածը, թէկուզ մէկ քամու ջաղաց։ Ախր որ ազգը էն լեզուովը չի խօսում, էն լեզուն չի հասկանում, սաքի հէնց բերնիցդ էլ ոսկի վեր ածիր. ո՞ւմ պէտք է ասես։ Ամէն մարդ իր սրտի խարջ բան կուզի։ Քո ղաբլու փլաւն ինձ ինչ օգուտ, որ ես չեմ սիրում։ Ում հետ էլ որ խօսում էի, էն էին թմնխայ տալիս՝ թէ մեր ազգը ուսումնասէր չի, կարդալը նրա համար գին չունի, բայց ես տեսնում էի, որ էս մեր կարդալ չսիրող ազգը Ռօպէնսոնի պատմութիւնը, Պղնձէ քաղաքի յիմար գիրքը ձեռնէ ձեռ էր ման ածում։ Ես էլ լաւ գիտէի, որ ինչ երևելի ազգեր կան, բոլորն էլ երկու լեզու ունին, հին ու նոր։ Ախր թէ լուսաւորեալ լեզուն լաւ ա, ու քարերն էլ պէտք է տրաքին ու հասկանան, էլ տօնլուղ, նշան, պատիւ ո՞ւր են տալիս դիլբանդլին։ Էն լեզուագէտ իմաստունը թող գնայ, կանգնի, գոռայ, ջանը դուս գայ, լսողը թող ինքը հասկանայ, լուսաւորեալ գլուխն ափսոս չի, որ ցաւի։

Միտք էի անում, որ գիժն էլ էս չի անիլ։ Էլի էսպէս մտքիս հետ ընկած՝ շատ անգամ որ ղօնաղ

էի գնում, եւ քաղաքումս անց կենում, ուշ ու միտքս հաւաքում էի՝ թէ տեսնիմ խալխը խօսալիս, քէփ անելիս, ի՞նչ բանից ա աւելի հաղ անում։ Շատ անգամ տեսնում էի, որ մէյդանում, փողոցում մէկ քօռ աշըղի էնպէս են հայիլ մայիլ մնացել ու կանգնել՝ անգաջ գնում, փող բաշխում նրան, որ բերնըների ջուրը գնում էր։ Մէջլիս ու հարսանիք հօ՝ առանց սազանդարի ե՞րբ հացը կուլ կերթար։ Ասածները թուրքերէն էր, շատը մէկ բառ էլա չէր հասկանում, ամա լսողի, տեսնողի հոգին գնում էր դըրախտը, եդ գալիս։ Միտք արի, միտք արի, մէկ օր էլ ասեցի ինձ ու ինձ. արի քո քերականութիւն, ճարտասանութիւն, տրամաբանութիւն ծալէ՛ր, դըրաղ դի՛ր. ու մէկ աշուղ էլ դու դառ, ի՞նչ կըլի, կըլի, խանչալիդ քարը հօ վեր չի ընկնիլ, գառ վարագդ հօ չի գնալ։ Մէկ օր էլ դու վեր կընկնիս, կմեռնիս, մէկ ողորմի ասող էլ չես ունենալ։

Մէկ բարեկենդանի՝ աշակերտներս որ բաց թողի, սկսեցի՝ ինչ որ երեխութիւնից լսած կամ տեսած բան գիտէի, տակ ու գլուխ անիլ։ Վերջը իմ ջիւան Աղասին միտս ընկաւ, նրա հետ հարիր քաջ հայի տղերք էլ իրանց գլուխը բարձրացրին ու ամէնն էլ ուզում էին՝ որ իրանց տոը գնամ։ Միւսները մեծ մեծ մարդիկ էին, շատն էլ դեռ հլա սաղ սլամաթ՝ փառք Աստուծոյ, Աղասին աղքատ ու մեռած, նրա սուրբ գերեզմանին ղուրբան։ Ասեցի կեղծաւորութիւն չանեմ, նրան ընտրեցի։ Սիրտս էկել էր, բերնիս հասել։ Տեսնում էի, որ էլ հայի գիրք ձեռն առնող, էլ հայի լեզուն խօսող քիչ ա գտնւում։ Մէկ ազգի պահողն էլ՝ լեզուն ա ու հաւատը, թէ սրանց էլ կորցնենք, վա՜յն էկել ա մեր օրին։ Հայոց լեզուն առաջիս

փախչում էր. երեսուն տարուայ փակ բերանս Աղասին բաց արեց։ Մէկ երես բան դեռ չէի գրել, որ իմ մանկական սիրելի բարեկամ ու ազնիւ հայազգի պարոն Դօկտոր Աղաֆօն Սմբատեանը ներս մտաւ։ Ուզում էի թուղթս ծածկեմ, էլ չկարացի. ինձ համար Աստուած էր նրան էն սհաթին ղրկել՝ նրա ջանին մեռնիմ։ Զօռ արեց՝ որ կարդամ, բարեկամիցը ի՞նչ պէտք է թաքցրած։ Սիրտս դողում էր կարդալիս. մտքումս ասում էի՝ թէ հէնց հիմիկ որդէ որ ա, գլուխը կպտտի, ունքերը կկիտի միւսների նման ու իմ ախմախութեան վրա մտքումն էլա հօ կծիծաղի, որ երեսիս չասի։ Բայց փիսը ես էի, որ նրա ազնուական հոգին դեռ լաւ չէի ճանաչել։ Վերջացնելիս՝ որ հէնց էն ա, թուրն էկել էր, ոսկորին դէմ առել, որ չասեց. «թէ էդպէս կշարունակէք, շատ հիանալի բան կդառնայ», ուզում էի վրա թռչիմ, բերանը, էն քաղցր բերանը համբուրեմ։

Նրա սուրբ բարեկամութեանն եմ պարտական, որ մունջ լեզուս բաց արեց։ Նա գնաց թէ չէ՝ կրակը ջանս առաւ։ Սհաթի տասն էր առաւօտի։ Էլ հաց, կերակուր միտքս չէկան։ Ճանճը առաջովս անց կենալիս, ուզում էի սպանեմ, էնպէս էի վառւել։ Հայաստան հրեշտակի պէս առաջիս կանգնել՝ ինձ թև էր տալիս։ Ծնող, տուն, երեխայութիւն, ասած-լսած բաներ էնպէս էին կենդանացել, որ էլ աշխարքը միտքս չէր գալիս։ Ինչ խուլ, կորած, մոլորած մըտքեր ունէի, բոլոր բացւել, եդ էին եկել։ Նոր էի իմանում, որ գրաբառ ու ուրիշ լեզւներ՝ մինչև էն սհաթը միտքս փակել, բռնել էին։ Ինչ որ ասում էի կամ գրում մինչև էն հաղադը՝ գողացած կամ հնարած բաներ էին, էնդուր համար հէնց մէկ երես

բան գրում էի թէ չէ, նա քունս էր տանում, նա ձեռս բէզարում։ Գիշերւան մինչև սհաթի հինգը ոչ հացի մտիկ արի, ոչ չայի, չիբուխն էր իմ կերակուրը, գինը իմ հացը։ Տանըցանց խնդրելուն, նեղանալուն, խռովելուն էլ չէի մտիկ անում։ Երեսուն թաբաղէն էն ա լցւելով էր, որ բնութիւնը իր պարտքը պահանջեց, աչքերս գնաց։ Սաղ գիշերը ինձ էնպէս էր երևում՝ թէ նստած գրում եմ, երանի կըլէր ինձ՝ թէ էն մաքերը ցերեկն էլ միտս ընկէր։

Սիրելի կարդացող, չնեղանաս, որ բանն էսքան երկարացրի, էնդուր համա եմ էստոնք յիշում, որ իմանաս՝ թէ ազգի սէրը ի՞նչ լազաթ ունի, ինչ զօրութիւն։

Էն առաւօտ իմ դուշմանի տանը ոչ եղ գայ, ինչ որ ես տեսայ։ Աչքս բաց եմ անում, իմ խեղճ, դարիբ գերմանացի կողակցի ձէնն ա ընկնում անկաջս։ Տեսնիմ իմ միայնակ որդին դոշին առած, էն արտասունքն ա վեր ածում, որ քարեր կմզկտան։ Ծառայ ու ղարաւաշ էլ՝ մէկ պուճախումն են փէտացել, կանգնել, ինձ ցաւելով մտիկ անում։ Ո՞ւմ սիրտը էս սհաթին չէր ճաքիլ։ Գժւածի պէս վեր թռայ, երեխիս եմ նայում՝ փառք Աստուծոյ՝ սաղ ա, կողակցիս եմ աղաչում, սիրտը չի կարում եղ բերիլ։ Ի՞նչ էր պատահել, չէի իմանում։ «Անաստւած՝ ինձ սպանեցիր հօ. էս ի՞նչ բան բերիր գլխիս», վերջապէս լսեցի։ Ծառէքն էլ մէկ կողմից են ինձ գնամիշ անում։ Վերջապէս իմանամ՝ որ սաղ գիշերը անդադար դէյն եմ տւել, գոռացել, ահ քաշել, խօսացել, ու ինչ որ հարցրել են տանըցիք, միշտ էլ գերմաներէն, ոչ հայերէն պատասխան տւել, ու հազար անսակ վայրիվերոյ բան ասել, էլ եղ իմ կռիւն սկսել։ Մինչև սհաթի ինը էս

հալումն ընկած՝ ես իմ քէֆն եմ արել, նրանք իրանց սուքն ու ինձանից ձեռք վերցրել։ Էն առաւօտը, սաղ շաբաթ ու ամիս, էս օր էլ մուրազս հէնց էն ա էլել, որ գնամ ընկնիմ մէկ իշխանի ոտք, ասեմ, ինձ մէկ կտոր հաց տայ ու ես գիշեր ցերեկ ընկնիմ գեղէ գեղ ու մեր ազգի արած բաները հաւաքեմ, գրեմ։

Թո՛ղ ինձ այսուհետև ազէտ կանչեն. լեզուս բաց ա էլել՝ իմ ընտիր, ազիզ, իմ սրտի սիրեկան ազգ։ Թո՛ղ տրամաբանութիւն գիտեցողը իրան համքեարի համար գրի, ես քո կորած, շւարած որդին՝ քեզ համար։

Ով թուր ունի, առաջ իմ գլուխս խփի, իմ սիրտս խրի, ապա թէ ոչ՝ քանի բերնումս լեզու կայ, փորումս սիրտ, ես լեղապատառ ձէն կտամ. «Էդ ո՞ւմ վրա էք թուր հանել, Հայոց մեծ ազգին չէ՞ք ճանաչում։ Թաք ըլի դու, դու՝ իմ պատւական ազգ՝ քո որդու արածը, քո որդու խակ լեզուն սիրես, ընդունիս, ինչպէս հէրը իր մանուկի կմկմալը, որ աշխարքի հետ չի փոխիլ։ Երբ որ կմեծանամ, խրթին լեզւով էլ կխօսանք։ Ազատին քո որդին ա, սրանից դհա մեծ, դհա անուանիքը շատ ունիս, ինձ մի սիրտ տո՛ւր՝ արևից մատաղ գնամ. տե՛ս՝ թէ ի՞նչ ձևով եմ գնում, նրանց բերում, առաջիդ կանգնացնում, որ դու էլ զարմանաս՝ թէ էնպէս որդիք ունեցողը աշխարքումն էլ ի՞նչ դարդ կանի, երեսս ոտիդ տակը։ Տո՛ւր՝ էդ սուրբ ձեռդ էլ մի համբուրեմ, որ ինձ ներես, ու գընանք մեր սիրուն Ազատու մօտ։

Հարցեր՝

Ի՞նչը դրդեց Աբովեանին գրել աշխարհաբար։

Հեղինակի հոգեկան տրամադրութիւնը վէպը գրելու ժամանակ։

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ ՔԱՆԱՔԵՌՈՒՄ

Բարեկենդան էր։ Ձիւն էկել՝ դիզվել, սար ու ձոր բռնել էր։ Պարզկայ գիշերը էնպէս էր գետինը սառցրել, որ ամէն մէկ ոտը կոխելիս՝ հազար տեղից տրաքտրաքում, ճռճռում, ճքճքում էր ու մարդի ջանը սրսռացնում, ձէն տալիս։ Ամէն մէկ ծառի ճղներից, ամէն մէկ տան քաշից՝ հազար տեսակ սառցի լուլայ, հազար տեսակ ձնի քուլայ՝ կախ էր էլել ու բիզ բիզ իրար վրա սառել։ Հէնց գիտես՝ սար ու ձոր կամ նոր էր ծաղկել կամ նոր ծերացել, մահւան դուռն ընկել. շունչն էր մնացել՝ որ տայ, ու աշխարքիս բարով մնա ասի։ Ղուշ, գազան, անասուն, սողուն՝ որը փէտացել՝ էստեղ էնդեղ վեր էր ընկել, որն էլ վազուց, ամսով առաջ բունը մտել՝ ձէնը կտրել, պաշարը վայելում, գարնան գալուն սպասում։ Գետերի, առուների երեսները սառցը մէկ գազ էկել, հաստացել, իրար վրա դիզւել՝ էնպէս էր ջրի, աղբրի բերնին հուփ տւել, որ մօտըներին կանգնողը միմիայն նրանց խուլ ձէնն էր լսում, որ սառցի տակին տխուր, տրտում, քլքլում էր ու էլ եդ էստեղ էնտեղ կամաց կամաց ձէնը կտրում, պապանձւում, սուսչում։

Արեգակը էս առաւօտ՝ որ գլուխը քնի տեղից ու աղօթարանից չի բարձրացրեց ու աչքը աշխարքի վրա քցեց, շողքը սարերի գագաթին, դաշտերի գլխին էնպէս էր պէծին տալիս, պապղում, փայլում ու սառցի, ձնի հետ խաղում, ծիծաղում, կանաչ ու կարմրին տալիս՝ որ հէնց իմանաս թէ ալմաս, զմուռթ, եախութ ու հազար տեսակ անգին քարեր ըլէին

դաշտերի, սարերի գլխին, երեսին, դօշին փռած։ Սարերի սառը բուքը, ձորերի դառնաշունչ քամին՝ ձընի թեփը իրար գլխով տալիս, որ ճամփորդի քիթն ու պռունգը կպցնում, ճաքացնում, երեսը պատռում, գլխին, երեսին հազար անգամ խփում, աչք ու բերան լցնում, շատին կամ ձորերն էր քցում, խեղդում, կամ ձնումը թաղում, շունչը կտրում, կամ ոտ ու գլուխ փէտացրած, ճամփից խռկում, սար ու չօլ քըցում, խեղդում կամ քարէքար տալիս։

Էսպէս մէկ խիստ ձմեռւան օրի լիսն ու մութը որ բաժանւեցաւ ու աղօթարանը բաց էլաւ՝ Քանաքեռցիք *) քնից վեր կացան, տան երթիկները բաց արին, երեսները լւացին. մէկ երկու խաչ հանեցին, բարի լիս ասացին իրար, երեխէքը ծածկեցին. ու ամէն մարդ սկսեց գնալ իր բանը։ Մեծ մարդիքը միրքըները սանդրելով, պառաւ կնանիքը չարսաւը կռնատակների տակին՝ կամաց կամաց տանից դուրս էլան ու տէր ողորմեայ քաշելով, Հայր մեր ասելով, հրաժարիմքը կամ Հաւատով խոստովանիմը քթների տակին փնթփնթացնելով՝ իրար ողջոյն տալով՝ շատը իր տակը քցելու շորը կամ մորթին ձեռին բռնած՝ քիթ քթի տւած գնացին ժամ, դուռը պաչեցին, էն վախտը վրա հասան՝ որ տէրտէրը դեռ չէր էկել. ժամկոչին ասեցին, որ զանգակը քաշի ու իրանք՝ մէկ քանի ծունր գնելուցը ետոյ՝ մարդիքը սեղանի առաջին կամ սների տակին, կնանիքը ետի դասումը

---

*)Երևանուցը հինգ վերստ հեռու մէկ գեղ, հիւսիսային կողմն ընկած, տեղը բարձր, ջուրը քաղցր, օդը գեղեցիկ. չորս կողմը բաղերով լիքը, մէջը երկու հրաշալի եկեղեցի. հազար քեալւայ ու այժմ յիսուն տուն կայ։ Ամառւան տեղը Երևանու խաների։

իրանց համար իրար մոտ շորը փռեցին, չոքեցին, դըլուխ գլխի դրին ու սկսեցին գրից անել, իրանց գեղի ու տների բանը պատմել, իրար հալ հարցնել, մինչև տէրտէրն էկաւ, ճրագները, կանթեղները վառեցին։ Որտեղ ձէթ չկար, մղդսին ածեց, տէրտէրի փիլոնը քցեց ու, ընչանք միւս ընկերն ու տիրացուքը կըգային, նա էլ մի քանի ծունր դրեց, չոքեց, սաղմոս ասեց, աղօթք արեց, էկողներին լաւ վարաւուրդ արեց՝ որի քէֆը հարցրեց, որի հետ էլ էնքան գրից արեց կամ աչքերը ճմռեց, մինչև խալխը մի քիչ շատացաւ, ընկերն էկաւ, հրաժարիմքն ասեցին՝ դդակը գլխներին՝ երեսները դէպի արևմուտը դարձրին ու ետոյ էլ եդ շուռ էկան. հաւատամքն ու մեղէն սկսեցին, զանգակն մէկ անգամ էլ քաշեցին։ Որտեղ զանգակ չկար, ժամհարը գնաց կարների, ազբանների վրա ձէն տւեց ու ժամն սկսեց կանգնիլ։ Տէրտէր, տիրացու ժամ էին ասում, ժողովուրդը ծունր դնում, խաչ հանում, կամ չօքում, նստում ու աշխատասէր, ժիր մղդսին եա ճրագի ծէրը կտրում, եա կանթեղներին լիս տալիս, եա թէ չէ՝ միրուքը քորելով, կռնդալ գլուխը տրորելով, արշտատալով՝ դուրս ու տուն էր անում, բուրւառ շինում, կամ էրեխէքանց գլխին խփում, որ հանգարտ կենան, զալմաղալ չանեն, դէս ու դէն չըվազեն։ Բազի անգամ էլ բռնոթու ղութին Չիբիցը կամ ծոցիցը հանում, թափ տալիս, ինքը քաշում, փռըշտում, երեսին խաչ հանում, եա սատանին անիծում ու քէթխուդէքանցը թաւազայ անում, պատիւ տալիս ու էլ եդ ծանր ծանր գալիս իր տեղը կանգնում կամ տէրտէրի հրամանը կատարում։

Ջահէլ՝ տան աղէրքն էլ ամառւան պէս խոտ հնձելու, կալ կասելու, բաղ փորելու, էտելու, թա-

գելու, դարման կրելու դարդ չունենալով՝ ճլմկոտալով, աչքրները ճմռեցին ու քնահարամ մտան զոմը, որ տաւարին, ձիանոցը խոտ տան, տակրները սրբեն, Ջուրը տանին, ձիանը թիմարեն ու հետը խաղ ասելով՝ էլ ետ կապեն ու գնան տուն։ Ցարգևոր հարսերը՝ ասղարոյր գիւլաբաթնի օշմաղը մինչև քթների կէսը խոր քցած, քող ու լաչակի ծէրը աչքերի տակը խոր քաշած, որ էլ երեսները չէր երևում, մէկ դարայի կամ ղադաք մինթանայ հաքներին, մովի կամ կտաւի շապկով զարդարած՝ մէկ մեծ գոտկով մէջքըները չորս տակ, հինգ տակ կապած՝ ղշի պէս կուփ կուփի վեր թռան, երեսներին մի քիչ ջուր քսեցին, փէշով սրբեցին ու որն սկսեց տունն աւլել, որը դուռը սրբել, որն էլ չախմախին տւեց, կրակ արեց, որ թոնդիրը վառի ու տան թաղարէքը տեսնի, պղնձները վրէն դնի ու կերակրները էփի, հացիր անի։ Տան ջահէլ աղջկերքն էլ գլխները սանդրեցին, մազըները հուսած, քամակներին քցած՝ կարմրագագաթ պոպոզ մօրթէ գտակները գլխներին, անկաջները կապեցին, դաստամալն ուսըներին քըցեցին, կուժը վրէն դրին, բերանը կալան ու գնացին, որ տան համար ջուր բերեն, ու երկար ժամանակ ջրի վրա իրար հետ գրից տալուց եդը, էլ եդ իրար հետ խօսելով, ծիծաղալով մէկն իրանց տուն գնաց, միւսն իրանց։

Արեգակի շողքն ընկաւ տուն. բորեաղը մէկ կողմից էր շւացնում, բզզում. հոսանը միւս կողմից ֆստացնում, փստացնում, վզվզում, ձինը փանջարեքովը ու երթքովը ներս ածում, աչք ու անկաջ լցնում, ու էրեխէքն էլ քնաթաթախ վեր կացած, թոնդրի չորս կողմովը բոլորւած, շարւած ու դեռ անլւայ՝ ոտըները քարին, գետնին էին ծեծում, մօրը-

ները խփում, որ հաց առնին, ուտեն։ Աթարի սև, թանձր ծուխը դուռն ու երթիկը կալել՝ տունը մխի ծով էր շինել, էնպէս որ մարդի աչքի առաջը չէր կարում ջոկի։ Երեխէքանց սուգ ու շիւանը գլուխ էր տանում, քեալայ ծակում։ Որն օրօրոցումն էր լալիս, որը դեռ եօրղանի տակին, աչք ու բերան ծխով լիքը գոռում, հարայ տալիս, որն էլ ուած հացովը. հէրիք չէր, էլի ժնգժնգում, ուզում էր, որ էլի տան, որ ձէնը կտրի։ Խեղճ տանտիկինը հօ չէր իմանում՝ թէ ձեռը որի բերնին դնի, որի աչքը կշտացընի՝ ու իր բէրանն ու աչքը հօ՝ բաց ու խուփ անելով մեռել էր՝ հէնց բռնիր։ Ի՜նքան ծուխ էր կուլ ուէլ, բռնոթի քաշել, փռշտացել, հազացել՝ որ սիրտն եկել էր բողազին դէմ առել։ Ի՜նքան աչքերը սրբել էր ու աղի արտասունք թափել՝ որ աչքի լիսը թռել էր։ Ի՜նքան կուզէկուզ հաւկրի պէս ման էր եկել, պուճախէ պուճախ ընկել՝ որ էլ մէջքը չէր կարում քաշիլ։ Թունդիրն էլ քանի կենում էր, թէժանում էր։ Պղնձները ղըրթ-ղըրթալով եփ էին գալիս, ինքն էլ թունդրի չորս կողմը դուբարայ ուել քսեց, սրբեց, կերակրների համը տեսաւ, աղ գցեց՝ ու մտիկ էր անում որ ժամաւոր տուն գայ։ Աստուծոյ ողորմութիւնը հասաւ. ծուխը եդ քաշւեցաւ. քամին եդ առաւ. Ջրի գնացողները էկան, տղէրքն էլ հաւաքւեցան՝ արեգակը մէկ ջիդայ բոյ էկաւ՝ բարձրացաւ, բայց դեռ ողորմի Աստուծու ձէն չըլսած; ժամաւորները չէկած՝ ո՞վ էր կաջող որ բերանը նշխարք դնի։

Աւուստայ սհաթի ութը դեռ չէր ըլել, էս որ ասում եմ։—Է՜հ, ժամ չի՛ դառաւ մեր գլխին, մէկ իշի հարսանիք դառաւ, տօ»։ Սկսեց տանուտէր Օհաննէսի մեծ տղայ Ազատին բերանը բաց անիլ ու ինքն իրան

թոնթորալ, բարկանալ՝ որ իր բօզ ձին թամքել, հազիր էր արել՝ որ էս օր դուս գնայ ջիրիդ խաղայ ու ուզում էր ոնց որ ըլի, մէկ փոքր նհար անի. ձիու քամակն ընկնի ու գնայ իր թայդաշ (տօլ) տղերանց հետ իր քէֆը արամիշ անի։—«Տօ՛, ձեր տունը չը քանդւի, ախր ի՞նչ խաբար ա էնքան պոչը ձգել, երկարացնել։ Մէկ էրկու ծունր դի՛ր. երեսիդ մէկ քանի խաչ հանի՛ր. պրծանք՝ գնաց. ժամի դուռը պաչ արա՛, էլ եդ արի՛, քո բանիդ տես։ Ի՞նչ ա էսպէս օրն էլ ժամի տուար բռնել, երկար մտիկ անիլ՝ որ հա կա՛ց ու բերանդ բաց ու խուփ արա՛, թէ օրհնեալ եղերուքն ասեն, որ բերանդ հացի համ տեսնի։ Խաչը գիտենայ՝ էս հալւորներն ու պառաւները քանի մեծանում են, խելքըներն էլ հետըները կորցնում։ Կազեւ բարկացի՛ր, կուզես սառը ջուր խմի՛ր. որ մեռնիս էլ՝ էնքան պէտք է մտիկ անես՝ որ ժամաւորները գան, ողորմի Աստուած ասին, որ բալքի. թէ աչքդ մի բան տեսնի։ Մարդի աչքը ջուր ա կտրում, լերդը չորանում։ Էս օր էլ հօ մատաղ չեն մորթել ու ժամի դառնը բաժանում, որ հա թէ մտիկ անես։ Էլի աչքդ մի բան տեսնի, բերանդ մսի համ, քիթը մսի հոտ առնի։ Տէրտէրների գլուխն էլ հօ էս օր՝ լաւ տաքացած, ի՞նչ են մտիկ անում՝ թէ գէլը ոչխարը տարաւ։ Էլ տուտը չեն կտրում, լաւ, օսալ մի քիչ ոտը բարձրացնում՝ որ աղունը շուտով վեր գայ, ամէն մարդ իր տունը գնայ։ Էլ չեն միտք անում՝ թէ էս օր ի՞նչ օր ա։ Էս կարգ դնողին ի՞նչ ասեմ. Նրա հօրն ողորմի, ինքը հացի տեղ խոտ կըլի կերած՝ բա՛ս... Փորս վեց վեց անում, ղըվլոց ա ընկել՝ էլի հա կա՛ց ու գլխիդ վայ տո՛ւր, թէ ժամը պէտք է արձակւի, որ փորիդ արքայութիւն ըլի։

«Տօ խանի խարար՝ ինչ էլաւ քեզ. մի քիչ որ համբերես, լեզուդ քեզ անես, լաւ չըլի՞լ. ինչ ես առաւօտ առաւօտ էլ բերնիդ կապը կտրել, հօ կրակ չի՞ ընկել փորդ ու քեզ էրում, խորովում». ասեց մէրը բարկանալով՝ «հօ աշխարքը տարան ոչ, դու մնացիր: Մենք ջա՞ն չունինք՝ մեզ Աստուած չի՞ ստեղծել. հողի՞ցը դուս էկանք: Պապա՛յ պապա՛յ... էս ժամանակիս տղերքը՝ հէնց սալթ գժւել, կապովի են դառել: Ո՛չ մեծի պատիւն են ճանաչում, ոչ ժամի, ազօթքի զօրութիւնը: Էն ա, որ Աստուած մեր գլխին բարկացել, ամէն կողմից մեզանից զուլումը պակաս չի ըլում՝ է: Ամէնն էլ իրանց ձին են քշում: Էրէկւան էրեխէն էլ՝ դեռ ոտը չի՞ էլած՝ ոտն ա բարձրացնում, հօ Աստուած չի՞ վերցնիլ: Վեր կացար տեղիցդ. տօ մէկ հլայ Աստծուն փառք տուր. երեսիդ խաչ հանի՛ր, հոգիդ միտդ բեր ու եդոյ ուզածդ արա՝ է. հօ ճաքեցիր ոչ: Տա՛. տա՛. տա՛... Աստուած ազատի էս ժամանակւայ էրեխէքանց ձեռիցը, որ թողաս, աշխարք կը քանդեն: Լաւ ա, որ Աստուած էսպէս անօրէն բանին համբերում է, ես ըլիմ, չեմ համբերիլ»:

Ազասին հնազանդ որդի էր: Ղորդ ա, մօրը ոչինչ չասեց, լուեց, բայց ասածը մէկ անկաջովը մտաւ, միւսովը դուս էլաւ: Ոտի տակին կրակ էր վառւում. սիրտն ուզում էր բերնովը դուս գայ: Գեղումը մեծացած ռամիկ տղայ՝ հազարից մէկ անգամ ժամի երես չէր տեսել, մեղի ձէն չէր լսել, կոխքերն ու գլուխը չօլում, սարում հաստացրել: Մէկ Զատկին, մէկ էլ Ջրօրհնէքին՝ սատանի աչքը քօռ՝ ղորդ ա, զանգակի ու պատարագի ձէն իմանալուն, ոչ սրտին էր քեար անում, ոչ ջանին: Նրա համար ժամն ու գիլի հարսանիքը մէկ էր: Ոչ բան

էր իմանում, ոչ զօրութիւնը: Ծունր դնելիս, կամ չոքելիս էլ մէջքն ու ոտներն էին ցաւում. ծալապատիկ նստում էր, բեզարում էր, ոտի վրա կանգնում էր, չէր կարում համբերիլ: Շատ անգամ ճարը կտրում էր, դուս էր գալիս ժամի հայեաթը, մէկ դերեզմանաքարի վրայ նստում, մէկ կուշտ քնում, էլ եդ ներս մտնում: Շատ անգամ էն վախտին էր ժամ գնում, որ ամէն բանը կերել, պրծել Օրհնեալ եղերուքն էին ասում: Ո՛չինչ. մէկ էրկու խաչ էր հանում երեսին, ժամի դուռը պաչում, եդ դառնում: Սաքի մենք էնպէս չենք անում, կոպիտ գեղըցու վրա ինչ ենք զարմանում, կամ ծիծաղում: Գրի սեւն ու սիպտակը հօ՝ էսպէս տեղը տէրտէրներն էլ բռանց էին ջոկում, աւետարան կարթալիս՝ հազար անգամ՝ եա չէշմակը դզում, եա տիրացւի, մղդսու վրա բարկանում, եա դրակալը դօշներին քաշում, եա գլուխ, երես գրքի միջումը կորցնում, մէկ պստիկ մոմ էլ ձեռներն առնում, եա մօնթի գլխին խփում՝ որ մոմը դուզ բռնի: Շատ անգամ էլ որդիանց որդի մէկ փիս, անմարս, դժարատամ, գլուխ կոտրող բառ էլ որ չէր ռաստ գալիս, հէնց գիտես՝ թէ սատանի թամքը կորաւ, շատ կռանալուցը, մոմը մօտ բռնելուցը, եա գիրքն էր էրւում, եա նրա միրուքը: Ամա էսպէս բաներ վարաւուրդ էին արել, մօտանալիս՝ կամ գլխովն էին պըտտում, կամ մէկ գիրն ասում, միւսը կուլ տալիս, եա թէ չէ սուրբ-սուրբ. ես կարթալու տեղ սոխ կամ սխտոր ասում, սաղմոսը սաղմոս ասելու տեղ՝ ղարաղ, ու ժամ օրհնողն էլ՝ եմ. չօռ էր ասում, եա չէ լսում: Մէկ գիր պակաս ժամանակին հօ՝ Աստուած հեռու տանի. ժամ ու ժողովուրդ, տէրտէր,

տիրացու իրար գլխով էին դիպչում. ամէն բերնից էնպէս մէկ խօսք էր դուս գալիս, որ զուռնի փոխանակ դափ էին ածում, մի տեղ ցխաւելը եա քշոցը կարդացողի ձեռը տալիս, տպողին օրհնում, կազմողին գովում, ու գէջգանգէջ պրծնելիս՝ Աստծուն էնքան իրանց հոգու համար շնորհակալութիւն չանում, որքան գրքից, աւետարանից ազատւելու խաթեր: Թէ մէկ վարդապետ էլ պատահում էր էսպէս վախտը, Աստուած հեռու տանի, էշը մնում էր ցխումը խրւած, կարդացողի ոտն ու ձեռը դող էր ընկնում, լեզուն կապւում: Զէ զարմանալու, ի՞նչ անեն խեղճերը, գեղերումը վարժատուն չունին, քաղաքներումը օրինաւոր վարժապետ, ու շատի փորում հինգ օր ման գաս, մէկ այբի կտոր չես գտնի: Էն էլ շատ ա, որ իրանց ջուրը ջրամանիցը հանում են, իրանց բանը եօլայ տանում, ժամի կարգը կատարում: Ամէնս էլ լաւ գիտենք, թէ ո՞ւմ մեղքն ա, ամա հիմիկ խօսալու վախտը չի, եդոյ կասեմ. ի՞նչ ասեմ, իմացողն իմացաւ ու անկաջի տակն էլ բալքի թէ քորեց. բայց ականջի տակը քորելով փոր չի կշտանալ, լաւ է մէկ րօ առաջ իր բանը կարգին բռնիլ ու չասիլ՝ «էքուց էքուց». էքուց էլ էս օրւանից ա, ընչանք էքուց, էլօր կը քցենք մեր բանը՝ գէլը սուրուն կտանի, ով անկաջ ունի, լսի, թէ չէ տեր քարին կտանի:

Մեր Աղասին, դորդ ա, տարին երեք, չորս անգամ սրբութիւն էլ էր առնում, խոստովանւում, պաս ու ծում պահում, Զատկի մատաղին ընկեր ըլում, խունկ ու մոմ վառում, մեղքը բոլոր տէրտէրի վիզը կապում, ինքը բերանը սրբում, ձեռները լւանում, ղրաղ կանգնում, բայց էս պարաքիցը պռծածին պէս՝ Քրդի ասածին պէս՝ «էլմը գէն

կիկոն էր, էլմը գէն կիկոն»: Էլ էն ջուրը, էլ էն ջաղացը, ո՛չ զուզն էր բան մտնում, ո՛չ բերանը լաղաթ առնում: Շատ անգամ ժամի ճամփէն էլ էր մտքիցը քցում, խունկն ու մոմն էլ: Էս մէկ աղաթ էր. աչքը բաց էր արել, էնպէս էր տեսել, թէ հինգ նաւակատեացը մխ չպէտք էր կերած, ժամ գնացած, ծում պահած, սրբութիւն առած, պատարագ արած, հոգոյ հաց տւած, գերեզմաններն օրհնած. ուրիշներն անում էին, ինքն էլ էնպէս էր անում, աղքատաց կերակրում, շատ անգամ քահանայ, խալխ կանչում ու իրանց ննջեցելոց հոգիքը յիշում: Բոլոր բոլոր հինալի սովորութիւններ էին, աննման օրէնք, սուրբ աստւածպաշտութիւն և մարդասիրութիւն: Աստուած տայ, ամէն ազգ էս բարեգործութիւնները ունենան, որ մեր ընտիր հայերն ունին, ամա Աղասու ջիգրը հէնց էնդուր վրա էր շատ անգամ գալիս՝ որ ինչ անում էին, խելքումը չէին նստացնում, թէ բանի զօրութիւն ի՞նչ ա: Հանդն էր դուս գալիս՝ իր մաքին ու պտուղը, դաշտերի ծառն ու ծաղիկը, երկնքի պայծառ արեգակի, լուսնի, աստղերի լիսը տեսնելիս, նրա հոգին վերանում էր, խելքը թռչում, շատ անգամ աչքերը ծով դառած՝ տեղն ու տեղը մնում կանգնած: Հէնց իմանում էր՝ թէ իրան դրախտը տարան: Ձեռները քցում, գլուխը բաց անում, երեսը մէկ երկինքը, մէկ երկրի վրա քցում, հոգոց հանում ու ցանկանում էր, որ ձէն տայ: «Ա՜խ, ո՞վ ես դու՝ ո՞վ, ետրազանիդ ղուրբան՝ Աստուած՝ որ էսքան բարիքը ստեղծել ես մեզ համար: Ա՜խ ինչի՞ չես քո, Սուրբ երեսը մէկ օր մեզ ցոյց տալիս, որ ոտներդ ընկնինք, մեր սիրտը, մեր հոգին քեզ մատաղ տանք: Թէ ասեմ երկիրն ա մենակ գեղեցիկ, հազար ծա-

գիկներով, բուսով զարդարած, բաս երկինքը ո՞ւր թո-
ղամ, որ ցերեկը ինձ լիս ա տալիս, հանգիս պառուղը
հասցնում, գիշերը մութն իմ աչքից հեռացնում ու
էնպէս չադրի պէս գլխիս վրայ կանգնած՝ անձրև,
արև տալիս՝ որ ես ապրեմ, որդիքս պահպանեմ, աշ-
խարքի պէտքը գամ՝ որ մեռնելիս էլ՝ գան հողիս
վրա, ինձ մէկ դարդակ ողորմի ասեն։ Ա՜խ, երկնա-
յին թագաւոր Աստուած՝ քանի աչքս բաց եմ անում,
էս քո արածը տեսնում, սիրտս կրակ է դառնում,
աչքս ծով, բերանս լուսում, մնում եմ ապքացած, ջե-
ռուցած, բայց ա՜խ, ո՛չ էս կրակն ա ինձ էրում, ո՛չ
էս ջուրն ինձ խեղդում։ Աչքս մոլորած էն թփից էն
թուփ, էս սարից էն սարն ա ընկնում՝ ծառի տակին
ասես, սարի գլխին ասես՝ մտիկ անելով աչքս շաղ-
ւում, ջուր ա կտրում։ Հէնց գիտես մէկ ձէն, մէկ
թև, մէկ աներևոյթ հոգի՝ տերևները խշշալիս, ղուշը
թռչելիս, աղբիւրը քչքչալիս, բիւլբիւլը երգելիս, հո-
վը փչելիս, շաղը երեսիս թափելիս, ամպը գոռալիս,
անձրևը գալիս՝ ինձ ձէն ըլի տալիս, ինձ ձեռով ըլի անում,
ինձ վրա խնդում՝ թէ վայելի՛ր էստոնք՝ հողածին մարդ,
բարի կա՛ց, բարութիւն արա, Արարչիդ մեծութիւնն
ու խնամքը ճանաչի՛ր, ծառի պէս պտուղ տո՛ւր, ծաղ-
կի պէս հոտ, սարի պէս աղբիւր, դաշտի պէս մասիլ,
երկրի պէս հաց, երկնքի պէս լիս. վայելի՛ր Աս-
տուծոյ բարութիւնը, ուրիշին էլ փայ տո՛ւր. աղ-
քատ տեսնելիս՝ կերցրո՛ւ, կշտացրո՛ւ. ղուշը վրովդ
անց կենալիս, կանչի՛ր, կուտ տո՛ւր, դո՛ւ աստա ձեռք
ունեցի՛ր, որ աստա անիս ու բախտաւոր ըլիս։ Ախ,
բոլոր կանեմ, կեանքս ուզեն, չեմ խնայիլ. բայց ի՞նչ
կլի՝ որ տէր իմ և Աստուած ջան՝ էս հոգին մէկ օր
էլա՝ մի ինձ երևի, որ էսպէս կարօտ չմնամ, չէր-

էլա՝ մի ինձ երևի, որ էսպէս կարօտ չմնամ, չէրւիմ,
չմաշւիմ նրա աննման սիրովը։ Երազումն էլա, որ
մէկ նրա պատկերը տեսնէի, սրտումս դարդ չէր
մնալ, էսքան չէի հասրաթ ըլիլ ու տանջւիլ։ Թէ դու
ես նրան ուղարկում՝ ո՞վ տէր իմ Արարիչ՝ ընչի՞ չես
հրամայում, որ մէկ օր, մէկ օր, ա՜խ՝ մէկ րոպէ էլ
ա, մէկ աչքս բաց ու խուփ անելիս էլ ա, նա մի
աչքովս ընկնի, նրան տեսնիմ, սիրտս հովանայ ու
էլի նրա աստծն անեմ, բերնիս թիքէն հանեմ, ու-
րիշին ուտացնեմ, հաքիս շորը հանեմ, ուրիշի լաշը
ծածկեմ, որ հօրնը մօրս սիրտն էլ ուրախանայ, ասեն
թէ Աստուած իրանց բարի զաւակ ա պարգևել՝ որ
իրանց խրատը գետինը չի քցում, իրանց բարի ճամ-
փին ա հետևում, իրանց աստծն անում»։ Հանդը դուս
գալիս՝ մեր բիրտ Աղասին էսպէս էր մտածում ու
սիրտն էրւում, ժամից գալիս՝ փառք էր տալիս Աս-
տուծոյ՝ որ շուտ արձակւեցաւ, ինքը տուն էկաւ՝ որ
մի քիչ դինջանայ ու գնայ հանդը՝ որ էլի սիրտը
բացւի, էլի էն հիանալի ձէնը լսի ու իր բանն անի։
Շատ անգամ բարկացած գալիս էր, տան պուճախու-
մը կամ քուրսու տակին ոտները փռում, տրտնջում,
թոնթորում, գանգատ անում, որ ժամումը խոստո-
վանւելիս՝ էնպէս բաներից էին խաբար առել, նրա
սիրտը վիրաւորել, որ նրա մտքովը ամենևին երա-
զումն էլ չէին անցկացել։

«Ախպէր՝ արածիս հլա մէկ ճար արա, յետոյ
ուրիշ բաներից հարցրու է», ասում էր շատ ան-
գամ նեղանալով։ «Հէնց քանի ասում ես, էլի եր-
կու սհաթ չոքացնում, գլուխդ տանում են թէ ասա,
ասա։ Ախր որ չեմ արել, ի՞նչ ասեմ, ի՞նչ։ Էնպէս
բան արա, որ սիրտս մի քիչ հովանայ. ես տաքա-

նայ՝ շատ շատ խոսալուց ի՞նչ կշահիս։ Ասենք՝ թէ խաթր եմ անում, լիս չեմ ընկնում, հենց պետք է ամեն բան բերանդ գալիս խոսիս։ Սիրտս սրտում ա էդ հարցրած բաներիցդ. քար ըլի, էդ խոսքերը չի տանիլ։ Ախր ինչպէս են Աստուծոյ սուրբ տաճարումը էնպէս բաներից խաբար առնում, որ չոքումը չի պէտք է խօսացած, բալքի թէ քամին իմանայ, տանի ուրիշի ականջը ցցի, տանը չի պէտք է ասած, որ չըլիմ չիմանամ՝ պատերը զարզանդին։ Ես իմ կարճ խելքովս էնպէս եմ իմանում, որ մարդ խոստովանելիս, ինքը պէտք է իր մեղքի վատութիւնը, իր արած չարութիւնը միտք անի, փոշմանի, զղջայ, Աստծուն խնդրի՝ որ իրան թողութիւն տայ, որ էլ չանի, կարողութիւն տայ, որ իր ճամփիցը չհեռանայ, բարի ըլի, թէ չէ զոռ անելով, մարդի վրա բեռը դնելով, ականջը էսպէս բաներով լցնելով՝ սրտիցը ոչինչ խաբար չառնելով, ինչ կընգնի մարդի ձեռքը, ոչինչ։ Հինգ օր էլ գլուխդ քարէքար տուր, տարով ծում պահի, որ սիրտդ թամուզ չի, ինչ օգուտ։ Թէ ինձ վատութիւն ես արել, պէտք է սրտով իմանաս, ինքդ փոշմանիս, թէ չէ ուրիշի ասելով՝ դու հօ քո ուզածը ու քո խորհուրդը չես թողալ։ Տէրտէրի առաջին չօքելիս, մեղայ տալիս, էնպէս պէտք է վեր կենաս՝ որ խղճմտանքդ դինջ ըլի, նրա ասածը գլխումդ մտնի, թէ չէ սիրտդ լիքը գնացիր, լիքը վեր կացար, ինչ օգուտ։ Թաթա բալա ա էլի, մէկ որ եախէդ ձեռ ա ընկնում, էլ չեն ուզում, թէ պոկեն։ Հաղորդութեան օրը որ գալիս ա, Աստուած գիտենայ, ջանս դող ա ընկնում։ Ինչ աման չաման կայ, լւանում եմ, ղուղս մզում, քամում, բէինս քանդում՝ որ տեսնեմ՝ թէ ինչ եմ

արել, որ ես ինքս ասեմ ու հարցընիլ չտամ։ Տուն չեմ կտրել, մարդ չեմ սպանել. ուրիշի հացը ձեռիցը չեմ խլել՝ Աստծուն իրան այեան ա, գողութիւն, չարութիւն, անառակութիւն մտքովս էլ չի անց կենում, էնքան արևի, անձրևի տակին չոքը չոք եմ անում։ Առաւօտը գնում եմ հանդը, րիգունը գալիս, մէկ մարդու ծուռը աչքով չեմ մտիկ տալիս, էլ մեղքս ո՞րն ա, որ հէնց գլխըներս տանում են՝ թէ հա՛ ասա, հա՛ ասա։ Ես լաւ գիտեմ, մեղքի պարկն ո՛վ ա, իրանցից պէտք է հէսաբ պահանջել, մեզ վրա են բեռը բարձում, մեզ մեղաւոր շինում։ Ղորդ են ասել՝ թէ շատ կարթացողի ծուծը բարակ կըլի, գըլխումը խելք չի ըլիլ, կամ թէ չէ կթուրքանայ։ Աշխարքս կարդացողիցն ա շինւել, կարդացողիցն էլ պիտի քանդւի։ Իմ դուշմանս նրանց ձեռը չընկնի, սաղ սաղ կուտեն մարդի։ Ինչ ասես, նրանցից դուս ա գալիս։ Աւետարանը իրանք են կարթում, ժամ ու պատարագ իրանք անում, մեզ ասում՝ թէ մեր ասածն արէք, մեր գործքին միք նայիլ։ Ախր ինչպէս չընայիմ, հօ քոռ չեմ, փառք Աստծու։ Ինչ ճամփով որ դու գնում ես, ես էլ էն ճամփովը պէտք է հետդ գամ, տօ դու դուզ գնա, որ ես էլ դուզ գնամ՝ է. զոռի բան չի հօ։ Տօ դու խեցգետնի պէս ծուռն ես եռում, ինձանից պահանջում ես՝ թէ ծուռը մի՛ գնա։ Առաջ դու արա, ետոյ ինձ խրատ տուր է։ Ես էլ գիտեմ, որ Աստուած փիս բանը չի սիրիլ, ես որ հող տեղովս ասում եմ, Նա ինչպէս կընդունի։ Թէ բան ունիս, էն ասա, էդով քարւան չի կտրւիլ։ Նստում են երկա՛ր, զուռնայլամա խօսում, հազար բանի անուն տալիս, հազար հրաշք պատմում, մէջը փուչ, օխտը հատիկ՝ ոչ աղ կայ, ոչ համեմ։ Քրիս-

տոս գիտենայ՝ իմ ծառիցը ու դաշտիցը շատ բան եմ սովորում, քանց սրանցից։ Տօ փող էլ ուզես, կտամ. չունենամ, գլուխս կծախեմ, քեզ կպահեմ, թաք ըլի էնպէս բան ասես, որ խելքումս մտնի. իմ հաւարին հասնիս, էն ժամանակը հոգիս ուզես, քեզ թասիր չեմ անիլ, չեմ»։

Հարցեր՝

Ի՞նչպէս են կատարում բարեկենդանը Բանաքեռ գիւղում։

Բնորոշել Աղասու բնաւորութիւնը։

ՖԱՌԱՇՆԵՐԻ ԳԱԼԸ ԱՂՋԻԿ ՓԱԽՑՆԵԼՈՒ ԴԻՏԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ։ ԱՂԱՍՈՒ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ, ԵՐԿՈՒ ԹՈՒՐՔԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ, ՄԻՒՍՆԵՐԻ ՓԱԽՈՒՍՏԸ։

Յանկարծ էս քէֆի միջում՝ հէնց բռնես՝ մէկ ամպ տրաքեց. երկիրը շարժուեց, եա թօփի, թօփխանի ձէն էկաւ, եա երկինքը փուլ էկաւ։ «Տարա՜ն—տարա՜ն—աստուածասէրք՝ մօտ էկէք,—քօմակ արէք, գլուխս լացէք.—տունս կոխեցի՜ն, օջաղս քանդեցի՜ն—աչքիս լիսը հանում ե՜ն, սիրտս դուս են ճոթում, տօ մէկ հասէք. ի՞նչ կըլի։ Ա՛ստուած՝ երկի՜նք, ծո՜վ, ցա՜մաք...էս ի՞նչ կրակ ա, էս ի՞նչ զուլըում ա... Վա՜յ օրս ու ումբրս խաւարի. էս ի՞նչ եմ տեսնում։ Ձեր թուրը կոտրուի, ձեր եկած ճամփէն փուշ ու տատասկ դառնայ... Վա՜յ իմ ըմբրիս, արևիս... ո՞ր ջուրն ընկնիմ, ո՞ր ջհանդամը գնամ... գետինն էլ ա չի պատռւում, որ ինձ մէջը տանի, աչքս հանի. էլ ի՞նչ աչքով իմ սև օրս լաց ըլիմ... Երեխիս տարա՜ն... քօմակ արէք... Ա՛ստուած՝... էս ի՞նչ կրակ ա՛

որ մեր գլխին ես ածում, մեզ էրում, փոթոթում։ Ա՛ռ, ա՜ռ քո տուած հոգին, էլ չի հարկաւոր. հոգի չես տուել, կրակ ես տուել, որ էրուի, ինքը չիմանայ, մեր ջանը փոթոթի... Ամա՜ն... հարա՜յ... դա՜թ... մադա՜թ... երկինք՝ մէկ փուլ արի, ինձ, տակովդ արա, ի՞նչ կըլի։ Ձեր փափախը ձեր գլխին խըռով կենայ, ի՞նչ տղամարդիք էք, տօ մէկ ձեռն էլա հասցրէք՝ է ի՞նչ էք քարացել, փէտացել։ Թագուհի ջան, գլխիդ մատաղ գնամ... Թագուհի... Անումիդ մեռնիմ... երեսս ոտիդ տակը, Թագուհի ջա՜ն... էդ չախմուր աչքերիդ ղուրբան ըլիմ՝ ազիզ ջան։ Աչքիս լսի պէս մեծացրի, որ էդ տեղն ընկնիս... թող ինձ սպանեն... էդ թուրը թո՛ղ իմ սիրտս խրեն... Թո՛ղ քո ոտիդ տակին հոգիս տամ... թո՛ղ ես հողը մտնիմ... էն վախտին ուր տանում են քեզ, թո՛ղ տանին։ Թո՛ղ քո նեղ օրը չտեսնիմ, որ դժոխքն ուզում ա, թո՛ղ ինձ ներս տանի»։

Էս կսկծալի ձէնի հետ լաւ, պարզ լսւում էր, որ մէկ տղամարդ թուրքերէն ասում, հարբայ էր գալիս, որ ձէնը կտրի։ «Ձէնդ կտրի՛, ղանջղ, ղարաչի... հէնց էս սհաթին փորդ վեր կածեմ. Չինգեանութիւն ի՞նչ պէտք ա, Սարդարի հրամանն ա, պէտք է ձեր աղջիկը քաշենք, տանինք, ի՞նչ խօսք ունիք, ի՞նչ կարողութիւն. Սարդարի հրամանին սարը չի դիմանալ. դուք ի՞նչ կարաք անիլ»։

Խալխի գլխին ջուր մաղուեցաւ։ Ամէնն էլ իմացան՝ թէ ի՞նչ խաբար ա։ Սարդարի ֆառաշներն (ծառայք) էկել էին, որ աղջիկ քաշեն, ո՞վ հադդ ունէր, որ ծպտայ։ Բարեկենդանը սուգ դառաւ։ Երեխէքը լալով, դողալով տուն փախան։ Կնանիքը դռները կոխպեցին ու շիրախանի կարասների տակը

մտան, կամ վերնատներումը տափ կացան, կամ դարմանի ու խոտի խրձերի մէջը մտան։ Գեղը հէնց բանես բիրաղի քանդւեցաւ։ Տղամարդկերանց որը որ վախլուկ էր, գլուխն առաւ, կորաւ, որը որ մի քիչ պինդ սիրտ ունէր, զարզանդելով, դողդողալով մօտ էկաւ, չէ՛ թէ օգնութիւն անի, չէ, այլ թէ տեսնի, ինչպէս մարդիկ են էկողները, ինչպէս են տանում խեղճ, ջրատար աղջկանը։ Ոտնդ ձռանգները թռած, սպրթնած՝ էկան մեռելի պէս ու տան բաշէն շարւեցան։ Տատի լեզուն բերնումը շաղւել, փէտացել էր։ Տատի լերդն ու թոքը ջուր էր կտրւել։ Տատի պռօշները անուճաքել՝ արինը շռռալով գնում էր։ Լաւ ուզում էին՝ որ քօմակ անեն, լաւ ուզում էին՝ իրանց էլած չէլածը տան, որ խեղճերին ազատեն, բայց ո՞ւմ ձեռիցը մէկ բան կգար։ Սարդարն էր հրամայել, ո՞վ էր կարող որ ձեռք վրա բերի։ Թէ մէկ ծպտուն էլ հանել էին, հէնց էն սհաթը՝ տուն, տեղ կրակ կտային ու իրանց էլ թօփի բերնին կդնէին, կքցէին։ Աստուած ոչ շհանց տայ։ Անօրէնի ձեռը դուշմանս չի ընկնի։ Մարդ ո՞ր հողը տայ գլխին. ինչ ուզում են, էն են անում։ Դատաստան չկայ, իրաւունք չկայ, ու Հայ ազգն էլ էնքան էսպէս ցաւեր տեսել էր, մէկ օր խօսքը մին չէր ըլում, որ իր գլուխն ազատի։ Աղջիկն ասես՝ քաշում էին, տղէն ասես՝ տանում, շատ անգամ թուրքացնում, հաւատից հանում, շատ անգամ էլ գլուխը կտրում, էրում, նահատակում։ Ո՛չ տունն էր իրանը, ոչ մալը, ոչ ապրանքը, ոչ ջանը, ոչ օղլուշաղը։ Զարմանալուն էս ա, որ էսպէս կրակի, զուլումի մէջ, էլի նրանց աչքը ուրախութիւն, նրանց երեսը ծիծաղ էր գալիս։

Էսպէս, ինչպէս ասեցի, հարիր մարդից աւելի վրա էին թափել, ձեռները ծոցըներումը դրել ու պատի ծէրիցը մտիկ էին տալիս։ Սուգ ու շիւանն աշխարքն առել էր։ Փառաշները կատաղել, փրփրում էին. շատ անգամ թւանքները դէմ էին անում, որ խալխին խփեն, վեր քցեն, որ բալքի ռադ ըլլին, կորչին, բայց էլի հուշտ էլած ոչխարի պէս ետ էին դառնում, էլ ետ ետ փախչում, էլ ետ ետ գալիս, մտիկ տալիս։ Ի՛նչ խեղճ, ողորմելի մէրն էր անում, Աստուած հեռու տանի. քար չէր մնացել, որ գլխին չի խփի, հող չէր մնացել, որ վրէն չածի։ Ձագը կորած հաւի պէս մէկ դէս էր վազում, մէկ դէն, մէկ գլխին տալիս, մէկ ոտին։ Էնքան էր ծնկներին, գլխին խփել, հարայ տվել, լաց էլել, մազերը պռճոկել, երեսը չանգռել, կըտրատել, որ էլ ոչ աչքումը լիս կար, ոչ ջանումը թաղաթ, ոչ բերնումը լեզու։ Էնպէս հէնց ձէնը փորն ընկած, շունչը կըտրւած՝ ոտին, գլխին էր անում, ինքն իրան ջարդում, գլուխը քարէ քար տալիս, եա սուրութմիշ ըլելով, գետինը լիզելով, փառաշների ոտները ընկնում, եա ձեռըները բռնում՝ որ թուրը խլի, իր սիրտը խրի, եա թէ չէ սրանք էլ որ դօշին չէին խփում, եա քացով տալիս, դէն քցում, ընկնում էր ջուխտ ձեռով աղջկայ վրա, եա ճռով ու էլ թէկուզ քացով էին խփում գլխին, թէկուզ դմբզով (մուշտով), թէկուզ ղամշով, եա թւանքի գուռթմով, էլ պոկ չէր գալիս, էլ չէր իմանում։ Ուզում էր, որ փորը ճղի ու իր հոգու սիրելին էլ ետ ներս տանի։

«Թագուհի ջան՝ էս ինչ ա. քո հարսանիքի պա՞րն եմ գալիս. փեսէն ո՞ւր ա՝ տէրտէրն ընչի՞ համար չի գալիս։ Հինէն ինչ տեղ ա. բերէք, որ աղջկանս ձեռ-

ները կարմրացնեմ։ Դափ ու զուռնէն ընչի՞ չեն ածում։ Ա՛յ զօնաղներ, ի՞նչ էք էդպէս պարապ կտրիճէրին կանգնած մնացել, ձեռըներդ ծոցըներդ դրել… Ինձ չէ՞ք սիրում… պար էկէք է… հարսանըքաւորն էդպէս բաշիբօզ կկանգնի՞ ու թամաշայ կանի՞… Խարջն իմն ա. հօ ձեր քիսիցը չի գնում, կերէք, քէֆ արէք, իմ որդուս արևն օրհնեցէք։ Մէկ աղչիկ ունիմ, որ աչքիս լսի հետ չեմ փոխիլ՝ նրա խաթրն էլա չո՞ւնիք, որ մէկ ուրախութիւն անէք, սիրտս հովանայ։ Հա՜… քնած եմ, թէ զարթուն, թէ գլուխս վրէս չի։ Բաժինքը հազիր ա. չէ. չէ… փեսէն հօ Թիֆլիզ գնաց, էսպէս թէզ չէր կարալ եդ դառնալ… Սրանք ո՞ւր են էկել… Թուրքը հօ հայի հաց չի ուտիլ… Հա՛, հա՛ հմիկ իմացայ. մեր կանանչներն են, էկել են, որ երեխիս հարսանըքի ուրախութիւնը տեսնին… Լաց մի՛ ըլիլ, երեսիդ մեռնիմ… Թագուհի ջան, ջանս ու հոգիս քեզ մատաղ. քանի որ գըլխիդ սաղ եմ, ո՞վ հադդ ունի, որ քո մէկ մազին դիպչի… Մազերդ ոսկեթել, Թագուհի ջան, ունքերդ վարաղով քաշած, որդի ջան. օրօրոցիդ մատաղ գնամ, Թագուհի ջան… վարդի պէս բաց էլած, մանիշակի պէս փընջւած. իմ արև, իմ կեանք. իմ թագ ու պարծանք, որդի ջան։ Աչքերդ բաց արա, աչքերիդ ղուրբան ըլիմ. բերանդ բաց արա՝ էդ աննման, վարդահոտ բերնիդ մեռնիմ… Քո խեղճ, պառաւ մօրն է՞դպէս ես սիրում… Է՞դպէս ես իմ սիրտը շահում… թէ ամաչում ես, ասեմ որ՝ էս կանգնողները հեռանան. այ մարդիկ, հեռացէք, կորէք. իմ աղչկայ աչքին միք երևալ։ Բան ու գործ չունի՞ք. գնացէք ձեր տունը. ի՞նչ էք էստեղ կիտուել։ Ի՞նչ անամօթ մարդիկ էք. տօ ձեզ չե՞մ ասում. քառացե՞լ էք։ Արի,

գնանք բաղը, Թագուհի ջան անումիդ մեռնիմ. ծառերը ծաղկել են՝ քո ծաղիկ երեսին ղուրբան։ Դաշտերը կանաչել են, քո կանաչ արևին մատաղ գնամ, ո՞ւր ենք մնացել էստեղ, գնանք, տեսնինք, ուրախանանք…»։

Հէնց էն ա փառաշները՝ տեսնելով, որ մէր ու աղչիկ դարդի ձեռիցը նւաղեցան, ու էլ ձէն, շունչ չէին տալիս, լաւ համարեցին, որ էսպէս թուլացած վերցնեն, էրկուսին էլ տանին, որ էլ շատ ինջըմիշ չըլին, չչարչարուին։ Երկուսը ձիու վրա նստել, էն ա տեղ էին բաց անում, որ մէկը մօրը խտտի, միւսը աղչըկանը առաջն առնի, ու էնա խաթրջամ էլած՝ միտք էին անում, թէ իրանց բանը լաւ գլուխ բերին,—մէկ թուր պսպղաց, փառաշների մէկի գլուխը գետնի վրա ընկաւ, ու սկսեց գլվլացնիլ, բլբլացնիլ ու պար գալ։ Դեռ սա ձէնը չէր կտրել, որ միւս ընկերն էլ սրա հացը կերաւ, սրա մօտ գնաց։

«Ա՛ղասի ջան, մեր տունը քանդեցիր։ Ա՛ղասի, ձեռդ քեզ քաշի. քո խեղճ հալևոր հօրը խնայի՝ որդով, տանով, տեղով եսիր կէրթանք. մի՛ ըլիր, ջանիմ գեօզըմ. քո ջիւան ջանիդ էլա ղադր արա, տօ բէմուրուաթ։ Աստուած էս ի՞նչ զուլում էր, որ մեր գլխին էկաւ։ Ո՛վ զինաւոր սուրբ Գէորգ, ո՛վ սուրբ Կարապետ դուք մեզ քոմակ արէք։ Տղէրք՝ կորէք, կորէք, որ ձեր լիղն ու թողը ըստեղ չէրևայ։ Տօ մէկդ ու մէկդ հասէք տանտրոջ մօտ. անկաջաբռնուկ տւէք, այ նրա տունը չքանդւի՝ ինչ քանդւեց, գինին գլխին զահրըմար ըլի, աշխարքս արինը բռնել, ծով ա դառել, մեր ախմախ քէդխուդէքը նստել քէֆ են անում. այ թէ մարդ են, հա։ Տօ քէֆն էլ գլխը-

ներին խռով կենայ, խաչն ու աւետարանն էլ։ Տնաքանդնե՛ր, տօ մի աշխարքի դարդիցն էլ խաբար առէ՛ք է. ախր ի՞նչ էք տան չորս պատը ու գինու գաւն ու թասը բռնել, լակում, տրաքում։ Տօ վա՛յ թօ, հասի՛, վազի՛, թև ա՛ռ, թռի՛. մարաքէն քանի կենում ա, չաղանում ա. հէնց էս սհաթը կգան, մեզ կտանին, բերդը կածեն։ Ա՛ղասի, Ա՛ղասի, քոռանաս ոչ, Ա՛ղասի, փախի՛ր, փախի՛ր, էդ շներիցը գլուխդ ա՛ռ, կորի՛ր, էդ ի՞նչ արիր՝ տնով քանդուած. մեր դուռը շարեցիր, մեր տան հիմքը տակըվեր արիր. տօ բէմուրւաթ»։

Բայց թօփ էլ տրաքէր, նաղրախանա էլ ածէին, Աղասին չէր իմանալ. ղորդ որ քառացել էր. էլ ո՛չ անկաջն էր իրանը, ո՛չ ջանը, ո՛չ աչքը. բայց խելքն ու ձեռը լաւ իմանում էին, թէ ինչ բանի վրա են։ Արինը աչքերը կոխած՝ ռաշիդ երիտասարդը հէնց էնպէս բանի էր ման գալիս, որ իր ձեռի ղուաթը, իր թրի հունարը շհանց տայ։ Ախր էլ ո՞ր օրւան համար են թուր կապում։ Ջիրիդատեղիցը վարաւուրդ էր արել, որ աշխարքն իրարոցով դիպաւ, ու ձէնը կտրեց։ «Տղէ՛ք, էստուս մէկ բան կայ, գնա՛նք, մեր բարեկենդանը հարամ էլաւ». ասեց ու թռաւ։ Հէնց տեսան նրան գալիս, բնութիւնը իմանալով, հարիր տեղից ձէն տուին, ձեռով, գդակով արին, որ հեռանայ, բայց շունչը բերնին դէմ էր առել, էնպէս ձին չափ էր քցել, էլ մաջալ չէր անում, որ տեսնի. թւանքը լիքն ա եարա՞բ, թէ դատարկ։ Առիւծի պէս ներս ընկաւ հսկայ երիտասարդը. ճամփին անկաջումը էր ընկել՝ թէ ինչ խաբար ա։ Երկուսի գլուխը սրբելէն եան, միւսներն ուզեցան, որ թուր հանեն. բայց քաջն Աղասի, որ բերանը բաց

չի արեց. «դժո՛խքի որդիք, ձեզ ո՞վ ա ղրկել էստեղ, ո՞ւմ վրա էք էդպէս կատաղել. ասէնք՝ թէ հայը ձէն չի հանում, պէտք է նրան սաղ սաղ ուտէ՞ք. աչքերներիդ լիսը կթռցնեմ էս սհաթը, կորէ՛ք՝ թէ չէ ամէն մէկդ ճուտի պէս առաջիս կթըպրտայ։ Քանի էս կուռը վրէս ա, դուք էստեղանց թել չէք կարող դուրս տանիլ»։ Որ չասեց ու մէկի էլ ուսը վեր բերեց, միւսի աղիքը վեր ածեց, էն վեցը տեսան, որ ճար չկայ, ձիանը նի էլան ու ընչանք բերդը մէկ գնացին։

ԵՐԵՒԱՆԻ ԲԵՐԴԸ

Լեռ քարափի վրա ցից գլուխը բարձրացնում, թամաշայ ա անում հանդարդ՝ հազար գլխանի դևի պէս՝ Երևանու՝ հազար տարեկան քաւթառ, պառաւած, չորս կողմը խանդակով կապած, բրջերով դայիմացրած, սուր սուր ատամները գլխին շարած, հինգ գազաչափ հաստ պարսպով երկու տակ բռնած, մէկ ոտը Կոնդումը, մէկ ոտը Դամուրբուլաղի գլխին դրած, մէկ բերանը հիւսիս, մէկը հարաւ բաց արած, չորացած գլուխը երկինքը ցցած, լէն փէշերը երկրումը փռած, անամօթ երեսը կոխած, ուղղած հազար բնով, հազար փանջարայ աչքերը դէս ու դէն չռած, ջուխտ չանգերով Զանգուի՝ քարոտ, զարհուրելի, սևադէմ ձորը խոթած, դօշին կպցրած, անմազ, անլեզու, մարդակեր բերդը, ու դեղնած երեսը հեռու տեղից ծածկում, ադահ աչքերը գետնին քցում, որ միամիտ տեսնողին դհա շուտով խաբի, դհա հեշտ իր ծոցը քաշի ու բերանի անձէն անսաս կուլ տայ, փչացնի։

Պարսիկ նրան շինեց, խորամանկ, խաբեբայ, թէ Օսմանցի նրա հիմքը դրեց՝ կատաղի, անհաշտ, ոչ գիր կայ, ոչ թարեղ։ Նրա պատմութիւնը խաւարի միջումն ա, մարդ ուղիղ չի գիտի, չի լսել. բայց հազարաւոր ժամանակ՝ անահ, անվախ՝ պինդ երեսը լիրբ գազանի պէս դէմ առած, որքան թօփի թօփխանի գիւլլէք էլ նրա կուշտ քամակին, նրա կակուղ դօշին, նրա բաց գլխին դիպան, ոչինչ չի ազդեց, քեար չարեց։ Կորցրած թևերն էլ եդ սաղացրած, ջարդած ոսկոռներն էլ եդ պնդացրած, գլուխը վեր քաշեց, էլ եդ շունչ առաւ, վեր կացաւ, կանգնեց՝ ուսերը դզեց, ոլորեց, սարքեց, ու էլ եդ հարբա գալով, հաթաթա տալով, իր գլուխը քորողի, իր շւաքի հետ խաղացողի թուլութեան, փոքրոգութեան, անզօրութեան ու յիմար յանդգնութեան վրա ծաղր անելով, ծիծաղելով, ծափ տալով, պպին կանգնեց, մատը ցցեց էս հողաշէն, այլ ոչ քարաշէն բերդը ու խենէշ դիմօք՝ իր կոտրած ոտները Զանգւի բերանը խցկելով, մնաց տեղը նստած, Զանգւի, որ գիշեր ցերեկ անքուն, անդադար, գժւած, կատաղած նրա բաց դօշին, նրա անիրաւ սրտին՝ իր պլոկած ջրի անբերան թրովը, քարի ուրաքովը վեր հատում, զարկում ա, բայց տեսնելով՝ թէ չի կարում ջիգրը հանիլ, վրէժն առնիլ, նրան քանդիլ, գոռալով, գանգատելով, կական բառնալով, քիչ քիչ ձէնը փորը քցում ու մունջ մունջ երեսը կալնում, Զանգիբասարի ծոցն ա մտնում ու յոյսը կտրած, սիրտը կոտրած՝ տխուր դէս ու դէն ցրւում, ցնորւում ու հազար բարի, հազար պտուղ ու արդիւնք տալով, բաշխելով, ճամփէն մոլորում, կորչում ու չի կարում իր սիրուն

քուրն էլա Արագին մէկ խաբար տանի, չունքի Երևանու թամարզու, կարօտ բնակիչքը նրա ճամփէն բռնում, նրան սիրով խտտում, իրանց մէջը, իրանց հանդն են տանում, որ նրա սուրբ կաթնահամ ջրովը՝ իբանց էրւած սիրտը հովացնեն, իրանց դառը քրտինքը նրանով լւանան ու նրա տւած պտղովը իրանց գլուխը պահեն։

Երևանու բերդն, Հայաստանու հողն, որ հազար տարուց յետ դառել էր գողի ու աւազակի բնակարան. էն հողը, էն հիանալի աշխարը, ուր տեղ որ դրախտն էր եդեմական, ուր որ Աստւած բոլոր աշխարը ջրհեղեղովը երբ որ կործանեց, Հայոց սուրբ Մասսայ սարը միայն արժան տեսաւ, որ Նոյեան տապանը նստի ու Հայոց երկրիցը էլ եդ մարդիկ բազմանան ու ուրիշ երկրներն էլ շինութիւն քցեն։ Էն սուրբ հողը, ուր որ անպարտելին Հայկ՝ անաստւած Բէլայ չար մաքին չհաւանելով՝ իր ընտանիքը, իր քաջ, պատւական զօրքը հաւաքեց, էկաւ ու Հայաստանի զարմանալի սարերի, սիրուն դաշտերի տեսոյն մայիլ մնացած, Զանգւի դրախտանման ձորը, Զանգվի փրփրադէզ, անահ ջուրը, Երասխի մարմանդ ծոցը, Մասսայ ու Ալագեազի երկնանման գլուխը, Սևանայ ծաղկափթիթ ձորերն ու սարերը տեսնելով, իր մզրախը ցցեց ու իր սուրբ անունովը Հայաստան կանչեց։

ԱՆԻՍԱՅ ԱՒԵՐԱԿՆԵՐՈՒՄ. ԱՂԱՍՈՒ ՔԱՋՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մէկ տափարակ դուզ տեղ րաց ա ըլում յանկարծ տեսնողի առաջին՝ մէկ մեծ դաշտ, չորս կողմը սարերով պատած՝ աջ ու ձախ սևին տալիս, ու

քանի գնում ա մարդ, ամպ ու դուման քաշւում, պարզւում են. հէնց իմանում ես՝ թէ առաջիդ մէկ էնպէս քաղաք ա բաց ըլում, որ հազար հազար կենող միջումն ունի, ու ցրտի եա շոքի ձեռքից բէզարած՝ ուզում ես, որ շտապիս, գնաս մէկ Աստուածասէրի դուան վեր գաս, դինջանաս, էլ եդ ճամբէդ բռնես, գնաս։ Մէկ տեղից ահագին բերդի պարիսպն ա քեզ խաբում, մէկ տեղից զարմանալի եկեղեցեաց գմբէթը ու մեծութիւնը. միւս տեղից բարձր մինարէթը, քօշք ու սարայի գլխըները։ Մտքումդ ասում ես՝ թէ էս տեսածդ մէկ մեծ, զօրեղ թագաւորի թախթ պէտք է ըլի։ Էստեղ ոսկին ու արծաթն աղպի հետ պէտք է խառը ընկած ըլի, էստեղ օրը հարիր քարւան ներս մտնի, հարիրը դուս դայ։ Հէնց իմանում ես՝ թէ ցերեկը թօզն ու դումանն ա աչքդ բռնում, գիշերը՝ մութն ու խաւարն ա քեզ խաբում, որ ինս, ջինս, մարդ, անասուն չես տեսնում, հէնց ջամդաքակեր ագռաւներն են աչքերիդ սևին տալիս։ Մարդ չի կայ մօտիդ՝ որ հարցնես, գիր չես կարթացել, որ իմանաս. մըտքիդ հետ ընկած, տեսածդ հրաշք կարծելով եա աչքակապութիւն, որ յանկարծ գլուխդ չես բարձրացնում, ա՜խ, սիրելի իմ հայազգի՝ ջանդ դող ա ընկնում, կռներդ թուլանում. հէնց իմանում ես՝ թէ մէկ վիշապ եա մէկ հարամի հէնց էն սհաթին ա մտել ու բոլոր կենողներին եա կուլ տուել, եա սուրը քաշել, եա գերի արել, ինքն էլ փախել. ուզում ես, որ աչքդ խփես, եդ դառնաս։ Ա՜խ, չէ՛, չէ՛, եդ մի՛ դառնալ. էստեղանց ծուխը հազար տարի աւելի ա՝ որ կտրուել ա, կա՛ց, մի՛ վախենալ. անշունչ քարերն ու եկեղեցիքը մարդակեր չեն։ Աչքդ

բաց արա, սիրտդ քեզ հաւաքիր ու գլխիդ վա՛յ տուր։ Էս սրբատաշ տաճարները, էս ահագին բերդը, էս քարերը քեզ կասեն՝ թէ սա է գոռոզն Անի, քո թագաւորների հզօր մայրաքաղաքը, որ էնքան էր իր հարստութիւնովը, իր փառքովը փարթամացել, ճոխացել, մեծամտել՝ որ չօբանն էլ եկեղեցի էր շինում, ոչխարարածն էլ արծաթէ նալչովը, սաղրի քօշերով ման գալիս, ուզւորն էլ հացի տեղակ փլաւ, ղանդ ու շաքար, սև փողի տեղակ արծաթ ու ոսկի պահանջում, որ եկեղեցի մտած ժամանակն էլ էնքան էին Աստուած մոռացել նրանք, որ կարճ վարդապետ գալիս՝ բարձր գրքակալ էին դնում, բարձր եպիսկոպոս ըլելիս՝ ցած գրքակալ դուս բերում, որ եա ձգւին, եա կռանան, եա չօքին, եա գիրքը չտեսնին ու իրանք ծիծաղին, Աստուծոյ տաճարումը քէֆ անեն։ Բայց Սուրբն Յովհան Երզնկացի հանաք չվերցնելով՝ մէկ որ օրհնած բերանը բաց արեց, երկիրը տրաքեցաւ, տակըվեր էլաւ, խալխը ցրւեցին, փախան, որը Ղրիմ, որը Պօլշա։ Էս անշունչ քարերը մնացին ցից ցից, հազար եկեղեցուցը հինգը մնացին չէն։ Տաճարք, ապարանք, գանձ, հարստութիւն անէծքի փայ էլաւ, հողը մտաւ։ Հայոց ազգի մնացած փառքն էլ ու մինչև էս օր էլ երկրի ձէնը գալիս ա։ Գող, աւազակ են միջումը բուն դնում. Նրանց բանն Աստուած յաջողում ա, նրանք չեն տակով ըլում, ու Աստուած էնքան իր գութը հայերիցը պակասացրեց, որ էնքան անմեղ հոգիքը, էնքան միլիօնաւոր մարդիկ մէկ սհաթումը մէկ սևագլխի խօսքով ջնջեց, Հայոց Տունը քանդեց, էլած փառքն էլ ձեռիցը խլեց, որ գնայ էպսէս երերեալ, տատանեալ մնայ աշխարքիս երեսին։

Լա՛ց գլուխդ, ա՛նցաւոր, տե՛ս՝ թէ Աստուծոյ դատաստանը ի՛նչպէս արդար է. կարգաւոր տեսածին պէս՝ տները ջուր արա՛, խմի՛ր, որ էսպէս քաղաքը անէծքով քանդեցին, ու էս օր էլ քանդողին եկեղեցումը տօնում են: Դու չե՞ս իմանում, որ նրա անունը տաս, սուրբ աղօթքն ու բարեխօսութիւնն յիշես, որ քեզ էլ չանիծի, քու որդիքը պահի, մեծացնի: Նրա տօնի օրը լաւ մտքումդ տպաւորի. ի՞նչ կանես Անի քաղաքի անումը. նա քանդւեց, պրծաւ, ամա սուրբը քեզ միշտ օգնական ու բարեխօս կըլինի: Ղրաղին կանգնել ես, ձեռդ ծոցդ դրել, խելքդ ցնորւել, լեզուդ պապանձւել. ո՜վ էսքան հրաշք տեսաւ, վայելեց. երազ եմ տեսնո՞ւմ, քնած եմ, աչքս ինձ խաբե՞ց, ասում ես մտքումդ, ուշագնաց ըլում. հօ նոր են սրանք, բաս սրանց միջումն ընչի՞ չկայ ձէն, ընչի՞ են լռել: Ա՜խ, թշնամեաց սուրն ա նրանց վերջացրել: Հմիկ հաւատո՞ւմ ես, ա՜յ իմ խեղճ ազգ, թէ քո երկրումն բիւր էսպէս քաղաք կամ կրակով փչացան կամ սուրը քաշեցին ու քեզ չոր քարեր մենակ թողեցին, որ տեսնիս ու լաս, քո գլխիդ վայ տաս, խելքդ ժողովես, լինիս կորիչ հայ, Ռուսաց հզօր քաջ ձեռի տակին փոքր դինջանաս ու քո աշխարքին մուղայիթ կենաս, արխէնդ թափես, քո ազգը պահես, քեզ անուն ճարես:

Հանգստարանից ձէն էր գալիս, որ մեր ճա՛մփորթքը գիշերւայ կէսին էս տեղ հասան: Լաւ կորիչ մարդ պէտք է ըլի, որ էս ժամանակին էսպէս չօլ եաբանի տեղը սիրտ անի, մտնի, կարելի է՝ թէ մեր բէզարած ճամփորթքն էս տեղ չէին հասել, թէ գիշերւան լիսնեակի լիսը, էս տաճարների, բրջերի գլուխը ու իրանց տգիտութիւնը նրանց չէին խաբել,

էս տարտարոսը քցել: Անու քաղաքի անունն էլ չէին լսել, ուր մնայ՝ իմանային, թէ նրա խարաբէքը դեռ աշխարքումը կան: Հեռւանից որ ցից ցից տների գլուխը չտեսան, Ռսի հողիցը դուս էին էկել, հարամու հողը էլ եդ մտել: Ղորդ ա, աքլորի ձէն չէր գալիս, ամա սարերի չօբանի ձէնը լսելով՝ էլ մտիկ չարին, ղու քաշեցին, ու քու դուշմանի գլխին չի գայ, որ չմտան էս լուռ տխուր պարսպների մէջը, հէնց իմացան՝ թէ մէկ մեռելատուն կամ գերեզմանատուն ընկան, ու ամեն մէկ ձիու ոտի շփլթոցը, եա իրանց քաշած շունչը սար ու ձոր կատաղացնում ա:

Ամեն մարդ փորձած կըլի, որ մութը ժամանակի մարդ որ. մէկ գերեզմանատան կամ մէկ քանդւած եկեղեցու ղրաղով էլ ա անց կենում, սիրտը թուլանում ա, ջանը դարդանդում, հազար միտք հոգին կարատում, քարերն էլ դեւ համարում ու հարամի, որ իրան կամենում են ուտիլ, շատ անգամ ուշագնաց էլ ա ըլում: Սրա պատճառը բոլոր էս ա, որ մարդ սովոր ա, ինչ տեղ տուն ա տեսնում եա շինութիւն, կարծելով՝ թէ մարդ էլ կըլի, ու եդոյ՝ որ ձէն չի լսում, էնպէս կարծում ա՝ թէ անպատճառ չար հոգիք են էնտեղ բնակւում. թէ չէ՝ մեռելի չոր մարմինը, եա խարաբա պատերը ի՞նչ զօրութիւն ունին, որ մեզ ինչ անեն: Էլ ո՞վ սիրտ կանէր ապա կամ եկեղեցու մօտանայ, եա մէկ բուրջ մտնի, էն էլ էն երկրումը, որ ամեն քարի տակի հարիր գլուխ էր կորւում, ամեն մէկ ձորում հազար լաշ հոգին զոռով տալիս: «Տղե՛րք, չար սատանի թուրը գլխներիս խաղում ա», ձէն տւեց պինդ սըրտով քաջն Աղասի. «Տղամարդութիւնն էսպէս տեղը

մալում կանի. եղբայր, աղալը հազրեցէք, ձիանոնցը գինջացրէք, որ թէ Աստուած տայ՝ մինչև առաւօտը գլխըներս վըրներս ըլի, տեսնինք՝ թէ որ գէղանգեալմազն ընկանք։ Նամարդութիւնը էլ ձեռք չի տալ՝ ձիաները ջրեցէք, քաշեցէք մէկ պատի տակ, ես մէկ շունչս առնիմ. եաւաշ մէկ աչք ածեմ, տեսնիմ թէ տեղըներս ռահաթ ա, թէ էլի սրով ու արնով պէտք է եա գլուխ պահենք, եա գլուխ կտրենք»։ Շատ էլ խնդրեցին ընկերքը, որ չանի. անկաջ չարեց. Թւանքն ուսին դրեց, փշտօքերը հազրեց, սուրբ Սարգսի անունը տւեց ու ոտը փոխեց։ Գիժ կըլի էն տղամարդը, որ իր գլուխը մահու կտայ, ամա Աղասին իր գլխիցը վաղուց էր ձեռք վեր առել։ Հաւատարիմ շունը գլուխը նրա ոտիցը չէր հեռացնում։ Մէկ հոտ առնելիս, եա շփըլթու իմանալիս՝ կանգնում էր, եղի ոտների միջն էլ ցցում, երկար վախտ անկաջ դնում, յետոյ երըմիշ ըլում։

Հէնց մի քիչ հեռացան թէ չէ, մէկ եկեղեցու դռնից կրակի լիսն ընկաւ Աղասու աչքը. արինն աչքն առած՝ էլ միտք չարեց, թէ էսպէս տեղը գողից, հարամուց աւելի ուրիշ օքմին չի ըլիլ, թուշ կրակի վրա գնաց։ Աստուած հեռու տանի ինչ նա տեսաւ. տասը քուրդ եկեղեցու մէջտեղը կրակ էին արել, չորս կողմը նստել՝ խորոված էին անում, շամփըրներով բերանները քաշում, ուտում, խնդում ու աչքները օյաղ որսկանի շան պէս եա դուռը քցում, եա պուճախը։ Հարամին, ինչքան էլ ըլի, շատ անգամ իր շւաքիցն էլ կվախենայ։ Ընչանք նրանք կրակի մօտիցը ձեռները աչքերին կդնէին ու դռան ղարալթուն կտեսնէին, Աղասին եաւաշ եաւաշ ներս մտաւ, ծանր դէմքով առանց բարով տալու՝ կրակին

մօտացաւ ու ձեռը մեկնեց, որ մէկ խորովածի շամփուր էլ ինքը քաշի։ Նրա դեղնած մեռելի պատկերը, նրա անահ շարժմունքն ու էնպէս անժամանակ վախտը ներս գալը որ չտեսան քրդերը, հէնց իմացան, թէ նա էն աշխարքիցն է վեր էկել. լիզմերը չորացան, ձեռըները թուլացան։ Ինչ կըկարծէին, թէ էն հագաղին խաւարդի մէջն մենակ սիրտ կանէր էն աւազականոցը մտնէր, որ ցերեկն էլ հարիր մարդ զարզանդում էին մօտոճը անց կենան, որ հազար տարուց աւելի էլ խոստովանորդի սիրտ չէր անում, որ դայ էն հաղիր շինած տներումը կենայ։ Հէնց գիտես՝ թէ մարդիք չըլին առաջին. աչքը խոժոռած՝ մէկ դէս քցեց, մէկ դէն, քրդերէն էլ չգիտէր, որ մէկ բառ էլա խօսի, բայց էս էր որ նրան պրծացրուց, չունքի թէ խօսացել էր, կիմանային, որ մարդ ա, դև չի, թիքա թիքա կանէին։ Մէկ շամփուր խորովածի, որը կերաւ, որն էլ եդ կրակը քցեց. տաճարի հիանալի շինուածքին ու գեղեցկութեանը միտք արեց, ու գլուխը ժաժ տւեց։ Քրդերը փէտացած մնացել էին նստած. աչքը որ յանկարծ նրանց վրա չխոժոռեց, ամէն մէկը տեղն ու տեղը ուզեցաւ, որ հալչի։ Էնքան էսպէս նրանց աչքը մոխիր ածեց, որ ընկերների ոտի շփըլթուն իմացաւ, ու շունը ուրախ ուրախ ներս ընկաւ, ոտներովը փաթթւեցաւ։ Հէնց շունը տեսան հարամիքը թէ չէ, աչքըների փառը վեր ընկաւ, ամեն մարդ թրին վրա վազեց, որ նրան փառչալամիշ անի. առաջի թուրը վրա բերողի գլուխը կէս էլաւ, փշտօմների երկուսն էլ իրանց փորսը ճարեցին, ու ղամէն ձեռն առած, որ գոռաց ոչ. «Տղերք, ձեր արևին ղուրբան, Աստուած մեր կողմն ա, դուռը կտրեցէք, որ սրանց մա-

տաղն էս գիշեր անենք։» Հայի լեզուն որ բաց չէլաւ, հէնց բանես պատերը լեզու առան։ «Աման ձեր էկած հողին ղուրբան, ճար ունիք, տեսէք, մեզ ազատեցէք, տնով տեղով ձեզ եսիր կդառնանք». տասը սասնը հինգ քրդստանցի հայ էլ, որ էս կողմից, էն կողմից գլուխ չի բարձրացրին ու քրդերի մնացած թրերն ու մզրախները ձեռք առան, քրդերի սատղը թեքւեցաւ. ութը կոտրւել էին, երկուսը մնացել եարալու ընկած; սրանց էլ կապեցին մէկ ձիու բհրի վրա, ու աչքդ բարին տեսնի, ոչինչ սհաթի մարդի քաջութիւնը էն բարեբարութիւնը չի արել, ինչպէս հիմիկ։ Աղջիկ ասես, տղայ, հարսը, երեխայ, ծծկեր՝ հազար չւանով կապած՝ տուն էին արել, Ղարսայ գեղերիցը եսիր բերել, որ տանին՝ եա Սարդարին փէշքաշ անեն, եա Ախըլցխա ծախեն։ Ո՞ւմ էսպէս սհաթին մարդ կեանք տայ, որ նրա առաջը ծունր չդնեն, երկրպագութիւն չանեն. բայց հսկայն Աղասի ինքն էր ընկնում սրանց ճտովը, ինքը նրանց կապը եդ անում, ինքը երեխին ջոկ, մօրը ջոկ սիրում, գուրգուրում, որ Աստծուն փառք տան, սուրբ Սարքսին խունկ ու մոմ վառեն, թէ չէ՝ էս իր հունարը չէր։ Ոչինչ գիշեր էն լիսը, էն կեանքը չի տեսել, չի քաշել, ինչպէս էս։ Ազատւողք թէ ազատողք, իրար տեսնելիս, հէնց իմանում էին՝ թէ երկնքումն են ու ոչ երկրումս։

Փոքր ինչ որ դինջացան, աչքդ բարին տեսնի՝ քրդերի շորերն, ասպաբն, ձի, ռախտը ու խուրջինները որ բաց չարին, հազար արնի գին կար միջըներումը, ամեն մէկի վրա հարիր թումանի զիքս, արծաթ ու ոսկի, թող նաղդ փողը։ Աղասին ոչ մէկլին էլ ա մոտիկ չարեց, ղրկեց՝ ձիանը բերել տւեց,

ներս քաշեց, ու քրդստանցի հայերին հարցրեց, որ իրան միամըտեցընեն՝ թէ էն գիշերը կարող են՝ էնտեղ ռահաթ մնալ թէ ոչ։ «Աղա, գլխուդ, արևուդ ղուրբան, վալլախա չընք գինայ, թէ էս շան լաջերիցն էլ կան, թէ չէ. ամա օյեաղութիւն աղէկ է։ Սրանց չանգիցը շունը չի խլըսի, մարդն իմալ խլսի։ Մկա Աստծուն փառք՝ խազար էնպէս ջանաւար մեր առաջը գան, զէնոնց խէրն անիծեմ, մէկ թուր տուր մեր ձեռը, մենք գինանք, թէ իմալ քո ճակատը պարզ կէնենք։ Մեր ամէն մէկը, սուրբ Կարապետ գինայ, էսոնց տասնին՝ խաւի պէս կծալի, տակը կքաշի։ Դու դարդ մի արա, ռահաթ պարկի. մեր երեսն ոտացդ հողն ըլի։ Էսոնց քօքը կտրւի. քանց շուն շատ են, քանց գէլ առաւել։ Թէ մեզ կխարցնես, մենք էմլա խէյրաթ կտեսնինք, որ մեր կէս պարկլի, կէս ղարաւուլ քաշլի։ Էս ձորեր խանա լիքն են։»

Հէնց էս մայլըհաթին էին, մէկ էլ էն տեսան, որ ձիաւորի ոտի ձէն ա գալիս։ Արիասիրտն Աղասի միտք արեց, որ սրանք նրանց ընկերները պէտք է ըլին. ակլան թօթափել երեխայ, օղլուշաղ դրաղ քաշեց, հազար անգամ ձեռն էստուր բերնին դրեց, որ ձէն չըհանեն. երկու քրդին էլ բերան, ձեռ, ոտք դհա դայիմ կապեց ու մէկ իգիթ քրդստանցու թուրը հանած վրըները կաղնացրուց, միւս քրդստանցոնցը կրակի չորս կողմը նստացրուց, որ կարծիք չընկնին, ու ինքն իր ռաշիթ տղերքանցովը եկեղեցու դրան աջ ու ձախ կողմը կտրեցին, թուրները հանած՝ պատնըդուս ցցւեցին ու թշնամուն ճամփա ունին։ Լօլօ ձէն տալով՝ քանից աւելի ձիաւոր ժամի դռանը վեր եկան, բալուլ ունին մէկ եր-

կուսի ձեռքը, որ ժան ածեն։ Հայի երեխեքանց ու կնանոնց սուգ ու շիւանի ձէնը, որ ժամը չէր ընկնում, պատերն էլ սուգ էին անում. բայց խեղճերը չէին իմանում, թէ ինչ բարի հրեշտակ ա Աստուած նրանց համար ուղարկել։ Հէնց գիւռ արած, որ ղալմաղալ անելով ներս չընկան, էլ չիմացան՝ թէ մարդ ա, որ իրանց գլուխը կտրում ա, դև կարծեցին կամ սուրբ. էլ թրի, մզրախի, եա ղալխանի վախտ չէր։ Քրդստանցի հայերը մաջալ էլ չաւին Աջամի հայերին. շատին հէնց կրակի շամփուրն կամ թրերիցն էին բերանը կոխում, գլխին, դօշին քարով, փէտով, ծեծում, որ շուտ չմեռնեին ու տանջուին. էլի Աղասին էր, որ էս կատաղութեանը չափ դրեց. սպանածներին դուս ածել տւեց, ու որը սաղ էին, եա եարալու՝ ձեռ ու ոտք կապել տւեց ու ղրաղ քաշիլ տւեց։ «Աղա, մեր տուն քանդող էսոնք են, էսոնց խօր տունը քանդւի, էսոնք մեր ճիժը ու մանչ խատացրին՝ թող, թող էսոնց սատանի կեր անենք, էսոնց խօր գաղտը գեօրբէ-գեօռ ըլի։»

Թող կարթացողը ինքը միտք անի, թէ էս գիշեր ինչ գիշեր կըլէր էս ջրատար եարների համար, որ ամեն մէկ ոտք փոխելիս՝ իրանց մահն էին տեսել, իրանց մահին էին սպասում։ Թէ ինչ սրտով նրանք աղօթք կանէին, ինչ հոգւով իրար կնայէին ու Աստծուն փառք կտային։ Հէնց էն կոտորելու ժամանակին էր Աղասին դուս թռել, էն դռան երկու քրդի մէկին էլ սպանել, միւսը փախցրել, ու խեղճ հայի երեխէքանց աչքերի ու ձեռների կապը իրան ձեռովը եդ արել, իրան ուսին ներս տարել։ Զարմացած, մահի դուռը գնացած ու եդ էկած հայերը,

որ աչքները բաց չարին իրանց ազատողին տեսան, ուզում էին ոտներն արտասնքով լւանան, բայց համեստ պատանին հէնց էն էր խնդրում, թէ Աստծուն փառք տան, սուրբ Սարգսի անունն յիշեն։ Տեսնելով, որ քրդստանցիք սուրբ Կարապետին աւելի են ճանաչում, ասեց՝ թող էդպէս ըլի, սուրբ Կարապետին յիշեցէք, սրբերը չեն խռովիլ եա նախանձ պահիլ. ով ըլի՝ նրա զօրութիւնն ու բարեխօսութիւնն շատ ա։ Աղասու սիրտը վկայում էր՝ թէ էն գիշերը էլ փորձանք չի կայ. բոլորին էլ խնդրեց, որ չօքին, աղօթք անեն. Նրանց բախտից, եարների միջումը տէրտէր էլ կար, տիրացու էլ. սրանք սկսեցին առաւօտեան ժամը, ու Անի քաղաքը հազար տարուց աւելի, որ ոչ ժամ էր տեսել, ոչ աղօթքի ձէն լսել, էս գիշեր հէնց իմացաւ, թէ իրանց երեւելի շքեղ թագաւորազունքը կրկին վեր են կացել, իրա հողը օրհնում, իրա ջուրն գովաբանում, որ հայ ազգը էլ չհաւատայ, թէ իրան Աստուած էնպէս ա անիծել, որ էլ մարդ չի կարող նրա միջումը կենալ։ Ոչ երկիրը քանդւեցաւ, ոչ երկինքը փուլ էկաւ։ Քրդստանցիք իրանք էլ էին մնացել զարմացած, թէ էն ինչ անճոռնի սասութիւն պէտք է ըլէր, որ մինչև էն օրը սրտներումը հաստատ տպաւորել էին։

Առաւօտը որ լուսացաւ, Աղասու աչքը մնացել էր սառած, չէր իմանում, աչքին հաւատայ, թէ ոչ. եկեղեցի, պարիսպ, բերթ, մինարէք էնքան նոր, էնքան պայծառաշէն ու անընակ։ Կարթալ չէր գիտում, որ միտքը բերի, թէ էս ինչ քաղաք պէտք է ըլի. տէրտէրին որ չի կանչեց ու պատմութիւնն բացաւ, խելքը գլխիցը թռաւ. «Վա՛յ իմ օրին, արևին. մեր ազգն էսպէս քաղաքներ ա

ունեցել, էնպէս մեծութիւն ու հմիկ ամենն էլ կորց-
րել, հաշամու ձեռին գերի ա մնացել.» ասեց հսկան
լալով: «Ջէ, տէր հայր, մեզ Աստուած ա բերել էս-
տեղ, Աստուած մեր թրին, մեր կռան ղւաթ տւեց,
որ մէկ գիշեր էսքան բաներ արինք. էն Աստուածն
էլ էնքան կարողութիւն ունի, որ մեզ միշտ յաջողի,
համարմութիւն հօ չենք անում, որ նա բարկանայ,
հարամու տան ենք կորում, Աստուծոյ ստեղծուածը
ազատում: Մնանք էս սուրբ հողումը. մեր սուրբ
թագաւորաց գերեզմանը, մեր սուրբ եկեղեցիքը
ազատենք գողի, աւազակի ոտքից: Հարրրից աւելի
ենք հիմիկ. ինչ ձեռք են քցել, ձեզ ըլի: Մնանք
էստեղ. ես մենք էլ մեր արինը մեր սուրբ թագա-
ւորաց հողի վրա թափենք, ես քիչ քիչ նրանց քա-
ղաքը էլ եդ պայծառացնենք: Տուն կայ, ջուրը բոլ,
հանդը, դաշտը մեծ, մէկի տեղակ հինգ զարմանալի ե-
կեղեցիք. քարի տակից ոզդ կը հանեմ, ձեզ կը պահեմ:

Բայց թէ քարին ասած, թէ մեր բրդատնցի
հայերին. կաւում, զորդ ա, ամեն մէկը մէկ աժդհա,
բայց ինչ գրումը գրած ա՝ նրա շլինքը տուր, նը-
րան ուրիշ բան մի ասիլ: Մեանիս էլ՝ նա իր ասածը
կանի, էնքան կողքը հասա ա:—«Իմալ կեղնի, անի-
ծած խողում վըմ կմնայ: Յայսմաւուրքն սուս խմալ
կխօսի: Մեր միղը զարկես, մեր ջանը խանես, վայ-
լախա էս չօլում կեցող հմլա մէկն էլ ա չեղնի,
չեղնի: Յաղար տարի խա սան, խա գլուխդ ի քա-
րին զարկի: Մենք չընք կենայ, չընք գինայ, ինչ
կասես, սան: Մենք մեր խողը չենք թողայ»:

«Ջէք թողալ, Աստուած ձեզ հետ. մեր ատղը
մէկ անգամ ծուել ա. մարդն ինքն իր գլուխը որ
թրի տակը դնի, էլ ում բանն ա կտրել նրան քօ-

մակ անի: Էնպէս արինք, որ մեր տունը քանդւեց
է: Գնացէք, Աստուած բարի ճանապարհ տայ ու
ձեր սիրտը մէկ լիս քցի, որ ձեր խէրն ու շառն
իմանաք: Ես իմ տղերքանցովս էստեղանց էլ դուս
գալու չեմ, թէ ձեզանից էլ ուզող կըլի, որ ինձ
հետ միանայ, իմ ախպէրն ա, իմ աչքի լիսը: Մէկ
թիքա ունենամ՝ կէսը նրան կտամ. ինձ համար
աշխարքն ես ըլի, ես չըլի». ասեց ու հրամայեց,
որ ինչ ճարել են՝ հաւասար բոթ անեն. ինքը մատն
էլա մի բանի վրա չդրեց. բայց թուր ու ապար
հրամայեց, որ վերցնեն, բոլոր ընկերներին մէկ մէկ
ձեռք քրդի շոր հաքցրեց, որ շուտով չը ճանաչին.
ամեն մէկին մէկ ձի էլ բաշխեց: Էս որ տեսան,
քանից աւելի ջահիլ կարիչ տղերք կանգնեցին,
խնդրեցին, որ իրանց էլ ընկեր շինի. նրանց էլ
գլխին հաւաքեց, որբութիւն տուաւ ու միւսներին
լալով խէլիմ տեղ էլ տարաւ, ճամփու քցեց ու ինքը
իր ընկերատնցովը ես դառաւ. փօքր հաց կերան,
պարիսպ, եկեղեցի բոլորին ման էկան ու հարաւա-
յին քարափի բուրջը խստակել տւեց, մէկ երկու
հոգի Շորագեալ ուղարկեց, որ գնան, հաց առնեն,
ու ինքը սիրան ու թօքն էրւած պատանին ընկաւ
քաղաքի ամեն ճամփին ու խօռը, ամեն քունջն ու
պուճախ աչքի տակ առաւ, տեղի գայիմութիւնը ու
վտանգաւոր կողմը լաւ վարաւուրդ արեց ու բէզա-
րած, ջարդւած էլ եդ վեր էլաւ, ձորիցը դուս էկաւ,
զըրաղ քաշւեց, մէկ բըջի վրա նստեց, Արփաչային
ու արեգակի մանելուն նայեց, աղլուխը ձեռքն ա-
ռաւ ու բայաթի ասեց:

ԱՂԱՍԻՆ ՀՕՐ ԳՐԿՈՒՄ ԽՈՂԽՈՂՒԱԾ ԹՈՒՐՔԻ ԽԱՆՋԱԼՈՎ

Մեր ջիւան Աղասին, որ հինգ տարի սար ու ձորի գազան, հարամու գլուխը չի տւեց, պահեց, էն բաներն արեց, որ աշխարքումը քիչ ադամորդի արած կըլի, վերջը Գրասովսկի գեներալի հետ թըռաւ իր ցանկալի վաթանը, որ իր Ջրատար հօր յետին շնչին հասնի, ու հէնց բերդն առան թէ չէ, նա՝ մէրը կորցրած գառան պէս՝ էլ չի համբերեց, որ ոտքը մի քիչ խաղաղւի. ընկաւ բրջէ բուրջ ու որ հօր անունը չըհարցրեց, մէկ երևանցի հայ առաջն ընկաւ, տարաւ նրան էն բրջի դուռը, որտեղ որ նրա տարաբախտ հէրը մէկ քանի հայերի հետ բռնւած էր։ Բայց անիրաւ պարսիկքը վաղուց էին իմացել նրա ղօնշունի հետ գալը ու նրա սպանածների հէր, ախպէր, ազգական, մինչև տասը մարդ գնացել՝ էն բրջումը տափ էին կացել։

Երեք թուրք ընկել էին բրջի մէկ ղրաղումը, միւսները փախել,—մ՛խ, լեզու, լուխս, ի՞նչ կըլի—Աղասին, հրեշտակ Աղասին՝ երկու խանչալ սրտումը ցցւած, երեքը քամակումը, ու ոտ ու ձեռ հազար տեղ եարալու փարալու՝ իր ողորմելի հօր դօշին, արինը ծովի պէս չորս կողմը բռնած՝ որ Սրբազանը վրա հասաւ։ Աջու ձեռը որ չէր տարել, որ հօր գլուխը, էն ձնի պէս սպիտակ մազերը մէկ խառի, մէկ դօշին կպցնի, որ էնքան տարւան էրւած սրտի մուրազն մի առնի, հովանայ, հէնց տեղն ու տեղը ուսը վեր էին բերել ու կտրած ձեռը մնացել էր հօր գլխատակին, երեսը երեսին ու ձախու ձեռը էնպէս փէտացած, դօշի վրա ընկած։

ԱՌԱԿՆԵՐ

ԾԱՌԵՐՆ ՈՒ ԿԱՑԻՆԸ

Ծառերն, որ մէշումն խիստ շատ զւլրն էկան
Կացնի ձեռիցը ու էլ չիմացան,
Ի՞նչ անեն իրանց գլուխը պահեն,
Խորհուրդ արին, մէկ ճար իրանց անեն։
«Կացինն ի՞նչ զատ ա, որ մեզ քեար անի,
Չէն տւեց նրանց մէկը ծառերի։
«Մենք որ կոթ չտանք, կացինը կուռ ա՞յ
Մեզ վնաս տայ կամ հէչ մեզ մօտանայ»։
Թող իմացողը ինքը իմանայ
Ու նհախ տեղը կացնի կոթ տայ։
Թէ չէ սկիզբը իրան կկտրի,
Յետոյ փոշմանիլն բանի պէտքը չի։

ԿԱՏՈՒՆ ՈՒ ՄՈՒԿԸ

«Ընկել եմ ձեռըդ. դէ ուտում ես, կեր,
Էլ ի՞նչ ես խառնում իմ դառը ցաւեր.
Գիտեմ, որ իմ վերջս էս օր հասել ա,
Խեղճ ձագս իր բնումն անտէր պէտք է մնայ»։
Ասեց մէկ խեղճ մուկն անիրաւ կատուին,
Որ չանգել նրան, դրել էր առաջին։
«Մկամ մտիլն ա մենակ իմ ուզածն»,
Պատասխան տւեց կատուն չարացած.

«Ամեն մէկ ձէնդ, էդ քաղցր ծվծւալդ,
Որ անկաջս ընկնում, ու էդ թուլանալդ
Տեսնելիս՝ սիրտս էնպէս ա ցնծում,
Հէնց իմանում եմ, նոր կեանք եմ ստանում»։—
Անգութ, անիրաւ, խամի սրտին
Ուրախութիւն է տանջելն ընկերին։

— —

ԱԲՈՎԵԱՆԻ ՏՈՒՆԸ

Խղճիկն այն խրճիթ, անզարդն այն սրահ
Երկերթեկ այն տուն, ծխածեփ քարեայ.
Լուսահատ անկիւնք, խոռոչք բազմատահ,
Յատակ ի հողոյ, առաստաղ փայտեայ...

Ի տանեաց, ի յորմոց, ի ճեղքաց լուսամտից
Աստ ի ներքս տեղային, հոսէին, թափէին
Եւ կարկուտ, և հեղեղ, և անձրև, և ռումբ ձիւնից,
Եւ մրրիկ, և հոսան, փոթորիկ սարսռագին...

Տիւ, գիշեր անծածկոյթ և անփակ, անխափան,
Մղէին ի յարկ մեր սոսկալէմքն այն բնութեան.
Գոռալով, վանելով, մռնչելով կատաղաձայն
Մրրխային, կուէին, քանդէին զմեր կայան...

ԴՈՐՊԱՏԵԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՐԳԵՐԸ

ԿԵՆԱՑ ԲԱԺԱԿ

(Գերմանականից)

Եղբարք, մի շուրջ ժողովեցէք,
Բաջ Հայոց կերպի կոնծեցէք,
Բաժակներըդ դարդըկեցէք
Մեր հայ ազգի կենացը։
Հայոց երխտասարդներուն,
Հայրենիք պաշտպանողներուն,
Որոց անկումն-էլ սուրբ է մեզ—
Այս բաժակը նըւիրենք։
Հայ աղջիկներու կենացը,
Որք միայն հայ մարդ կու սիրեն,
Միշտ իրանց մաքուր կու պահեն,—
Այս բաժակը դարդըկենք։
Արանց, որ մեր սիրան գրաւում են,
Մեզ զգօն ճամբով վարում են,
Որոց կեանքը մեզ օրինակ,
Մի երբեակ «կեցցէ» ասենք։
Եղբարց, որք այժմ աւարտել են,
Մեր ուխտի անդամ եղել են,
Որոց ուխտը միշտ սիրում է,—
Այս բաժակը նըւիրենք։
Եղբարց, որք դարդից ազատ են,
Մահւան հանգիստ վայելում են,

«Ողորմի հոգուն» ասելով
Այս բաժակը նուիրենք,
    Բայց որ դեռ գինին փայլում է
Ու մեզ իրան մօտ քաշում է,
Բաժակներըդ դարդըկեցէք
Ազատութեան կենացը։

Ռ. Պատկանեան

ԻՆՁ ՀԱՄԱՐ ՉԷ

Թարգմանութիւն

Ինձ համար չէ գարնան գալը,
  Ինձ համար չէ ծառի ծաղկիլը
  Ուրախութեան սրտի վրգխոը,
  Ո՛չ մի բերկրանք չեն ինձ համար։
Ինձ համար չէ կենաց բաղդը,
  Ինձ համար չէ երջանկութիւնը,
  Եւ մրայօն կուսի աչքերը,
  Նոցա արցունք չեն ինձ համար։
Ինձ համար չէ փայլուն լուսնի
  Անտառ ու սար լուսաւորելը,
  Գարնան վարդի երգչի տաղերը,
  Սոխակ ու վարդ չեն ինձ համար։
Ինձ համար չէ բարեկամաց
  Մէկտեղ սիրով տօն կատարելը,
  Զատիկ օրւայ ուրախ ասելը
  «Քրիստոս յարեաւ» չէ ինձ համար։
Ինձ համար չէ ծնողաց լացը,
  Ինձ համար չէ աղջկայ տխրիլը,
  Գերեզմանիս վրա արտասուիլը

  Բարեկամաց՝ չէ ինձ համար։
Բայց ինձ համար կուգայ ժամը,
  Կերթամ թըշնամեաց պատերազմը,
  Եւ մահաուիթ սպանիչ գնդակը
  Անդ պատրաստած է ինձ համար,

Ռ. Պատկանեան

ՀԱՅՈՑ ԳԻՆԻ

  Բաժակներ առնունք, եղբա՛րք,
Լիք լիք բաժակներ գինով.
Կարմիր ու ճերմակ գինին
Մեզ լինի անուշ համով։
  Բերներիս տանենք անվախ,
Չէ դա խառնած կամ խարդախ,
Նեկտար է և ո՛չ գինի,
Խըմենք, մեզ անուշ լինի։
  Արաքսայ ջըրով ցօղած,
Հայոց արևով հասած,
Հայոց աղջիկ է քաղել
Քընքոյշ ձեռներով քամել։
  Այս բերքն է Հայոց երկրին.
Հայաստան ընկած Նոյէն,
Անմահ երկնային գինին
Նա խմեց, երբ իջաւ սարէն։
  Այս անոյշ գինին խմողը
Սրտէն թո՛ղ հանէ ոխը.
Ամենքս էլ ասենք ամէն,
Որ մեզի շատ տայ ամ էն։

Ռ. Պատկանեան

ՀԱՅՈՑ ԱՂՋԻԿՆԵՐ

Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մատաղ,
Երբ միտս էք գալիս՝ ասում եմ ես ա՜խ,
Հալւում եմ, հալւում օտարութեան մէջ,
Ա՜խ, սիրտըս խորւում, ցաւիս չիկայ վերջ:
Երբ կարմիր գինին բաժակումս ածած
Սեղանիս վրա առաջս է դըրած,
Աչքըս ակամայ վըրան եմ ձըգում,
Ձեր սիրուն պատկերն եմ մէջը տեսնում:
Տեսնում եմ և, ա՜խ, միտքս է մոլորւում,
Դառն արտասուքով աչքըս պըղտորըւում,
Կարծում եմ բոլոր աշխարհը մըթնեց,
Արևն էլ խաւրեց, էնդուր որ տխրեց:
Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մեռնեմ,
Ձեր սիրուն աչերն էլ ե՞րբ կըտեսնեմ,
Էն սև սև աչքերն՝ սև ունքով պատած,
Կարծես՝ երկնային զալամով քաշած.
Էն սև սև աչերն, որ շատին սպանեց
Բայց էլի շատին գըժոխքից հանեց,
Ես էլ կենդանի տեղովս եմ մեռած,
Առանց կըրակի էրւած, խորովւած:
Էլ ե՞րբ կըտեսնեմ ես ձեզ ման գալիս.
Բաղ ու բաղչայում սէյրան անելիս,
Ինչտեղ ամօթից վարդն էլ է դեղնում,
Երբ որ ձեր կարմիր թըշերը տեսնում:
Բլբուլն էլ վարդից ձեր ձայնը լսելիս՝
Թըռչում է, թըռչում, ամպերում կորչում
Եւ իր Արարչի տեսածն ասելիս
Փառք քեզ, Տէր Աստւած, փա՜ռք քեզ է կանչում:
Հայոց աղջիկներ, ի՞նչ անուն տամ ձեզ,

Թ՚է հրեշտակ անւանեմ, հրեշտակ չեմ տեսել,
Թ՚է մարդ անւանեմ, բէդամաղ կանեմ,
Ուրեմն ի՞նչ անեմ, մոլորւած եմ ես.
Մոլորւած եմ ես օտար աշխարհում,
Հաւատն էլ օտար, օտար և լեզուն,
Աղջիկն էլ օտար ու ձեզ չի նըման,
Հայոց աղջիկներ, դուք էք աննըման:
Ձեր սէրն է միայն սըրտումըս պահած,
Ձեր սիրով միայն եմ ես կենդանի,
Ձեր սէրը միա՛յն էս կեանքըս մաշւած
Օտարութեան մէջ դեռ կըպահպանի:

Գէորգ Միրիմանեան. աշակերտ Լազարեան ճեմարանի, յետոյ ուսանող Դորպատեան համալսարանի. վախճանեցաւ իւր ծննդեան տեղը, Տփխիս, բարակցաւից, երիտասարդութեան հասակում:

ԵՐԳ ՊԱՆԴՈՒԽՏ ՊԱՏԱՆԵԿԻ

Ծիծեռնա՛կ, ծիծեռնա՛կ,
Դու գարնան սիրուն թըռչնակ,
Դէպի ու՞ր, ինձ ասա,
Թըռչում ես այդպէս արագ:
Ա՜խ, թըռիր, ծիծեռնակ,
Ծընած տեղըս Աշտարակ,
Անդ շինիր քո բուն,
Հայրենի կըտուրի տակ:
Անդ հեռու ալեոր
Հայր ունիմ սըգաւոր,
Որ միակ իւր որդուն
Սպասում է օրէ օր:
Երբ տեսնես դու նորան,
Ինձնից շատ բարև արա,

Ասա՛, թող նստի լայ
Իւր անբաղդ որդու վրրա։
  Դու պատմէ, թէ ինչպէս
Աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով
Կեանքս մաշուել, եղել է կէս։
  Ինձ համար ցերեկը
Մութ է շրրջում արեգը,
Գիշերը թաց աչքիս
Քունը մօտ չի գալիս։
  Ասիր, որ չի բացուած
Թառամեցայ միացած
Ես ծաղիկ գեղեցիկ,
Հայրենի հողից զրկուած։
  Դէհ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր, թռիր արագ,
Դէպի ի Հայոց երկիրը,
Ծնած տեղս—Աշտարակ։

Պ. Դուրեան

ՆԱԶԱՐԵԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Հայոց ազգի տունը պիտոյ է և կարող է միայն շինուիլ նորա լեզուի շինութեամբը։ Լեզուն է, որ անապատները շինել է բարեկարգ քաղաքներ և կազմել է մարդկային ընկերութիւններ. և այդպէս յառաջացուցել է կարգ և օրէնք, աշխարհաշինութիւն, արուեստ և գիտութիւն, հազարաւոր գիւտեր ու հնարներ, մարդուս կեանքը թէ պահպանելու և թէ զարգարելու համար։ Առանց լեզուի չէին կարող հաստատուիլ ոչինչ խելացի քաղաքական կարգեր և թագաւորութիւնք. առանց լեզուի չէր կարող մարդը քաղաքացի դառնալ, չէր կարող երկրագործութիւն լինել, առուտուրք յառաջանալ. կարճ ասեմ, չէր կարող մի հացատու բոյս բուսնել, մի կտոր հաց գոյանալ մարդու համար։ Լեզուն է եղել այդ բոլոր բարութենների սկզբնապատճառը, լեզուն եմ ասում, որ միտք է, բանականութիւն է, գիտութիւն է և բոլոր հմտութենների մայր ու դայեակ։ Ինչ խորհուրդ ունի լեզուն համօրէն մարդկութեան համար, նոյն խորհուրդը ունի նա մասնաւորապէս ամեն մի ջոկ ազգի համար. ուրեմն հայի համար իւր լեզուն, որ արդարև ամեն մինը մեզանից, որի խելքն տեղումն էր, պարտական է համարել իւր ամենասուրբ բանը, իւր աչքի լոյսը, իւր սրտի ար-

իւնը, իւր կենդանութեան հիմքը, իւր պատիւ ու պարծանքը։ Լեզուի ու ազգի նւազումը մին բան է, որպէս և դոցա ծաղկելը և բարգաւաճելը այնպէս մօտ լծակից ու եղբայրակից միմեանց հետ, որ մինը առանց միւսին անիմանալի է, ոչինչ է։ Այս խօսքերի ապացոյցը կարող է ամենայն բանագէտ հայ գտանել թէ հին և թէ նոր ազգերի պատմագրութեան մէջ. բայց Հայոց հասարակ մարդը առանց հեռի գնալու ունի այդ ապացոյցը իւր յատուկ ազգի ու լեզուի այժմեան դրութեան մէջ։

Հայոց ազգի տունը, կրկնումենք լիիստ շեշտելով, պիտոյ է շինուի նորա լեզուի շինութեամբը։ Հայոց լեզու ասելով այս տեղ հասկանումենք մեր հայ ժողովրդի կենդանի բարբառը, նորա բերանի խօսքը, այն լեզուն և ձևերը, որով մեր ժամանակի հայերը լաւ ու վատ հասկացնումեն միմեանց իւրեանց միտքը, դատողութիւնը և զգացողութիւնքը։ Հայոց լեզու ասելով իմանումենք միայն աշխարհաբառ լեզուն, որ կեանք ունի մեր ժամանակումը, և ոչ թէ ուսումնական, գրոց ասած լեզուն, որ այժմ մեռած է և կարող է միայն պիտանի լինել գիտնական հային։ Լեզուի նորաշինութեան համար աշխարհաբառ լեզուի թերութիւնը լցուցանելու է մայրենի աղբիւրներից։ Բայց որովհետև մեր այժմեան Հայոց լեզուն և մեր նախահարց բարբառը ամենևին նոյն հիմքերի վերա է հաստատած էապէս, և ամենայն յետ ու յառաջ նայեցող գիտնաւորի անհերքելի էր քննել մի ծառի աճեցողութիւն, առանց ուշադիր լինելու նորա արմատին և սնուցիչ հողին, այս պատճառով անպատշաճ չենք համարում մեր ժողովրդին քանի մի համառօտ տեղեկութիւնք աւանդել հին լեզուի մասին,

այլև քննել դորա ընթացքը և փոփոխութիւնքը ժամանակի ազդեցութեան և այլ հանգամանքների տակ, որով յառաջացել է մեր աշխարհաբառ ասած լեզուն, մեր այժմեան կեանքի հոգեղէն կերպարանքը։

Հայոց լեզուն ընդհանրապէս, եթէ քննենք նորան այժմուս եւրոպական լեզուագիտութեան լուսի տակ, է մի ճիւղը այն մեծ և լայնատարած Հնդկա-Եւրոպական սանսկրիտ լեզուների և պատկանումէ մանաւանդ թէ նոցա գերդաստանին արևմտեան Ասիայի մէջ, այնինքն է Իրանեանը, որին պատկանում են նոյնպէս հին զենդ և պարսիկ լեզուքը։ Եւ արդարև, հայոց լեզուի յարակցութիւնը սանսկրիտեան արմատի հետ, ինչպէս երևում է, Զենդի միջնորդութեամբն է. գոնեա այն բաները, որ հասարակաց էին հային և սանսկրիտին, աւելի մօտ են զենդական ձևերին, քան թէ սանսկրիտին։ Բայց եթէ միտ դնենք մեր ազգի պատմիչներին և դոցա գրուածքներով ազգի մէջ տարածուած կարծիքներին, այնուհետև պիտոյ է մեզ հայոց լեզուն շինել նոյն իսկ Նոյ նահապետի լեզուն, պատճառ, հայոց ազգապետ Հայկը, Յաբեթի թոռը, իջանելով Արարատի աշխարհից դէպ ի Բաբելոն, աշտարակաշինութեան միջոցին, լեզուների խառնակութենից յետոյ կրկին յետ է գալիս իւր հայրենիքը և տիրապետում է Հարք գաւառին Տուրուբերանի և իւր հալածող բռնակալ Բէլին սպանելով, հաստատում է իւր իշխանութիւնը Հայաստան աշխարհի վերա և իւր բոլոր զաւակներովը խօսում է հին Նոյեան լեզուն։ Այս զրոյցը, որ շատ առասպելական բան է երևում, թէպէտ արդարև շատ հաճելի էր մեր հայի անձնասիրութեանը, մաշած ու կտրատած ուսումնականութեամբ աշխատե-

լով հաստատել Հայր Ինճիճեանը, Չամչեանը և Աւգերեանը, կամեցած են մեր Հայոց ազգին սեփականել մարդկային ազգի ամենահին, սկզբնական լեզուի պարծանքը։ Շնորհակալ ենք այդ գիտուն Վենետիկեան վարդապետների ազգասիրութենից, միայն թէ ունենար դա աւելի հաստատուն հիմքեր և կարողանար դիմանալ հրափորձութեանը գիտութեան անողոքելի դատաստանի առաջև։ Ոչ մի ազգ Եւրոպայումը չէ համարձակւել մինչև այժմ ասել, թէ իւր լեզուն մարդկութեան առաջին լեզուն էր, որովհետև դորա համար հարկաւոր էին այնպիսի զօրաւոր ապացոյցներ, որ ոչ մի ազգ չէ կարող յառաջ բերել. և Հայոց պատմագրութիւնը լինելով աւելի մանուկ ժամանակների որդի, ունէր և շատ թոյլ պատճառներ ապացուցանելու իւր լեզուի այդքան խորին հնութիւնը, թող թէ առաջնութիւնը։ Այսպիսի թոյլ պատճառներ են արդարև այն մի քանի զրոյցքը և աւանդաբանութիւնքը, որ վերաբերում են մի քանի տեղերի Արարատին կից և նորա մօտակայքումը, զօր օրինակ, «Առնոյոտն» Մասիս սարի արևելեան ոտքումը, որպէս թէ Նոյ նահապետը այստեղ է դուրս եկած ջրհեղեղից յետոյ, «Ակոռի» կամ «Արկոռի» Մասիսի հիւսիսահայեաց ոտքումը, որպէս թէ Նոյ տընկել էր այս տեղի խաղողի ծառը. «Մարանդ», որ ստացել էր այս անունը որպէս թէ Նոյի կնոջից, որ մեռած էր այս տեղ։ Դիցուք թէ այս Մարանդը քրիստոնէութենից յառաջ Պտղեմայոսի աշխարհագրութեան մէջ յիշւում է Մարունդա անունով, և Նախիջևան քաղաքը Մասիսի արևելեան կողմումը, Արազ գետի հիւսիսային եզերքի վերա դրած, մի և նոյն տեղն է։ Փլաւիոս Յովսեփոս հրէան իւր հնախօսու-

թեան մէջ յատկացնում է որպէս իջևանի տեղ, հայոց զրոյցների վերա հիմնւելով. դիցուք թէ Նախիջևանը յայտնի է Պտղեմայոսի յոյն աշխարհագրին Ναξούανα անունով, որպէս քաղաք մեծ Հայքի մէջ, ուրեմն քրիստոնէութեան ժամանակից յառաջ. բայց այն զրոյցները, որպէս թէ այդ տեղերը Նոյի և նորա գերդաստանի բնակարանն էին, հաւանական է երևում, թէ յառաջացած են հրէայ գաղթականներից, որ շատ վաղուց եկած էին Հայաստան և տուն ու տեղ էին հաստատել Արազի մօտ, որ և չորրորդ դարու սկզբումը Քրիստոսից յետոյ, արդարև, շատ բազմաթիւ էին, գոնեա Նախիջևանի սահմանումը։

Եթէ անպայման հաւատ ընծայենք Հայոց ազգային զրոյցներին և ընդունենք, թէ Հայք մի ժամանակ խօսել են Նոյ նահապետի լեզուն, ըստ որում Հայկը Յաբեթի թոռն էր, այնուհետև պիտոյ էր վերջացնել ամենայն լեզւաբանական հարց ու խնդիր. պատճառ, Նոյեան լեզւից ոչինչ գրաւոր յիշատակարան չը մնալով մեզ, կարող չենք և բան հասկանալ համեմատութեան ճանապարհով։ Եթէ Հայք միայն կամին Յաբեթեան լինելով ժառանգած լինել Նոյեան լեզուն, ապա եւրոպացիք, որ ազգապետի զաւակներ են, յայտնի է ահա, որ դոքա ոչ Քամի ոչ Սեմի ցեղից են. ապա ուրեմն և եւրոպացիք իրաւունք ունին մի փոքր մասն պահանջել այն Նոյեան լեզւի պարծանքից, որ հայերը սեփականացնում են իւրեանց. բայց ոչ մի եւրոպացի չէ մտածում այդպէս. Քան. ինչպէս եւրոպացիք, նոյնպէս և Հայերը Յաբեթեան են և պատկանումեն մի և նոյն Հնդկա-Եւրոպական գերդաստանին, և այդպէս Հայոց լեզուն, երկար ժամանակ, ուսումնական քննութիւն չը լի-

նելով դորա վերա, թողած ու ձգած էր մի անապատ անկիւնի մէջ, որպէս մի ջոկ ու առանձնացած լեզու ոչինչ ծանօթ լեզուների կարգի չը պատկանելով. բայց այժմ, եւրոպական լեզւագէտների քննելով՝ հայկական լեզւի քերականական կազմութիւնը ամբողջապէս ընդունուած է, որպէս մի լեզու, որ ունէր ներքին ազգակցութիւնք Հնդկա-Եւրոպական լեզուների արմատի հետ. այդ հետաքննութեան պարծանքը վայելում է մանաւանդ Պետերման գերմանացին, և հայկազեան լեզւի տոհմակցութիւնը սանսկրիտի հետ հաստատուած է մեծ եւրոպական լեզւագէտ Պոտտի խոստովանութեամբ։

Հայոց խղճալի ազգը, երկար ժամանակ անուսումն մնալով, շատ փոքր կամ ամենևին ոչինչ ծանօթութիւն չունենալով եւրոպական բազմօրինակ լուսաւորութեան մասին, այլ և բոլոր ազգի ուսումնականութիւնը փակած մնալով աբեղայական խցերի մէջ և քանի մի միակողմանի գիտնականների ձեռքում, կարծիք է յառաջացել ազգի մէջ, որպէս թէ քերականութիւն և ճարտասանութիւն մի այնպիսի գերազանց ուսումն է, որ նորանով պիտոյ էր չափել և քշռել ամենայն գիտութիւն, մինչև որ հայոց հասարակ մարդը նս՝ քերականութեան և ճարտասանութեան անունը տալով կամ լսելով, մտածում էր, թէ ինչ իմաստութիւն կայ և չ՛կայ աշխարհիս վրա, նոցա մէջ է պարունակած։

Այսպէս հայոց անբախտ զաւակների բոլոր հայկական ուսումը եղել են հին քերականութեան չոր ու ցամաք կանոնները և հին ճարտասանութեան

ձևերը։ Թող մեր հայ զաւակների տանջանքը և տառապանքը հին քերականութեան և ճարտասանութեան վերա, որոնց ասպարէզը օրէ օր աւելի նեղանում է՝ ըստ որում մեր ժամանակի հարկաւորութիւնքը ամենևին այլ են. նոյն իսկ հին մատենագրութիւնը չէ կարող հոգեղէն սնունդ տալ մեր ժամանակի հային, ըստ որում չունի իւր մէջ այն սննդարար նիւթը, որ լցուցանէր նորա իմացական պիտոյքը և կարօտութիւնը։ Չենք ասում, թէ Խորենացի պատւական ծերունու գրուածքը, Ագաթանգեղոսի, Եղիշէի և միւս հնախօս հեղինակների վաստակքը անպիտան էին. քաւ լիցի այդպիսի յանդգնութիւն և ազգուրացութիւն մեր կողմիցը։ Մենք ուսումն առած և կրթուած եւրոպական դպրոցումը՝ քաջ գիտէինք, թէ ուսումնական հայի համար ինչ գին և արժէք ունին հին լեզւի յիշատակարանքը։ Չենք և չենք մոռանում նոյնպէս մեր սուրբ թարգմանչաց հրաշալի հայկաբանութիւնով մեզ պարգևած Աստուածաշունչ գիրքը, որ մեր քրիստոնէութեան աղբիւրն է, թէպէտ, ցաւ է ասել, աղբիւր ծածկեալ և թագուցեալ, ըստ որում անհասկանալի է ժողովրդին։ Բայց եւրոպական գիտութիւնք և արհեստք, որոնց միջնորդութիւնովը կարողանային մեր տղայքը ծանօթանալ աշխարհի, բնութեան և մարդկութեան որպիսութիւններին, ուրեմն նորանոր գաղափարներ ստանալ, սնանիլ և ճոխանալ այնպիսի տեղեկութիւններով, որ հոգեպէս և մարմնապէս պահպանիչ էին ազգի զաւակներին։ Այդպիսի կենդանական և կենդանացուցիչ նիւթեր չկան հին մատենագրութեան մէջ։

Եթէ հայոց զաւակք, տեսանելով, թէ իւր մայրենի լեզուն անհիւթ և անծուծ է, բնական ուղիղ

դատողութիւնով բաց է թողում մեռեալը և ձեռք
ձգում այն կենդանի և զօրութիւն տւող նիւթը, որ
գտնւում է օտար լեզւի մէջ։ Եթէ հայազգի զաւակը,
չունենալով իւր հայրենի պտղատու ծառը, պար-
զում է ձեռքը դէպի օտարատունկ ծառը և նորա
համեղ պտուղներովը յագեցուցանում է իւր ստա-
մոքսը, և այդպէս օտարի կերակրովը սնունդ առած՝
սկսում է և ինքը օտարանալ և այլազգանալ։ Այդ
բանի մէջ ո՞վ է մեղաւոր և դատապարտելի. հայոց
մանո՞ւկը և պատանի՞ն, թէ նորա անհոգ և անփոյթ
հոգաբարձուքը. ի՞նչպէս կարելի է քաղել այնտեղ
վարդ ու մանուշակ, ինչ տեղ ցանած են փուշ և
տատասկ։ Հայոց զաւակը մեղաւոր չէ, եթէ չէ կա-
րող հայ լինել հոգով և սրտով։ Հայութիւն քարոզե-
լով, հայութիւն պահանջելով ոչինչ բան չի յառա-
ջանայ։ Այստեղ հարկաւոր է գործ, գործ մեծ և հո-
գաբարձութիւն միաբան։ Մինչև հայոց հայրենասէրք
պատւաւոր և քաջալերական ասպարէզ չ՛բանան հայ-
ոց զաւակի առջևը, մինչև հաստատուն պատճառներ
չ՛կային մէջտեղումը, թէ այն հայոց լեզու, որ կու-
սանէր հայազգի մանուկը, լուսաւորութեան ճանա-
պարհ էր, հաց և ջուր կտար, փառքի և պատւի
կըհասուցանէր. մինչև բանի ընթացքը այսպէս չը-
լինի, զուր էին ամենայն խօսք և խօսւածք։

Եւ ազգի օգուտը յառաջ տանելու համար, ո-
չով ծառայ չէ, ոչով պարոն չէ. այլ ամենեքեան
պարտական են մշակ լինեն, արդար և ջերմեռանդ
մշակ, մեծատունը իւր առատ արծաթովը և գիտ-
նականը իր աշխատասէր գրչովը. այս հաւասար
կշիռը լինելով և անխախտ պահելով ազգի մէջ՝ յու-
սալի էր յառաջադիմութիւն և պտղաբերութիւն,

ապա թէ ոչ, հայոց ազգը կը մնայ այնպէս ամայի
անապատ, ինչպէս մնացել է մինչև այժմ։ Բայց և
այդպէս ևս չի մնայ, ըստ որում Կռօնոս շատակեր
ծերունին սովոր է կուլ տալ և ոչնչացնել ժամա-
նակի անպիտան որդիքը։ Ասացինք. ով որ ականջ
ունի լսելու, թող լսէ։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ

Հինգերորդ դարու ճակատումը, որպէս մի նագելի պարագլուխ հայկական լուսաւորութեան, որպէս մի յաւիտեան քաղցր պատկեր Հայոց դպրութեան, պատմագրի հոգու առջև կանգնած է պարթևացի Սահակ Մեծը, տասներորդ հայրապետը Հայաստանի, ծնած Կոստանդնուպօլսի մէջ, Ներսէս Մեծի որդին և ձեռնասուն աշակերտը։ 390 թուականին հասնելով պատրիարքական աթոռի, ամբողջ յիսուն տարի ամենազգաստ արթնութեամբ կառավարել է նա Հայաստանի եկեղեցին այն բազմապատիկ փոթորիկների տակ, որոնց ունէր դա համբերելու այն միջոցներում։ Հայոց պատմութիւնը և պատմագիրը կարող չէ լռել, թէ այս մեծ և հոյակապ ողամարդը որպիսի անարժան ապերախտութեամբ Հայոց նախարարների և մեծատունների կողմից, որպիսի անարգ մատնողութեամբ Պարսից թագաւորի առաջև հրաժարւել է իւր հայրապետական պաշտօնից և 440 թւակ. կնքել է իւր ճոխավաստակ կեանքը մի տխուր առանձնութեան մէջ, սիրտը կոտրած, հոգին լցւած տրտում մարգարէութեամբ ապագայի վերա։ Երկար կը լինէր այստեղ մանրամասնաբար պատմել Սահակ պարթևացու վարքը, որ այնպէս մօտ կապակից է նորա ժամանակի պատմութեան հետ, որ առանց սորան կարող չէ ոչ պատշաճապէս հասկացւել և ոչ արժանապէս

գնահատւել։ Նորա գիտնականութիւնը և մեծամեծ վաստակները հայոց ազգի կրթութեան ասպարէզի մէջ կարելի է դատել նորա գործերից, որ սոքա են։

Գերազանց թարգմանութիւնը հին կտակարանի եօթանասուն թարգմանիչների հիման վերա, որի մասին խօսած ենք արդէն այն թարգմանութիւնների շարքում, որ հինգերորդ դարում եղած են յունական լեզւից։—Մի ճառ եկեղեցու և հոգևորների բարեկարգութեան մասին. այս աշխատութեան խորհուրդը այն էր, որ արտաքին աստւածպաշտութեան տնտեսութիւնը աւելի բարւոք համակարգէ, աղմոսերգութիւնքը աւելի պատշաճապէս կանոնաւորէ, այլև տօները սահմանէ մի բարեկարգ տօնացուցի հաստատուն կանոններով։—Բացի սորանից, Մովսէս Խորենացին իւր Հայոց պատմութեան երրորդի գրքի մէջ պահպանել է մի քանի նամակներ, որ Սահակ պարթևացին գրած էր դէպ ի կայսր Թէոդոսիոս Կրտսերը, դէպի Կոստանդնուպօլսի Ատտիկոս պատրիարքը և Անատոլիոս զօրավարը։ Այլև, Սահակ պարթևացու անւամբ գտանւում են մի քանի երգեր հայոց Շարակնոցի մէջ,

Ո՞ր հային յայտնի չէ Մեսրոպ Մաշտոցի, հայկական նշանագրերի հանճարեղ հնարագործողի անունը. սա էր Ներսէս Մեծի միւս հոյակապ աշակերտը, որպէս նորա վարքագիր Կորիւնի, նոյնպէս և Ղազար փարպեցու վկայութեամբ ծնած Հացիկ գիւղումը Տարօնի մէջ։ Նորա ծնողի անունը Վարդան էր, որ սկսեալ մանկութենից դաստիարակել տւեց իւր որդին յունական ուսման մէջ։ Մեսրոպը դիմեց թագաւոր Խոսրով երրորդի մօտ և պաշտօն յանձն առաւ արքայական դպիրների մէջ. այն մի-

ջոցին, Հայոց թագաւորների բոլոր հրամանները, հրովարտակները և դիւանական գործերը գրւում էին յունական, ասորի և պարսիկ տառերով։ Մեսրոպը մի քանի տարի կատարելով դպրի պաշտօն, գտանւած է միշտ անարատ իր ծառայութեան մէջ։ Բայց ինչպէս մի նաւ, ալիքներից տատանւած, շտապում է դէպի նաւահանգիստ, նոյնպէս շտապում էր նա դէպի առանձնութիւն, որ աշխարհի հոգսերից ազատ կրթէ իր իմացականութիւնը։ Նա տեղափոխւեց դէպի Գողթն գաւառը Երասխի մօտ, ուր ապրում էր միայնակեցութեամբ և հին ժամանակներից այստեղ մնացած, կամ թէ կրկին դէպի նախնի կռապաշտութիւնը յօժարւած հայերը դարձուց դէպի քրիստոնէական հաւատ։ Այսպիսի գործերով պարապած, ապրում էր Մեսրոպը երբեմն միւս գաւառումը Հայաստանի, մինչև Վռամշապուհի, Խոսրով երրորդի եղբօր թագաւորութեան հինգերորդ տարին (397)։ Յետոյ Մեսրոպը հրաժարւում է իր միայնակեցութենից և գալիս է Սահակ կաթողիկոսի մօտ։

Թէ Մեսրոպ Մաշտոցը ճանապարհորդելով և ապրելով Հայաստանի գաւառների մէջ՝ ինչ դրութեան մէջ էր գտած հայոց ուսանող մանուկները, և թէ քանի՛ քանի՛ պատճառք էր ստացել ցաւելու բոլոր հայկական ազգի վերա, որ իր աղօթքը և եկեղեցական պաշտօնքը ստիպւած էր կատարել օտար, ասորի լեզւով, որ անհասկանալի էր նորան, և թէ նոյն իսկ հոգևոր պաշտօնեայքը որքան տառապանք պիտի կրէին թէ ինքեանք հասկանալու սուրբ գիրքը ասորի լեզւով և թէ դորան մեկնելու ժողովրդին եկեղեցու մէջ—այս նիւթի վերա խօսած ենք մի այլ տեղում, ուր խօսք կար հայոց նշանագրերի գիւտի վերա։ Երանելի Մեսրոպը վաղուց արդէն յղացել էր իր մէջ այն հոյակապ խորհուրդը հնարելու հայերի համար իր սեփական այբուբէնք, կամ թէ արդէն ուրիշ լեզուների համար յայտնի եղած նշանագրերից բաղադրել մի այբուբէնք, որ յարմարաւոր էր հայոց լեզւի զանազան ձայներին։ Հեռատես Սահակ պարթևացին դէպի նոյնը ձգտելով, նոյն բանին ցանկալով ջերմութեամբ, յայտնեց Վռամշապուհ թագաւորին Մեսրոպի դիտաւորութիւնքը։ Մեսրոպեան տառերի գիւտը թէ ինչ խորհուրդ է ունեցել և ունի հայերի թէ քաղաքական և թէ կրօնական դրութեան մասին, խօսել ենք նոյնպէս իր տեղումը. ասենք միայն այստեղ, եթէ Մեսրոպը չվաստակած լինէր այլ վաստակներ հայոց լուսաւորութեան հանդիսի մէջ, բացի հայկական տառերի գիւտը, և այնպէս արժանի է նա դասակից լինելու հայոց ազգի ամենամեծ բարերարներին։ Պատճառ, եթէ հայերը այն բոլոր փոթորիկների տակ, որ սկսեալ հինգերորդ դարուց եկել են փոքր Ասիայի և մանաւանդ թէ Հայաստանի վերա, պահպանել է, որպէս մի ինքնիշխան քրիստոնեայ ազգ. այդ բանը այս առանձին, ազգային լեզւին յարմարեցրած նշանագրերի պըտուղն է, և դորանով միայն հնարաւոր է դարձել մի հարազատ մատենագրութիւն և մի ազատ իմացական կրթութիւն ազգի։ Մեսրոպը վեց ամիս ժամանակ վարելով կաթողիկոսական պաշտօն, Սահակից յետոյ, մեռանում է 441 թւականին։

Այժմ թող հանդէս գան Սահակ պարթևացու կենդանի վաստակքը։ Սոցա կարգում յառաջ բե-

րենք նախ և յառաջ Եզնիկ Կողբացին, մինչ նորա առաւել ականաւոր աշակերտներից և շատ հմուտ հայ, յունական, ասորի և պարսիկ լեզուներին։ Վերադառնալով մի ճանապարհորդութենից, որ արել էր դէպի Ասորոց Միջագէտքը և դէպի Կոստանդնուպօլիս, սուրբ հայոց գրուածքը ձեռք բերելու, սկսաւ թարգմանել նոցանից շատերը։ Բայց դորանից, շարադրել է նա այս սեփական գործերը. նախ, Եղծ աղանդոց (հերքումն զանազան աղանդների), որ բաժանած է չորս գիրք, որոնցից առաջինը ուղղեցուցած է ընդդէմ հեթանոսներին, երկրորդը ընդդէմ կրակապաշտ պարսիկներին, երրորդը ընդդէմ յունաց փիլիսոփաներին, չորրորդը ընդդէմ Մարկիոնի հետևողներին և Մանիքեան աղանդաւորներին։ Այս գրուածի մէջ մեծահանճար Եզնիկ Կողբացին յաջողակութեամբ և ամենայն աստուածաբանական ճշտութեամբ խօսում է ամենադժուարին աստուածաբանական խնդիրների վերա, որպէս և Աստուծոյ ամենագիտութեան և մարդուս ազատ կամքի վերա։ Նոյն գործի մէջ գտանւում են տեսակ տեսակ սակաւագիւտ առասպելական զրոյցք և տեղեկութիւնք բաբելոնացոց սնապաշտութեան, պարսից կրօնի ուսման և Մարկիոնի հաւատաքանութեան մասին։ Այս գործը տպագրութեամբ հրատարակեցաւ առաջին անգամ Սմիւռնայում 1762 թ., յետոյ աւելի ճշտութեամբ և մաքրութեամբ Վենետկի մէջ 1820-ին։ Եզնիկը շարադրել է նոյնպէս բարոյական խրատք, որ տպած են նորա «Եղծ աղանդոց» գործի վերջումը։ Վինդիշման գերմանացին լատինական թարգմանութեամբ հրատարակել է առաւել էական մասը Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» գործի։

ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՏԱԼԱՑԻ ԱՂՋԿԱՅ ԵՐԳ 1859 ԹՒԱԿԱՆԻՑ

«Մեր հայրենիք, թշւառ, անտէր,
Մեր թշնամուց ոտնակոխ,
Իւր որդիքը արդ կանչում է
Հանել իւր վրէժ, քէն ու ոխ»։
«Մեր հայրենիք շղթաներով
Այսքան տարի կապկապած՝
Իւր քաջ որդոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատւած»։
«Ահա՛, եղբայր, քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքով լւացի»։
«Նայի՛ր նորան, երեք գունով
Նւիրական մեր նշան,
Թո՛ղ փողփողի թշնամու դէմ,
Թո՛ղ կործանւի Աւստրիան»։
«Ի՛նչքան կին մարդ, մի թոյլ էակ,
Պատերազմի գործերում
Կարէ օգնել իւր եղբօրը,
Ջանց չարեցի քո սիրուն»։
«Ահա՛ իմ գործ, ահա՛ դրօշ,

Շուտ ձի հեծի՛ր քաջի պէս,
Գնա՛ փրկել մեր հայրենիք,
Պատերազմի վառ հանդէս»։
«Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ՝ մեռնէ.
Բայց երանի՜, որ իւր ազգի
Ազատութեան կը զոհուի»։
«Գնա՛, եղբայր, Աստուած քեզ յոյս,
Ազգի սէրը քաջալեր,
Գնա՛, թէև չեմ կարող գալ,
Բայց իմ հոգին քեզ ընկեր»։
«Գնա՛ մեռիր դու քաջի պէս,
Թող չտեսնէ թշնամին
Քո թիկունքը, թող նա չասէ
Թէ վատ է իտալացին»։
Ասաց. տուեց օրիորդը
Իւր եղբօրը մի դրօշ,
Մետաքսից էր, ազնիւ գործած,
Ուր երեք գոյն կան որոշ։
Եղբայրն առաւ և ողջունեց
Իւր սիրական քնքուշ քոյր,
Առաւ զէնքը, սուր, հրացան,
Հեծաւ իւր ձին սևաթոյր։
—Քուրի՜կ,—գանչեց քաջ պատանին,—
Մնա՛ս բարեաւ, սիրական,
Այս դրօշակին պիտի նայի
Ամբողջ բանակ իտալեան։
Նա սուրբ է ինձ, երբ մկրտած
Արտասուքով ու կնքած,
Դու յանձնեցիր ինձ յիշատակ,

Հայրենիքին նուիրած։
Թէ մեռանիմ, դու մի՛ սգար,
Իմացի՛ր, որ տարեցի
Դէպ ի մահու արքայութիւն
Իմ հետ քանի թշնամի։
Ասաց. վազեց դէպ ի հանդէս
Աւստրիացոց յանդիման,
Իւր արիւնով գնել յաւէրժ
Ազատութիւն իտալեան։
Ո՛հ, իմ սիրտը կարտաւում է
Տեսանելով այսպէս սէր,
Դէպի թշուառ մի հայրենիք,
Որ ոտնակոխ եղած էր։
Սորա կէսը, կէսի կէսը,
Գէթ երևէր մեր ազգում.
Բայց մեր կանայք... ո՛ւր Եղիշէ,
Ո՛ւր մեր տիկնայք փափկասուն։
Ո՛հ... արտասուք ինձ խեղդում են,
Այլ չեմ կարող բան խօսել.
Չէ... թշուառ չէ Իտալիան,
Եթէ կանայք այսպէս են։

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Մանկութեա՜ն օրեր, երազի նման,
Անցաք գնացիք, այլ չէք դառնալու.
Ո՛հ դուք, երջանիկ, ո՜հ անհոգ օրեր,
Ընդունակ միայն ուրախացնելու։
Զեզանից յետոյ եկաւ գիտութիւն,
Իւր ծանր հայեացքով աշխարհի վրա,
Ամեն բան ընկաւ մտածութեան տակ,

Րոպէ չմնաց ազատ կամ ունայն:
  Գիտակցութիւնը յաջորդեց սորան.
Ազգի վիճակը ծանրացաւ սրտիս...
Ապօլլօն տւեց ինձ իւր քնարը,
Որպէս փարատիչ տրտում ցաւերիս:
  Աւա՜ղ. այն քնարը իմ ձեռքում հնչեց
Նոյնպէս լալագին, նոյնպէս վշտահար,
Ինչպէս իմ սիրտն էր, իմ զգացմունքը.
Ուրախացուցիչ չգտայ մի լար:
  Ես այն ժամանակ միայն զգացի,
Որ այդ ցաւերից ազատւելու չեմ,
Որչափ իմ ազգս կը մնայ ստրուկ
Օտարների ձեռք, անխօս, տխրադէմ:
  Մանկութեան օրեր, ինչո՞ւ այդպէս շուտ
Թռաք գնացիք, անդարձ յաւիտեան.
Ես այն ժամանակ անհոգ ու ազատ
Կարծում էի ինձ աշխարհի իշխան:
  Գերութեան շղթան ինձ զգալի չէր,
Եւ ոչ բռնութեան անգութ ճանկերը,
Ձեզանից յետոյ ծանրացան նոքա,
Ո՛հ, անիծում եմ ես այս օրերը:
  Լո՛ւռ կաց, դու քնար, այլ մի՛ հնչիր ինձ,
Ապօլլօն, յե՛տ առ դարձեալ դու նորան,
Տո՛ւր մի այլ մարդու, որ ընդունակ է
Զոհ բերել կեանքը սիրած աղջկան:
  Ես պիտի դուրս գամ դէպի հրապարակ,
Առանց քնարի, անզարդ խօսքերով.
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,
Խաւարի ընդդէմ պատերազմելով:
  Ներկայ օրերում այլ ինչ սև քնար,
Սուր է հարկաւոր կտրճի ձեռքին.

Արիւն ու կրա՛կ թշնամու վերա,
Այս պիտի լինի խորհուրդ մեր կեանքին:
  Թո՛ղ պատգամախօսը, հնացած Դելֆի,
Իւր եռոտանու վերա փրփրի.
Թո՛ղ միջին դարու գաղափարներով,
Ամբոխը խաբել ճգնի աշխատի:
  Թո՛ղ նա թարգմանէ զրպարտութիւնը,
Թո՛ղ մխիթարւի ծովի ափերում.
Մենք ազատութեան ենք միայն թարգման,
Միայն այս խօսքս ունինք բերանում:
  «Ո՛վ Հայր, ո՛վ դու Հայր, որ երկնքումն ես,
Խնայի՛ր թշւառ մեր անտէր ազգին.
Մի՛ տար զոհ գնալ թշնամիների,
Նա այլ չէ լսում Դելֆեան հարցուկին:

ԱՌՕՐԵԱՅ ԱՇԽԱՐՀ

  Ինչ ես գոռում, ինչ խնդրում,
Դու անհանգիստ հեղինակ.
Մեզ խաղալիք շինեցիր,
Ողջ աշխարհի խայտառակ:
  Լաց ես լինում, հառաչում,
Գանգատ անգամ յիմար է,
Թէ աշխարհն իւր գործերով
Բոլորովին փոխւել է:
  Աշխատում ես մի կերպով
Խաղաղութիւն վրդովել,
Խլել մեր հանգիստ քունը,
Սրտերիս մէջ դող ձգել:
  Չենք կամենում լսել քեզ.
Թո՛ղ մեր ճաշն ուտենք հանգիստ,

Յետոյ խաղաղ քուն լինինք…
Հեռու գնա մեզանից։
  Մի՛ գոռար, մի՛ որոտար,
Մարդ եղիր և դու մեր պէս.
Վերացական խօսքերով
Մի՛ գար միւս անգամ հանդէս։
  Մեք առօրեայ բաների
Ծառայում ենք անդադար,
Դու ինչե՞ր ես մտածում.
Դրական է այս մեր դար։
  Քո բարձր ճշմարտութեան
Ճառագայթները փայլուն
Չեն տանելի մեր աչքին,
Ատելի են մեր հոգուն։
  Ճանաչում ենք, հաւատում,
Բայց չկամինք խոստովանել,
Պատճառ, նոքա չփոթում են
Մեր երջանիկ կեանքի թել։
  Մենք կամինք կեանք վայելել.
Ուրեմն ինչ հարկի համար
Մեզ պիտոյ էր ծառայել
Ճշմարտութեան անպատճառ։
  Մինչդեռ և առանց նորան,
Մինչ լոկ սուտի շնորհքով
Այս աշխարհի բարութեան
Մի մասը վայելելով,
Կարելի էր Աստուծոյ
Փառաւորել անունը.
Եւ չթուլանալու համար,
Եւ մարմինը պահելու,
Երբեմն մի փոքր զրկել…

Երբեմն մի փոքր գողանալ…
  Չխռովելով մեր խիղճը,
Զաղմկելով մեր հոգին,
Տո՛ւր մեզ տաղեր, վէպ, առակ,
Հաճոյացիր մեր սրտին.
Թո՛ղ դատարկ բաներ լինին,
Մարդու վէրք տալ չունենան,
Թեթև ու ծիծաղաշարժ,
Փորերս, փոյթ չէ, թող շարժ գան։
  Հանգստութեան միջոցին,
Մարսողութեան լաւ ժամին
Դու դատաւոր մի՛ նստիր
Խրատներով մեր գլխին։
  Վշտաբեր ակնարկութիւնք,
Հեռո՛ւ, նեղիչ գաղափարք.
Մի՛ լինիր դահիճ մոլութեան,
Որ չլինիս դահիճ մարդերին։

Լ Ո Ւ Ս Ի Ն

  Ո՜հ, լուսին, լուսին, արդէն քանի՛ դար
Դու երկնքումը փայլում ես պայծառ.
Բայց ո՛րքան ստէպ լուսաւորում ես
Ուրախ դէմքի տեղ, մի տխուր երես։
  Քեզ խո՛ր տխրութեամբ չէ սպասում նա,
Որ չէր ստացել բաղդից մի հարուած.
Որ գոհ իւր օրից հասած գիշերին,
Աղօթք է առնում վերև առ Աստուած.
Այլ քո ծագելուց մինչև մտանելդ

Աչքը քեզանից չէ հեռացնում նա,
Որի կորուստքը անչափ են կեանքում,
Որ արտասուում է իւր բաղդի վերա
Ո՛հ, պայծառ լուսին, դու պայծառ լուսին,
Վկայ չես միայն լոկ արտասուքի.
Դու որքան յաճախ քո խաւար գահից
Տեսող ես լինում լուռ զարհուրանքի։
Քո ճառագայթով որքան փայլել է
Պողպատեայ սուրը ծխուած արիւնում...
Թէ հնար լինէր քեզ այդ րոպէին,
Խաւարուիլ իսկոյն գիշերի մթնում,
Լցուիլ արիւնով, և այդ նշանով
Դողդոջուն աչքին այդ մարդասպանի
Երևել դարձեալ կապոյտ երկնքում։
Թող գէթ իմանար այդ չարագործը,
Որ կայ մի վկայ և խաւար գործքի.
Որ երկնքիցը նորան նայում է
Մի դատապարտող խիստ, անմերժելի։
Բայց այս երազ էր... ով գիտէ գուցէ այս
երեկոյիս
Դարձեալ կը թափւի մի մարդու արիւն.
Բայց նոյնպէս պայծառ, դու նոյն սառնութեամբ,
Կը լուսաւորես արիւն ու սուրը,
Եւ սպանուածին և մարդասպանին
Քո լուսից կը տաս հաւասար բաժին։

ԲԱՆԱՍՏԵՂԾ

(Նմանողութիւն Պուշկինին)

Քանի բանաստեղծն չունի մուսայից
Մի բան երգելու յատուկ հրաման,

Նորա քնարը միշտ մունջ է մնում,
Ինքը անհոգի, անզօր ու անձայն։
Բայց երբ երկնքից կը փայլէ հոգուն
Անաղօտ լոյսը պայծառ արևին,
Նա կմոռանայ բոլոր աշխարհը,
Այլ չի պատկանիլ նա այս աշխարհին։
Գրիչը ձեռին թղթի դաշտումը
Կվազէ արագ, ինչպէս եղջերու,
Ո՛չ ոք չէ կարող նորա հակառակ
Ի զուր փորձ փորձել կամքը կոտրելու։
Նա այն ժամանակ սուր ունի հատու,
Կրակ է թափում այրող բերանից.
Մուսան նորանով խօսում է մեր հետ,
Սիրտ է զմայլում նորա երգերից։
Նա այն միջոցին ոչինչ այլ բան չէ,
Բայց եթէ թարգման մուսայի խօսքին,
Նորա ասածը, որ նա լսում է,
Մեզի բաշխում է զինչ գոհար անգին։
Ոչինչ դատաւոր, ոչինչ իրաւունք
Չեն այնքան սուրբ, ճիշտ, ջինջ, քան հայելի,
Որքան դատաստան բանաստեղծ հոգուն
Մի բան ասելում՝ թէ չար, թէ բարի։
Ողջ մին է նորան՝ եթէ թագակիր,
Եթէ սոսկական քաղաքացի լոկ.
Պատճառ՝ ուղիղը խօսելից յետոյ
Պէտք է սպասել դառնալու մերկ, բոկ։

ԱՊՈԼՈՆԻՆ

Դու, Ապօլօն, որ տւիր
Ինձ այս քնար հոգեմաշ,

Այո՛, գոհ չեմ քեզանից.
Տրտնջում է և աշխարհ,
Իբրև պատի՞ժ ինձ տուիր,
Տրտում սրտի՞ս մխիթար,
Թէ՞ զգալով չարչարուիլ
Ու չքանալ վայրաբար։
Ա՛ռ նրան յետ, ինձ պէտք չէ.
Տո՛ւր ուրիշի, ում կամիս.
Քեզ մի անգամ ասել եմ.
Յիշի՛ր, եթէ միտք ունիս։
Կեանքիս գարունն է անցել
Ինձ ուշացած է քնար.
Օտար աշխարհ պանդխտել
Ինձ մնում է վշտահար։
Բայց դու, որ քեզ, մարդ տկար,
Աստուած գանչեց ու խնկեց,
Մի կարծեր, թէ միջաբեկ
Պիտ պաղատիմ դէպի քեզ։
Ես կընդունիմ կամակար,
Թէ բաղդ անգութ, ոխերիմ
Մատուակէ թոյն, լեղի
Իւր սափորից ինձ բաժին։
Բայց ոչ երբէք պիտ սողամ
Ոտքիդ տակում, ինչպէս շատ
Մարդիկ, որ չեն իմանում,
Թէ էակներ են ազատ։

ԱՐԾԱԿ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

ԿՐԻՏԻԿԱ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Կրիտիկան մի սուրբ և անկողմնապահ դատաստան է, մի այնպիսի դատաստան, որի առջև մի և նոյն են բարեկամ և թշնամի, որ և մի անաչառ դատաւորի նման քննում է մի գործի արժանաւորութիւն և պակասութիւն։ Նա վերահասու է լինում գործին ամենայն հիմնաւորութեամբ, տեղեկանում է նորա խորհրդին, և վճռում է, թէ ինչ չափով ու սահմանով կատարել էր հեղինակը իւր պարտականութիւնը։

Այսպիսի խելացի և բազմակողմանի վերահասութիւն առնելուց յետոյ, տալիս է կրիտիկան իւր արդարացի հարկը մի այդպիսի աշխատութեան, միտ դնելով դորա որպխութեանը միայն և ուղիղ պահելով արդարութեան կշիռը դէպի որ և իցէ հեղինակ, թէ բարեկամ և թէ թշնամի. այո՛, նա գիտէ պատուել և թշնամու արժանաւորութիւնը։

Ի՞նչ հարկաւոր է կրիտիկա։ Ամենայն մարդ կարդալով մի շարադրութիւն, արդէն կը հասկանայ բանի զօրութիւնը, մանաւանդ որ կրիտիկան չը տարածելով մի ընդհանուր տպաւորութիւն բոլոր ընթերցողների հոգու վերա, ազատ է թողնում նորանց, որ իւրաքանչիւրքը անձամբ անձին կարդա-

լով, զգան զանազան տպաւորութիւն, իւրեանց ճաշակին և հասկացողութեանը համեմատ։

Այդպէս չէ. ոչ ամենայն ընթերցող մարդ ազգի մէջ ունի այնքան գիտութիւն, հասկացողութիւն, որ կարողանայ դատաւոր լինել. շատ բան, որ մի հեղինակ գիտութեամբ թէ անգիտութեամբ դէպի չարն է գործ դրել, որ շատ հեշտ կարող էր հալած իւղի տեղ ընդունել, բարեխիղճ կրիտիկոսը քննելով բացայայտ է կացուցանում և ցոյց է տալիս այդ թերութիւնքը, բացում է ընթերցող հասարակութեան աչքը և դարցուցանելով նորա ուշադրութիւնը այս թերութենների վերա, իսկոյն փակում է մոլորութեան ճանապարհը։ Մի և նոյն կերպով շատ մեծամեծ արդիւնք, որ շատ անգամ չունէին իւրեանց վերա փայլուն զարդարանք, անյայտ են մնում հասարակութեանը, որ միշտ որոնում է զանազան նորութիւնք և առհասարակ այնպիսի բաներ, որ զգալի ազդեցութիւն կարող էին գործել ընթերցողների վերա։ Հասարակութիւնը շատ անգամ ձևերի քամակից վազելով, հագուստ և զարդարանք որոնելով, իւր հոգու բոլոր կարողութիւնքը լարելով, որ գտանէ և տեսանէ հրաշալի, ազդու և այլ սոցա նման ուղեղ գրգռող բաներ, սառնասիրտ է մնում դէպի գործի գլխաւոր արժանաւորութիւնը, որ ճշմարտապէս ասելով, շա́տ անգամ յայտնւում է մարդկեղէն աշխարհի մէջ պարկեշտ կերպարանքով և այս պատճառով ևս չէ ընկնում ընթերցողների ուշադրութեան տակ։

Այսպիսի դիպուածներում է ահա կրիտիկայի հանդէսը։ Այստեղ երևում է նա իւր մեծ վայելչութեան մէջ. նա ցոյց է տալիս բացերև կերպով

այն արժանաւորութիւնքը պարկեշտ հագուստի տակ, որ անտես էին մնացած ընթերցողներից, և ցոյց տալով այս արժանաւորութիւնքը, զարթուցանում է ընթերցողների հոգին, գրգռում է և ջերմացնում է նոցա սիրտը դէպի այդ գործի ընդունելութիւնը. երկրորդ, արժանապէս գնահատելով այդ գործը, բարոյապէս սրբում է աշխատողի ճակատի քրտինքը և քաջալերութիւն է տալիս նորան յառաջ խաղալ այդ ազնիւ ասպարիզի մէջ։

Սոյնպէս բարեմտաբար մատնացոյց անելով աշխատութեան մէջ գտնուած պակասութիւնքը կամ անհիմն կարծիքները, լինում է զգուշացուցիչ առաջնորդ հասարակութեան համար և նոյն ժամանակին առիթ է տալիս հեղինակին ուղղելու և կատարելութիւն տալու իւր գործին, որով անտարակոյս օգտակար է լինում և հասարակութեանը և հեղինակին։

Առողջ բանականութիւնը, ցանկանալով մարդկային ազգի օրէ օր աւելի յառաջադիմութեանը, խորհրդով ցոյց է տալիս թերութիւնները մի աշխատութեան, քաւ լիցի նորան պախարակելու համար միայն հանդէս հանել մի հեղինակի պակասութիւնք. այդ կը լինէր մի չար, սևահոգի մարդու գործ և անարժան էր ասւելու կրիտիկա, որ մի սուրբ և զգուշալի պաշտօնակատարութիւն է, ճշմարտութիւնը գիտութեան մէջ յառաջ տանելու համար

Խօսելով ընդհանրապէս կրիտիկայի վերա, այս ևս պիտի ասել, թէ նա մի չափ է, մի նշանացոյց է, մի այնպիսի կշիռ, որով իսկ և իսկ հասկացւում է որ և իցէ ազգի լուսաւորութեան աստիճանը. ու-

րեմն իւրաքանչիւր ազգի կրիտիկա յայտնում է մեզ նոյն ազգի տեսութեան և հայեացքի պարզութիւնը կամ պղտորութիւնը։ Եւ այժմեան լուսաւորեալ ազգերի մէջ այնքան ծաղկած է կրիտիկան, որ համարձակ կարելի է ասել, թէ այդ բանը դարձած է մի մեծ ճիւղ մատենագրութեան, և այն շատ օգտակար ճիւղ։

Քանի՜ քանի ճշմարտութիւնք հանդէս է բերում կրիտիկան. ո՞րքան անտես արած խրողութիւնք, որ մի հեղինակ խորհրդով կամ պատահմամբ զանց էր արել. և արդեօք այսպիսի խրողութիւնների հանդէս գալը կրիտիկայի ձեռքով ազդեցութիւն ունէ՞ր, կամ թէ ո՞րքան ազդեցութիւն ունէր նոյն իսկ քննութեան տակ ընկած առարկայի յառաջադիմութեան վերա, այդ ապացուցանում է ամենօրեայ փորձը։

Մի ազգի մատենագրութեան մէջ երևում է նորա հոգին, նորա հայեացքը, նորա ընկերական կեանքը. բայց կրիտիկայի մէջ երևում է այս բոլորի չափը և աստիճանը, սորա գործն է սահմանել և գնահատել նորանց

Այն ազգը, որ չունի կրիտիկա, չունի և մատենագրութիւն. պատճառ, մատենագրութիւն առանց կրիտիկայի միևնոյն է, ինչպէս մարմին առանց հոգու. իսկ այն ազգը, որ չունի մատենագրութիւն, ասել է, թէ չունի և բանականութիւն, որովհետև մատենագրութիւնը այլ բան չէ, եթէ ոչ բանականութեան արձանագրութիւն։ Մատենագրութիւնը մի յիշատակարան է, մի պահարան, ուր ամփոփւում են մարդկային բանականութեան վաստակը, մարդկային հոգու բղխւածքը, և կարելի՞ է

թոյլ տալ, որ մի ազգ մատենագրութիւն չունենալով, համարձակւի մտածել, թէ ինքը ևս լուսաւոր ազգերի կարգումն էր աշխարհի երեսին, կամ թէ նորա գոյութիւնը մի խորհուրդ ունէր, համեմատելով ընդհանուր մարդկութեան հետ։

Մեր սիրտը արիւնով է լցւում այս ճշմարտութիւնքը ասելու ժամանակ, որովհետև մի չար բաղդով այս րոպէիս այնտեղ ենք հասած, որ չենք կարող առանց մեր խղճմտանքը արատաւորելու ասել, թէ մեր ազգը ունի մատենագրութիւն։

Արդեօք մեր կողմից յանցանք չէ՞ր այսպէս ձայն տալ մեր հին մատենագրութեան վերա. այս խնդիրը վճռելու համար կրկնում ենք սորանից յառաջ ասածներս, թէ մատենագրութիւնը բանականութեան պահարանն է. եթէ հայոց ազգի անդամքը իւրեանց բանականութեան բղխւածքը կարող են մասնաւորել միմեանց այն լեզւով, որով յառաջ է գնացել մինչև այժմ մեր աբեղայական մատենագրութիւնը, ապա մենք դատապարտութեան արժանի ենք. իսկ եթէ դորա հակառակ, ժողովրդին անմօտենալի է այդ պահարանը, եթէ նա չունի բանալիք այդ փակած պահարանի համար և չէ կարող հասկանալ, թէ ի՞նչպէս էր իւրեանից յառաջ ազգի բանականութիւնը, եթէ նա մի հոգևոր շինութիւն չէ կարող ստանալ նորանից, ի՞նչ յանցանք է ասել, թէ մատենագրութիւնը դանակով կտրած, բաժանած է ժողովրդի կեանքից, ուրեմն ի՞նչ յանցանք է ասել, թէ ժողովուրդը չունի մատենագրութիւն, որի մէջ երևէր նորա կեանքը, նորա երեսի և ամենանուրբ գծագրութիւնքը. ի՞նչ յանցանք է ձայն տալ մեր հեղինակներին, թէ պիտոյ էր հրա-

ժարւելով հնախօս հայկաբանի ունայն փառասիրութենից, աշխատել կենդանի ժողովրդի կենդանի բարբառը մշակելու, որով անտարակոյս յառաջ կերթար մեր ազգի լուսաւորութիւնը, և թէ վերջ ի վերջոյ պիտոյ էր հասկանալ, թէ մատենագիր հեղինակը գործ ունի ոչ թէ մեռած գնացածների հետ, այլ այժմեան կենդանի ազգի հետ, որի կեանքի պայմանները՝ լինելով ամենևին այլայլւած ու փոփոխւած, ուրեմն և դորա յայտարար ձևերը, որոնց մինը և առաւել գլխաւորը լեզուն է, որ պիտի յարմարւի կեանքի ոփոխութեանը։

Մեր խղճմտանքը մաքուր է. և մենք հետևելով մեր խղճի ու բանականութեան առողջթելադրութեանը պարտականութիւն ենք համարում մեր վերա հրապարակով քարոզել, թէ նոր ահա բացւում է կենդանի ժողովրդի կենդանի բարբառի արշալոյսը։

Եւ հայոց մանուկը, կամ թող ասել Հայոց ազգը ի՞նչ գրքի մէջ կարող էր տեսանել մի այդպիսի տեսակ տեսակ վայելքներով ճոխապէս զարդարած հոգևոր սեղան. քանի քանի իմաստունների հանճարեղ, զօրաւոր, քաջասիրտ ասացւածք և խօսք, համեմաւոր գւարճութիւնք, սրամիտ, ազատօրէն և իմաստալից խօսւածք. քանի գւարճալի զրոյցներ, յիշատակի արժանի փոքրիկ պատմութիւնք բարք ու վարք պատկերացնող կարճ պատմութիւնք, ապա զանազան խորհրդաւոր բանահիւսութիւնք, որ պարունակում էին իւրեանց մէջ ամենայն տեսակ իմաստալից և գրաւիչ և դաստիարակիչ նիւթեր, նմանախօսական խրատներ, զգուշացուցիչ և ահաւոր այլաբանական ակնարկութիւններ, զոր օրինակ, բնութեան խրատը, սերմի հատիկները, կրոկոդիլոսը,

Բրամինների ձորը, անապատ կղզին, կրկնապատիկ երդումը իւր անձը ուղղելու մասին, թշւառական մարդու տարեմուտքը այլն և այլն։

Այժմ Հայոց մանուկը Ռուսաստանի մէջ կարող է առնուլ իւր ձեռքը մի գիրք և հոգեպէս զւարճանալ. և գերապատիւ հեղինակը, շատ յաջողութեամբ հասած լինելով իւր նպատակին, կարող է մխիթարւիլ, որ իւր աշխատութիւնը, իւր տարիներով չարչարանքի վաստակը դարձած է այս րոպէիս մի յաւիտենական գեղեցիկ արձան, որով պիտոյ է անմահանայ նորա միշտ գեղեցիկ անունը։

Լեզուն, որով գրւած է այդ գիրքը, առաւել ճոխ է, առաւել հարուստ և առաւել մօտ կենդանի ժողովրդի բարբառին, քան թէ հեղինակի այլ գրւածքը մինչև այսօր. և այս լեզւի օր ըստ օրէ աւելի մեծ քայլերով յառաջ գնալը բացայայտ է արդէն։

Ամենայն որ և իցէ լուսաւորեալ ազգերի մէջ, չը նայելով, որ մատենագրութիւնը ժողովրդական է, այնուամենայնիւ հեղինակի գրածը աւելի բարձր է, աւելի գերազանց է, քան թէ այն լեզուն, որ ժողովուրդը խօսում էր հասարակ կեցութեան մէջ։

Չէ. լինինք խելացի մեր պահանջողութիւնների մէջ. չը պահանջենք հեղինակից մի անկարելի բան. թող որ նա այնքան մեծ աշխատութիւն յանձն առած ու գլուխ բերած, այնքան յստակ և գեղեցիկ ոճով խօսելով իւր գրքի մէջ, այնուամենայնիւ, այնքան համեստ է և բարեհոգի, որ չը կամի երբէք համարել իւր խօսելու ոճը ամեն տեղ զուտ ոսկի, այլ հոգով չափ պատրաստ էր ուսանել իւրեանից լաւ խօսողներից»։

ԱԶԳԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ

Հայոց ազգը, զանազան աշխարհներում, իւր տարագրութեան և թշւառութեան մէջ, իւր բազմաթիւ հոգսերի և տառապանքի մէջ, այո, վաղուց արդէն զգացել էր ազգային թատրոնի կարօտութիւնը։ Բայց և վաղ ժամանակներից արգելք և խափան պակաս չէին եղած այդ մեծախորհուրդ գործի սկզբնաւորութեան։

Թատրոնի բեմը օտար չէ ուսումնական ամբիոնից. թատրոնի բեմն է այն աթոռը, ուր նստում է փիլիսոփայութիւնը և, մարմնաւորելով բանը կենդանի, գործնական գաղափարներով և օրինակներով, ազատում է հասարակութիւնը այդ գաղափարքը երևակայութեամբ միայն ըմբռնելու աշխատութենից. թատրոնի բեմն է այն բարոյական ահեղ դատաստանը, ուր արդարութիւնը և յանցանքը, առանց աչառութեան, ստանում են իրանց արժանի հատուցումը։ Մարդկային բանականութիւնը միայն այդ բեմին է տւել այն կախարդական մեծ զօրութիւնը, որ մի ակնթարթում ցոլացնում է բոլոր հանդիսականների սրտի մէջ ուրախութիւն, տրտմութիւն, զարմանք, զմայլանք, ցաւ և կարեկցութիւն։ Մի խօսքով, այդ բեմը տիրում է մարդու բոլոր հոգեբանական կարողութիւններին։ Չրկայ մարդ, որի վրա ազդեցութիւն չգործէ թատրոնը, չկայ մարդ, որ չկարողանայ օգուտ քաղել այն օրինակներից, որ մարդկային կեանքի փորձերի որպէս հետևանք, դրւած էին թատրաբեմի վրա։ Նա մի նոր տեսակ դպրոց է, ուր ուսանում են ամեն հասակի մարդիկ։

Նա ուսուցանում է գեղեցիկ հայախօսութիւն. նա մշակում է լեզուն և աննկատելի կերպով ներս է բերում ազգի մէջ ընտիր ոճեր և ազդու դարձւածներ։ Նա չէ միայն ազնւացնում հասարակութեան գաղափարքը, այլ ցոյց է տալիս առաքինութեան վսեմութիւնը, մոլութեան վատթարութիւնը, առաջինին խրախուսելով և երկրորդին զգուշացնելով, և ոչ միայն այսչափ. նա քրքրում է ընտանեկան կեանքը, քննում է նորա և ամենանուրբ կողմերը և մերկապարանոց դնում է հասարակութեան դատաստանի առաջև։

Ոչ ոք չէ ցանկանում հանդէս գալ թատրոնաբեմի վրա, քանի որ այնտեղ ոտք կոխողը գրեթէ հասարակաց անարգութեան պիտի հանդիպի։ Եւ մի՞թէ պակաս քաջութիւն հարկաւոր է, հասարակ մի սխալ կարծիքը ոտքի տակ կոխելով, նոյն այդ հասարակութեան օգտին սպասաւորելու համար. մի՞թէ յաջողութեան մեծութիւնը նորա արգելքների և խափանների մեծութեամբ չէ չափւում։ Մի՞թէ շատ մարդիկ կան, որ հասարակաց սխալ կարծիքը արհամարհելով, պիտի կարողանային ցոյց տալ իւրեանց մէջ բարոյական ոյժը, որ յետոյ նոյնը քնքուշ սեռից յուսալու իրաւունք ստանայինք։ (Նալբանդեանը ուրախ է, որ արհամարհելով ամեն մի նախապաշարմունք, բեմ են դուրս գալիս ոչ միայն դերասաններ, այլ և դերասանուհիներ, ինչպէս, օրինակ, Արուսեակ և Ազաւնի Փափազեան օրիորդները։ Նալբանդեանը ցանկութիւն է յայտնում, որ նրանք կատարելագործւեն և մնան մաքուր և հաստատ բարոյականութեան մէջ և դառնան օրինակ իրանց յաջորդների համար։ Նրանք պէտք է

աշխատեն անարատ պահել իրանց վեհ կոչումը: Խորհուրդ է տալիս թատրոնական վարչութեան ուշադրութիւն դարձնել թարգմանութեան լեզւի մաքրութեան և ներկայացնելիք պիէսի ընտրութեան վրա: Այնուհետև շարունակում է). «Հայոց ազգի ընտանեկան կեանքը խեղճ է, ինչպէս մի ասիական ազգի կեանք: Բայց խեղճութիւնը դէպի թշւառութիւն կ'փոխւի, եթէ եւրօպական ընտանեկան բարքի գեղխութիւնքը և աւերանքը, որպէս քաղաքակրթութեան յատկութիւնք, պատւաստւին հայկական ընտանիքի վրա: Վերին աստիճանի քնքուշ է թատերգութեանց ընտրութիւնը. վերին աստիճանի զգուշութեան կարօտ, մանաւանդ անցանելու ժամանակ այն ժայռերի մօտից, ուր գահավէժ ընկաւ ֆրանսիական ընտանեկան կեանքը»: (Նալբանդեանը ցանկութիւն է յայտնում, որ պօլսեցի հայերը կազմեն մի ընկերութիւն մի թատրոնական շինութիւն կառուցանելու համար:)

«Եւ այդ թատրոնը ներկայ սերունդի համար կ'լինէր մի հոյակապ՝ յիշատակի արձան, որի վրա պարծանքով պիտի նայէին հայերը և որ պատկառելի պիտի կայուցանէր ազգը ուրիշների առաջև, ցոյց տալով նորա, ազգի բարոյական զօրութեան և մի ապացոյց»: (Նալբանդեանը իր յօդւածը վերջացնում է հետևեալ տողերով).

«Կեցցեն բոլոր հայ թատրոնք,
Կեցցեն և դերասանք.
Կեցցեն դերասանուհիք,
պարկեշտքն և ժրաջանք»:

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ

Մինչդեռ մեր ազգային օրագիրները և լրագիրները, ամենևին ուշ չդարձուցանելով այս խնդրի վերա, թէ ինչ էր իւրեանց խորհուրդը մատենագրական ասպարիզում, ցուցանում են էջերը այնպիսի բաներով, որ կապակցութիւն չունէին մեր ազգի ներկայ հարկաւորութենների և օգուտների հետ, մինչդեռ այդ լրագիրքը և օրագիրքը չէին մօտենում այն խնդիրներին, որոնց բարձրանալու հետ կապակից էր. ազգի կարճատես անդամների պատւասիրութեան վշտանալը, իւր բոլոր ազնւութենից յառաջացած հետևանքներով: Նախախնամութեան կամքն էր, որ հայկական անմխիթար անապատի մէջ Հիւսիսափայլը երևէր, որպէս ձայն բարբառոյ... Նախախնամութեան կամքն էր, որ Հիւսիսափայլը կրէ այդ ներկայ իրողութենների մէջ ծանր, բայց փիլիսոփայական աչքով նայելով քաղցր լուծը: Այո, Նախախնամութեան կամքն էր, որ Հիւսիսափայլի ճառագայթները տեսանելի կացուցանէին շատ բաներ, որոնց վերա հիմնաւորապէս խօսելը այնքան շատ ձեռնտու չէր օրագիր կամ լրագիր հրատարակող պարոններին, որովհետև ազգի պակասամիտ անդամքը, ամենևին անխելաբար վշտանալով, կարող էին հեռի մնալ մի այդպիսի մատենագրական գործի մասնակից լինելուց:

Ամենայն մարդ, որ զուրկ էր կատարեալ լուսաւորութենից, հեռանում է և փախչում է այն խօսակցութենից, որ դիպչում էր այդ մարդու պակասութեններին. թէպէտև մի մասով զգում է այդ մարդը իւր պակասութիւնքը, բայց որպէս խոստովանել

այդ պակասութիւնքը, նոյնպէս մի ուրիշի դորա վերա խօսելը աւելի ծանր է այդ մարդու համար, քան թէ բուն այդ պակասութենների իւր վերա զգալը: Կան մարդիկ, որ անձնախաբէութեան համար, ոլպէս զի մի փոքր մխիթարւին, շատ անգամ անձնատուր են լինում ինքնամոռացութեան և մտաւորապէս դուրս գալով, հեռանալով այն շրջապատից, որի մէջ իրողապէս գտանւում էին, աշխատում են զւարճանալ գաղափարական կատարելութիւններով: Այդպիսի մարդիկ շատ անգամ ցանկանում են, որ ուրիշները անգիտութեամբ գովեն նորանց, առանց ձեռնամերձ լինելու նոցա պակասութեններին. այդպիսի մարդիկը ուրիշի սուտ գովեստները ծառայեցնում են իւրեանց համար, որպէս անձնախաբէութեան գլխաւոր հաստարանք: Ահա այս դրութեան մէջ է մեր ազգը: Նա ընկել է ժամանակի հոսանքի մէջ և ժամանակը քշում է նորան, բայց պակաս լինելով նորան անձնզգայութեան գիտութիւնը, ամենիւին մեքենաբար, ամենևին կրաւորականաբար անձնատուր լինելով ինքնամոռացութեան, յառաջ է գնում, որ թաղւի ժամանակի յաւիտենական անդունդքի մէջ: Տխուր և արտասուելի տեսարան այն մարդու համար, որ աչք ունէր տեսանելու, բայց ազգի վերա, նորա այս ընդհանուր աւերանքի և տարաբաղդութեան վերա իջուցանես արտասուքի հեղեղներ, թէ տեսանելով միւս կողմից ագռաւների պէս օբսկուրանտների սև խումբը, որ նախապատիւ համարելով իւրեանց անձնական օգուտը և ազգի հետ այնպէս վարուելով, որպէս կը վարուէր մի կեղծաւոր և անհարազատ դրացի, որ ազգի հետ ոչինչ ունէր հասարակաց, փակում էին ազգի լուսաւորութեան ճանապարհը, որքաս ո-

ցա թշւառ և եղկելի անձը: Ա՛հ, դառն բաներ: Այդ խեղճ ողորմելիքը, իւրեանց բոլոր զօրութիւնը գործ դնելով, ազգի դարաւոր անձնախաբէութեան շինուածքը հաստատ պահելու համար, ինքեանք ևս կամայ ակամայ ընկնում են մի անձնախաբէութեան մէջ, —մեր նպատակն է ազգին ծառայել, իսկ ազգը այսպէս կամի. մեք կատարելով ազգի կամքը՝ հասած էինք մեր նպատակին, ծառայած էինք ազգին, ուրեմն իրաւունք ևս ունէինք դեռ վարձ և երախտագիտութիւն պահանջելու մեր ազգից:

Շատ խնդաք, օբսկուրանտներ, փառաւորւեք, այդ ինչ գեղեցիկ և ազնիւ մտածութիւններ են, որ ունիք ձեր խելապատակի մէջ, բայց եկէք ճշմարիտը խոստովանեցէք, ձեր սեպհական խելքի վաստակ են այդ մտածութիւնքը, թէ ուրիշը նստեցուցել է ձեր մէջ... ինչպէս ևս եղած լինէր, նայեցէք, զգուշացեք, կէսը ուրիշի չտաք, դա մի անօրինակ գանձ է. bravissimo!

Օբսկուրանտների այսպիսի ողորմելի և թշւառ փիլիսոփայութիւնը երևում է նոցա ամենօրեայ ընթացքից: Եւ նոքա չեն խաբւած իւրեանց հաշւում, ինչ որ վերաբերում էր նոցա անձնական օգտին. բայց այլապէս էր ուրիշ մարդերի փիլիսոփայութիւնը, որ երևում է Հիւսիսափայլի մէջ. նոքա բարձրացնում են ճշմարտութեան դրօշակը և մտանելով միլլիոնաւոր քնած մարդերի մէջ, անխնայ զարթեցնում են նորանց մի վնասակար և թմրացուցիչ քնից, հրաւիրելով դէպ ի արթնութիւն, հսկողութիւն և գործունէութիւն: Այս մարդիքը կորած համարում են այն րոպէները, որ չէին ծառայել մեր ազգին մի ճշմարտութիւն յայտնագործելով կամ նորա իրաւուն-

քը հաստատելով հայկական մարդկութեան մէջ։ Հիւ-
սիսափայլը—համարձակ Հիւսիսափայլը, անմասն մնա-
տի երկիւղից, անմասն կեղծաւորութենից, երես-
պաշտութենից, անքաժին դժոխային, եղեռնական
հոգուց, Հիւսիսափայլը ամենայն համարձակութեամբ
սպասաւորելով Աստուածային ճշմարտութեանը, իւր
գործակատարների հաստատուն ձեռքով ճեղքում է,
պատառում է մի հազար կարկատաններով թանձրա-
ցուցած վարագոյր, որի տակ ամենայն խնամով թա-
գուցած էին խաւարապաշտները մեր ազգի բարոյա-
կան խոցերը և վէրքերը։ Հիւսիսափայլը կենտրոնաց-
նելով իւր մէջ մի ամենաջան գործունէութիւն, մեր
ազգի բարոյական արատները դատապարտելու և ջըն-
ջելու, անտարակոյս, պիտի հանդիպէր նեղութեննե-
րի, որովհետև ազգի մի քանի խելակորոյս անդամ-
քը, չկարողանալով զանազանել իրարից ազգը և նո-
րա պակասութիւնքը, կարծում էին, թէ մի և նոյն
չափով արժան էր պաշտպանել, որպէս ազգը, նոյն-
պէս և նորա պակասութիւնը։ Բայց այդ նեղութիւն-
քը, այդ որոգայթները և սև սև բամբասանքները
ինչ կարող են ներգործել ընդդէմ մի ընկերութեան,
որ կազմուած է ճշմարտութեամբ, որի հոգին է ճշմար-
տութիւն, որի խորհուրդը և նպատակը է ճշմարտու-
թիւն, որի պարծանքը է Քրիստոսի խաչը։

Հիւսիսափայլը արդէն բարձրացուցել է և դեռ
ևս պիտի բարձրացնէ խնդիրներ, առանց նայելու
շրջակայքում գտնուած առօրեայ արգելառիթներին,
խնդիրներ, որոնց խորհուրդը մեծ էր մեր ազգի յա-
ռաջադիմութեան համար։ Առանց այսպիսի խնդիր-
ների մտնելու, օրագիրը կեանք չունի. այս կեն-
դանի և շարժուն խնդիրները հոգի են մի օրագիր

ասացեալ մատենագրական գործունէութեան։ Եւ
օրագրի գործակատարքը այն ժամանակ միայն ազատ
են առողջ բանականութեան դատապարտութենից և
արժանի բարոյական վարձատրութեան, եթէ ամե-
նայն բան զոհ բերելով ճշմարտութեան, ընթացք էին
տալիս այս խնդիրներին։ Ներկայ ժամանակումս,
մանաւանդ այս դարու վերջին կէսի յատկական
բնաւորութիւնն է բարձրացնել այդպիսի խնդիրներ
մարդկեղէն աշխարհի սահմանում, և վճռելով նորա-
նից, բարւոքել մարդկութեան դրութիւնը աշխարհի
երեսին. այս ճանապարհով յառաջանում են աւելի
մեծ յաղթութիւնք, քան թէ պատերազմի դաշտումը,
և խորհրդածութեան դահլիճները առաւել յաղթա-
բեր են մարդկային բանականութեան համար, քան
թէ արիւնոտ դաշտերը։ Ահա մի նոր կերակուր խա-
ւարապաշտների բամբասանքին... դարձեալ պիտի
պար գայ Հերոդիադան...

Մի ազգ, որ խորտակուել էր ժամանակի հար-
ուածի տակ, չէ երևում այլևս մարդկութեան մէջ,
որպէս մի ամբողջ, որպէս մի գերդաստան, որի
անդամքը կապուած լինելով միմեանց հետ՝ ճգնէին
ընդհանուրի օգտի համար։ Մրրիկը, որ խլել էր մի
այդպիսի գերդաստան ընդհանուր մարդկութեան քա-
ղաքական շրջանից, ցրւում է այդ գերդաստանի
անդամքը և հեռացնում է, բաժանում է միմեանցից։
Այնուհետև այդ անդամների համար իրական աշխար-
հում չկայ միաւորութիւն. նոքա չեն կազմում այլևս
մի գերդաստան, որի անդամքը ծառայէին մի ընդհա-
նուր և հասարակաց գաղափարին. այդ բոլորը դառ-
նում է մի վերացականութիւն, անուն առանց իրի։
Անգութ բաղդը, կամ աւելի արդարութեամբ խօսե-

լով, մեր ազգի մեղքը հասուցել է մեր ազգը այս թշուառ վիճակին։ Մեր ազգի անդամքը, ամենքեան համարում են իւրեանց անձը մասնաւոր. ազգը դարձել է մի վերացականութիւն. և այդ է պատճառը, որ ազգի յառաջադիմութեան սայլը ընկած մնում է ճանապարհի վերա, որովհետև ամենայն մարդ, մասնաւոր համարելով իւրեան, սիրտ չունի մօտենալ և ձգել տանել սայլը։ Աշխարհի երեսին վերացական ազգ չկայ. եթէ կայ ազգ, ուրեմն իրականապէս, ապա թէ ո՛չ, ամենևին չկայ։ Ի՞նչ ասել է վերացական ազգ. ես, դու, նա, միւսը անւանում ենք մեզ մասնաւոր, առանց մտածելու, թէ ո՛վ է ապա ազգը. և եթէ մի բան պատահի, ազգի ամեն մի անդամը ասում է. «թո՛ղ ազգը հոգս տանէ». այս ասելով, ինքը իւր անձը որոշում է, հանում է միջից և համարում է մասնաւոր. եթէ մի ազգի բոլոր անդամքը այսպիսի մտածութեամբ հրաժարւում են, ապա ո՛վքեր են, որ կազմում էին ազգը. ոչ ոք. ահա մի վերացական ազգ, և մեք ենք այդ ազգը։ Բայց որովհետև ասացինք, թէ վերացական ազգ չկայ, ապա ուրեմն մեք ազգ չունինք. մինը կարող է մեզ ասել. «Դու ինչ յանդուգն մարդ ես, ինչպէս համարձակւում ես ասել, թէ ազգ չկայ, մինչդեռ աշխարհագիրքը մօտ իբր հինգ միլլիոն համարում են Հայոց ազգը»։

Ազգ ասացեալը է այն մեծ ոյժը, այն կենդանի կապակցութիւնը մարդերի, որոնց նորան կամ նորանից դուրս, մասնաւոր մարդը կը լինէր մի անօգուտ անձնասէր—ЭГОИСТЪ. իսկ բոլոր մարդկութիւնը մի անպտուղ վերացականութիւն։ Մի անձնաւորութեան միմեանցից բաժանող եսական սկզբունքը

չափաւորում են ազգի կենդանի կապակցութեան վերին սկզբունքով, ուրիշ խօսքերով ասեմ, հասարակական կապակցութեան մէջ չեն ոչնչանում անձնաւորութիւնքը, այլ միայն հրաժարւում են իւրեանց մասնաւորութենից, մի համաձայն ամբողջ կազմելու համար, բոլորի ցանկալի միաւորութիւնը դուրս երևեցնելու համար։ Անձնաւորութիւնքը հնչում են հասարակութեան մէջ, ոչ որպէս առանձին առանձին, այլ որպէս ներդաշնակ, ամբողջ երաժշտութիւն։ Ընկերութիւնը, մարդկութեան վերին բարոյականութեան պատկերը, անկատար կերպով յայտնւում է աշխարհի երեսին։ Քրիստոնէութիւնը սրբեց և լուսաւորեց ընկերութիւնը, որ ազգերը մինչև այն ժամանակ կամ պղտոր կերպով ճանաչում էին կամ գուշակում էին միայն։ Եւ ընկերութիւնը դարձաւ այնուհետև մի անհասանելի գաղափար, դէպ ի որը յաւիտեանս յաւիտենից մնում է յառաջ վազել։ Արդէն յառաջադիմութեան մեծ քայլ էր մի ազգի համար, մեծ շնորհ էր, ասում ենք, եթէ դրւած էր մի այդպիսի գաղափար, և դէպ ի նա ձգտում էին շատ մարդիկ։ Այն կապը, որ մասնաւոր մարդերից կազմւում է մի ամբողջ ազգ, է այս ձգտողութիւնը։ Ընկերական գաղափարի կատարելապէս իրագործութեան անհնարաւորութիւնը այս աշխարհի մէջ երբէք չէ պիտոյ դադարեցնէ ձգտող մարդերի գործունէութիւնը. ամենայն արգելառիթ, ամենայն խափանարկու պատճառ պիտի աղբիւր և շարժառիթ լինի գործունէութեան—մի նոր զօրութեան։ Չէ կարելի լինել կատարեալ քրիստոնեայ, բայց մարդու պարտականութիւնն է միշտ վազել դէպ ի այդ գաղափարը։ Ազգին անհրաժեշտ է ինքնուրոյն գործակա-

նութիւն, և ազգի բարոյական յաղթութիւնը կատարւում է ամբողջ ազգի ձեռքով։

Մի օտարոտի բան էր բաժանել ազգը գլուխ և տղէտ բաժիններով։ Արդարև, ոմանց տրւում է հասկացնելու զօրութիւն, իսկ ուրիշներին ականջ դնելու և հասկանալու զօրութիւն. բայց մարդիկ չէին, որ կարգադրում էին այսպէս, այլ Նախախնամութիւնը։ Բաց ի սորանից, ազգի ականջ դնող բաժինը մի սպիտակ թուղթ չէ, որ չգիտէր և չէր կարող դատել, թէ ինչ էին գրում իւր վերա։ Ականջ դնողը շատ բան տալիս է հասկացնողին. նա շատ անգամ ոգևորում է սորան։ Եւ խօսողը և լսողը կատարում են մի հասարակաց գործ, մինը—խելացի կերպով տալով, իսկ միւսը—խելացի կերպով ընդունելով. նորանց կապում է մի հասարակաց գաղափար, որ դուրս գալով մինից՝ մտանում է միւսի մէջ և հաւասարեցնում է բնական անհարթութիւնը. այս յարակցութիւնը, բայց աւելի ճշդութեամբ, կայ հեղինակի և ընթերցողի մէջ։ Նախախնամութեան շնորհը չէ կարող տրւիլ մարդու ձեռքով լոկ և միայն. բայց ճշմարտութիւնը հասարակաց սեպհականութիւն է, իսկ այն շնորհները Նախախնամութեան, որ մի ժամանակ ծածկւած էին սորա կամ նորա մէջ, կարող են երբեմն բացւիլ, յայտնագործւիլ։ Խելացի լսողը, երբ որ զարթել էր նորա մէջ խելացի խօսելու շնորհը, դառնում է հասկացնող։ Այսպէս, մտքերի անխափան փոխադարձից—տալուց և ընդունելուց՝ կանգնում է ազգի ընդհանուր բարոյական յաղթութիւնը։ Նոյնպէս սխալ է միշտ այն կարծիքը, թէ ազգն է միայն հարուստը կամ փառաւոր կոչումն ունեցողը. պատճառ, հասարակ ժողովուրդը է մի ազգի հասարակա-

կան շինւածքի հիմքը։ Մասնաւոր անձինք՝ բարձրանալով նորա միջից, իւրեանց մասնաւոր գործունէութեամբ, մասնաւոր գիտակցութեամբ կարող են շատ կողմից ծառայել լուսաւորութեան մեծ գործին և մարդկութեան յառաջադիմութեանը. բայց այն ժամանակ միայն կարող են նոքա մի բան յառաջացնել, եթէ արմատական հասարակ ժողովրդի մէջ, եթէ նոցա անձնաւորութեան և հասարակ ժողովրդի մէջ լինի մի անընդհատ և կենդանի կապակցութիւն, այլև միմեանց հասկանալ։

Հասարակ ժողովուրդը ոչինչ առանձին յատկութիւն և անուն չունի, բաց ի մարդու և քրիստոնէի անունից։ Ո՛հ, որքան հարուստ է այս աղքատութիւնը. և գտանելով ցած աստիճանի վերա, ինչպէս բարձր կանգնած է նա։ Նա մարդ է և քրիստոնեայ. ոչինչ ունի բացի Քրիստոսից, բայց Քրիստոս ունենալով, ամենայն ինչ ունի։ Նա իւր վերա կրելով մարդու և քրիստոնէի անուն, արդէն գաղափար է ամբողջ մարդկային և քրիստոնէական ընկերութեան։ Եւ այն մարդիկը, որ պատահաբար ստացած էին աշխարհի երեսին փայլուն կոչումն, հարստութիւն և առանձնաշնորհութիւնք, երբ նայում են այս իւրեանց յատկութենների վերա, ոչ որպէս հպարտանալու շարժառթի և ուրիշներից գերազանցութեան վերա, յառաջացած աշխարհի անկատարութենից, այն ժամանակ ստուգագործում են, որ ինքեանք ևս նոյն մարդն են և նոյն քրիստոնեայն, ամենեքին անխտիր։

Ազգը պիտոյ է ունենայ ազգութիւն. այդ ազգի անձնաւորութիւնն է. ինչպէս մարդը չէ կարող լինել առանց անձնաւորութեան, նոյնպէս ազգը չէ

կարող լինել առանց ազգութեան։ Եւ եթէ պատահում է տեսանել մի մարդ առանց անձնաւորութեան կամ ազգ առանց ազգութեան, այդ մի ողորմելի և թշուառ երևոյթ է՝ անօգուտ իւրեանց և ուրիշներին։ Անձնաւորութիւնը ոչ թէ միայն խափան չէ, այլ դորա հակառակ, նա միայն հնար է տալիս ազատ և կատարելապէս հասկանալ միւս մարդը, ուրիշ անձնաւորութիւնք։ Այսպէս ևս մի ազգի սեպհական ազգութիւնը հնար է տալիս նորան հասկանալ ուրիշ ազգութիւնք և ուրիշ ազգութիւններ հասկանալով և գնահատելով, չքանում է մի ազգութեան եսական, ֆանատիկոս և անմարդի բնաւորութիւնը։ Որ տեղում չքանում է ազգութիւնը, այնտեղ չքանում է նիւթապէս կամ բարոյապէս և ինքը ազգը։ Ազգութիւնն է մի կենդանի և ամբողջ զօրութիւն, որ ունի իւր մէջ մի կեանքի պէս անըմբռնելի բան. և հոգին, և ճարտարապետական արարչութիւնը, և մարդկային բնութիւնը և մինչև անգամ տեղի (աշխարհի) բնութիւնը, մասնակից են այս զօրութեանը։ Կարելի է հակառակախօսել ազգութեան ընդդէմ, թէ սահմանաւորուած է, թէ նորա մէջ կարող են լինել մասնաւորութիւնք, բայց այդպիսի դիպուածում մասնաւորութիւնն է չարաչար գործադրութիւն։ Մի ազգութիւն, մասնաւորութենից և եսականութենից ազատուելու համար, չէ պիտոյ ջնջէ իւր ազգութիւնը. դորա հակառակ, հարկաւոր է խոստովանել ամենայն ազգութիւն։ Ոչ մի ազգութիւն իրաւունք չունի կուլ տալու և ոչնչացնելու մի ուրիշ ազգութիւն, բայց այս բանը ստէպ կրկնւում է մարդկութեան պատմութեան մէջ։ Այստեղ է ահա մասնաւորութեան չարաչար գործադրութիւնը,

այս բանի մէջ է եսականութեան անսուրբ տարրը։ Արդարութիւնը պահանջում է խոստովանել ամենայն ազգութիւն, այո՛, ամենայն ազգութիւն, որովհետև նոցա միաւորութենից բաղկանում է ընդհանուր մարդկութեան կազմուածքը։ Մի ազգ, որ կորուսանում է իւր ազգութիւնը, դուրս է ընկնում այն կազմուածքից, որպէս մի փտած անդամ, և յաւիտենական կոկորդը անխնայ կուլ է տալիս այդպիսի ազգութիւնը։ Այս պատճառով մարդկային սրտի համար մի աւելի տխուր բան չկայ, քան թէ տեսանել, որ մի ազգութիւն ընկնում էր և կործանւում էր ծանր հանգամանքների հարստահարութեան տակ—մի այլ ազգութեան ճնշողութենից։ Բայց մի աննկարագրելի վատաբաղդութիւն, մի սարսափելի տեսարան է, եթէ մի ազգի անդամք ինքեանք հրաժարւում են իւրեանց ազգութենից և, մտանելով մասնաւորութեան կորստական դրօշակի տակ, ընդհանուր մարդկային յարգ ու արժանաւորութիւն տեսանել համարում են մի մեծ, բայց օտար ազգի ազգութեան մէջ։ Ի՛նչ ողորմելի փիլիսոփայութիւն, ի՛նչ արտասուելի վարդապետութիւն։ Թող ամենայն ազգ պահպանէ իւր ազգութեան կերպարանքը, թող ազատ և պայծառ ծաղկի ամենայն ազգութիւն մարդկեղէն աշխարհի մէջ. դոքա միայն զօրութիւն և հոգի են տալիս ազգերի ընդհանուր աշխատութեանը։

Բայց... մեր ազգի համար... ձայն բարբառոյ յանապատի—մեր ասածները. ինչ է ազգը, ինչ է ազգութիւնը, ո՛վ կամի լսել ու հասկանալ, ո՞վ կամի վեր բարձրացնել ցեխի միջից իւր մինչ իսպառ անարգուած ազգը և ազգութիւնը. մասնաւորութեան

կորստական հոգին վաղուց ահա թագաւորել է մեր ազգի անդամների վերայ։ Եւ միթէ այդ հոգին չէ պատճառը, այդ դատապարտելի մասնաւորութիւնը, որ մեր ազգը դուրս է ընկել մարդկութեան պատմագրքի տախտակներից. գոնէ մենք այլ պատճառ չգիտենք։

«Միթէ մեր ազգը պատմական ազգ չէ»։—Այո, պատմական ազգ չէ ներկայումս, և չէ եղած երբ և իցէ։ Նորա քաղաքական կեանքը կցկտուր և սորկական, օտար գայիսոնների և օտար դրօշակների տակ. Նորա կառավարութեան կերպը ամենևին նըման է անքաղաքացի ազգերի կառավարութեան կերպին։ Ո՜հ, տխուր ճշմարտութիւն, աւելի լաւ է և ախորժելի մի բաժակ լեղի խմել, քան թէ հրապարակել և խոստովանել այս ճշմարտութիւնը, որովհետև դա մեր բոլորի դատակնիքը է։ Մենք կարճատես և կիսագրագէտ մարդերին թողնում ենք զւարճանալ և ցնծալ, մինչդեռ քրքրելով ազգային պատմութեան փլատակները, գտանում էին մի որ և իցէ նշխարուած բեկոր. մեզ միայն պահում ենք ողբալ և մորմոքւել դոցա վերա և խրատ և խելք ուսանելով չարաբաղդ անցածից, աշխատել բարւոքել ներկայն ապագայի լաւութեան համար։ Մեր պատմութեան միջից ոչ մի բան չէ մխիթարում մեզ, որովհետև սովորած ենք հիմնաւոր կերպով քննել որ և իցէ ազգի պատմական արժանաւորութիւնը։ Բայց ինչ և իցէ, թէ պատմութիւն էր, թէ կցկտուր աւանդութիւնք էին, պատմական արժանաւորութենից զրկւած, արժան էր օր մի յառաջ այդ բոլորը դնել մեր ազգի առաջև, բայց ո՛չ հում և խակ, ինչպէս մինչև այժմ կատարւած է այդ գործողութիւնը,

այլ, եփած կրիտիկայի կրակով։ Մեք մեր կողմից խոստանում ենք, եթէ ամենակալ Տէրը շատ չհամարէ այս խոստմունքը և ժամանակ տայ մեզ դնել մի օր մեր ազգի առաջև նորա հինգերորդ դարու հեղինակների գործերը, զօր օրինակ, Խորենացին, Եղիշէն, Ղազարը և այլն և այլն—նոր, ժողովրդական կենդանի և հասկանալի լեզւով։

Մեր ազգի դ՚պի ազգութիւնը և լուսաւորութիւնը ունեցած դարաւոր սառնութիւնը սահմանելու համար, անպէտ է Ռէօմիւռի ջերմաչափը, որոհետև մեր ազգի սառնութեան աստիճանը ցոյց տալուց յառաջ, ինքը ժիպակը կը պաղի խողովակի մէջ, չդիմանալով ցրտի ազդեցութեանը։ Հայերը չկամին այս բանի վերա մտածել. նորանց գովում են խաբեբայ մարդիկ և նոքա ինքնամոռացութեան մէջ քնում են խոր, լսելով օքսկուրանտների օրօրոցէ երգը։ Ոչինչ գործ չէ կատարւում առանց շարժողութեան. ինքը կեանքը երևում է անդադար շարժողութեան մէջ. բայց ասիացին չէ սիրում շարժողութիւն. Նա երջանիկ է այն ժամանակ միայն, երբ անշարժ ընկած էր մահճի վերայ։ Մեր ազգի մէջ գործ չկատարւելու պատճառը այն է, որ չկայ միաբան և խելացի շարժողութիւն։ Մի մարդ, որի կերպարանքը այլանդակւած էր, վախենում է նայել հայելու մէջ, որովհետև զարհուրում էր տեսնելով այդ այլանդակութիւնը. նա բարկանում է հայելու վերա, ինչո՞վ մեղաւոր է հայելին։ Թող նա աշխատի իւր այլանդակութիւն հալածել, այն ժամանակ հայելու միջից ևս կը հալածւի այդ այլանդակութեան պատկերը։ Մեր հայերից ոմանք բարկանում

են ճշմարտախօս մարդերի վերա—հայելու վերա, եղբայր, դու քեզ նայիր, հայելին կը ցոլացնէ քո պատկերը, ինչպէս իսկութեամբ կաս դու, գեղեցիկ թէ տգեղ, ուրեմն աշխատիր գեղեցկանալ։

Այս ասած բաներիս ընդդէմ ազգի կողմից դուրս դրած կամ դնելու պատճառներից ոչ մինը չենք ընդունում. այլ այս է միայն ճշմարտութիւնը, որ մեր ազգի բարոյականութեան ոտքերը կաւեղէն են։

Ազատ կամքը, որ Աստուած տուել է մարդուն, է սորա յատկացուցիչ բնաւորութիւնը, որով բաժանւում է անշունչ բնութիւնից, այդ կամքը անձ շինում է նորան մի բարոյական էակ։ Բնութեան համար չկայ ոչ մի բարոյական խնդիր. բայց մարդու համար կայ և այդ հետեւանքն է նորա ազատ կամքին, որ կարող է լինել բարի և չար, բարձրացնել և կործանել։ Այս տեղից է բղխում մարդկային հոգու անվախճան գործունէութիւնը, նորա մշտնջենական ձգտողութիւնը դէպի յառաջ. սորանից են յառաջանում այն լուսաւոր և խաւար կողմերը մարդկութեան և մարդու մէջ։ Մի մարդ, որքան ևս ցած կործանուած լինէր, այնուամենայնիւ մի այդպիսի մարդու համար միշտ հնար կայ բարձրանալու, միայն թէ նորա ազատ կամքը դադարած չլինէր ներգործելուց։ Ողջից վատ է կամքի մեռանելը, քնելը և վհատելը կամ ամենևին չլինելը. այդպիսի դիպուածում մարդը կորուսանում է իւր խորհուրդը և արժանաւորութիւնը։ Թող մեր ազգի անդամքը բարւոք գործ դնելով իւրեանց մասնաւորութիւնը կամենային միայն, և ահա կենդանանալու էր ազգութիւնը։

Կեանքի բարոյական յաղթութիւնը պատկանում

է ոչ թէ միայն մի մարդու, այլև ազգերին, և ամենայն մարդ, ամենայն ազգ կատարում են նորան ինքնուրոյն (самостоятельно), այլապէս ամենևին չեն կատարում։ Իւրաքանչիւրի ինքնուրոյն ներգործութիւնը չէ ոչնչացնում փոխադարձ համաձայնութեան կարեւորութիւնը, բայց յայտնի է, որ այդ համաձայնութիւնը պիտի լինի ազատ և անկախ։ Ուր որ չկայ հոգու ինքնուրոյն ներգործութիւն, այն տեղ կայ հոգու ստրկութիւն և նմանողական ձգտողութիւն (подражательность). այդպիսի տեղում չկայ գործունէութիւն, այլ միայն սնոտի ամբոխմունք (суетливость, фальшивая тревога)։

Բարոյական գործը պիտոյ է և բարոյական ճանապարհով կատարւի, առանց արտաքին հարկադրական զօրութեան և ուժի օգնութեան. ոչինչ այնպէս վնասակար չէ կարող լինել, որպէս կոպիտ ուժի և զօրութեան ներս մտնելը բարոյական խնդիրների մէջ։ Այնտեղ, ուր կոպիտ ոյժը մտածում է ամրացնել մի ճշմարտութիւն, խորտակում է նորան, որովհետև կասկածելի է կացուցանում ճշմարտութեան սեպհական և ներքին զօրութիւնը, այնպէս որ ճշմարտութեան համար աւելի լաւ է կոպիտ ոյժը իւր թշնամի ունենալ, քան թէ օգնական և գործակից։ Բարոյական ճշմարտութիւնը ունի մի զէնք միայն. դա է սրտի ազատ վկայութիւնը—խօսքը, բանը։ Ահա հոգու միայնակ սուրը, և նա է մարդու դրօշակը աշխարհի երեսին։ Խօսքը, մարդու միջնորդութեամբ կազմուած ձայներից և տոգորուած գիտակցութեամբ, հոգեւորում է տեսանելի աշխարհը, մարմնաւորում է անտեսանելի աշխարհը։ Այս տեղ, այս խօսքի և բանականութեան սահմանի մէջ արժանա-

պէս կատարւում է կամ մարդկութեան միաքան ձգտողութիւնը կամ պատերազմ մտքերի, այն դիպուածներում, երբ ճշմարտութեան որոնողքը վիճում էին և հակառակախօսում էին միմեանց հետ։

Վէճը և պատերազմը, դոքա անկողոպտելի սեպհականութիւնք են ինքը իւրեան շինող մարդկութեան։ Մարդիկ որոնում են ճշմարտութիւնը և որոնում են իւրաքանչիւրը առանձին առանձին։ Ոչ ամենայն հայեացքը միօրինակ պայծառ է. ոչ ամենայն աչք ուղղեցուցած է դէպի մի կողմ. շատ կան և բարեդիրճ մոլորութիւնք, սուտ մեկնութիւնք և զանազան աղճատանք։ Նոյն իսկ քրիստոնէութեան լոյսը, նոյն իսկ աստուածային ճշմարտութիւնը երբեմն խառն և մռայլ ցոլանում են ախտերով ամբոխուած ու ու պղտորուած խելքի հասկացողութեան ամպերի վրա։ Այս բանից յառաջանում է մարդկութեան մէջ պատերազմ. բայց այս մտաւորական պատերազմը, կրկնում ենք խիստ շեշտելով, պիտի կատարւի սրտի ազատ վկայութեան սահմանում, խօսքի և բանականութեան սահմանում։ Ոչինչ արտաքին և կոպիտ զօրութիւն հանդէս չունի այս պատերազմի մէջ. կտրող սուրերը երկաթ չեն, այլ խօսք. կշիռ ունի այս տեղ ոչ թէ փառաւոր կոչումը կամ մի պատահական դրութիւն աշխարհի մէջ, այլ միտքը և փիլիսոփայութիւնը։ Բռնադատութիւն հարկաւոր չէ. ինկւիզիցիան սեպհականութիւն է պապականութեան։ Այս րոպէիս և մեր ազգի մէջ երևում է մի մտաւորական պատերազմ, նոյնպէս միմեանց զարկւում են մտքեր։

Դուրս գալով դէպի հասարակաց խօսակցութեան ասպարէզ, մեք արդէն պարտականութիւն ենք յանձն

առնում ասել մեր սրտի վկայութիւնը յայտնի և ուղղակի, և աշխատել, որ նոքա երևէին ամենակարելի կատարելութեամբ և պարզութեամբ։

Դեռ ևս մեր ազգի մէջ չէ գնահատւում խօսքի արժանաւորութիւնը, և ամենայն քայլափոխում տեսանում ենք այնպիսի վարւեցողութեան օրինակներ, որ անվայել էին բանականութեան։ Մեր մէջ դեռ ամենքին չեն հասկանում, թէ բարեխիղճ և սրտի խորին վկայութիւնը, արդէն միայն այս յատկութիւնների պատճառով, միշտ արժանի է յարգութեան։ Երբ այս վկայութիւնը սխալ էր, այն ժամանակ պահանջում է նա բարեխիղճ հերքողութիւն, պահանջում է օրինաւոր վէճ, բայց ոչ յարձակմունք, որ յատկանում էին իւրեանց անպատշաճ ձևերով, արժանագին և խոշոր կատակներով, որոնք շատ անգամ լցուած են լինում զանազան աղճատանքներով և բամբասանքներով իւր հակառակորդի վերա։ Հալածանքը և ատելութիւնը կարող է միայն ծնուցանել սուտ, անբարեխղճութիւն և ամենայն տեսակ զուտ պահանջողութիւնք։ Ցանկանում ենք և ուխտելով խնդրում ենք Աստուծուց, որ մեր հարարակական պատերազմը, որ կատարւում է խօսքի սահմանում, ամենայն տեղ ընդունէ վայելուչ ձև, արժանի մարդկային մտքի բարոյական խորհրդին։ Մեք չենք հերքում կատակը, չենք հերքում մինչև անգամ ծաղրը, հեգնութիւնը, բայց այդ բոլորը կարող են լինել պատշաճի շրջանակի մէջ. գլխաւորը ամենայն տեղ պիտոյ է լինի բարեխղճութիւն, հակառակորդների կարծիքը չէ պիտոյ աղճատել։ Սուտ և սխալ կարծիք հերքել և դատապարտել սուրբ պարտականութիւն է ամեն մի բարոյական մարդու

համար․ բայց այդ սուտ կարծիքը, աւելի հեշտութեամբ դատապարտութեան տակ ձգելու համար, աղճատել նորանց մարդու գործ չէ։

Մեր ազգի մէջ այժմ կան հայեացքներ․ կան ուղղութիւնք․ կան ուրեմն և դրօշակներ, կայ պատերազմ։ Օտարոտի մի բան էր հերքել այս․ նոյնպէս օտարոտի էր ցանկալ մի տեսակ միաւորութիւն հակառակող բաժիններին։ Այդ փասակար էր մեր ազգին։ Պատերազմը հետևանք է շարժողութեան, իսկ շարժողութիւնը — կեանք է։ Երբ երկու հակառակող բաժինները, ամենևին ազատութեամբ, համաձայնել էին իւրեանց կարծիքների մէջ, այն ժամանակ կը հաշտուին և կը մօտենան միմեանց․ առանց կարծիքների հիմնաւոր համաձայնութեան — սուտ է ամենայն հաշտութիւն և միաւորութիւն, թէև լրագրերի մէջ ևս հրատարակէիր, — թէ թագաւորել էր մեծ խաղաղութիւն...

Եւ հակառակող բաժինները, մօտաւորութեան համար չէ պիտոյ զոհ բերեն իւրեանց սրտի վկայութիւնը․ այդ կը յառաջացնէ մի բաբելոնեան խառնակութիւն և ցոյց կտայ երկու կողմի ևս թուլութիւնը․ մի բարոյական անզգայութեան և մտաւորական ծուլութեան օգտի համար։ Ո՛չ․ թո՛ղ իւրաքանչիւր կողմը առանց բռնադատական կամակորութեան գործ դնէ իւր բոլոր զօրութիւնը, իւր մտքերի բոլոր խորութիւնը, այդ ժամանակ միայն կարող է յայտնուել կատարեալ և վճռական յաղթութիւնը․ պատերազմը այն ժամանակ կարող է հասանել իւր պայծառ և պտղաւէտ նպատակին։ Օրհնեալ է պատերազմը․ թո՛ղ լինի նա հզօր, անխնայ, ազնիւ և բարեխիղճ։ Նա, որ փախչում է ազնիւ պատերազ-

մից, մարդ չէ բարոյապէս, այլ մի թշուառ արարած կնամարդի բնաւորութեամբ։ Սուտ խաղաղասիրութիւնը, որի տակ, որպէս գայլ ոչխարի զգեստով, թաքնուած է անձնական օգուտու փառք, մեք մեծարում ենք Եզուիտ պատուանունով։ Ճշմարտութեան բուն հետևանքը բաժինք է․ պիտոյ է լինին հերձուածներ, որ ընտրուածքը երևին։ Եւ գինին մինչև չխմորուի և չըպղտորուի, չէ պարզւում։

Լուսաւորութիւնը — անձ մարդու խորհուրդը։ Ինքը բառը լուսաւորութիւն մեկնում է իւր միտքը։ Խաւարից դէպի լոյս վերին ձգտողութիւնը սեպհական է մարդկային բարոյական բնութեանը. նա է անմահ հոգու ծարաւը։ Ո՛վ կը ցանկանայ տգիտութեան, ո՛վ կը ցանկանայ խաւարի... որպէս արեգակը ամենների համար է, նոյնպէս և լուսաւորութիւնը բոլոր մարդերի համար։ Անհասկանալի է երկիւղը լուսաւորութենից․ այդ մի և նոյն է, ինչ որ երկիւղը լուսից։ Իսկ լուսից չէ վախենում ճշմարտութիւնը, միմիայն սուտը որոնում է խաւար։ Նա է թոյլ հաւատացողը, որ մտածում է, թէ հաւատը ամուր է տգիտութեամբ։ Անհաստատ է այն սրտի վկայութիւնը, որ վախենում է հրապարակութիւնից, որ իւր համար նեցուկ և ապահովութիւն կարծում է գտանել, հեռացնելով ընդդիմախօսութիւնքը։ Ճշմարտութիւնը ինքը լոյս է․ նա, որպէս արեգակը, լոյս չէ պահանջում իւր համար։ Թո՛ղ միայն նորան ծածկող ու վարագուրող ամպերը ցրուին, փարատուին, և ահա ճշմարտութեան արևը կը փայլէ իւր բոլոր պայծառ ճառագայթներով։

Ի՛նչ ասել է լուսաւորութիւն, ճիշդ խօսելով։ Լուսաւորութիւնը չէ միայն ստանալ և սեպհակա-

նել ուրիշներից գտած և յայտնագործած տեղեկութիւնքը և գիտութիւնքը։ Միթէ կարելի՞ է լուսաւոր ասել այն մարդուն, որ իւր գլուխը լցել էր միմիայն տեղեկութիւններով։ Ո՛չ, այդ դեռ նա փոքր էր. այդ դեռ լուսաւորութիւն չէ։ Այդպիսի դիպուածում մարդը նման է գրքերով լցած պահարանի. իսկ պահարանին ինչ օգուտ, որ ունի իւր մէջ ուսումնական և ճշմարտութեամբ ճոխ գրեանք. կարելի՞ է արդեօք այդ պահարանը լուսաւոր անուանել։ Այսպէս ահա փոքր է լոկ և միայն ստանալը և սեպհականելը զանազան գիտութիւնք և տեղեկութիւնք, որ յայտնագործել էին ուրիշները։ Հարկաւոր է, այդ ստանալուց և սեպհականելուց նոյն իսկ մարդու մէջ կատարուի մի յեղափոխութիւն—վերածնելութիւն. նորան անհրաժեշտ հարկաւոր է սեպհական գործունէութիւն, ընդունող, գնահատող և իշխող այդ գիտութիւնների վերա. հարկաւոր է մտքի արարչական, ստեղծագործական զօրութիւն. հարկաւոր է, որ այդ տեղեկութիւնքը դրուէին ոչ որպէս սերմեր աւազի վերա, այլ շարժողութիւն պատճառէին հողի մէջ և պտուղ տային։

Այս ստեղծագործական զօրութիւնը մտքի է նորա գլխաւոր զօրութիւնը. առանց նորան միտքը միայն մի շտեմարան է գիտութիւնների, որ կարելի է ցոյց տալ որպէս մատենադարան, բայց ոչ աւելի։ Այսպիսի լուսաւորութիւնը անզօր է. միջին դարերի սխօլաստիկական լուսաւորութեան բորբոսնած հոտը սաստիկ գալիս է այդպիսի լուսաւորութեան վերայից։ Մի ազգի լուսաւորութիւն պիտոյ է կատարուի նորա սեպհական, մայրենի լեզուով։ Լուսաւորութեան տաճարը պիտի կառուցանուի ամբողջ ազ-

գի ձեռքով. լուսաւորութեան հանդիսում շատ նեղ է հոգևոր մարդերի ասպարէզը. ոչինչ ազգ չէ հասել լուսաւորութեան վերին աստիճանին հոգևոր դաստիարակների ձեռքով։ Թող հոգևորքը պարապեն աստուածային բանի ողջամիտ վարդապետութեամբ, բայց ազգի լուսաւորութիւնը պիտոյ է յառաջանայ բուն ազգի հոգաբարձութեամբ։ Լուսաւորութիւնը այնքան հիմնաւոր է, որքան ազատ և անկախ. ստրկութեան մէջ չէ կարող լուսաւորութեան ծիլը կանաչիլ։

Սխալ դատողութիւն է վաղուց արմատացած մեր ազգի մէջ, թէ Հայոց կաթողիկոսը կամ առաջնորդքը պիտոյ է լինէին լուսաւորութեան տնտեսք և սպասաւորք. ոչ Մարկոսը և ոչ Կիրակոսը, այլ ինքը ազգը իւր ձեռքով պարտական է սերմանել, եթէ կամենում է մի օրհնեալ և սուրբ հունձ հընձել։ Հերիք պատճառ ունէինք շնորհակալ լինելու մեր հոգևորներից, եթէ միայն հոգաբարձու լինէին դոքա հոգևոր դպրոցներ շինելու արժանաւոր քահանայք պատրաստելու ազգի համար. բայց ոչ այնպիսի դպրոցներ, որ կային այժմուս զանազան տեղերում, այլ օրինաւոր, մեր ժամանակի կարօտանքը լցուցանող։ Հերիք երախտապարտելու էինք, եթէ հոգևոր իշխանութիւնը հոգս տանէր օրինաւոր քահանայք պատրաստելու համար, քահանայ ասում ենք, հասկանալով մի այնպիսի պաշտօնեայ, որ օր ըստ օրէ Աստուծոյ բանին սպասաւորելով, պիտի մխիթարէր և շինէր մեր սիրտը և հոգին։ Մեր կարծիքով, մեծ բան է քահանան, կը ցանկանայինք որ ինքեանք քահանայք այնչափ հասկանային իւրեանց արժանաւորութիւնը և խորհուրդը մարդկե-

ղէն աշխարհի մէջ, որչափ մեզ ճանաչում էինք նորան։ Քահանայն պիտի վարդապետէ ժողովրդին Աստուծոյ բանը․ առանց քրիստոնէական կրօնի ուսման անհիմն է ամենայն լուսաւորութիւն։ Եւ քրիստոնէական կրօնի ուսումը պիտոյ է բղխի Յիսուսի Քրիստոսի աստուածային և կենդանարար աղբիւրից, Աւետարանից։ Առանց նոր կտակարանի սուտ է ամենայն քրիստոնէութիւն․ և մեր ազգին բարոյապէս ամրանալու համար, հարկաւոր էր կարդալ սուրբ գիրքը, ուրեմն հարկաւոր էր և թարգմանել նորան ժողովրդական, նոր և կենդանի հայախօսութեամբ։

ՊԱՏԿԱՆԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Մայր-Արաքսի ափերով
Քայլամոլոր գընում եմ,
Հին հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը պըտրում եմ։
Բայց նոքա միշտ յեղյեղուկ
Պըղտոր ջրով եզերքին
Դարիւ դարիւ խփելով
Փախչում էին լալագին։
—Արաքս, ինչու ձկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չի հասած՝
Սըգաւոր ես ինձ նըման։
Ինչու արցունք ցայտում են
Քու սէգ, հըպարտ աչերից,
Ինչու արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից։
Մի պըղտորիլ յատակըդ,
Հանդարտ հոսէ խայտալով,—
Մանկութիւնը քու կարճ է,
Շուտ կը հասնիս դէպի ծով։
Վարդի թըփեր թող բըսնին
Քու հիւրնկալ ափի մօտ,

Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչև առաւօտ։
  Մշտադալար ուռիներ
Սառ ծոցի մէջ քու ջըրին
Ճկուն ոստն ու տերև
Թո՛ղ թաց անեն տապ օրին։
  Ափերիդ մօտ երգելու
Հովիւք թող գան համարձակ,
Գառն ու ուլը քու վըճիտ
Ջուրը մըտնին միշտ արձակ։—
  Մէջքը ուռցուց Արաքսը,
Փրփուռ հանեց իր տակից,
Ամպի նման գոռալով
Էսպէս խօսեց յատակից.
  «Խիզախ, անմիտ պատանի,
«Նիրհս ինչո՞ւ դարևոր
«Վրդովում ես, նորոգում
«Իմ ցաւերը բիւրաւոր։
  «Սիրելիի մահից յետ
«Ե՞րբ ես տեսել, որ այրին
«Ոտքից գլուխ պըճնուի
«Իր զարդերով թանկագին։
  «Որի՞ համար զարդարուիմ,
«Որի՞ աչքը հրապուրեմ,—
«Շատերն ինձ են ատելի,
«Շատերին ես օտար եմ...
  «Բայց նա ինձ չէ՛ օրինակ,
«Ես հայ՝ հային կըճանչնամ,
«Օտար փեսայ չուզելով,
«Ես միշտ այրի կըմընամ։
  «Կար ժամանակ, որ ես էլ

«Շըքեղազարդ հարսի պէս,
«Հազար ու բիւր պըճնանքով,
«Փախչում էի ափերէս։
  «Յատակս պարզ ու վըճիտ,
«Կոհանկներըս ոլորուն,
«Լուսաբերը մինչև այգ
«Ջրիս միջին էր լողում։
  «Ի՞նչս մընաց էն օրից,
«Ո՞ւր ջրրամօտ գեղերըս,
«Ո՞րը իմ չէն քաղաքից,
«Ո՞ւր բերկրալի տեղերըս։
  «Տուրքը ջրի ամեն օր
«Իր սուրբ ծոցէն Արարատ
«Մայրախնամ ինձ սնունդ
«Պարգևում է լիառատ։
  «Բայց ես այն սուրբ ջրերով
«Սուրբ Ակոռի աղբիւրին
«Պիտի ցօղեմ արտորայքն
«Իմ ատելի օտարին։
  «Մինչ իմ որդիք,—ո՜վ գիտէ—
«Ծարաւ, նօթի, անտէրունչ
«Օտար աշխար՝ յածում են
«Թո՛յլ ոտքերով կիսաշունչ...
  «Հեռո՜ւ, հեռո՜ւ քըշեցին
«Բընիկ ազգն իմ հայկական,
«Նորա տեղը ինձ տուին
«Ազգ անկըրօն, մոլեկան։
  «Քանի որ իմ զաւակունք
«Այսպէս կու մընան պանդուխտ,
«Ինձ միշտ սըգւոր կը տեսնէք,
«Այս է անխաբ իմ սուրբ ուխտ...»

Էլ չի խօսեց Արաքսը.
Յորձանք տուեց ահագին,
Օղակ օղակ օձի պէս
Առաջ սողաց մոլեգին։

ՆԿԱՐԻՉ

Ակնապիշ, անձայն, խորհուրդ ճակատիդ,
Պատանի, ո՞ւր ես մըտքով մոլորած,
Ներկ ու վըրձիններ ցիր ցան առաջիդ,
Վշեայ կըտաւը քու հանդէպ փըռած։
Շուռ տուր աչերդ, նայէ դէս ու դէն,
Տես, քեզ ծաղրում է անմիտ ամբոխը,
Զարթիր, սիրելի՛, այդ անուշ քընէն,
Գոնէ մի անգամ հանէ՛ քու ոխը։
Բայց դու ներում ես նոցա վեհ հոգով,
Խուլ ես աշխարհի ունայն շըշուկին...
Յանկարծ աչերդ փայլեց սուրբ շնորքով,
Հըսկայ սիրտդ թընդաց խիստ ուժգին։
Առիր վըձինը, թաց արիր ներկով,
Շունչ տըւիր անշունչ կոպիտ կըտաւին.
Երկնից խորհուրդը մեկնեցաւ քեզմով,
Քեզ անկարելին անյայտ է բնաւին։
Սէր, ատելութիւն, հանճար, բարկութիւն
Տւիր պատկերին մատիտ շարժւածքով,
Ինչ որ չի յայտնեց ճարտարի լեզուն,
Դու պարզ յայտնեցիր անձայն խօսւածքով։
Ապշեց ամբոխը, վազեց, յառաջեց
Քու կենդանագիր պատկերի դիմաց,
Ծնկաչոք զմուռս ու հալւէ խնկեց,
Գոչեց մեծաձայն. «դա է իմ Աստւած»։

Բայց ա՛խ, քու անքուն ժամերու ճիգը
Քանի մի արծաթ հազիւ գին դըրին.
Ստեղծողդ դարձար քու խեղճ խըրճիթը,
Ակեր շարեցին շուրջ քու պատկերին։

ԵՂԻՇԷ

Ոսկեծղի, գեղեցկատիպ
Ո՛վ իմ գըրքոյկ ոսկեշունչ,
Ազգիս փառքը, անբաղդ օրը
Դու քարոզող անմըռունչ։
Ո՞վ պիտի տար այն անըսպառ
Սէրն ու գութը դէպ հային,
Թէ որ մարդիկ քեզ, ո՛վ գըրքոյկ,
Երբեմըն չի կարդային։
Քեզ կարդալով՝ կըմոռնամ
Ես թերութիւնք մեր ազգին,
Դէպ հայ եղբարքս գութ ու սիրով
Միշտ կը լըցւի իմ հոգին։
Մըտքիս մէջը ես միշտ կասեմ.
«Սերունդք Վարդան մեր քաջին
«Անհընար է՝ անփառունակ
«Ըստրուկ մընան կամ կորչեն»։
Կամ՝ տեսնելով հէգ հայ տէրտէր,
Սուրբ Ղեւոնդին կը յիշեմ,
Ու յուսահատ սըրտում մոքեր
Ինձմէն հեռու կը քըշեմ։
Եղիշէին Հայք կարդալով,
Նոր յոյսերով կը լըցւին,
Հայի գալոց բարիքն նոցա
Հոգւոյ առջև կըբացւին։

Հա՛յ պատանի, շուտ շուտ կարդա՛
Այս գրքոյկը ոսկետառ,
Որ համոզւիս, թէ մեր հայը
Ոչնչելու ազգ չէ իսպառ։

ՅՈՅՍ

Թո՛ղ փչէ քամին պաղ պաղ երեսիս,
Վ՛րէն ամպերէն սաստիկ ձիւն թո՛ղ գայ,
Ո՛րքան որ կուզէ՝ թող փչէ հիւսիս,
Յուսով եմ, վաղ-ուշ, գարունը պիտ գայ։
Թուխպը թո՛ղ պատէ երկինքը պայծառ,
Թանձրը մառախուղ երկիր թո՛ղ փակէ,
Տարերք աշխարհիս խառնուին իրար,
Յուսով եմ, վաղ-ուշ արև պիտ ծագէ,
Թո՛ղ գայ փորձութիւն, թո՛ղ գայ հալածանք,
Խաւար թո՛ղ դառնայ անաղօտ լոյսը,
Սարսափելի չեն հային տառապանք—
Միայն... չի հատնէր խղճուկի յոյսը։

ՕՐՕՐՈՅԻ ԵՐԳ

Արի՛, իմ սոխա՛կ, թո՛ղ պարտէզ, մէրին,
Տաղերով քուն բեր որդիս աչերին.
Բայց նա լալիս է. դու, սոխակ, մի՛ գալ,
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ։
Եկ, աբեղաձագ, թո՛ղ արտ ու արօտ,
Օրօրէ որդիս, քնի է կարօտ.
Բայց նա լալիս է. դու, ձագուկ, մի՛ գալ,
Իմ որդին չուզէ աբեղայ դառնալ։

Թո՛ղ դու, տատրա՛կիկ, քու ձագն ու բունը,
Վուլվուլով որդիս բե՛ր անուշ քունը.
Բայց նա լալիս է. տատրակիկ, մի՛ գալ,
Իմ որդին չուզէ սրգաւոր դառնալ։

Կաչաղակ, ճարպիկ, գող, արծաթասէր,
Շահի գրուցով որդուս քունը բեր.
Բայց նա լալիս է. կաչաղակ, մի՛ գալ,
Իմ որդին չուզէ սովդաքար դառնալ։

Թո՛ղ որսըդ, արի՛, քաջասիրտ բազէ,
Քու երգը գուցէ իմ որդին կուզէ...
Բազէն որ եկաւ՝ որդիս լռեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քնեցաւ։

ՄԵՍՐՈՊ, ՎԱՐԴԱՆ, ՂԵՒՈՆԴ

Մի՛ տրտմիր դու, հայ, երբ մէգ ու խաւար
Երբեմըն պատեն երկինքըդ պայծառ.
Դու ունիս Մեսրոպը, նորա սուրբ գիրը
Միշտ կլուսաւորէ հայոց երկիրը։

Մի՛ վրհատիր, հայ, երբոր քու որդին
Երբեմըն դառնայ զոհ անգութ քրդին.
Քու քաջ Վարդանի զէնքի յիշատակ
Միշտ կըպատրաստէ ազգիս շահատակ։

Մի՛ սարսիր, երբ պիղծ կրակի քրմերը
Երբեմըն քանդեն քու սուրբ ժամերը,—
Ղեւոնդէս մնացած մեզ այն սուրբ բիրը
Միշտ կըհալածէ քրմաց Ջոլիրը։

Մի՛ վախնալ... բայց և անհոգ մի՛ մնալ,

Սիրէ՛ շատ սիրէ սովրիլ ու կարդալ,
Կարդա՛, միշտ կարդա՛ հայոց պատմութիւն—
Անտէր հայ ազգիս վաւեր փրկութիւն։

ՅՈՒՍԱՀԱՏՈՒԹԻՒՆ

Ո՛րքան սիրեցի ես իմ հայրենին,
Այնքան էլ ջոկ ջոկ ատեցի հային.
Զի տւեց ազգիս չար աստւածութիւնն
Ո՛չ մի ազգաշէն առաքինութիւն։
Աշխարհքըս ա՛նցի՛ր, խուզէ՛, որոնէ՛
Այսքան մոլութիւնք, որ մեր հայն
ունէ,
Ու յետոյ գընա՛ ու մի զարմանալ—
Մա՛ղթ էր այս բարքով այսքան դար
կենալ...
Ազգատեցութի՛ւն, տիրանենգութի՛ւն,
Կեղծաւորութի՛ւն, խոր տգիտութի՛ւն,
Շըռայլ կեա՛նք, ազնիւ զոհէ միշտ փա-
խո՛ւստ,
Հայ եղբօր նիւթող օր-գիշեր կորո՛ւստ,
Իւր հարազատին արիւնը ծըծո՛ղ,
Օտարի առջև շան նըման քըծնո՛ղ,
Ազգը կէսուակէս տէրտէրով լըցւա՛ծ,
Իսկ ամեն մի հայ կրօնէ զըրկւա՛ծ,
Լուսաւորութեան իբրև թէ ձըգտող,—
Հայ գիտնականին յաւերժ հալածո՛ղ,
Իւր անձնէն ի զատ մարդ չի ճանաչե՛լ,
Յանցաւոր լինել ու չը ամաչել,
Զար ու բարին լինել քաջ ծանօթ—
Ու լինել ոճրի միշտ ընտիր անօթ,

Եւ այդ ազգութի՛ւն... Ա՜խ, Աստւա՛ծ,
Աստւա՛ծ,
Մի՛թէ հայն դորա համար էր ստեղծած։

ՐԱՖՖԻԻ ԴԱԳԱՂԻ ՎՐԱ

Քանի դու մեր մէջ կեանքով լի էիր,—
Դու միշտ հալածւած, ատելի էիր.
Բայց հէնց առ հարըս գնա՛ցիր, հեռացար,
Դու մեր ա՛զգային հանճարը դարձար։
Հայքըս, որ հոգւով վաղուց ենք մեռած,
Միշտ դիակներ ենք մեր կեանքում սիրած.
Սուտ չէր խօսքը մեր ասած պապերէն—
Գընա՛ դու մեռի՛ր, արի՛ քեզ սիրեմ։

ՄԻ ԿԱՐԾԷՔ ՈՐ ԵՍ...

Մի՛ կարծէք, որ ես սին փառքի համար,
Իմ հառաչանքով լըցրի... աշխարհ.
Այս հէգ ամբոխի ծափին ու գովքին
Կարօտ չէր բընաւ իմ հըպարտ հոգին...
Այո՛, իմ քնարի տըխուր ձայները
Ցընցեցին հայի հոգու լարերը,
Արիւն էլ ազնիւ սըրտէ քամեցին,
Կըտրիճի աչքէ քունը փախուցին։
Ինչո՛ւ. չըգիտեմ. Ասէք, հէ՛ր բարդ-բարդ
Բացւում է գարնան կարմիր, հոտոտ վարդ,
Լեռնիվայր ինչո՛ւ անուշ կարկաչով
Վազում է առուն դալարի միջով.
Զեփիւռը ինչո՛ւ տերևէ տերև

Անցնելով, ասես, տալիս է բարև,
Ինչու՞ սոխակն էլ մօտ կանանչ թփին
Անմրմունջ ձայնում է իր մեղեդին...

ԻՄ ԵՐԳԸ

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,
Սերտ բարեկամք անջատած են ինձանից.
Թառամում եմ ես այս օտար երկրումը,
Մենակ բուսած ծաղկի նման դաշտումը։
Կամաց կամաց տարիները անցնում են,
Մեզ նորոգած գարուն, ամառ դարձնում են.
Միայն մեր խեղճ կեանքը չունի ոչինչ նոր,
Ինձ երեկը կրկնւում է միշտ այսօր։
Ասպարիզս նեղ է ճամփան ու փշոտ,
Խեղճութիւնս համարում են ինձ ամօթ.
Իմ վիճակին կարեկցութիւն մարդ չունի,
«Դա, ասում են, իր կեանքումը դարդ չունի»։
Ես դարդ ունիմ, դարդըս մեծ է ու պէս պէս,
Բայց չեն տեսնում ձեր աչքերը կարճատես։
Երբ ես մտայ անհիւրընկալ այս աշխարհ,
Քանի րոպէ բաղդը ժըպտաց ինձ պայծառ.
«Հա, ասացի, դարձել է իմ անիւր,
Լըրացել է իմ վատ բաղդի չար թիւը»։
Յանկարծ՝ փըչեց անտուժելի հիւսիսին,
Թառամեցուց վարդ, մանուշակ մայիսին.
Այսպէս չորցուց իմ նազելի հասակը,
Իմ անողորմ, անագորոյն վիճակը։
Ա՜խ, մօտեցիր, օրհասական օր մահուան,
Բեր քու հետը սև հող ու նեղ գերեզման,

Թո՛ղ սառ լինի իմ նոր տանը յատակը,
Ծանր քարէ վրաս ծածկած վերմակը։
Բայց, ա՜խ, երբ որ կանցնի ամիս ու տարի,
Կը մամռոտի գերեզմանը այն քարի,
Հետը անգամ չի մընալու իմ խաչին,
Իմ անունը, իմ յիշատակ—կըկորչին.
Բայց կուզէի թողնել այստեղ մի արձան,
Որ դարէ դար մընար ամուր անկործան...
Ես երգեցի երգ ոլորուն ու անուշ,
Իմ քընարի ձայնն էր մեղմիկ ու քընքուշ.
Մի՞թէ այնքան անգութ կլինի Լեթա գետ,
Որ անունըս անգամ կանէ նա անհետ։

ԵՐԿՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Քաղցրախօս պոէտ, քու անոյշ լեզուն,
Քնարըդ ներդաշնակ, հոգիդ ըզգայուն—
Աշխարհ գրաւեցին. դափնեզարդ գլխով
Դու ժուռ ես գալիս մարդկանց մէջ շքով։
Քեզ սիրեց աշխարհ,—սիրեց սերտ սիրով,
Արահետ, ուղիդ փռեց վարդերով.
Համբաւըդ հեռու աշխարհներ հասցուց,
Քեզ արժանացուց դիւցազանց դասուց.
Ու դեռ քու հոգին չէր ելել մարմնից,
Նա քեզ արձաններ կանգնեց մետաղից։
Քեզ սիրեց աշխարհ և սիրեց—իրօք,
Զի անոյշ լեզւէդ չի լըսեց վատ խօսք.
Լարերիդ երբէք չի տուիր դադար,
Երբոր գովելու ունէիր պատճառ.
Բայց երբ որ բասրել պէտք լինէր չարին՝

Քընարըդ իսկոյն կախում էր պատին։
Քու ասպարէզն էր գինառատ խընջոյք,
Քեզ պատում էին կանանց, կուսից հոյլք.
Վարդ էր տեսածըդ՝ վարդ էիր երգում,
Փըշից, տատասկից միշտ հեռի փախչում...

* * *

Այլ էր վիճակը մի այլ պոէտին,
Անհաշտ թըշնամի կարծած ամենին,
Որին ըսկըսած փոքրից մինչի մեծ՝
Մարդկութեան ցեղի անուանեցին ցեց։
Դա՛ռն էր վ ճակը, դա՛ռն էր կոչումը
Այդ տարաբաղդին. դրսում՝ ոչ տունը
Ունէր նա հանգիստ. ծընընդեան օրից
Սիրոյ մի նըշան չի տեսաւ միջից։
Լեզուն—մահաթոյն ասացին մարդիկ,
Ճարտար խօսւածքը—չարութեան գործիք,
Եւ այն հանճարը, որ նորա բաժին
Տուաւ ի վերուստ,—մարդիկ ջանք արին
Թաղել ցեխի մէջ իրանց վատ կենաց,
Որի մէջ ինքեանք էին թաթախուած։
Բայց նա միշտ հըպարտ՝ մընաց հաստատուն,
Հանճարն էր նորա միակ ձեռնատուն,
Անդողդոջ ոտքով անցաւ այս աշխարհ
Հոգին անվրդով, ճակատը պայծառ.
Եւ մինչև վերջին րոպէն իր կենաց
Սըրտից չի հանեց հառաչանք, ոչ լաց։
Բայց երբոր նորա անշնչացած մարմին
Զազրելի որդոց եղաւ լոկ բաժին,
Եւ երբ շատ դարեր գընացին, անցան,—
Լո՛կ այն ժամանակ մարդիկ իմացան
Այն ազնիւ սէրը սըրտի մէջ փակած,

Որ կոյր աչքերուն երբէք չերևաց.
Իմացան, որ կար նաև այնպէս սէր,
Որ հաստ փաթաթով ծաղրի պատած էր.
Որ քարկոծ արին այն խեղճ բըժիշկը,
Որ ցաւով՝ նոցա բըժըշկեց վէրքը։

Մ Ա Ն Կ Ա Ն

Հազա՜ր երանի քեզ, մանուկ ամբիծ,
Որ շուտ հեռացար դու այս աշխարհից,
Ուր վաղուց ի վեր ունի բնակութիւն
Անմեղութեան հետ մոլի չարութիւն։
Բայց այն ո՞վ գիտէ՝ քե՞զ ինչ էր սպասում
Փուշոտ, տատասկոտ այս մեր աշխարհում.
Միթէ յաւիտեան պիտի մնայիր
Հանգիստ գրկի մէջ քու մօր սիրալիր,
Կամ թէ յաւիտեան քեզ պիտի ժըպտար
Գարնան վարդի հետ այս օտար աշխար։

ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ԿՐԹԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ

Տեղը եկաւ՝ հայ է նա, տեղը եկաւ՝ այլազգի,
Իրօք ոչ այդ և ոչ այն է, այլ ծընունդ մի նոր ազգի։
Հագնըւում է նա միշտ en grand, ման է գալիս á la chique,
Ճաշ է ուտում, ո՛ւր էք կարծում, chez Dusseau կամ Dominique.
Կարդում է նա Morning, Dèbats, ոչ Բազմավէպ, ah! fi, donc!
Ֆըրանսերէն է կոտրատում, հայերէնն է mauvais ton՝

Զարթում է նա ուղիղ մէկին, անկողնի մէջ թէյ խմում,
Նախաճաշիկն է երեքին, գաղիացու պանդոկում.
Վեցին քառորդ՝ ճաշի ժամ է չընաշխարհիկ մեր հային,
Ո՛չ թէ սովոր է այդ անել, այլ որ վրան շատ խօսին։
Ուշի ուշով հետեւում է Պետերբուրգի լուրերուն,
Դերձիկից էլ ճիշտ տեղեակ է новомодный շորերուն.
Թէեւ զուրկ է մուզիկայից, բայց опера սիրում է,
Бозіо-ի անուշ ձէնից նորա խելքը գընում է։
Պինդ խօսում է, ինչ որ կանխաւ feuilleton'-ում է կարդել,
Խօսքով աշխարհ կործանում է մեր պարոնը անարգել.
Նէպլր, Դումաս ու այլ անձինք են նիւթ նորա զըրոյցին,
Պախարակում է Hugo-ին ու սիրում է Դիկկէնսին։
Նա սիրում է, նա ատում է ո՛չ սեպհական իր խելքով,
Նա խըմում է, նա ուտում է ո՛չ իր բերնի ճաշակով։
Նորա խելքը feuilleton-ն է, прейсъ-курантъ-ն է ճաշակը,
Ու գիտութեանց ծեմարանը է ո՛ր ասես պանդոկը։
Քանի տարի քաշ է գալիս Պետերբուրգում այս կերպով
Ու յետ դառնում իր հայրենիք դատարկ խելքով ու ջիբով։
Այնուհետեւ պահանջմունքը նորա մեծ են, անհեթեթ,
Միայն ինքն է խելօք, գիտուն, իսկ այլք՝ կոպիտ ու տըգէտ։
Այդ ինչ զարմանք, որ յիմարը ուզէ պատիւ իր անձին,
Նա է յիմար, որ անարժան տայ պատիւը յիմարին.

Բընութենէն խելագուրկին Պետերբուրգը խելք չի տալ,
Մեծ հունար չէ փողոցներում աննպատակ միշտ ման գալ։

ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ԿՐԹԱԾ ՀԱՅ ԱՂՋԻԿ

Շուշան, շուտով դէմքըդ ծածկէ, ձիւն դու թիւր մըրոտած,
Տես, սիգաճեմ ման է գալիս հայ աղջիկը մեր կըրթած.
Վարդի գոյնը ужъ не въ модѣ: то-ли дѣло блѣдный ликъ!
Այստեղումը блѣдный են գիփ՝ համ աղջըկունք համ կնանիք։
Ի՞նչ է գաղտնին блѣдный-ութեան—այդ յայտնի չէ ոչ ոքին,
Միայն կասեն, որ շատուց է կաւիճն ունի բարձըր գին։
Առաւօտ է. մեր աղջիկը հայլիից չի հեռանում,
Նորա ծընողք այսօր ճաշի гвардеецъ են ըսպասում.
Гвардеецъ է, լա՛ւ միտք արէք, հայ չէ, անշնորհ ու տըգէտ,
Гвардеецъ է՝ փայլուն շորով, ուսին դըրած эполетъ.
Տուն կըմտնի, գըլուխ կըտայ այնպէս սիրուն, շնորհաշուք
Որ մեր կըրթած հայ աղջըկայ սիրտը կանէ тукъ-тукъ-тукъ!
Էնդուր համար նա հայլիից օրն ի բուն չի պոկ գալի.
Гвардеецъ-ին դուր չի գալը խիստ է նորան ըզգալի։
Ո՛չ լոկ դէմքով պիտի դուր գայ, այլ և անուշ խօսքերով,
Ի՞նչպէս, ինչ կերպ, դուք կըհարցնէք, այդ էլ չըգիտէ ոչով։

Բարձի տակը պահած ունի նա George Sande-ի roman-ը,
Գիշերները մօրից թաքուն կարդում է մինչ լոյս ժամը.
Անհատական այդ աղբիւրից նա քամում է անդադար
Սիրոյ զգացմունք, սիրոյ խօսքեր—կանանց սրտին մխիթար։
Նա գտաւ իւր идеалъ-ը, այսօր ճաշին կըտեսնէ
Նա իւր անտես սիրահարին, ում որ սիրտը տուել է։
Հայո՜ց աղջիկ, հայոց աղջիկ, գնա՛ առաջ, մի՛ վախիլ,
Блѣдный դէմքըդ, շինծու խօսքըդ ովլին ասես չեն խաբիլ։
Гвардеецъ-ին դուր չես գալի,—ինչ ափսոսանք, ինչ վընաս,
Քեզ սիրահար гусаръ, уланъ, артиллеристъ կունենաս։
Դու փո՛րձ փորձէ նորից դուր գալ, անոյշ ժպտա՛ ու խօսէ,
Քըսանմէկըդ արդէն մօտ է, տե՛ս, առաջիդ մեծ փոս է։
Բայց մի՛ թողնիլ դու George Sande-ին, идеалъ-իդ մ' ուրանալ.
Թէ ոչ ջահիլ, գոնէ ծերուկ կառնէ քեզ ռուս генералъ։
Բայց զգուշացի՛ր դու հայերից, գլին չեն դնիլ, չեն սիրիլ
Քեզ, ինչպէս դու ցանկանում ես. դու քեզ հային մի՛ մատնիլ։
Փորձ փորձեցիր ու դուր չեկար ո՛չ уланъ-ին, гусаръ-ին,
Քըսանհինգըդ մօտենում է. հա՜յ աղջիկ, վա՜յ քու հալին։
Հայո՜ց աղջիկ, հայո՜ց աղջիկ, գնա՛ առաջ, մի՛ վախիլ,
Блѣдный դէմքըդ, սիրուն խօսքըդ ովքին ասես չեն խաբիլ։
Տարիներըդ ակօս ձըգեց քու շնորհալի երեսին,—

Վընաս չի կայ,—подругъ-ներդ դորա համար ճար ունին.
Երբ որ տանն ես՝ մի՛ հրամայիլ տըղոց քիզի մօտենալ,
Դուրս գընալիս՝ пикъ-ից ձըգէ դու կըրկին ածալ հաստ вуаль,
Հարցնողներից ուշի-ուշով ծածկէ տարիդ ծընընդեան,
Ու ամենին հաւատացո՛ւր, որ տասնութ ես տարեկան։

ԱՆՎԵՐՋ ԳԱՆԳԱՏՆԵՐ

Մեր խեղճ ազգը ուսում չունի,
Չունի ուսում՝ խելք ալ չունի.—
Խելօքներըս այդ լաւ գիտենք,
Բայց, ա՜խ, միայն մենք կըխօսենք։
Մեր խեղճ ազգը հալածած է,
Երկրէ երկիր տարագըրած է.
Բաղդաւորներըս այդ գիտենք,
Գիտենք և միայն կըխօսենք։
Հայ մշակը երկիր չունի,
Երկիր չունի՝ հարկ շատ ունի.
Հարուստներըս մենք այդ գիտենք,
Գիտենք և միայն կըխօսենք։
Հայի տըղան գըրքեր չունի,
Վարժարանը վարպետ չունի,
Գիտուններըս այդ լաւ գիտենք,
Գիտենք և միայն կըխօսենք։
Հայ տէրտէրը կարդալ չգիտէ,
Հայ տիրացուն շատ տըգէտ է,
Եպիսկոպոսքս այդ ճիշդ գիտենք,
Օգնելու տեղ՝ լոկ կըխօսենք։

Հայ դեղձուկի աղջիկն ու կին
Անվարձ սեղեխեն թուրք, պարս-
կին․
Ամիրաներս մի՞թե չգիտենք, —
Օգնելու տեղ՝ լոկ կրխօսենք։
Աչքըս դարձնում արևմուտքին,
Արև ծագէ Սլաւօն ազգին․
Հայի արևն անա կէս դար
Համատարած պատէ խաւար։

Մ Ե Ծ

Գընա՛, իմ որդեակ, աշխարքըս անցի՛ր,
Պանծալի անուն Մեծի դու ստացի՛ր․
Ու գընաց որդին, շատ քըրտինք թափեց,
Մեծ հարըստութիւն, մեծ գանձ ժողովեց,
Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով․
—Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով։
Չէ՛, չէ․ թէև դու բօրսայի ես զարդ,
Բայց քեզ չեմ ասիլ տակաւին մեծ մարդ։
Նա գընաց մըտաւ իմաստնոց տաճար,
Եղաւ խորիմաստ գիտուն ու հանճար,
Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով․
—Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով։
Չէ՛, չէ․ թէև դու գիտութեանց ես զարդ,
Բայց քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդ։
Պաշտով, աղօթքով մըտաւ անապատ,
Քուրձ հագաւ մարմնուն, հրաշքներ գործեց
շատ,
Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով․
—Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով։

Եդեմայ դըրախտին էլ լինիս դու զարդ,
Ես քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդ։
Ու գընաց որդին, դարձաւ զօրավար,
Խելքով, քաջութեամբ տիրեց շատ աշխարհ,
Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով․
—Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով։
Չէ չէ․ թէ և դու գոռ դաշտին ես զարդ,
Բայց քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդ։
Ու գընաց որդին մի երկիր օտար,
Հրէշք ու ցաւերէ մաքրեց այն աշխարհ,
Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով․
—Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով։
Օտար աշխարհի թէև եղար զարդ,
Բայց քեզ տակաւին չեմ ասիլ մեծ մարդ։
Ու գընաց որդին... Հա՛, սարն էր գլոր-
ման...
Դէմ տըւեց ուսը, չը թողեց անկման...
Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով․
—Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով։
Դիւցազների մէջն էլ լինիս դու զարդ,
Բայց քա՛ւ ինձ ասել քեզ համար մեծ մարդ։
Ու գընաց որդին գըլխակոր, տըրտում,
Հոգին վըրդոված, ցաւ ու դարդ սըրտում,
Մաշւում էր խեղճը զոռ տալով խելքին—
Հէ՞ր չարժանացաւ հօր գովասանքին...
Նորա եղբայրը գերի էր տարած,
Թըշնամու ձեռքով տունը աւերած․
Ձիդ արաւ, գլուխը վտանգի ձըգեց,
Ազատեց եղբօրն ու տունը կանգնեց...

Յանկարծ... սար ու ձոր, ծով դղրդե-
ցան,
Բիւրք բիւրուց բերնով գոչեց ազգ մարդկան.
«Մեծ Մարդուանուն դու այժմ ըստացար—
«Եղբօրդ յիշեցիր ու քեզ մոռացար»։

ՓԱՌԱՍԷՐ

Հազար ութ հարիւր վաթսուն թւականի յուլիսի ամսու մէջ, Կովկասի կողմերէն մի տասնինը-քսան տարեկան հայ երիտասարդ եկաւ Պետերբուրգ՝ համալսարան մտնելու։ Տարեկան, այսինքն կուրսէ կուրս փոփոխելու ուսանողական քննութիւնները նոր աւարտած էին. իսկ նորամուտների քննութեան ժամանակը շատ հեռու էր, որովհետև նոքա, ինչպէս յայտնի է, իրանց քննութիւնները տալիս են յետ ամառուայ արձակուրդին, որ կատարւում է երբեմն օգոստոսի վերջերը, իսկ շատ անգամ՝ սեպտեմբեր ամսու սկզբանը։ Այսպիսով, մեր հայ երիտասարդը առջևը գրեթէ երկու ամիս ազատ ժամանակ ունէր։ Նորա այսպէս շուտ մայրաքաղաք գալը կարող էր երեք պատճառէ յառաջացած լինել՝ կամ նա ուզեցել է առաջիկայ քննութիւնների համար երկարատև և լաւ պատրաստուիլ, կամ ուզեցել է նա ուսանողական պայմաններին վաղօրօք ծանօթանալ և կամ Պետերբուրգի գոված ամառնային դաստակերտական կեանքը վայելել, որ ըստ մեծի մասին լիքն է լինում ռոմանտիկական արկածքներով, որք չափազանց հրապուրիչ են գաւառական երիտասարդներուն, և մանաւանդ նոցա, որոնց երակների մէջ յորդ վազում է հարաւային եռացող արիւնը։

Բայց այդ երեքէն ոչ մինը չէր իսկական

պատճառը մեր հայ երիտասարդի ժամանակէ առաջ Պետերբուրգ գալուն։ Նա ուրիշ հաշիւ ունէր, և նորա հաշիւը այս էր։ Չքաւոր ծնողքի զաւակ լինելով՝ նա չունէր հնար իւր սեպհական հաշւով չորս կամ հինգ տարի, ինչպէս ուսանող, ապրելու մայրաքաղաքի մէջ. ի բնէ հպարտ և անձնասէր գոլով՝ նա չէր ուզում, իւր շատ համազգի երիտասարդների նման, մտնել ի թիւս այն երիտասարդների, որոնք լոկ օրական ապրուստի համար, իրանց ամենաթանգագին գանձը—իրանց համոզմունքը—դնում են կեղծ ազգասիրութեան դիմակի տակ... Չէ, մեր Նորեկ երիտասարդը շատ բարեկիրթ էր այդ անտանելի պայմանին ինքն իրան ենթարկելու համար։ Թիֆլիզի գիմնազիայի մէջ նա առաջին մաթեմատիկն էր, այն չափով և սահմանով, որքան վարժապետները աւանդում էին համաշխարհական պատմութիւն, աշխարհագրութիւն, լատին լեզու, և այլն, և այլն. Նա այնպէս լաւ սովորում էր և լաւ գիտէր, որ բոլոր քաղաքի մէջ ամենաընտիր աշակերտն էր համարւում. օրէնը ամբողջ տասներկու ժամ իւր դասերով պարապելը նորա համար մի սովորական բան էր. իսկ ինստիտուտի վերին դասարանի աշակերտուհիները նորա մէջ պինդ արմատացրել էին համոզմունքը, թէ նա ունի չքնաղ դէմք ու իրանք։

Այսպիսի բնաւոր և սոցիական գեղեցիկ յատկութիւններով ամօթ չէ՞ր մի փառասէր երիտասարդի՝ իւր գլուխը ծռել մի քանի հէգ մեկենասների առջև, գլուխը՝ որ զարդարած էր արջնաթոյր, ցոլուն և գանգուր մազերով, ջուխտակ, խոշոր, կրակոտ, այրող աչքերով ու անտիկական սիրուն երեսով։ Չըգիտեմ, ինչպէս ուրիշը, բայց այդպիսի մանր

ու չնչին շնորհի համար շատ անձնասէր էր մեր հայ երիտասարդը։ Այո, Ալթմազովի միակ պակասութիւններն էին—անձնասիրութիւնը և փառասիրութիւնը։

Յարութիւն Ալթմազովի... Լսում էք՝ Ալթմազով և ոչ թէ Ալթմազեան... Նորա փոքր հասակէն՝ խոհեմ հայրը հաւատացրել էր, որ այդ չնչին «եան» մասնիկը կարող էր շատ խոչ ու խութ դնել նորա առջև՝ կենցաղոյս ալէկոծեալ ծովի մէջ և երբ միամիտ ժամանակ երեխան հօրը առջև բերում էր, թէ այդ մասամբ իւիք կընշանակէ ուխտադրուժ լինել ազգային զգացմունքին և յիշեցնում էր այն անհամար «եան»երը, որոնք փոքր առ փոքր, բայց անդադրում յայտնւում են այս և այն երիտասարդների մականւանց ետևներէն—խոհեմ հայրը աւելի համոզիչ օրինակ էր բերում մայրաքաղաքացի քանի մի պաշտօնատարների «օվ» լինելը, որ ամենևին արգելք չէ նոցա ժամանակ-ժամանակ արժանագին ազգասիրական երախտիքներ անելով ազգի մէջ պանծալի ազգասէրների հոչակ վայելելու։

Ես շարունակում եմ պատմութիւնս։ Յարութիւն Ալթմազովը ծնւել էր Երևանայ գաւառի անհամար գիւղերից մինի մէջ։ Նորա հայրը մուլքադար էր և ունէր մի ջրաղաց և մի փոքրիկ այգի, որը ամենը միասին տալիս էին նորան տարեկան հազար մանէթի չափ արդիւնք, որով շատ համեստ կերպով կենում էր իւր բազմանդամ գերդաստանով. բայց մի կօպէկ աւելի չունէր իւր սիրական Յարութիւնին օգնելու, որ իւր եօթը տարւայ Թիֆլիզի գիմնազիում սովորելու միջոցին մի բմբուլի ծանրութիւն չի տւեց ծնողքին։ Առաջին տարին

նա կենում էր մի հեռաւոր ազգականի տանը, իսկ միւս տարիները նա արդէն ճարել էր մասնաւոր դասեր, որից ստացած փողը ոչ միայն անդորր ապրում էր, այլ և մի պառաւ օտարուհու ամսական տասներկու մանէթ տալով՝ սովորում էր նրա մօտ ֆրանսերէն, գերմաներէն և երաժշտութիւն, որը շարունակեց մինչև գիմնազիայէն դուրս գալը: Տասնինը տարեկան լաւ սովորած գիմնազիստ, սիրուն, բարեկիրթ—ո՞ր աշխարքի մէջ կարող էր կորչել, որ Պետերբուրգի մէջ կորչէր, ուր երիտասարդների մէջ երբէք այնքան շատ լաւ պայմաններ չեն ամփոփւում, որքան որ ամփոփուած էին Ալթմազովի մէջ: Ալթմազովը վաղուց արդէն սովորել էր առաջնակարգ աշակերտ համարուելու. շատ դժուար էր նորա այդ համոզմունքէն ու գիտակցութենէն հրաժարուելու՝ կուզէր նորա կեցած քաղաքը Թիֆլիս լինէր, կուզէր Պետերբուրգ, կուզէր Լօնդօն: Անձնապաստանութիւնը արդէն նորա մէջ խորունկ արմատներ ձգել էր:

Պետերբուրգ գալով, ինչպէս շատերին և գրեթէ միշտ պատահում է, նա չի շւարեցաւ, չի մոլորւեցաւ, ինքնիրան չի կորուց. նա իւր կենցաղի և ապագայ գործունէութեան ծրագիրը արդէն վաղուց արել էր: Մայրաքաղաք հասած չի հասած, իսկոյն հրամայեց կառապանին՝ տանել իրան մեծ Մօրսկօյ ասած փողոցը, ուր երևելի հիւրանոցներէն մինումը սենեակ վարձեց: Յետոյ բացեց պայուսակը, հանեց մէջէն պահծու հալաւները, հագաւ, ծոցը դրաւ Թիֆլիսի գիմնազիէն ստացած վկայաթուղթը և իսկոյն գնաց համալսարան. դռնապանէն հարցուց մի քանի, իրան

պէտքական պրօֆէսօրների անունները ու հասցէները և սկսաւ այցելութիւն անելու. քանիսին տանը չի գտաւ,—նոքա կամ արտասահման էին գնացել, կամ ամարանոց տեղափոխւել—միայն մինին գտաւ տանը, որ տեսնելով նրա շնորհալի դէմքը, չափազանց անձնապաստան խօսակցութիւնը, թղթի մէջի վարժապետների գովասանական վկայութիւնը, եթէ ոչ համակրութիւն, գոնէ ակամայ ակնածութիւն զգաց դէպի այդ ապագայ գիտնականը: Ալթմազովը նորանից խնդրում էր՝ իւր համար գտնել մի լաւ ընտանիքի մէջ դասեր: Պրօֆէսօրը կմկմալով «ստիպենդիայի (նպաստ, օգնութիւն փողով) անուն տւեց, որով ուզում էր հասկացնել նորան, որ դրամական օգնութիւնը, որ տալիս է համալսարանը խեղճ ուսանողներին, մասամբ իրանից կախուած է, եթէ միայն նա, Ալթմազովը, աշխատասէր, յառաջադէմ և օրինապահ ուսանող լինի:

Երբոր ստիպենդիայի անուն լսեց՝ Ալթմազովի ցոլուն աչքերէն կայծ ու կրակներ թափեցան: Ոտքէն մինչև գլուխ չափեց պրօֆէսօրին. ստիպենդի՞ա, օգնութի՞ւն, ողորմութի՞ւն, այն էլ որի՞ն,—մի քաջառողջ, յաղթանդամ երիտասարդի, որի հասակը քիչ-քիչ երեք գազ էր, որի երեսատիպարքը ասխական Ապոլոնին էր նման և որի գիտութիւնը մի փոքրիկ գաւառական համալսարանի պրօֆէսօրի կըհաւասարէր... Պրօֆէսօրը տեսաւ որ մեծ անմարդավարութիւն արաւ ստիպենդիայի անուն տալով այդպիսի երիտասարդի առջև, որ եթէ ասէր թէ՝ ես Աւղանի Եաղուբ խանի որդին եմ, ոչ ոք երկմտելու չէր. նորա դէմքի վրա այնքան խրոխտ հպարտութիւն ու անձնապաստանութիւն էր նկար-

ւած։ Իսկ սիրունութի՜ւնը, աչքերի ցո՜լքը, քթի անթիկական կտրուածքը, ճակատի չքնաղ համաչափութի՜ւնը, ասես թէ Փիդիասի կարկինով նախագծած... Իւր ակամայ սխալը ուղղելու համար պրօֆէսօրը ամենաքաղաքավարի խօսքերով նստեցուց Ալթմագովին, երկար-բարակ խօսեցաւ հետը, հարցուփորձ արաւ Կովկասի և Հայաստանի վիճակի մասին, թեթև ու աննկատելի կերպով իմացաւ նրա առանին պարագաները. և երբոր Ալթմագովը առաւ գդակը ու պատրաստւում էր երթալու, պրօֆէսօրը ամենաքաղաքավարի խօսքերով միամտեցուց նորան, որ այսօրևէթ մի երկու բարեկամների կըհանդիպի և անպատճառ կաշխատէ նորան բաւարար պատասխան տալու։ Պրօֆէսօրը չըմոռացաւ հարցնել նրա հասցէն և ապա ճամփա դրաւ, և երբ իւր առանձնասենեակը մտաւ և ուշքը մի փոքր վրան եկաւ, խեղճ մարդը ասաց ինքն իրան. «Այս ի՜նչ սատանայ էր, խելքս չի հասնում. այս ինչ մարդ էր, որ ես տեսայ,—իշխանա՞զն էր, թէ՞ աւազակապետի որդի. ա՜յսքան հպարտութիւն, ա՜յսքան համարձակութիւն, այսքան արտաքին շնորհք..,

Եւ երկար ժամանակ խեղճ պրօֆէսօրի մտքէն չէր դուրս գալիս Ալթմագովի ցոլուն, խոշոր ու մի փոքր արիւն-կոխած աչքերի արած կախարդական ներգործութիւնը իւր վրա։

Ալթմագովը գնաց իւր հիւրանոցը։ Ժամը ճաշի էր։ Ծառան հարցուց նորան. «Ո՞րտեղ կը բարեհաճիք ճաշ ուտելու. ձեր սենեակի՞ մէջ թէ՞ հասարակաց ճաշարանումը։—Հասարակաց ճաշարանումը, —ասաց Ալթմագովը ու գնաց այնտեղ։ Ճաշարանի մէջ մի երկար սեղանի առջև արդէն շատ մարդիկ

նստած էին—եկւոր բարձր աստիճանաւորներ, զինւորականներ, օտար տէրութեան գործակալներ և շատ ռուս և օտարազգի ազնիւ կնանիք։ Երբ որ Ալթմագովը իւր սովորական ազատ բռնւածքով ու քալւածքով գնաց և մի ազատ սպասքի առջև նստաւ, ամենքը և մանաւանդ կնանիք զարմացած՝ աչքերը նորա վրա դարձուցին և շատերէն մինչև անգամ ակամայ հիացման բացականչութիւն դուրս թռաւ. «Աստուա՜ծ իմ»։ Որպիսի գեղեցկութիւն։ Ալթմագովը չի շփոթւեցաւ. այդպիսի բացականչութիւնների և աւելի խորունկ և համոզիչ արտայայտութիւնների նա արդէն վաղուց ընտելացած էր. նա թերևս կը զարմանար, եթէ մարդիկ և մանաւանդ կանայք առանց ուշադրութեան թողնէին նորան, բայց ամենևին չի զարմացաւ, երբ նորա արտաքին շնորհքին հարկաւոր հարկը հատուցին։ Թիֆլիսի ինստիտուտկաներն էին մեղաւորը, որ նա այդքան երես առած էր։

Ճաշը վաղուց սկսւել էր և արդէն վերջանալու վրա էր։ Մի տարէց խաթուն կին, որ սաստիկ ուզում էր նորա հետ խօսք բանալ, բայց չիմանալով ի՞նչպէս, ասաց նորան ֆրանսերէն. «Պարո՛ն, եթէ կընէրէք, իմ, գուցէ անտեղի, հետաքրքրութեանը, ասացէք խնդրեմ, սպանիացի չէ՞ք արդեօք»։—Ո՛չ տիկին, պատասխանեց Ալթմագովը նոյն լեզւով։ «Ուրեմն իտալացի՞ էք», շարունակեց անծանօթ կինը։—Իտալացի ես չեմ, ասաց Ալթմագովը։ «Ես գիտեմ, ասաց մի չոր չոր, նիհար, բայց ազնիւ դէմքով կին. պարոնը հնդկաստանցի է. հնդիկ ռաջայի որդի»։—Այդ ես ոչ, ասաց հայ երիտասարդը։ «Ես գիտեմ, ասաց գերմաներէն երրորդ կինը, որ

ամենէն մատաղահասն էր. պարոնը հարաւային Ֆրանսիայէն է, թերևս մարսիլիացի»։—Կըսխալիք ամենքդ էլ, տիկիններ, ասաց Ալթմազովը ամուր և համարձակ, ես Կաւկասիցն եմ, և մի փոքր կակազելով աւելցուց թոյլ ձայնով. ես հայ եմ։—«Հա՞յ էք», ասացին երեք կնանիքը և իրար երես նայեցան։—Ի՞նչ զարմանալու բան է որ, ասաց կամաց ձայնով անգլիացի կինը, բայց լսեց Ալթմազովը։ Կաւկասեան ցեղ որ ասում են, այդ ես շատ նոր կարդացի Թայմզ լրագրի մէջ, ոչ այլ ինչ է, եթէ ոչ բուն հայերը, որոնց մտաւոր զարգացումն, կատարելագործութեան ընդունակութիւնը և արտաքին գեղեցկութիւնը միշտ և հանապազ գոված է եղել ամեն ազգերի մէջ։ Եւրոպացիք ի զուր առգրում են այդ յատկութիւնները վրացիներուն, կիսաթուրք, կիսամօնգոլ չէրքէզներուն. այդ սխալ է...

Ճաշէն յետ կնանիք և մի քանի օտարազգի երիտասարդներ գնացին միւս սենեակը, ուր կար դաշնամուր, և սկսան՝ ո՛րը երգել և ո՛րը նուագել. Ալթմազովն էլ գնաց խառնւեցաւ նոցա մէջ։ Ամեն տեղ նկատուած է, որ զանազան կողմերէ ժողոված օտարազգիներ՝ թէ նաւի, թէ շոգեկառքի և թէ հիւրանոցի մէջ, առաւել շուտ և սերտ կըբարեկամանան, կը միաւորւին, քան թէ իրանց սեպհական քաղաքումը, իրանց սեպհական օճաղի առջև, որն ամեն մարդ յաչաղկոտ աչքով պահպանում է օտարի ասպատակութենէն։ Հիւրանոցի օճաղն այն առանձին յատկութիւնը ունի, որ ամեն ազգի մարդոց բերում, միաւորում է իւր հիւրընկալ շրջապատը։

Կուշտ և թեթև ճաշէն յետ ամենքը տրամադրւած էին զւարճութեան. դաշնամուրի առջև առաջինը նստաւ անգլիացի կինը և սկսաւ Սկովտիայի սարերու ուրախ ու խաղացկուն արձագանքները հնչեցնել. յետոյ նստաւ (դաշնամուրի առջև) գերմանացին ու սկսաւ Ստրաուսի վալսերը ածելու, որ դարձեալ դէպի պար էր հրաւիրում գրէթխէնների հետ, լուսնեակ գիշերով, Թիւթօնբուրգի այսերով ու վհուկներով լցւած անտառումը։ Հերթը հասաւ ֆրանսիացի կնոջ, որը նուագեց Ca ira'ն և Marseillaise-ը, որն լսելիս մարդ կատաղում էր։

Անգլիացի կինը դարձաւ Ալթմազովին ու հարցուց. «Պարոնը սիրո՞ւմ է արդեօք երաժշտութիւն»։

—Ո՛չ միայն սիրում եմ, այլ մի փոքր գիտեմ ես, ասաց նա և համարձակ գնաց նստաւ դաշնամուրի առջև։ Այս համարձակութիւնը ծիծաղելի լրբութիւն կարող էր երևել հիւրերի աչքին, եթէ հէնց առաջին աքօրդները առնելիս, նոքա չընկատէին, որ Ալթմազովը ոչ միայն սիրուն երիտասարդ է, այլև լաւ երաժիշտ է, եթէ ո՛չ նւագահանդէսներումն նըւագելու համար, գէթ տնական ընկերութեան մէջ։ Մի անհեղահնչիւն ներածութիւնից յետոյ, Ալթմազովը նւագեց պօպուրրի Կաւկասի սարերու մէջ երգւած տեղերէն, որոնք թէ իրանց նորութեամբ և թէ մեղեդիների ինքնուրոյնութեամբ, հիւրերի վրա եթէ ոչ հրապուրիչ, գոնէ չափազանց ցնցող, ապշեցնող ազդեցութիւն արին։ Երիտասարդ հայի մատերի արագութիւնը, երաժշտութեան ինքնուրոյնութիւնը, ունկնդիրների ներւերի թուլութիւնը, նւագողի կրքոտ բնութիւնը միասին առած, այնպիսի տպաւորութիւն արին կանանց վրա, որը կարող եմ միայն աստուածաշնչի օձի՝ մեր նախամօր ականջին փսփսած ձայնին համեմատել։

—Բայց կատարելութիւն է այս երիտասարդ հայը, ասաց ֆրանսիացի կինը, կրքոտ աչքերը Ալթմազովի վրա նետելով։

—Հիանալի է, ասաց գերմանացի կինը, ու աչքերը խոնարհեց։

—Անպատճառ Բագրատունիի ցեղէն պիտի լինի սա, ասաց անգլիացի կինը. այսքան կատարելութիւն մի մարդու մէջ՝ ակներև նշան է նրա կամ լօրդի, կամ արքայական ցեղէ լինելուն։

Երբ որ հիւրերը կամաց-կամաց հեռացան, Ալթմազովն էլ գնաց իր սենեակը և ուզում էր փոքր ինչ հանգստանալ։ Յանկարծ սեղանի վրա թատրոնի երկու յայտարարութիւն տեսաւ՝ մինը ռուսաց կոմեդիայի ներկայացման էր, իսկ միւսը բալէտի։ Ի հարկէ, երիտասարդը, և այդ՝ երակների մէջ հարաւային արիւն ունեցողը կըգերադասէ երկրորդը։ Սիրուն վհուկների նման աղջիկներ, բեմի վրա ձեւացուցած առասպելական աշխարհ, հանդիսատեսների ճոխ ու շքեղ հագուստը ու թանգագին զարդարանքը, ամեն տեղ գեղեցկութիւն և երիտասարդութիւն, արիւնի խաղ երեսների վրա, կրքերի արտայայտութիւն աչքերի մէջ, հոգեկան արբեցումն, մարմնոյ գրգիռ—ո՞ր իսկական երիտասարդի երևակայութիւնը չէր հրապուրիլ այսպիսի չքնաղ հեռանկարը. և ի՞նչ զարմանք, որ մեր համազգին նախադասեց արիւն եռացնող բալէտը՝ կրքերը պաղեցնող խրատական կօմէդիային։

Նա գնաց բալէտ և նստաւ բազկաթոռների երրորդ կարգը։ Առաջին նուագ հանդիսատեսներէն ոչ ոք նրա վրա ուշք չըդարձուց. բայց երբոր վարագոյրը բարձրացաւ ու մայրաքաղաքի սիրական առաջնակարգ դերասանուհին գետնից մի կանգնաչափ թռչտելով՝ եկաւ ու ոտքի մատերի ծայրերի վրա կանգնեցաւ բեմի մէջ տեղը և հազարաւոր ձեռների ծափահարութեան ուզում էր իր շնորհակալութիւնը յայտնել գլխու քնքոյշ խոնարհելովն ու ձեռների շնորհալի շարժելովը,—յանկարծ աչքը ընկաւ Ալթմազովի վրա և քանի մի ակնթարթ անշարժ, ապշած մնաց։ Այդքանը բաւական էր, որ հանդիսատեսները հասկանային նրա ապշութեան պատճառը. րոպէ չանցած՝ շատերի բինօկլները ուղղւեցան Ալթմազովի վրա։ Ալթմազովը իսկոյն հասկացաւ, որ այս րոպէիս երկու ճանապարհ է բացւում նորա առջև. կամ մնալ թատրոնի մէջ և Պետերբուրգի առիւծների շարքը ընկնել, կամ փախչել ու իր առաջադրած նպատակէն չըխոտորւել։ Հօր խրատները նորա մէջ խոր արմատներ էին ձգել։ Նա կամացուկ թողեց թատրոնը և հեռացաւ։ Բայց թէ ի՞նչ խրատներ էր տւել նորա հայրը՝ ասել չեմ կարող, եթէ ցանկանայք ևս. բայց կարդացողը պարզ կը տեսնէ այդ, երբոր այս ճշգրիտ պատմութիւնը մտադրութեամբ ծայրէ ծայր կըկարդայ։

Ալթմազովը որ տուն եկաւ, հրամայեց մի թաս թէյ տալ իրան, որը ծառան իսկոյն բերեց. և քանի որ նա խմում էր՝ գնաց նորա անկողինը յարդարեց և ապա հեռացաւ։ Նորա գնալէն յետ, Ալթմազովը պառկեցաւ և քանի րոպէէն՝ խորունկ քնեցաւ։

Պետերբուրգը հայաստանցի երիտասարդների փառասիրութիւնը երկու մարդու օրինակներով գըրաւում է. առաջին օրինակը ունեց Ղարախանովը։ Մի ղարաբաղցի տղայ էր, շատ սիրում էր պառաւ և հարուստ այրիներու Բօքաշիօի հարիւր վէպը

պատմելու, որոյ փոխարէն ստանում էր նոցանից «ի յիշատակ խորին յարգանաց» ոչ միայն թանգագին մատանիներ, այլ և մեծագումար բանկային տոմսակներ․ բանի վերջը այն եղաւ, որ խեղճ երիտասարդին «բարի գործելու համար» Սիբիր ուղարկեցին. իսկ Վաչնաձէն մի սիրուն վրացի էր, որ մեր Ալթմազովի նման, երբեմն բարի մաքով եկել էր Պետերբուրգ համալսարան մտնելու, որն չըյաջողուեցաւ նորան. վասնզի գիմնազիա եղած ժամանակը, երևի, սա աւելի յաճախ հայելիի էր նայել, քանթէ իւր դասագրքերու վրա, և աւելի շատ՝ աղջիկներու գովասանքին էր ականջ դնում եղել, քան թէ վարժապետի դասախօսութիւններին. մէկ խօսքով՝ նորա գիտութիւնը շատ է ակար եղել համալսարան մտնելու համար։ Երբ «իմաստութեան տաճարի դռները փակւել են աշխարհասէր վրացի երիտասարդի առջև, նա բարի է համարել զինւորական ասպարէզ թևակոխելու, որ աւել է նորան արտօնութիւն՝ նշանազգեստներ հագնելու. և երբ մեր պատւելի իշխան Վաչնաձէն իւր սիրուն դէմքով և սիրուն նշանազգեստովն շրջում է եղել (դու աշտանակել հասկացիր) մայրաքաղաքի փողոցների մէջ՝ յանկարծ մի հարուստ ռուս այրի աչքը ձգել է մասամբ նորա սև մազերի ու բեխերի և մասամբ նորա իշխանական տիտղոսի վրա, և մի պատւական օր մեր աղքատ վրացին հարուստ իշխան դարձաւ։

Ցաւ է ասելը, մեր Ալթմազովը, հօր խրատներին համոզւած, իւր առջև օրինակ ունէր միշտ այս վրացի իշխանին։ Թէև ամենքը գիտեն, որ Վաչնաձէի վերջը շատ արտասւալի եղաւ, բայց այդ բանը ոչ ոքի չի խրատեց, մանաւանդ հայերուն, և

Ալթմազովի հայրը կարծում էր, որ այդ վատ հետևանքին նորա որդին երբէք չի հանդիպիլ. հայը ի բնէ, վրացիի պէս շռայլ չըլինելով, երբէք չի վատնիլ իր ձեռքի հարստութիւնը. իսկ հարստութիւնը—այդ բանի մէջ ամեն հայ համոզւած է—աշխարհիս երեսին ամեն բարիքէ վեր է. հարստութիւն, որ թէկուզ ձեռք բերած լինի մոլութեան և ոճրի գնով։

Ինչ և իցէ։ Ալթմազովը եկել էր Պետերբուրգ ոչ միայն գիտութիւն և ուսումնական աստիճան ստանալու, այլև մի ահագին օժիտով աղջկայ հետ պսակւելու։ Այս խորհուրդը նորան ներշնչած էր գրեթէ օրօրոցի մէջէն։ Գիմնազիայում սովորելը և լաւ սովորելը, Պետերբուրգ գալ՝ ուսումն շարունակելու համար, խոհեմութեամբ իր բարոյականութիւնը անբիծ պահելը ոչ թէ կեանքի նպատակ, այլ միջոց էր նորա աչքում—հարուստ (բայց շատ հարուստ) աղջկայ վրա պսակւելու համար։

Ո՛րքան հերոսական միջոցներ՝ մի չնչին, մանր եսամոլ նպատակի համար։

Ա՜խ, հայ, դու միշտ այդպէս ես, եղել ես և պիտի գուցէ երկար ժամանակ լինիս։ Ինչո՞ւ ուրեմն զարմանում ես, որ ազգերու առջև արհամարւած ես. ինչո՞ւ ուրեմն սիրտդ ցաւում է, երբ օրինաւոր ազգերու ընկերութենէն, ճիւէդ բռնած, քեզ միշտ դուրս են հանում։

Երբոր Ալթմազովը միւս օր զարթեցաւ, ծառան մի տոմսակ բերեց տւեց նորա ձեռքը։ Տոմսակի մէջ մօտ ի մօտոյ այսպէս էր գրած.

Պարոն Ալթմազով։

«Համաձայն Ձեր ցանկութեանը, ես երէկ իրկոյն, Ձեր հեռանալէն յետ, շրջեցի իմ ծանօթների

մտա. նոցանից մինը, որովհետև ես շատ գովասանական բաներ էի ասել Ձեր մասին, յօժարեցաւ Ձեզ տնական վարժապետի պաշտօն տալու: Լաւ և նշանաւոր մարդ է իշխան Կաբիլկինը: Յուսամ, որ նորա ընտանիքի մէջ Ձեզ լաւ կըլինի: Երեխայքը, որքան ես ճանաչել եմ, համեստ և ընդունակ են, իսկ նոցա ծնողքը հարուստ, և, որ գլխաւորն է, լուսաւորեալ մարդիկ են. ուրեմն ձեր աշխատանքը չի կորչիլ և դուք, թերևս նորա տան մէջ Ձեր նպատակին կըհասնիք: Հասցէն. Անգլիական դետափի վրա, սեպհական տան մէջ»: Շտապեցէք:

«Մնամ Ձեզ շատ բարիք կամեցող X. Z.»

Իր նպատակին այսպէս շուտ հասնելը այս անգամ էլ չըզարմացուց Ալթմազովին, որին բախտը դրեթէ օրօրոցէն այնքան երես էր տուել, որ նա տակաւին չըգիտէր ինչ ասել է ձախորդութիւնը: Կաբիլկինի յօժարութիւնը վերաբերեց նա իր յատկութեանը և ոչ ազնիւ պրոֆեսորի բարեխօսութեան. մտքի մէջէն անգամ շնորհակալ չեղաւ այդ բարի մարդուն: Քանի-քանի ուսանողներ ամիսներ և տարիներ սպասել են և չեն հասել չնչին վարձատրութեան՝ բոլոր իրանց պատրաստութիւնով հոգով չափ աշխատելու, միայն թէ մի փոքր ապահոված լինէր նոցա օրական ապրուստը և տաք բնակարանը: Բայց ի պատիւ Ալթմազովին, այն էլ պէտք է ասել, որ նա ոչ միայն իր չքնաղ արտաքինով, այլ և իր գիտութեամբը շատ ու շատ գերազանց էր թէ համազգի և թէ օտարազգի ուսանողներէն: Չորս տարուայ ընթացքում, որ Պետերբուրգ անցուց, Ալթմազովը չունէր իր ախոյեանը ուսանողների մէջ. այն չեմ

ասում, որ մայրաքաղաքումը արտաքինը ոչ միայն մեծ նշանակութիւն ունի, այլ միակ յատկութիւն է յաջողութիւն ունենալու համար:

Ծերունի Ալթմազովի իր որդուն տուած խրատներէն մինն էլ այս էր, որ ծախսի առջև երբէք կանգ չառնու. իր սեպհական պէտքի համար երբէք փող չի խնայէ. «շատ մախողը, ասում էր նա, շատ դատել (վաստակել) կիմանայ. միայն հէգ բնութիւնով մարդիկն են, որ փող դատելը և գումար շինելը խնայողութեան և իրանց մանր-մունր բաների մէջ զըկելումն են տեսնում»: Հիւրանոցի դռնէն դուրս գալով, մի սիրուն ձիով կառապան տեսաւ ու մատով արաւ: —«Ո՞ւր կըհրամայէք, ասաց կառապանը: —Անգլիական դետափը, ասաց Ալթմազովը: —«Եթէ մէկ մանէթ չէք խնայիլ, թռչունի նման կըտանեմ, ասաց սիրուն և լըպըստած երեսով կառապանը: Ալթմազովը ոչինչ չպատասխանեց ու նըստաւ կառքը. և իրաւ որ դարդիմանդ կառապանը սանձը մի թեթև թափ տուեց, ձին թռչունի նըման սլացաւ ու թռցրեց մեր գեղեցիկ պատանուն:

Առաւօտուայ ժամը 9-ն էր, որ Ալթմազովը մօտեցաւ Կաբիլկինի տանը և քաշեց դըրան զանգակը: Քանի որ դռնապանը դուռը կըբանար, նա քակէն հանեց մի մանէթանոցը և ձգեց կառապանի առջև: «Կըհրամայէ՞ք որ ձեր պայծառափայլութեան սպասեմ, ասաց կառապանը գդակ հանելով: —Կուզես սպասէ, ասաց Ալթմազովը. ես կարելի է շուտ դուրս կուգամ, բայց կարելի է որ կէս ժամի չափ մնամ ես»: Ոչինչ, ես ձեզ կըսպասեմ, ասաց կառապանը: Ալթմազովը չըպատասխանեց նորան ու ներս մտաւ, վասն զի դռնապանը արդէն բացել էր դուռը:

—Իշխանը տա՞նն է, հարցուց Ալթմազովը։ Գոռոզ դռնապանը, փոխանակ նորա հարցմունքին ճիշտ պատասխան տալու—«Ձեր մասին ինչպէս յայտնեմ նորին պայծառափայլութեան», ասաց։—Նա ինձ սպասում է, ասաց ոչ պակաս գոռոզութեամբ, վրայի պալտօն դռնապանի ձեռքը ձգելով․ յետ քաշեց հանեց աջ ձեռքից ձեռնոցը, գդակը ձախ ձեռքը առաւ ու աջով շքեղ գանգուրները շփելով, սկսաւ մարմարեայ սանդուղքների վրա բարձրանալ, որի ամեն մի աստիճանը զարդարած էր յաղճապակեայ թաղարների մէջ տնկած հաղւագիւտ ծառերով ու ծաղիկներով։ Դռնապանը բերանը բացած, զարմանալով երիտասարդի ետևէն էր նայում։—«Երևի օտար տէրութեան գործակալ է կամ դեսպանութեան քարտուղար է», ասաց մտքի մէջ։ Նախասենեակումը հանդիպեցաւ մի ուրիշ սպասաւոր, որ նոյն հարցմունքը արաւ, ինչ որ դռնապանն էլ արել էր։ «Ալթմազովը Կաւկասէն», կարճ կտրեց մեր երիտասարդը ու խոժոռ խոժոռ նայեցաւ նորա աչքին։ Սպասաւորը գնաց և շուտ վերադարձաւ, ասելով՝ «Համեցէք», և նորա առջև բացեց առանձնասենեակի դուռը.

Իշխան Կաբիլկինը քառասունհինգ տարեկան բարձրաստիճանաւորի դէմքով մարդ էր. թէև վրայի ընազգեստը մի փոքր հնացած էր և կերպասի գոյնը թռած, բայց սենեակի առաստաղէն կախուած ջահը խորշերումը պատւանդաններու վրա դրած մարմարինեայ արձանները, սեղանի վրա շարած Փարիզի ապրանքներ ասած հազար տեսակ ոսկիէ, փղոսկրէ, կրիայի խեցիէ շինած թանգագին մանր-մունր իրեղէնքը, զուտ սաթէ կէս կանգնաչափ մունդշթուք-

ներ ակներև ապացոյց էին նորա հարստութեան. էլ չըյիշեմ թանգագին գորգերը, որ փռւած էին դիւանի վրա, ուր մարդուս ոտքը, ինչպէս բարձր արօտի մէջ, խրւում էր. էլ չասեմ աբանոս փայտէ շինած և ոսկի թիթեղով պատած աթոռները։ Երբ Ալթմազովը ներս մտաւ՝ նոյն լակոնական ոճով ասաց. «Ալթմազով Կաւկասէն»։

—Այո՛, այո՛, ասաց իշխանը, տեղէն բարձրանալով, ինձ պարոն պրօֆէսօրը շատ լաւ բաներ ասաց ձեր մասին. շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ. համեցէք, նստեցէք, ասաց և ցոյց տւեց մի փոքր հեռուումը կեցած մենաւոր աթոռ կարմիր փայտէ։

Ալթմազովի համար այդ րոպէն կտրողական էր. նա կայծակի արագութեամբ հասկացաւ, որ իշխանը երկու տեսակ այցելուների հետ գործ ունի սովորաբար. մինը խնդրող և միւսը հաւասար։ Այդ ցոյց տւած մենաւոր կարմիր փայտէ աթոռը անշուշտ նշանակած էր խնդրողների համար, որոնց կարելի էր «մի փոքր չի պատւել». իսկ հաւասարների համար՝ ինչ ասել կուզէ, նշանակած էին թանգագին ոսկեզօծ աթոռները։ Ալթմազովը մեծ քիթ տղայ էր, մի փոքր էլ լիրբ. նա գդակը կարմիր աթոռի վրա դրաւ, իսկ ինքը իշխանազնի համարձակութեամբ, բայց բարեկիրթ երիտասարդի համեստութեամբ նստաւ նորա առջևի ոսկենկար և դիպակով ծածկած բազկաթոռի վրա։ Իշխանի երեսին մի զարմանքի և տհաճութեան զգացմունք նկարւեցաւ, բայց և շուտ անցաւ։ Կաբիլկինը ոչ նոր, այլ օխտը—պորտով արիստօկրատ էր, արտաքին և մանր-մունր բաներու մէջ մեծահոգի ձևանալը (որով շատ խաբւում են հասարակ մահկանացուները) մեր, այ-

սինքն Ռուսաստանի մեծատուններու տարիներով սերտած աշխարհածանօթութիւնն է։ Բաւական երկար տևեց նոցա մէջ լռութիւնը։

—Ինչո՞վ կարող եմ ձեզ օգտակար լինել, ասաց վերջապէս իշխանը, որ կամենում էր այդ ձանձրալի լռութեանը վերջ տալ, մանաւանդ որ Ալթմագովը իւր կրակոտ, անվախ աչքերը ուղիղ ցցել էր՝ նորա մի փոքր ճպռոտած, մի փոքր կարճատես աչքերին։

—Մի՞թէ պրոֆէսորը խօսած չէ իմ մասին, ասաց Ալթմագովը։

—Դուք արդէն ուսանո՞ղ էք։

—Կարծեմ այո, վասն զի իմ վկայագիրը տալիս է ինձ իրաւունք՝ առանց քննութեան մտնելու համալսարան, պատասխանեց Ալթմագովը լաւ ռուսերէն առոգանութեամբ։

—Այո, այո, այդ ինձ ասել էր պրոֆէսորը, ասաց իշխանը, որ աւելի և աւելի կորցնում էր իւր կախարդանքը մի «խնդրողի» վրա։

Դարձեալ լռութիւն։ Ալթմագովը իւր խոշոր աչքերը հարցական իմաստով անկել էր իշխանի վրա։ Այդ րոպէին դուռը բաց էլաւ և թագուհու քայլուածքով ներս մտաւ հիանալի գեղեցկութեամբ Բայլգաքի գոված տարիքով մի կին։

Իշխանը ոտքի առաւ. նա նման էր Սոլֆերինի ճակատամարտի մէջ պատերազմող Նապոլէօնին, որին ասացին թէ՝ ահա Մակ-Մահօնը գալիս է քեզ օգնութեան։

Իշխանուհին ներս մտաւ. շնորհալի շարժուածքով ձեռքը պարզեց մարդուն, ունքով պատասխանեց Ալթմագովի ողջունին և նստաւ իշխանի մօտ։

Ալթմագովը ուզեց իւր աչքերի կախարդութիւնը իշխանուհու վրա ևս փորձել. բայց իշխանուհին շուտ հասկացաւ մեր երիտասարդի «ֆօքուսներ»-ը և այնպիսի քիթ ու պռունկ արաւ, որ պ. Ալթմագովը իւր ամենայաղթ զէնքը խոնարհեցուց։

Իշխանուհին փորձառու և կանոնաւոր դաստիարակութիւն ստացած կնիկ էր. նա վաղուց լսել էր այն մանր և կեղտոտ յաղթութիւնների մասին, որ Կաւկասցի երիտասարդները, ի վնաս իրանց առողջութեանը և գեղեցկութեանը, կատարում են պարզամիտ ռուս աղջիկների, այրիների և պառաւների վրա. նա այդպիսի զարշելի անբարոյականութեան համար ի բոլոր սրտէ ատել էր Կաւկասը և նորա բնիկներուն։ Երբոր իշխանը տեսաւ, որ նորից լռութիւնը տիրապետեց, խօսքը կենդանացնելու համար, ասաց Ալթմագովին.—«Կարո՞ղ եմ հարցնել. ինչ ազգից էք դուք»։

Իշխանուհին ժամանակ չի տւեց Ալթմագովին պատասխանելու և իսկոյն դարձաւ մարդուն և ասաց։

Բայց, Աստուած իմ, որքա՜ն միամիտ էք. պարոնը հայ է անշուշտ։

Ալթմագովը միայն գլխով արաւ, որ նշանակում է, թէ իշխանուհին իրաւացի է՝ բայց և հասկացաւ իսկոյն, որ նա վերջապէս գտաւ իւր ախոյեանը։ Ալթմագովը, որ գրեթէ ծնած օրէն տեսած չէր մարդոց երեսի վրա բացի սէրէն և յարգանքէն ուրիշ զգացմունք և այժմ, նկատելով իշխանուհու աչքերի և ձայնի մէջ անհրաժեշտ ատելութիւն դէպի իրան —չի վհատեցաւ. ինքն իրան երդում արաւ մինչև վերջը պատերազմել, եթէ հնարը կըգտնէ՝ յաղթել, ապա թէ ոչ՝ յաղթուել, ծունր իջնել նորա առջև,

ոտերը համբուրել, նորա ստրուկը դառնալ, բայց․․․ չի հեռանալ։ Ինչու։ Ո՛վ գիտէ, գնա՛ իրան հարցրու։ Շա՛ն զգացմունք,—լիզել զարնող ձեռքը։

Իշխանուհին դուրս գնաց և իսկոյն ասաց աղջկան.—«Հօրդ սենեակումը մի այնպիսի գեղեցիկ երիտասարդ կայ, որի նմանը ոչ իրական կեանքի, ոչ երևակայութեան մէջ և ոչ պատկերի վրա տեսել ես, կամ պիտի տեսնես։ Բելւէդերի Ապոլոնը դորա առջև ոչինչ է. բայց ափսոս որ հայ է. հայ է ոչ միայն ծնունդով, այլ և բնաւորութիւնով։ Մի՛ վախենար, դու չես սիրահարուիլ, վասն զի դու տունի ցեղական ազնուուհի ես, իսկ նա—արմիաշկա է»։

Աղջիկը այնպէս պինդ ծիծաղեցաւ, որ ձայնը մինչև Ալթմարգոլին հասաւ։ Նա թէև մօր ու աղջկայ իրար հետ ունեցած խօսակցութիւնը չլսեց, բայց այդ ծիծաղի ձայնէն հասկացաւ, որ այս այն տունը չէ, ուր նա մտադիր էր իւր հօր խորհուրդները կացնելու։ Բայց անձնապաստանութիւնը, յամառութիւնը և իւր խորամանկութեան ամենակարողութիւնը նորա մէջ խոր արմատներ էին ձգել։

Քանի ժամանակից յետ աղջիկն էլ ներս մտաւ, նա էլ տեսաւ, որ Ալթմարգոլը երևելի, սիրուն երիտասարդ էր. նորա խօսակցութենէն նկատեց, որ իւր տարիքի համար չափազանց մեծ գիտութիւն և փորձառութիւն ունի. քանի՛ քանի անգամ նորա աչքերին չի դիմանալով՝ իւրերը խոնարհեց և երբոր հեռացաւ՝ սրտէն խորունկ ախ հանելով, ասաց.—«Մեղք որ հայ է»։ բայց մի փոքր յետոյ աւելացուց.—«Ա՜խ, ինչո՞ւ մայրս ատում է կովկասցիներուն. այդ ինչ նախապաշարմունք է. միթէ ամենքն էլ Ղարախանովներ ու Վաչնաձէներ են.

խեղճ երիտասարդը դեռ ևս տասնինը տարեկան է, դեռ ևս երեխայ է, ազնիւ պրօֆէսօրներու դասախօսութիւնները, ազնիւ մարդոց բարեկամութիւնը, ազնիւ երիտասարդների կենակցութիւնը և... ազնիւ օրիորդների ընկերութիւնը միթէ չեն կարող բնաւորութեան մի քանի անհարթութիւնները ուղղել. բայց այդպիսի ցոլուն, խոշոր աչքեր, այդպիսի գեղեցիկ, անտիկական երեսի տիպարք... չէ՛, չէ՛, մայրս սաստիկ սխալւում է, մօրս աչքը փախցած է»...

Իշխան Կաբիլկինը ոչինչ պատճառ չունէր Ալթմարգոլի առաջարկութիւնը մերժելու, մանաւանդ որ նորա մօտիկ բարեկամ, մաթեմաթիկայի պրօֆէսօրը մեծ գովասանքով խօսել էր նորա յաջող գիտութեան մասին, գրեթէ ամեն գիմնազիական առարկաների մէջ. նմանապէս՝ Ալթմարգոլը խօսակցութեան մէջ յայտնել էր նորան և այն կարծիքը, որ նա ոչ այնքան փողի համար է պաշտօն փնտռրում, որքան մի ազնիւ գերդաստանի մէջ բնակւելու. վասն զի ինքն էլ, թէև չքաւոր է, բայց ազնիւ սերնդէ է, և չի ուզում, շատ ուրիշ իւր համազգիներու նման, ընտանիքէ դուրս բնակւելով, նոյն իսկ մայրաքաղաքի մէջ անցնել կիսավայրենի կեանք՝ հեռու ընտանեկան անմեղ վայելչութիւններէ, հեռու քաղաքային և ընտանեկան կեանքէ, որից միշտ զուրկ են վարձած սենեակներումը բնակւող երիտասարդները։

Իշխան Կաբիլկինը նշանակեց նորան իւր տան մէջ մի զարդարուն սենեակ, ճաշ, թէյ, սուրճ, նախաճաշիկ, լւացք, ծառայ և ամսական հարիւր մանէթ ռոճիկ։ Մէկ ուրիշ ուսանողի այսպիսի պայմանը

երջանկութիւն կերևէր, բայց Ալթմագովը բաւականին քիթը կախած վերադարձաւ իւր հիւրանոցը, որ իւր պայուսակը ու միւս բաները բերէ։ Իշխանուհիի լուռ պատերազմը նորա սիրտը «որոտ» ձգեց»։ Կառապանը անհամբերութեամբ սպասում էր նորան, որ այս անգամ ևս ստացաւ նորանէն մի ուրիշ մանէթնոց։ Հիւրանոցումը նախաճաշիկը նորից ժողովեց երեկւայ հիւրերուն. այս անգամ Ալթմագովին երեք օտարուհիները և նոցա հետ ուրիշները, ինչպէս հին բարեկամի, բարևեցին. դարձեալ միասին կերան ու խմեցին, դարձեալ, յետ սեղանին, գնացին միւս սենեակ երգելու ու նուագելու, դարձեալ Ալթմագովը իւր շարադրած ասիական մեղեդիներէն մինը նուագեց նոցա առջև, նորից ծափահարեցին նորան, նորից իրանց մէջ փսփսալով, բայց նորա ականջին հասցնելով, գովեցին նորա երաժըշտական քանքարը, դէմքի ու իրանքի գեղեցկութիւնը, բարեկրթութիւնը և գիտութիւնը, բայց, աւա՜ղ, նորա տրտմութիւնը փարատել չէր կարողացան։ Իշխանուհին նորա անձնասիրութեանը անբուժելի խոց էր հասուցել։ Երկու ձայն նորա մէջ բարձրաբարբառ խօսում էին. «Փոխէ նպատակդ, թո՛ւք գոռոզ իշխանուհու վրա, ազնիւ եղիր, ուղիղ ճամփով առաջ գնա». իսկ միւսը ասում էր. «Յիշէ հօրդ խրատները, խորամանկ եղիր, ինչ հնարով կուզէ լինի՝ հասիր նպատակիդ—փողի, փողի և փողի»։

Նոյն օրը մնաս բարև տաց նա իւր նոր բարեկամներին, հաւաքեց իւր իրերը և գնաց տեղաւորուեցաւ իշխան Կաբիլկինի տանը։ Նորա պատու-

հանները դարձած էին Նևայի վրա։ Համալսարանը գրեթէ դէմուդէմն էր։

Իշխանը ընդամենը երկու զաւակ ունէր. մի որդի՝ ինը տարեկան, որին Պաժերի վարժարանի համար պէտք էր պատրաստել, և մի դուստր, տասներկու տարեկան, որին արդէն մի փոքր ճանաչում ենք։ Որդու անունն էր Միշա, իսկ աղջկանը Եւդօկիա։

Ալթմագովի պարապմունքի համար ես շատ բան չեմ ասիլ։ Ինչպէս որ պատմութեանս սկզբանը յիշել էի, նա արդէն տասնըմէկ տարեկան հասակի և բնաւորութեան աշակերտների հետ պարապել էր գրեթէ ամեն գիմնազիական առարկաներէն, ուրեմն մանկավարժութեան մէջ նա շատ հմուտ և փորձառու էր։ Նորա գիտութեան համար խօսելն ևս աւելորդ է, վասն զի նա, իւր աշակերտութեան միջոցին, ոչ մի վարժապետի խօսք, ոչ մի դասագրքի տող առանց ուշադրութեան, առանց քաջ սերտելու թողուցած չէր։ Երբոր փորձի համար առաջին դասին ներկայ էին իշխանը, իշխանուհին, նոքա մի ժամի մէջ համոզուեցան, որ Ալթմագովը նոցա զաւակներին, եթէ նոքա բոլորովին ծոյլ, բթամիտ և ուսումնատեաց լինէին, անպատճառ մի բարի վերջի կըհասցնէր։ Ալթմագովը խօսում էր ամենահասկանալի լեզուով. քերականական կանոնները, մաթեմաթիկական տեօրէմաները այնպէս պարզ առաջներն էր դնում, որ աշակերտը գրեթէ առանց վարժապետի օգնութեան հասկանում էր։ Վաղուայ դասերը այսօր այնպէս լաւ բացատրում էր աշակերտին, որ մինչև անգամ նոքա կարիք չունէին դասագրքէն միւս անգամ սովորելու կամ ինքներն իրանց սոու-

գելու։ Առաջուանից ասենք. Ալթմագովը գրեթէ չորս տարի մնաց նոցա մօտ։ Միշելը քսանվեց քննուող աշակերտների մէջէն առաջինը հանդիսացաւ և մտաւ վարժարան և մնացած երեք տարին ետևետևէ փոխում էր դասարանները (Ալթմագովը միշտ վարժատուն էր գնում և դասերը քաղուածք անել էր տալիս)։ Իսկ Եւդօկիան հետևեալ տարին փառաւոր քննութիւն տուեց համալսարանումը, և մնացած ժամանակը կատարելագործւում էր մաթեմաթիկայի և ընդհանուր պատմութեան մէջ։

Ալթմագովը իւր վարժապետական պաշտօնը ամենափառաւոր կերպով կատարեց իշխան Կարիկկինի տանը, որ քանի-քանի անգամ պատրաստ էր նորա ռոճիկը կրկնապատկելու, եթէ երիտասարդը յօժարէր։ Բայց նա բացէ ի բաց հեռացնում էր իւրմէն այդպիսի վարձատրութիւն. նորա փառասիրութիւնը աւելի լայն հօրիզոն ունէր, քանթէ որքան կարելի էր սպասել մի խեղճ վարժապետէ։

Այժմ ես ուզում եմ մի քանի միջնադէպեր պատմել նորա կեանքից, որ անցաւ նորա այս չորս տարեայ ուսանողութեան ժամանակ։

Եթէ Ալթմագովը հիւրանոցումը հանդիպած անգլիացի կնոջ խօսքերի վրա լաւ ուշադրութիւն դարձրած լինէր, գուցէ հօր տուած խրատներէն և և իւր աշխարհայեցողութեամբ շինած կեանքի ծրագրէն կըհրաժարուէր ոչ միայն ինչպէս մի խելացնոր և երազական, այլև ինչպէս վնասակար և ապարդիւն գաղափարէ։ Նա կըհասկանար, որ հայերուն՝ նոցա որևէ նպատակին չըհասցնելու համար

հազարաւոր արգելքներ դրուած են ամեն կողմանէ. նոցա անունը նախապաշարմունքով շրջապատած է, նոցա քանքարը և գործունէութիւնը չարակամութիւնով, նախանձով, ինչպէս երէն ցանցով՝ փաթաթուած է. փառքի ու պատւի դռները նորա առջևը փակած են և դէպի այն տանող ճանապարհը փուշ ու տատասկով լցուած է. հայի առջև երեք ազատ ճանապարհ բաց են՝ մինը դէպի մոլորութիւն, միւսը դէպի ոչնչութիւն և երրորդը դէպի կորուստ։ Նա, խեղճը, չգիտէր, որ հային մինչև անգամ հրամայած չէ իւր աստուածատուր խելքը է գործ դնելու. նորան միայն թոյլ տուած է խելքի տեղ խորամանկութիւն գործածելու. խորամանկութիւն, որ ատելի, անզգոնելի և բարեմիտ մարդոցմէ հալածած ստրկի յատկութիւն է։ Նա չըգիտէր, խեղճը, որ իշխանները դափնիներով զարդարել են բանաստեղծներին, որոնք իրանց քնարը լարել են դէպի հայը՝ ատելութիւն, նախանձ, չարկամութիւն և ծիծաղ շարժող զգացմունքով։ Այս ամեն արգելքին նա պիտի հանդիպէր այն ժամանակ, երբ նորա զգացմունքը լինէին ազնիւ, սուրբ, նւիրական. գոնէ այն ժամանակ նա սուրբ զոհ կըլինէր իւր սուրբ գաղափարին և զգացմունքին։ Բայց, աւաղ, Ալթմագովի ոչ նպատակն էր սուրբ, ոչ գաղափարը և ոչ զգացմունքը։ Ինչպէս կարելի էր, որ նա և՛ իւր կեանքի հետ ունեցած պատերազմի յաղթանակը առնէր, և աշխարհի առջև պարզերես մնար։ Նայենք, այսքան հաղւագիւտ յատկութիւններու տէր Ալթմագովին կը հաւանի՞ իմ ընթերցողը. նայենք, նա իր անկման միջոցին մի հատիկ կարեկից չէր կըգտնէ։

Յուլիս ամիսն էր։ Այս ամառ իշխան Կաբիլկինի սեպհական դաստակերտը նորոգւում էր Պաւլովսկումը, և այդ պատճառաւ նորա գերդաստանը ուշ տեղափոխւեցաւ ամարանոց։ Ալթմագովի հըռչակը այն թատրոնի երեկոյէն արդէն քաղաքի մէջ տարածւել էր. ամենքը ուզում էին նորա հետ ծանօթանալ, բայց այդ բախտը շատ քիչերին էր յաջողում. պատճառը այն է, որ նա մեծագոյն մասը օրւան կամ զբաղած էր իր աշակերտներին սովորեցնելով, կամ Կաբիլկինի հիւրերի հետ խօսելով, որոնք Ալթմագովի պաշտօն մտնելէն յետ՝ սկսել էին սովորականէն աւելի ստէպ այցելութեան գալու և մանաւանդ կանանց սեռը՝ «հայ Ապօլօնին» տեսնելու համար։ Իշխանի տունը ուխտատեղի էին դարձրել. ամենքը ուզում էին նորան տեսնել, հետը խօսել, ծանօթանալ, նորա կարծիքը և նւագը լսել. կարճ՝ սիրել նորան և սիրւել նորամէն։ Խեղճեր, նոքա չը գիտէին, որ Ալթմագովը իր մանկական հասակէն սկսած արդէն խրատւած էր հօրէն՝ «ճարել մի անւանի և շատ հարուստ տանէ աղջիկ, պսակւել հետը, և պսակի միջոցով արիստօկրատի անուն չաղացնել»։ Կարօ՞ղ էր խեղճ երիտասարդը հօր բաղձանքը և իր սեպհական ուխտը փոխել՝ ներկայումս քանի մի րոպէի մարմնաւոր վայելչութեան և ապագայում յաւիտենական տանջանքի համար։ Խեղճ կնանիք, ձեր անկեղծ զգացմունքը, ձեր սրտի գորովանքը պիտի ընդհարւին այդպիսի սառն հաշիւների և դուք պիտի զարմանաք, թէ ինչպէս է կարելի, որ այդպիսի գեղեցիկ մարմնու մէջ այդպիսի կոշտ հոգի լինի դրած։ Բայց և շատ խիստ մի լինիք ձեր դատմունքի մէջ։ Ալթմագովը իր

ծնած տեղի և նորա պարագայի արտադրութիւնն է։ Հայաստանը այն պայմանի մէջ, ուր որ է՝ ուրիշ տեսակ զաւակներ չի կարող ծնանիլ։ Փոխեցէք կաղապարը, կըփոխւին և նորա տակէն դուրս եկած կերպարանքները։ Ո՞վ է մեղաւոր։

Ալթմագովը հէնց որ իշխան Կաբիլկինի տուն մտաւ, իսկոյն գրպանէն հանեց երկու հատ տասը մանէթանոց, մինը տւեց դռնապանին և միւսը ըսպասաւորին և չըսպասեց, որ նոքա խոնարհաբար շնորհակալութիւն ասէին, թողեց և հեռացաւ նոցամէն։ Մի օր էլ, երբ Եւդօկիայի նաժիշտը արծաթէ ափսէի վրա նամակ բերեց նորան՝ երրորդ տասը մանէթանոցն էլ նորան ընծայեց։ Այս ամեն կեանքի մանր-մունր ֆօքուսները հայրը նորան սովորեցուցել էր՝ իբր տասնևիններորդ դարուս կենցաղագիտութեան ամենահարկաւոր գաղտնիքը։ Երբ այս և այսպիսի լուրերը իշխանուհու ականջն էին հասնում, նա սրտէն խոր յոգոց հանելով, ասում էր՝ «Տէր Աստւած, Տէր Աստւած, ո՜րքան մատաղահաս և ո՜րքան ապականւած»։ Եւ խիստ հրամայում էր ծառաներին՝ զգուշանա՛լ խորամանկ հայէն։ Խեղճ երիտասարդը, որ կարծում էր թէ ապագայ շէնքի հիմքը ամուր է դրած, չգիտէր, որ եկած օրէն արդէն այն քանդւել էր։

Իշխան Կաբիլկինի ընտանիքը երկու ամիս ամարանոցումը մնաց, և այդ երկու ամիսը Ալթմագովի համար «Հազար ու մի գիշերների» արկածքներ էին։ Նա շրջապատւած էր չքնաղագեղ կնանիքներու և աղջիկներու սիրով, յարգութիւնով, պատւով, հրաւէրքով։ Օր չէր անցնում, որ նա հրաւիրւած չըլինէր կամ մի կոմսուհու, կամ մի իշխանուհու,

կամ մի մեծատան կնոջ տուն հացկերոյթի, երեկոյթի, նուագահանդիսի, հեռաւոր մի անտառ, կամ այգոց, կամ ծաղկոց ճեմելու, կամ ձիով զբօսնելու. որ չէր անցնում, որ նորան մի բուրած նամակ չի գար, կամ մի կաթողին ձեռաց սեղմումն չի պատահէր, կամ քնքոյշ հայեացք չընծայւէր։ Իշխանուհին տեսնում էր այդ ամենը և ամեն հնար գործ էր դնում, որ Եւդոկիան թոյլ չտայ իրան այդ կրքերի հեղեղատին մատնելու. բայց ի՞նչ կանես. կարելի՞ է հրամայել կրակի մօտ կեցած վառօդին, որ չի բռնկի, կամ ասել սառուցին՝ կեցիր արեգակի տակ և մի հալչիր։ Դեռ ևս դաստակերտէն քաղաք չեկած՝ Եւդոկիան պինդ սիրահարւեցաւ Ալթմագովի վրա, և նոյն շաբաթ Երևան գրեցաւ այսպիսի բովանդակութեամբ նամակ. «Ամեն բան դէպի լաւն է գնում. իշխան Կաբիլկինը 40,000 օրավար հող ունի, բանկումը 4,000,000 մանէթի նաղդ փող և ոչ մի կոպէկի պարտք. իշխանուհին պահարաններիս մէջ առաւել քան թէ 500,000 մանէթի ականեղէն, ոսկիէ զարդեր և արծաթէ սպասներ ունի. իսկ աղջիկը իմ վրա մինչև ականջները սիրահարւած է»։

Օգոստոս ամիսն էր, որ մաթեմաթիկայի պրոֆէսօրը, որի հետ պատմութեանս սկզբումը ծանօթացանք, մի օր եկաւ և ասաց. «Արդէն ժամանակն է խնդիր տալու և մտնելու համալսարան»։ Հետևեալ օրը Ալթմագովը գնաց համալսարան, խնդիր գրեց և ներկայացաւ դէկանին, որ միամտեցուց նորան ասելով՝ «ձեզ առանց քննութեան կընդունենք»։ Այս կողմանէ ևս միամտեցած, Ալթմագովը վերադարձաւ դաստակերտ և այնուհետև լիապէս անձնատուր եղաւ ամեն կերպ վայելչութեան։

Քանի մի ժամանակէն ամարանոցի եղանակը վերջացաւ, մարդիկ հետզհետէ քաղաք քաշւեցան. իշխան Կաբիլկինն էլ գնաց քաղաք իւր ընտանիքով։

Իշխանուհին չափէ դուրս խելօք կնիկ էր. նա շատ լաւ գիտէր, որ Ալթմագովը երբէք չէ կարող նորա աղջկայ մարդը լինել, որ ինքը միշտ կըգտնէ հնար նոցա փոխադարձ սէրը կամ սառեցնելու, կամ բռնի բաժանելու, բայց կարծում էր, որ Եւդոկիան, սիրելով նորան, միշտ նորա տւած դասերը առաւել խորունկ կըտպաւորէ մտքի մէջ և առաւել կը որոճայ. և այդ պատճառաւ թոյլ էր տալիս որքան կարելի է՝ երկար տևի օրւայ մէջ սոցա պարապմունքը։ Եւ զարմանալի՞ բան. Եւդոկիան, որ առաջները ոչ միայն չէր սիրում ուսման առարկաներ, այլ և երաժշտութիւն, որը պարի հետ միասին, ինչպէս յայտնի է, ռուս օրիորդի լուսաւորութեան առաջին պայմանն է,—այժմ Ալթմագովի ազդեցութեան տակ գիշերները լուսացնում էր մի տէօրէմայի կամ մի սիմֆօնիայի վրա, որ իւր փեսացուի աչքին հաճելի երևի։ Քանի-քանի անգամ իշխանուհին, սրտէն ախ քաշելով, ասել է իւր մարդու. «Ինչո՞ւ այս գեղեցիկ և քնքարաւոր երիտասարդը ռուս կամ եւրոպացի չէ. ինչպէս մեր Եւդոկիան բաղդաւոր կըլինէր»։—Ինչո՞ւ այդպէս սխալ ես դատում, պատասխանում էր իշխանը. միթէ հայը լաւ մարդ լինել չի՞ կարող։—«Ինչո՞ւ չէ, ասում էր նորան իշխանուհին. հայն էլ լաւ մարդ կարող է լինել, բայց նա հայապէս լաւ մարդ կըլինի և ոչ ռուսապէս»։—«Չեմ հասկանում, ինչ ես ուզում ասել, պատասխանում էր իշխանը։ Իշխանուհին պնդում էր. «Լաւ հայը երբէք չի ռուսանալ, իսկ վատ հայէն

վատթար մարդ չի կայ աշխարհիս երեսին։ Ուրեմն՛ որ կողմ կուզես շուռ տուր՝ Եւդօկիան հայի հետ պսակուել չի կարող և չը՛ պիտի պսակուի»։

Իշխանուհին իւր մանկութիւնը անցուցել էր մի հայաբնակ քաղաքի մէջ, ուր նորա հայրը գաւառապետի պաշտօն էր կատարում. այդ պատճառով նա կարծում էր, թէ հայի բնաւորութիւնը շատ խորունկ իմաստասիրել էր։

II

Թէև Ալթմազովը շատ լաւ դաշնամուր էր նուագում, բայց նա յանձնառու չեղաւ աշակերտներին երաժշտութիւն սովորեցնելու, և այդ մանաւանդ այն պատճառաւ, որ Եւդօկիայի վարժապետը երեւելի Հէնզելթն էր, որի հետ բաղդատուելով, ի հարկէ, նա համբակ կարող էր համարուել։ Մի օր Հէնզելթը իշխանուհուն յայտնեց, որ ինքը շուտով արտասահման է գնալու, բայց վախենում է, մի՛ գուցէ նորա բացակայութեան ժամանակ Եւդօկիան մի անհմուտ վարժապետի ձեռք ընկնի և փճացնէ իւր կանոնաւոր նուագելը։ Այդ պատճառաւ խորհուրդ տուեց մի փորձառու և ընտիր վարժապետ որոնել։ Իշխանուհին պատասխանեց թէ՝ «գուցէ ես վարժապետի ընտրութեան մէջ սխալիմ, չէ՞ք կամենայ արդեօք մեզ ձեր ընտրութեամբը մի վարժապետ առաջարկել, ձեր բացակայութեան միջոցում»։—Ինչո՞ւ չէ, պատասխանեց Հէնզելթը, շատ ուրախութեամբ. ես ի նկատի ունիմ մի մատաղահաս՝ երաժշտութեան վարժուհի, ազգանունը միտս չէ, բայց իմ ընտիր աշակերտներէն է. երթալու ժամանակ ես նորան կուտամ մի յանձնարարական նամակ, որն ստանալով՝

իսկոյն կընդունիք նորան. բայց նայեցէ՛ք, ինչ վարձ որ ինձ էք տալիս՝ նոյնը անշուշտ և նորան պիտի տաք. երաժշտութեան արուեստի մէջ եթէ այդ վարժուհին ինձանից լաւ չըլինի, վատ երբէք չէ»։ Իսկ ինքը Հէնզելթը դասի գլուխ ստանում էր տասը մանէթ։

Այդ վերջին անգամն էր, որ Հէնզելթը եկաւ և ոչ նորա յանձնարարած վարժուհին ներկայացաւ։ Արդէն կարծում էին՝ թէ՝ նա մոռացել է իւր խոստմունքը և յանձնարարական նամակը վարժուհուն չի տուած՝ գնացել է արտասահման։

Մի օր, ճաշից յետոյ երբ ամենքը նստած էին դիւաննոյ ասած սենեակումը, յանկարծ զանգակը հնչեց։ Ծառան շտապելով գնաց և շուտ յետ եկաւ, ասելով. «մի կին կամենում է տեսնել իշխանուհուն»։ Իշխանուհին ասաց ծառային. «Ներս համեցէք արա՛»։ Դուռը բացուեցաւ, և մի թխլիկ երեսով, բայց գեղեցիկ տիպարքով աղջիկ ներկայացաւ և տուեց իշխանուհու ձեռքը մի նամակ, ասելով. «Հէնզելթից»։—Գիտեմ, գիտեմ պատասխանեց իշխանուհին. խնդրեմ նստեցէք։ Բայց ես ձեզ երկու շաբաթ է, որ անհամբերութեամբ սպասում եմ։ «Ներեցէք ինձ, պատասխանեց անծանօթ աղջիկը ամաչելով, ես մի փոքր տկար էի»։ Խնդրեմ նստեցէք, ասաց նորից իշխանուհին, և յետոյ աւելացուց, «կարո՞ղ եմ հարցնել ձեր անունը։ «Անունս Սուսաննա է», պատասխանեց աղջիկը, աչքերը խոնարհելով։

Համեստութեամբ նստաւ օրիորդ Սուսաննան և մի կարճ միջոց լռութիւն թագաւորեց սենեակի մէջ, ինչպէս ասում են՝ «հրեշտակ խաղաղութեան թռաւ»։ Նստողները սկսան մին մինի երես նայելու։ Ալթ-

մագովն էլ նայեցաւ Սուսաննայի վրա, Սուսաննան էլ նայեցաւ Ալթմագովի երեսին։ Բայց իշխանուհին, որ այդ րոպէին երկուսի վրան էլ նայեցաւ, յետադայ նկատողութիւնը արաւ, որ Ալթիմագովը հէնց առաջին վայրկեանում, առանց մէկ հիմնաւոր պատճառի, ատելով ատեց այդ խեղճ թխլիկ աղջկանը, իսկ Սուսաննան, դորա հակառակ, ջերմ և անհրաժեշտ սիրով սիրեց այդ գեղեցիկ պատանուն։ Ինչո՞ւ. Ո՞վ կարող է այդպիսի հարցի պատասխանը տալ։ Ուրեմն մենք էլ թողնենք այս հարցը անպատասխան։ Նայենք, գուցէ իրերի ընթացքը կլուծեն այս հոգեբանական առեղծուածը։ Բայց այսքան իմանանք, որ իսկական սէրը մի րոպէի մէջ է ծնում. իսկ այն, որ ժամանակով է ծնում, նորա անունը սէր չէ, այլ գնահատութիւն։

Իշխանուհին չափազանց մեղքացաւ խեղճ աղջկան, որ օտար գերդաստանի մէջ, ամօթէն լուռ մնացած, ով գիտէ ի՜նչ հոգեկան տանջանքի մէջ էր այն րոպէին. և կամենալով այդ ճնշող, անհաճոյ լռութեանը վերջ տալ, առաջարկեց Սուսաննային իրանց մի փոքր զւարճացնելու համար, չի՞ կամենալ արդեօք դաշնամուրի առջև նստել և նւագել. բայց և աւելացրեց. «Օրիորդ, չլինի՞ թէ իմ առաջարկութիւնս ընդունիք իբր ցանկութիւն ձեզ քննադատելու։ Պ. Հէնդէլթը ձեր մասին մեզ արդէն այնպիսի գովասանքներ է տւել, որ ձեր մատերի ամեն մի շարժւածքը մենք նւագահանդէսի տեղ պատրաստ ենք ընդունելու։

— Մեծապէս շնորհակալ եմ ձեր իմ մասին կազմած այդպիսի շողոքորթիչ կարծիքի համար, ասաց կարմրելով Սուսաննան. բայց ես վաղուց է, որ կը-

տորներ նւագած չեմ. երկու շաբաթ ձեռքս դաշնամուրին դիպած չէ։ Դուք գիտէք, այդ բաւական ժամանակ է, որ մատերը իրանց սովորական արագութիւնը կորցնէին։

— Չէ, չէ, խնդրենք, ասաց իշխանուհին, նւագեցէք մի բան։ Մենք խիստ դատաքննիչ լինելու ոչ գիտողութիւն ունինք, ոչ ճաշակ... գուցէ պարոն Ալթմագովը...

— Պարոնը նա նւագում է, ասաց Սուսաննան, կարմրելով և աչքերը դարձնելով ուսանողի վրա։

— Այո, մի փոքր, պատասխանեց Ալթմագովը այնպիսի արհամարհական ձայնով, որ յատուկ վայելուչ էր մի անպիտան կառապանի, քան թէ մի համեստ աղջկայ վերաբերմամբ։

Ամենքը նկատեցին այդ չար կոպտութիւնը։ Եւդօկիայի աչքէն մինչև անգամ արտասուք կաթեցաւ. խեղճ աղջիկը մի րոպէի մէջ երկու անգամ կարմրեցաւ և տժգունեցաւ։ Իշխանուհին նշանաւոր հայեացք ձգեց իշխանի վրա, որ կընշանակէր՝ «Հը՞, ի՞նչպէս ես, չէ՞ի ասում քեզ, որ հայը միշտ հայ կըմնայ»։ Ամենքը նկատեցին այդ անտեղի կոպտութիւնը. միմիայն միամիտ Սուսաննան չը նկատեց։

— Այդ «մի փոքրը», ասաց Ալթմագովին, շատ և շատ նշանակութիւն ունի. բայց յուսամ, դուք ներողամիտ կըլինիք։ Ես երկու շաբաթ հիւանդ էի, այժմ ես բաւական կազդուրւած չեմ։ Ասաց և մատները վազեցուց կլաւիշների վրա։ Փոքր մի փանտազիա անելէն յետ՝ նւագեց Կօնթսկիի երեւելի «Առիւծի սթափումը», որ այն ժամանակները նորաձև երաժշտական հատւածներից մինն էր և որ իսկա-

կան պետերբուրգցին չէր լսել նոյն իսկ հեղինակի նուագածը։

Առիւծի զարթելից մի փոքր առաջ Սահարա անապատի լռութիւնը, նորանից յետոյ՝ առիւծի քանի-քանի անգամ ամպրոպաձայն մռնչելը. յետոյ՝ աւելի և աւելի սաստկացնելը իր ահեղ մռնչիւնը, յետոյ՝ արիւնռուշտ յարձակման պատրաստութիւնը, յետոյ՝ սպառազինուած որսորդներին հանդիպելը. յետոյ՝ կատաղի պատերազմը երկուստեք, յետոյ՝ վիրաւորուած և հոգևարք գազանի օռնալը և վերջապէս՝ որսորդների յաղթութեան երգը—այս ամենը պատկերացան լսողի երևակայութեանը մէջ՝ Սուսաննայի ճարտար և խօսուն մատերի զօրութեամբ։ Մեծ և կախարդական էր նորա կատարած ազդեցութիւնը լսողների վրա։ Իշխանուհին և Եւդոկիան սրտերի փղձուկէն ակամայ արտասուեցան, իշխանը մնացել էր հիացած. ամենքը քաղցր ապշութեան մէջ էին, միայն Ալթմազովը մնաց անզգայ։ Իշխանուհին նայեցաւ նորա վրա և, գլուխը շարժելով, ասաց մտքի մէջ.—«Այս գեղեցիկ մարմնու մէջ հոգի չըկայ»։ Եւ իրաւ որ՝ բնութիւնը ամեն բան առատ ձեռքով տւել էր նորան, բացի հոգիէն։

Սուսաննան երեխայի անմեղութիւնով նայում էր Ալթմազովի վրա ու սպասում էր նորանից թէկուզ մի խօսք, թէկուզ մի յիշոց, բայց մի խօսք, մի մարդկային խօսք. սպասում էր խեղճ աղջիկը, եթէ չամաչէր՝ գուցէ նա կըխնդրէր, կաղաչէր, մի խօսք կըպաղատէր նորանից։ Աւա՜ղ, Ալթմազովը ո՛չ մի խօսք չասաց և հեռացաւ։

Ալթմազովը սկսաւ համալսարան երթևեկելու։ Հէնց առաջին օրէն ընդհանուր ուշադրութիւնը իր վրա դարձուց և՛ մեծաւորներին, և՛ ուսուցչապետներին, և՛ ուսանողներին՝ թէ իր արտաքին բնուածքով և թէ իր հիանալի ընդունակութիւններով։ Ինչպէս որ նա մի անգամ ինքն իրան խօսք էր տւել. այստեղ ևս իր խոստմունքը չի դրժեց. ամենայն կողմանէ նա համալսարանի մէջ ընտիր ուսանողն էր համարւում։ Սկզբանէ ամենքը սիրում և պատւում էին նորան, իսկ ինքը ոչոքի ո՛չ սիրում էր և ոչ պատւում. այս որ նկատեցին՝ ուրիշներն էլ դադարեցան նորան սիրելու, բայց միշտ յարգում էին նորան, հազւագիւտ յատկութիւնների համար։ Իսկ երբոր նա մի պարահանդէսի մէջ, պաշտպանելով մի ուսանողի պատիւ, երկու ապտակ տւաւ մի գնդապետի ու նոյնհետայն մենամարտութեան հրաւիրեց և, սիրտը վախ ձգելով, ստիպեց բոլոր ուսանողների առջև ներողութիւն խնդրելու—այն ժամանակ ընկերները մեծ յարգանք զգացին դէպի «քաջ հայ ուսանողը»։ Սրախաղութեան մէջ ախոյեան չունէր Ալթմազովը, իսկ քառասուն քայլափոխէն խաղաթղթի ասին խփելը ատրճանակէն՝ նորա համար մի չնչին բան էր։ Շատ կարելի է որ՝ կարդացողները արդէն համարում են Ալթմազովին մի նոր Դօն-Ժուան։ Չէ, սխալ են նոքա. հաւատացնում եմ, որ բոլոր իր համալսարանական ընթացքի միջոցին նորա մէջ ոչ մի պագշոտ խորհուրդ չի մտաւ. մայրաքաղաքի ոչ մի առիւծուհին չէր կարող պարծենալ, որ նորան իւր երկրպագուն կարողացել է դարձնել. ոչ մի օրիորդ, մինչև անգամ Եւդոկիան, չէին կարող ասել, որ Ալթմազովը

նորա վրա սիրահարուել է. մայրաքաղաքի փորձանքներէն շատ հեռու պահեց իրան խելօք Ալթմագովը։ Նորա մարմինը ամբիծ, անարատ մնաց, բայց հոգի՞ն։ Այդ ուրիշ խնդիր է։

Նա երրորդ դասընթացումն էր, որ հօրը մի նամակ գրեց այսպիսի բովանդակութեամբ։

«Իմ վիճակս արդէն որոշուած է. իշխան Կաբիլկինը ինձ սիրում և հաւատում է. նորա դուստրը ոչ միայն սիրում է, այլ սիրահարուած է վրաս. մենք արդէն մեր մէջ թաքուն մատանեփոխութիւն արել ենք։ Եւդօկիան ասում է թէ՝ եթէ մայրս կամենայ մեր պսակին հակառակելու, ես թաքուն կըպսակուիմ քեզ հետ, և նա վաղ կամ ուշ կըներէ ինձ և չի զրկիլ ժառանգութենէ. ուրեմն կարող ես ինձ նպատակիս հասած համարել»։

Բոլոր այդ ժամանակը Սուսաննան շաբաթը երեք անգամ գալիս էր երաժշտութեան դասեր տալու Եւդօկիային։

Արդէ՛ն երեք տարի էր, որ Ալթմագովը և Սուսաննան վարժապետութիւն էին անում իշխան Կաբիլկինի տանը, բայց երբէք պատահած չէր, որ ամենքը միասին ժողովուէին և ընդհանուր խօսակցութիւն ունենային. մանաւանդ Ալթմագովը միշտ աշխատել էր բացակայ լինելու, երբ Սուսաննան իւր զբաղմունքէն ազատ ժամանակը խօսացել էր Եւդօկիայի, իշխանուհու կամ իշխանի հետ։ Մի անգամ Սուսաննան ճաշի էր հրաւիրուած. բախտի բերմամբ այն օր Ալթմագովն էլ այնտեղ էր։ Յանկարծ իշխանուհին, խօսքը դարձնելով Սուսաննա-

յին, ասաց.—«Ահա՛ քանի ժամանակ է, որ մենք մին մինի ճանաչում ենք, բայց երբէք պատահած չէ՛, որ ես ձեզ հարցնեմ—թէև շատ անգամ մտքէս անցել է—դուք ի՞նչ ազգէ էք. թէև դուք պատուական ռուսերէն խօսում էք, բայց ձեր երեսի տիպարքը սլաւեանի չէ՛»։

—Ա՛պա գտէք, ասաց Սուսաննան ծիծաղելով. ես ի՞նչ ազգէ եմ։

—Չըգիտեմ, ասաց իշխանուհին, գուցէ սպանիացի էք կամ իտալացի։

—Ո՛չ, ո՛չ, աւելի պինդ ծիծաղելով ասաց Սուսաննան. ո՛չ սպանիացի եմ և ոչ իտալացի. գրաւ կուգամ, որ մինչև չասեմ՝ ամենևին չէք գտնիլ։

—Ես գիտեմ, ասաց Եւդօկիան, դուք Փոքր-ռուսաստանցի էք։

—Չի գտաք, ասաց նորան արդէն ծիծաղէն կկլալով Սուսաննան։ Աստուած վկայ, որ չէք իմանալ։ Ա՛պա զօռ արէք, գտէք. ի՞նչ ազգից եմ, շարունակում էր նա իւր հանաքը։

—Ֆրանսիացի՞ չէք արդեօք, ասաց իշխանը, առանձին ուշադրութիւնով նայելով նորա երեսին։

—Դուք էլ չի գտաք. ես ֆրանսիացի ևս չեմ, պատասխանեց Սուսաննան, և շարունակում էր անմեղ երեխայի նման հանաք անել, որ ոչ ոք իւր առաջարկած դժուար առեղծանելիքը լուծել չի կարողանում։ Եւ վերջապէս ասաց բառի վանկերը իրարմէ բաժանելով. «ես—հայ—եմ»։

—Դուք հա՛յ էք, պատասխանեցին նորան ամենքը, նոյնպէս վանկերը բաժանելով և զարմացական ձայնով. ամենքը ասացին այդ, բացի Ալթմա-

զովէն, որին այդ գաղտնիքը վաղուց, հէնց առաջին օրէն յայտնի էր։ Մի՞թէ դուք հայ էք. եթէ չասէիք, Աստուծոյ անունով երդւում ենք, որ ամենևին չէինք գտնիլ, ասաց իշխանուհին, կարծես թէ սաստիկ ուրախացած մի թանգագին գիւտի համար. ուրեմն այսօր մեր սեղանի վրա երկու հայ հիւր ունինք՝ մինը դուք և միւսը պարոն Ալթմազովը։

Երբոր Սուսաննան լսեց Ալթմազովի հայ լինելը, իւր սրտի ուրախութիւնը բռնել չի կարողացաւ, քիչ մնաց նորա գիրկը պիտի ընկնէր, բայց ինքնիրան զսպեց, և ձեռքը նորան պարզելով, բռնեց նորանը իւրի մէջ, և երկար ու ամուր սեղմելով և երեսի վրա անհուն սէր, ուրախութիւն և երջանկութիւն յայտնելով, ասաց.—Ա՜խ, որքան ես ուրախ եմ, որ դուք հայ էք, որ ես իմ համազգիներէս մի հոգի տեսայ, վերջապէս...

—Մի՞թէ դուք հայր-մայր, քոյր-եղբայր, ազգականներ չունիք. հարցրին տանուտէրերը, ցաւակցելով։

—Ո՛չ, պատասխանեց Սուսաննան. ես բոլոր Պետերբուրգի մէջ միայնակ և որբ եմ։

Եւ նա պատմեց իր մասին յետագայ պատմութիւնը.—

«Հայրս Սեվաստոպոլի դիւցազներէն մինն էր, որ պաշարման տասներորդ ամիսը, ռմբակոծութեան ժամանակ, մահաբեր վէրք ստացաւ և մեռաւ։ Նորա մահուան բօթը ստանալով, խեղճ և ցաւագար մայրս էլ աւելի տկարացաւ և չորս ամիս տանջւելով՝ մեռաւ։ Ես մնացի միայնակ, վեց տարեկան երեխայ։ Հօրս՝ տէրութեան ցոյց տւած երախտիքի համար՝ ինձ զետեղեցին արքունի վարժարան, ուր

տասը տարի մնալով, աւարտեցի ուսմանս ընթացքը։ Բայց ոչ մի մերձաւոր ազգական չունենալով, վարժարանի պատերէն դուրս չեկայ։ Բարի տեսչուհին, որ ինքը երբէք զաւակ ունեցած չէ, ինձ իր հարազատ աղջկայ նման սիրեց, ինչպէս և ես նորան մօրս նման սիրել եմ, և վարժարանէն դուրս գալով՝ նորա բնակարանի մէջ տեղաւորւեցայ, ուր այժմ ես կենում եմ։ Թէև մայրացուս ասում է, որ ծնողներէս ինչ ու ինչ մնացել է, բայց ես երբէք հետաքրքրութիւն արած և հարցուցած չեմ՝ թէ ինչ է և որքան է. ինչի՞ս է պէտք հարստութիւն. իմ աշխատածիս կէսն անգամ մսխել կարողացած չեմ, թէև, ինչպէս տեսնում էք, ես ոչինչ բանէ ինձ զրկած չեմ։ (Պէտք է ասել, որ Սուսաննան միշտ ճոխ և թանգագին հագուստով էր յայտնւում իշխանի տանը)։ Մայրացուս էլ, տիկին Հումմէլը, ասում է միշտ. որովհետև Աստուած ինձ չարժանացուց մայր լինելու, ուրեմն դու իմ զաւակը և ժառանգը կըլինիս։ Բարի պառաւը ինձ շատ է սիրում, ոչինչ չի խնայում ինձ համար, մինչև անգամ սաստիկ անբաւական է ինձմէն, որ ես դասեր եմ տալիս ոչ փողի, այլ օրեր ու ամիսներ անգործ չի մնալու ու տան խորշումը չընստելու համար»։

Իրաւ որ ամենքը նկատել էին նորա անշահասիրութիւնը։ Շատ անգամ ամիսներ էր անցնում, իշխանը կամ իշխանուհին նորան փող տալու մոռանում էին, իսկ ինքը երբէք չէր խնդրում։ Եթէ տւած փողը հաշւետետրումը չի գրէին տանուտէրերը՝ ինքը Սուսաննան երբէք չէր իմանալ՝ հարիւր ունի ստանալիք, թէ՞ երկու հարիւր, թէ՞ հինգ հարիւր։ Միով բանիւ՝ Սուսաննան չափազանց անշա-

հասէր աղջիկ էր երևում։ Բայց հագուածը, ինչպէս վերը յիշուեցաւ, միշտ նորաձև, նուրբ ճաշակով և հագուստի նիւթը պատուական կերպասներէ էր. մատներին հագած ունէր միշտ հինգ-վեց մատանիք, ականջին օղեր, ամենը մեծագին և հազուագիւտ գոհարներով յեռուած։

Սուսաննան շարունակեց իր պատմութիւնը.

—Իմ անունս Սուսաննա չէ, այլ Շուշան է, (այսպէս է գրած ծննդական վկայագրիս մէջ), որն ռուսները չըգիտեմ ինչ խորհրդով, իրանց կերպի փոփոխել են. իսկ ազգանունս է Արղ...եան։ Հայրս աստիճանով գընդապետ էր և արդէն գեներալութեան էր ներկայացուցած. նա այդ բարձր աստիճանը, ասում են, անշուշտ կըստանար, եթէ այդ չարաշուք պատահարին չըհանդիպէր... Խեղճ հայրիկս։

Ասաց ու արտասուեց։ Բայց տեսնելով, որ լսողները ամենքն էլ տխրեցան, իսկոյն երեսի վրա մի քաղցր ժպիտ փայլեցուց ու ասաց. «Է՞հ, ինչ անենք. ի՞նչ որ եղաւ՝ եղաւ. տխրելով ու լալով անցածը յետ չի դառնալ»։

Տխուր խօսակցութիւնը փոխել կամենալով, իշխանուհին ասաց.

—Ասացէ՛ք, խնդրեմ, օրիորդ Սուսաննա, կամ ինչպէս որ հայերդ ասում էք, Շուշան, մի՞թէ դուք միշտ ամուրի պիտի մնաք, մի՞թէ ձեր մտքէն երբէք չի անցնում պսակուել, տուն-տեղ ունենալ, կին և մայր լինել. մինչև ե՞րբ այդպէս չոր-գլուխ պիտի մնաք, միայնակ ու ձանձրալի կեանք պիտի անցնէք։

—Ինչո՞ւ չէ, ես ուրախութեամբ կըպսակուէի. բայց ո՞վ պիտի առնի։ Դուք գիտէք խօ, մինչև որ աղջկան երիտասարդը չըհաւնի և չըսիրէ, աղջիկը

երբէք իրաւունք չունի,—եթէ չուզէ իւր պատիւը կորցնել—ոչ հաւանել և ոչ սիրել, ասաց նա ու աչքի ծայրով նայեցաւ Ալթմագովի վրա։ Բայց Ալթմագովը, որ բոլոր ժամանակը նորա վրա էր նայում, հէնց որ Սուսաննայի աչքը նորանին դիպաւ, իսկոյն, իբր թէ զզուանքով, իւր աչքը հեռացուց նորանէն։ Միամիտ Սուսաննան այդ ևս չնկատեց. բայց այդ բանը նկատեց իշխանուհին ու մտքի մէջ ասաց.—«Այս ի՞նչ հրէշ է. ասես թէ սորա սրտումը օձեր ու կարիճներ լինին նստած. այս ի՞նչ անհասկանալի ատելութիւն է, որ ունի դա դէպի այս պատուական օրիորդը, չեմ հասկանում»։

Նա կըհասկանար, եթէ հայի բնաւորութեանը քաջ տեղեակ լինէր։ Խեղճ կինը չըգիտէր, որ հայը դէպի իր համազգային ունեցած ատելութեան մէջ փնտրում է ոյժ, վայելչութիւն և հոգեկան մխիթարութիւն։

Թէև առաջները կասկածում էր, բայց այդ օրը իշխանուհին համոզուեցաւ, որ Սուսաննան սիրում է Ալթմագովին. նմանապէս համոզուեցաւ, որ Սուսաննայի մէջ աւելի կանացիութիւն, քնքշութիւն, բանաստեղծական հոգի, աշխոյժ կայ, քան թէ իր հարազատ Եւդօկիայի մէջ. և եթէ երբ և իցէ երկուսը ներկայանային մի օրինաւոր, լուսաւորեալ, առողջամիտ, մարդկային արժանաւորութիւն ճանաչող երիտասարդի, անշուշտ նա նախամեծարութեան արմաւենին Սուսաննային կըտար։ Իշխանուհին ամենևին չէր կարողանում հասկանալ, թէ ինչպէս է կարելի, որ Ալթմագովի պէս անհոգի, չարսիրտ երիտասարդն էլ լինէր հայ Սուսաննայի նման քնքուշ սրտով, զգայուն հոգով, կայտառ, ուրախ,

բարի աղջիկն-էլ լինէր նոյն ազգի ծնունդ։ Բայց նա մոռանում էր, որ մինը ասիացու ձեռքում էր դաստիարակւած, իսկ միւսը եւրոպացու. Նա աւելի գերազանցութիւն էր տալիս, քան թէ դաստիարակութեան։ Այդ թէօրեան որքան էլ ճըշմարիտ լինի վերաբերութեամբ կովերի, ձիերի, խոզերի, շների և հաւերի, այս ու ամենայնիւ, մարդու վերաբերմամբ միշտ սխալ հետևանքների է բերում։ Երեխան ոչ նորա համար է վատ, որ վատ հօրէ ու մօրէ ծնած է, այլ նա նորա համար վատ է, որ վատ հօր ու մօր ձեռք է մեծացած, վատ ծնողներից է դաստիարակւած։ Ահա ինչի վրա մեծ և առանձին ուշադրութիւն պիտի դարձնէին մեր հայր և մայրերը... Բայց ո՞ր հայր ու մայր կասէ, թէ «ես վատ եմ»։

Մի անգամ իշխանուհին, ըստ դիպաց իւր մարդու Բարձրագոյն պարգև ստանալուն, մտադիր եղաւ մի փառաւոր պարահանդէս տալու, ուր հրաւիրած էր նաև Սուսաննան, որին իշխանը և իշխանուհին արդէն այնքան սիրում էին, որ ոչ մի մերձաւոր ազգականներէն ստոր չէին դասում։ Պարահանդէսէն մի շաբաթ առաջ Սուսաննան, երեսը կարմրած, աչքերը ուրախութենէ ցոլալով մօտեցաւ ու ասաց Ալթմագովին.

—Պարո՛ն համազգի, ձեր կարծիքով ինձ ո՞ր գոյն հալաւը աւել կըվայելի (կըսազի)։

—Ի հարկէ, յարդագոյնը, ասաց Ալթմագովը գրեթէ ակամայ. այդ ո՞վ չըգիտէ որ։

—Իսկ դուք ո՞ր գոյնը աւելի կհաւանէք, շարունակեց Սուսաննան։

—Իմ սիրած գոյնը մանիշակագոյնն է, ասաց Ալթմագովը, և ուզում էր հեռանալ։

—Ասացէք, խնդրեմ, պարահանդէսի մէջ դուք որին միտք ունիք հրաւիրելու առաջին կադրիլին, ասաց Սուսաննան, որ կարծես թէ ոչ նորա համար է խօսում, որ իր հետաքրքրութիւնը յագեցնէ. այլ իբր թէ կարօտ է նորա ձայնին, որ նորա խօսք ու զրուցը փափագով լսէ։

—Ի հարկէ, իշխանուհուն, պատասխանեց Ալթմագովը յօրանջելով և ասես թէ սաստիկ զառշելով խեղճ աղջկայ անմեղ ճուողէն։

—Իսկ երկրո՞րդը, պնդում էր Սուսաննան։

—Կարծեմ, որ քաղաքավարութիւնը պահանջում է, պատասխանեց Ալթմագովը, քիթ ու պռունկը ծամռելով, իբր թէ մի շատ յիմար մարդու հետ է խօսում, որ Եւդօկիային հրաւիրեմ. ի՞նչպէս էք կարծում։

—Իսկ երրո՞րդը, չէր դադարում Սուսաննան, երեսը գունատած։

—Ես ի՞նչ իմանամ՝ ի՞նչ երևելի ու ան աղջիկներ կը լինին այնտեղ. ի հարկէ, մինին ու ժանի կըգտնեմ հրաւիրելու։

Սուր և թունաւորւած դաշոյնը սրտի մէջ ցցած այնքան կսկիծ չէր պատճառիլ խեղճ աղջկան, որքան այս կծու, արհամարական ու գոռոզ խօսքերը։ Իսկոյն աչքերէն կաթ կաթ սկսան արտասունքը գետին թափել։

—Մի՞թէ ինձ համար նաև ամենափոքր ուշադրութիւն թողած չէք ձեր յիշողութեան մէջ, պա-

րոն Ալթմազով, ասաց աղջիկը, արդէն բոլորովին լալով.-մե՜ղք է ձեր հոգուն, մե՜ղք է... ես ձեզ այնքան անկեղծ սիրել էի... Աստուած տայ, որ մի ուրիշը տայ ձեզ այն երջանկութիւնը, որ ես երազում էի երբ և իցէ տալ ձեզ։

Այլ ևս չկարողացաւ զսպել սրտի փղձուկը և թաշկինակը աչքերին բռնած՝ դուրս փախաւ։

— —

Պարահանդէսի երեկոն, երկու զինուորական, մինը սիրուն դէմքով և գեղեցկակազմ մարմնով գնդապետ և միւսը ծեր գեներալ, զարդարուն, ճրագվառ դահլիճի մէջ կանգնած՝ խօսում էին։

—Ասացէք, խնդրեմ, ո՞վ է այն օրիորդը, որ սիւնի մօտ կանգնած , իշխանի դստեր՝ Եւդոկիայի հետ խօսում է, ասաց սիրուն գնդապետը։

—Ո՞րն է, ո՞րն է, հարցուց կարճատես գեներալը, աչքերի կոպերը սեղմելով։

—Ահա այն աղջիկը, որ մանիշակագոյն ժապաւէններով զարդարած յարդագոյն ձորձ ունի հագած գլուխը. նայէ՝ արեգակի պէս վառւում է գոհարներէն, որ կենդանի շուշանի հետ խառն, այդպիսի կախարդական գեղեցկութիւն են տալիս նորան։

—Հա՛ հա՛, այժմ տեսայ, բայց չեմ ճանաչում։

—Շատ սիրուն աղջիկ է. երեսի տիպարքը իտալուհու կասէի, բայց դորանն աւելի շնորհալի և մեղմ է և չունի այն լիրբ գծերը, որով պարծենում են Ապենինեան Թերակղզու կեանքը և որոնք, եթէ ինձ հարցնես, աւելի յարմարում է հեթերայի, քան թէ համեստ տանտիկնոջ։ Ի՜նչ խելօք նայւածք ունի այս աղջիկը, ի՜նչ սիրուն իրանք, ի՜նչ

հագուստի ճաշակ, ո՜րքան գեղեցկութիւն բոլոր արտաքինի վրա և դորա հետ միասին ո՜րպիսի անմեղութիւն դէմքի։ Տէ՜ր Աստուած, Տէր Աստուած, կա՞ն խօ այնպիսի բախտաւոր մանկանացուներ, որոնք այսպիսի գանձի տէր են լինում։

—Այո՛, այո՛, յօժարեցաւ գեներալը, սիրուն օրիորդ է, ով գիտէ, որ իշխանի, կամ կոմսի աղջիկն է։

—Պէտք է հնար գտնել մէկ կերպով հետը ծանօթանալու, ասաց սիրուն գնդապետը, թողեց գեներալին և գնաց խառնւեցաւ բազմութեան մէջ։

Պատուելի կարդացող, յուսամ, արդէն հասկացաւ, որ գնդապետի գոված աղջիկը մեր ծանօթ Սուսաննան էր, որ այժմ շրջապատած շատ երիտասարդներով, կադրիլները, վալսերը և պօլկաները բաժանում էր, բայց շատ խնայողութեամբ և ընտրութեամբ։ Արդէն առաջին կադրիլի նշանը տուած էր, բայց Ալթմազովը դեռ ևս դամա չէր գտել։ Իշխանուհուն բարոն Փ. էր հրաւիրել. Եւդոկիան էլ խօսք էր տուել իւր մօրեղբօր որդի Ս.-ի հետ պարելու, իսկ օտար օրիորդները մի անծանօթ կաւալէրի և այդ՝ տան ուսուցչի հետ պարել արիստոկրատիկական պարահանդէսումը... ա՜ա, ո՜րպիսի սարսափ...

Սուսաննան տեսաւ խեղճ երիտասարդի այդպիսի նեղ վիճակը, իսկոյն թողեց իւր կաւալէրի ձեռքը, շտապով մօտեցաւ նորան և ասաց.

—Պարո՛ն Ալթմազով, դամա չունի՞ք, չէ՞ք պարում։

—Ո՛չ, ասաց նա, առաջին կադրիլը, կարծեմ, պար չեմ գալ. գլուխս մի փոքր ցաւում է։

—Չէ՞ք կամենալ արդեօք ինձ հետ պարել,

ասաց Սուսաննան, իբր թէ չիմանալով նորա նեղ դրութիւնը։

—Բայց դուք, եթէ չեմ սխալւում, արդէն հրաւիրած էք, պատասխանեց Ալթմագովը, աչքերը վար խոնարհած։

—Ի՞նչ փոյթ. եթէ ինձ հետ պարելը ձեզ անհաճոյ չէ, ասացէք միայն. կավալերիս ճամփայ դնելը մի չնչին բան է. կասեմ նորան, որ ձեզ արդէն վաղուց խոստացել էի, բայց մտքիցս գնացել էր. ներողութիւն կը խնդրեմ,—պրծաւ գնաց. հա՞, ուզո՞ւմ էք։

—Եթէ կը կամենաք՝ համեցէք, ասաց Ալթմագովը. բայց ես վիզաւի էլ չունիմ, որտեղէն կը գտնենք. այժմ կը սկսեն պարել, ժամանակ չկայ...

—Այդ էլ կը հոգամ, դարդ մի անիք, ասաց Սուսաննան, թռչունի պէս թռաւ ու գնաց։

Մի րոպէի մէջ գնդապետ Շթուբկին (ծեր գեներալի հետ խօսողին) տուած խօսքը յետ առաւ, չքմեղ բերելով իւր մոռացկոտութիւնը, և կոմս Դիլեօնին ձեռքերէն բռնած՝ ծանօթացրեց Ալթմագովի հետ և իրանց վիզաւի կանգնեցրեց։ Նոյն րոպէին էլ երաժիշտները նւագեցին, զոյգերը տեղերէն շարժեցան. պարողների ոտքի տրոփը, կանանց կերպասէ հագուստների շրփշրփոցը, զինւորականների խթանների զրնգզրնգոցը, տղամարդկանց խօսքը, կանանց ծիծաղը միասին խառնուեցան, և այս ուրախ իրարխառնութիւնը տևեց գոնէ կէս ժամ։

Բայց այդքան մարդոց մէջ ո՞վ էր ամենից բախտաւորը, գիտէ՞ք։ Գլուխ մի ցաւցնէք, չէք իմանալ։ Ամենից բախտաւորն էր միամիտ և անմեղ Սուսաննան, որ իւր սիրական Ալթմագովին ակներև

խայտառակութենէն ազատելով, կարծում էր, թէ իւր մեծահոգութեամբ նորա սրտի մէջ մի փոքրիկ խորշիկ տիրապետել է։ Բայց ո՜րքան մոլորւած էր նա։ Բոլոր պարի ժամանակ թէկուզ մի քաղցր, մի քաղաքավարի խօսք ասէր Ալթմագովը նորան։

Բայց Սուսաննայի ի՞նչ հոգն էր, որ նա անքաղաքավարի էր դէպի իրան, լուռ էր նորա ամեն ընքոյշ խօսքերին, խոժոռադէմ նայում էր նորա երեխայական ուրախութեանը... Քո մեղաց տէրը լինիմ, եթէ նա բոլոր այդ մեծամեծների և նոցա զարդարուն կանանց բազմութիւնը իւր անձկալու մազի թելի հետ փոխէր։ Երբոր պարը վերջացաւ, Սուսաննան հարցրեց Ալթմագովին.

—Երկրորդ կադրիլի համար դամա ունի՞ք։

—Կարծեմ... տեսնեմ... կարելի է... կմկմաց Ալթմագովը։

—Եթէ ունիք, ասաց Սուսաննան, լաւ, ապա թէ ոչ՝ ես դարձեալ ձեզ հետ կը պարեմ։

—Լաւ, տեսնենք... պատասխանեց նա բռնի յօրանջելով, որ ծածկէ իւր խայտառակութիւնը և ներքին շփոթը, որ երեսին պարզ նկարած էր.

Ալթմագովը այն փոքրիկ մարդոցմէն էր, որք իրենց հզօր, ակներև թշնամիների վրէժը հանում են ամեղ, տկար և շատ անգամ իրանց մօտիկ մարդոցմէն—իրանց ընտանիքէն, իրանց բարեկամներէն։ Փոխանակ բարկանալու և արդար վրէժը հանելու իշխանուհիէն, Եւդօկիայէն և ուրիշ ծանօթ կանանցմէ, նա իւր վրիժու և ատելութեան բոլոր թոյնը աշխատում էր թափել խեղճ անմեղ աղաւնեակի վրան, որ իւր ամեն ճիգը թափում էր նորան մխիթարելու, հովանաւորելու և պաշտպանելու։

Երկրորդ, երրորդ և չորրորդ կադրիլներում երբ Ալթմազովը գնաց դամա հրաւիրելու և ոչ ոք չըյօժարեցաւ նորա հետ պար գալու և խռով խռով եկաւ տեղը նստաւ, երբ անգամ հետզհետէ եկաւ մօտեցաւ նորան Սուսաննան և առաջինի նման սկսաւ հետը պարել, իւր զւարճ խօսակցութիւններովը աշխատում էր փարատել նորա թախիծը և մի րոպէ չէր թողնում, որ հիւրերը նկատէին հասարակաց արհամարհանքը դէպի նա։ Սուսաննան շատ լաւ գիտէր, որ արիստոկրատները միշտ այդ կերպ պատժում են այն մարդոց, որոնք իրենց ստոր աստիճանէն ջանք են անում դուրս գալ և մեծատունների կարգը անցնել։

Բայց խեղճ աղջկայ բոլոր ջանքը, բոլոր քաղաքավարութիւնը, բոլոր անմեղ ու անկեղծ սէրը, բոլոր մարդավարութիւնը իզուր կորան։ Սուսաննան պարզ տեսաւ, որ իւր գրկածը ոչ մարդկային տաք սիրտ, այլ մի կտոր սառոյց էր. յոգնեցաւ, վհատեցաւ ու յուսահատեցաւ խեղճ աղջիկը։ Ոչ մի քաղցր խօսք չի լսեց նորա բերնէն ամբողջ երեկոն։

Պարահանդէսը դեռ ևս վերջացած չէր. հանդիսականների առջև շատ պարեր, շատ զւարճութիւններ դեռ ևս կային այն գիշերը, բայց Սուսաննան արդէն կորցրել էր իւր զւարթ տրամադրութիւնը. գնաց նստաւ մի հեռաւոր խորշ և ընկղմեցաւ իւր տրտում մտքերի մէջ։ Ետևէ ետևէ շատերը մօտեցան—Սուսաննան այն հազւագիւտ արարածներէն էր, որ նորա բացակայութիւնը ամեն տեղ նկատելի էր լինում—նորան պարի հրաւիրելու. բայց նա որին՝ յոգնել եմ, ասում էր, որին՝ գլուխս ցաւում է, որին՝ արդէն խօսք եմ տուել, և այդպէսով գլխիցը ցանում էր նոցա. և մինչև պարահանդէսի վերջը մնաց տխուր ու տրտում։ Միայն Ալթմազովը չեկաւ նորա մօտ և ոչ մի քաղցր ու մխիթարական խօսք չասաց նորան, թէև ինքն էր միակ պատճառը իւր համազգի խեղճ ու որբ աղջկայ տրտմութեանը։

Ինքն Ալթմազովը նմանապէս մի ուրիշ խորշում, թէև հոգւով և մարմնով առողջ, բայց տխուր ու տրտում նստած, ոչ թէ կարեկցութիւն, մինչև անգամ ոչ ոքի հետաքրքրութիւնը չըշարժեց։ Ինչպէս որ կար. այնպէս էլ մնաց բոլոր գիշերը, հիւրերի մէջէն իրա համար նորանոր հարսնացուներ ջոկելով՝ հազարաւոր օրավար հողով և միլիոնական մայր գումարով. նա արդէն պարզ տեսնում էր, որ Եւդոկիան ձեռքէն փախել էր։ Ի լրումն իւր թշւառութեան, նա յետագայ տեսարանին հանդիսատես եղաւ։

Երկու տարէց կանայք նորա մօտից անցնելիս՝ իրար հետ այսպէս են խօսում։

—Ուրեմն այսօրւայ պարահանդէսը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ Եւդոկիայի նշանախօսութիւնը. թէև երիտասարդ իշխան Օ* նախանձելի փեսայ է ամեն աղջկայ համար, բայց ասում էին, թէ Եւդոկիան մի հայ ուսանողի...

—Զարմանալի՜ թեթևամիտ ես դու, քոյրիկ, մի՞թէ իշխանուհին այնքան խելք չունէր, որ փոքրիկ կրքի համար զոհ չըբերէր աղջկայ ապագան...

Կնանիք հեռացան, խեղճ հայ երիտասարդի սրտի մէջ դաշոյն ցցելով և զէնքը վէրքի մէջ թողնելով։ Կարծես իրար խօսք տուածի պէս, այն գիշեր ոչ ոք նորան չի մօտեցաւ, մինչև անգամ իշխանը, իշխանուհին և Եւդոկիան.—ասես թէ ոչ ոք չըգիտէր նո-

րա ներկայութիւնը պարահանդէսի մէջ. միայն ընթրիքէն յետ, հիւրերի տուն գնալու ժամանակ, Սուսաննան մօտեցաւ նորան և կարեկցաբար հարցուց. —«Պարոն Ալթմագով, ինչո՞ւ բոլոր գիշեր տրտում, մտատանջ էիք. ինչո՞ւ ինձ չի մօտեցաք, հետս խօսել չուզեցիք. մի՞թէ ինձ խօսք և զգացմունք կըպակասէր ձեզ մարդապէս կարեկցելու, ձեզ մխիթարելու. մի՞թէ այս օտար մարդոց ընկերութիւնը, որ մեր ազգի շահերը ամենևին ճանաչել չի ուզում, երկու համազգի չըպիտի մօտեցնէր…

———

Այս վերջին անգամն էր, որ տեսան Սուսաննային. այնուհետև նա բոլորովին դադարեցաւ իշխան Կարիլկինի տունը յաճախելու՝ Եւդօկիային երաժըշտութեան դասեր տալու համար։

Ձմեռը անցաւ։ Ապրիլ ամիսն էր։ Մի օր Եւդօկիան մի փոքրիկ նամակ գրեց և Ալթմագովից յետ պահանջեց իր մատանին (ի հարկէ, Ալթմագովի մատանին էլ դրել էր նոյն նամակի մէջ) ասելով, որ նա չէ կարող իր մօր կամքէն դուրս գալ, որ յիմարութիւն է երեխայութեան ժամանակ տուած խօսքը չափահաս տարիքին կատարելը, որ ռուս արիստոկրատին մահացու մեղք է, որևէ զգացմունքի համար, իւր բարձր դասակարգէն դուրս գալ և ստորինը մըտնել, որ նա թողնելով մայրաքաղաքի պալատների զւարճութիւնքը, ի՞նչ օր պիտի տեսնէ փոքրիկ գաւառական քաղաքի խրճիթների մէջ, ուր մարդիկ և կովերը մի կտուրի տակ են կենում, որ նա, Եւդօկիան այնքան ոյժ չունի, որ կարողանայ մի օտարազգի և աննշան երիտասարդի բռնի մտցնել բարձր

ազնուականների կաճառը, որ այսպիսի անհաւասար պսակը ամեն յանցանքներէն աններելին է խելօք և բարձրաստիճան մարդոց աչքում, որոց կարծիքը արհամարհելը շատ վտանգաւոր է, և այլն և այլն։

Նոյն օրը իշխան Կաբիլկինը մի ծրարի մէջ 500 մանէթ դրած և հետը մի փոքրիկ նամակ, ծառայի ձեռքով հասցրեց Ալթմագովին։ Նամակի մէջ գրած էր. «Եւդօկիայի ուսումնառութիւնը վերջացած պէտք է համարել. այսուհետև նա ուրիշ կեանքի համար պիտի պատրաստուի. ուրեմն ձեր իմ տան մէջ իբր ուսուցիչ մնալը՝ այսուհետև աւելորդ է։ Այսօրևեթ պիտի ազատէք ձեր կեցած սենեակը, ուր պիտի հիւրընկալեմ իմ հեռաւոր մի ազգականին, որ այսօր պիտի գայ իմ տունը՝ հեռաւոր քաղաքից, և, ինչպէս ձեզ յայտնի է, տանս մէջ, բացի նորանից, ուրիշ ազատ սենեակ չունիմ, իսկ այս 500 մանէթը ստացէք ինձանից. կուզէք ինչպէս ընծայ, կուզէք ինչպէս կանխիկ՝ ձեր ռոճիկը մինչև սեպտեմբերի ամիսն, որով կըլրանայ մեր չորս տարւայ պայմանագրութիւնը»։

Իշխան Կաբիլկին

———

Վրա անցաւ երկու տարի։ Ալթմագովը թէև համալսարանական ուսման ընթացքը աւարտեց և մաթեմատիքայի առաջին կանդիդատը եղաւ, բայց նա իր նպատակին հասած չըհամարեց իրան. նորա գըլխաւոր նպատակն էր, մայրաքաղաք գալով, ոչ գիտութիւն, այլ փող և մեծ փող ձեռք բերել. բայց այդ անիծած փողը, այդ ժանգոտ մետաղը չընկաւ նրա ձեռք։ Ալթմագովի սիրտը կոտրւեց, նորա ուխ-

տը չըկատարւեցաւ. ամօթ չէ՞ր նրան վերադառնալ Երևան կամ Թիֆլիս՝ առանց արիստօկրատ կնկայ, առանց միլիոնաւոր օժիտի. ի՞նչ պիտի ասէին մարդիկ: Ալթմազովը յամառութեամբ մնաց Պետերբուրգ և սպասում էր իւր բախտի անիւի շուռ գալուն:

Մի անգամ բարեկամներէն մէկից լսեց, որ գերմանացի ծեր մի ամուրի կայ, որ շատ ուզում է իւր եղբօր՝ տարիքը-անցած աղջկան մարդու տալու, որին, ասում էին ամենքը միաբերան, թէև այժմ մեծ օժիտ չի տալ, բայց պառաւ աղջիկը նորա միակ ազգականը գոլով, ծերունու մեռնելէն յետ հարկաւ պիտի ժառանգէ նորա անբաւ հարստութիւնը, որն ասում էին, ութը միլիոնէն աւելի է և ապահով կեցած է տէրութեան բանկում:

Ալթմազովը խնդրեց բարեկամին, որ իրան ծանօթացնէ թէ այդ հարսնացու աղջկայ և թէ նորա ծերունի հօրեղբօր հետ: Շատ ժամանակ վրա չանցած, նա երկուսի հետ էլ ծանօթացաւ և, ինչ որ լսել էր նոցա մասին, իրաւ որ այդպէս էր. աղջիկը երեսուն տարեկանէն աւելի, չոր-չոր, բարձրահասակ, բաւականին ցանցառ, դեղին ու նօսր մազերով, երկայն երեսով գերմանուհի էր, իսկ ծերունի հօրեղբայրը մօտ եօթանասուն տարեկան հիւանդոտ մարդ էր, որը, ինչպէս ասում են, «քթէն բռնէիր՝ հոգին պիտի փչէր»:

Ալթմազեանը իւր կրակոտ աչքերով և գեղեցիկ երեսովը շուտ կարողացաւ տաքացնել այն սիրտը, որ արագ-արագ սկսել էր հանգչել սիրոյ համար: Ողորմելի Մարիխէնը չըգիտէր ո՞ր աստուածներուն փառք տար այդպիսի անակնկալ բախտի համար. երեսուն տարեկան հասակումն քսանհինգ տարեկան բոցոտ

ասիացու սէ՞ր — այդ խօս հէքիաթի մէջ գրւելու բան է: Ինքն իրան հանգստացնելու համար՝ Մարիխէնը ձևանում է, իբր թէ կասկածում է Ալթմազովի սիրոյ անկեղծութեան մասին: Ալթմազովը երդումով հաւատացնում է, որ, բացի անխարդախ սէրէն, ուրիշ ոչինչ չի փնտրում նորա մէջ:

—Կարելի է դուք կարծում էք, որ հարուստ ծերունին իմ հայրս է և կամ ես նորա հոգևոր զաւակն եմ. ո՛չ, ես մի խեղճ որբ եմ և մի կտոր հացի համար կենում եմ նորա տանը:

—Ի՞նչ փոյթ. ես ոչինչ ուրիշ բան չեմ ուզում, բացի ձեր սրտէն և ձեռքէն, հանգստացնում է նորան Ալթմազովը:

—Պարոն Ալթմազով, կարելի է դուք կարծում էք, որ, ինչպէս իմ համազգի գերմանացի կնանիքը կամ աղջիկները, ես երևելի ուսումն ունիմ կամ հմուտ եմ տնտեսութեան մէջ, այդտեղ ես կըսխալիք. ծնողներէս վաղ զրկւելով, ես ո՛չ ուսումն ստացայ և ո՛չ տնտեսութիւն կարողացայ սովորելու. իսկ հօրեղբայրս շատ ժլատ էր. նա իմ կրթութեան համար տարեկան մի քանի հարիւր ռուբլի էլ չըտւաւ: Այժմ ես կարող եմ միայն, — նայեցէք, առաջւանէ եմ ասում, — ապահովեալ մարդու կնիկ լինել, աւել ոչինչ:

Ալթմազովը ծոցէն հանեց համալսարանէ ստացած վկայաթուղթը և ասաց:

—Ահա այս թուղթը կուտայ մեզ շատ փող և և կատարեալ ապահովութիւն, իսկ ձեզ, քնքոյշ օրիորդ, կըմնայ այդ փողը ձեր ուզածի պէս մսխել և իմ տաք սրտի մէջ ձեր մինչև այժմ փնտռած բախտը գտնել:

Արդարակորով գերմանուհին, տեսնելով, որ իւր ամեն պակասութիւնները յայտնելէն յետ, չըկարողացաւ հեռացնել իրանից այս սիրահար երիտասարդին, և միւս կողմանէ, միտք անելով, թէ ինչ շահ է այնքան ժամանակւայ կամաւոր կուսութիւնը, խօսք տւեց Ալթմագովին, ոչ առանց ցիրլիխ մանիրլիխ— (zierlich — manierlich) շարժմունքների՝ նորա հրաբորբոք փափագին հասցնելու, և նոյն երեկոյին, թէյի ժամանակ պատմեց իւր հօրեղբօրը այս անակընկալ բախտը։ Հօրեղբայրը երկու ձեռքը mit Andaeht (բարեպաշտութեամբ) բարձրացրեց երկինք ու ասաց. «Փա՜ռք քեզ Աստուած» (Gctt sei Dank!), թէև մի փոքր ուշ, բայց վերջը-վերջը լսեցիր դու իմ աղօթքը. ես խոստացել էի ողորմած հոգի եղբօրս, քու հօրդ, որ մինչև քեզ մի արժանաւոր մարդու կին չի տեսնեմ, ոչ կըպսակւիմ և ոչ կըմեռնեմ։ Ես ինչ անէի. ռուսերէն գտնէի քեզ համար արժանաւոր փեսայ. դու, գիտես, մեր ժամանակւայ երիտասարդները մի-մի արծաթասէր Յուդա Իսկարիովտացիներ են, որ ամեն բան, մինչև անգամ իրանց սուրբ զգացմունքը պատրաստ են փողի գնով ծախելու. նոցա ոչ կենաց անբաժան ընկեր, այլ ոսկիով լցւած սնդուկ է պէտք. այս է պատճառը, որ քու պսակը ein Bisschen (մի փոքր) ուշացաւ, իմ սիրակա՛ն Մարիխէն։ Դէհ, ուրեմն էգուց ճաշի հրաւիրէ հէրցենսփրինցէնիդ, որ ես էլ մի փոքր հետը խօսիմ, տեղեկանամ ու միամտանամ, որ ապա թէ կարողանամ նորան աւանդելու իմ շէցխէնին (գանձին)։

Միւս օր, իրաւ որ, Ալթմագովին հրաւիրեցին Կրեսոսի մօտ ճաշի։ Վիլգբրատի մէջ, տասներկու

կօպէկանոց գարեջուրի առջև սկսւեցաւ երեսուն տարեկան գերմանուհու հարսնախօսութիւնը՝ քսանհինգ տարեկան չքնաղ հայ երիտասարդի հետ։ Ծերունի Շմիդտը իւր ականջով լսեց Ալթմագովի անշահասէր առաջարկութիւնը և անշիջանելի սէրը դէպի Մարիխէնը, որի վրա, իբր թէ վեց տարիէ ի վեր սաստիկ սիրահարւած է։ Չըգիտեմ, հաւատա՞ց ծերունին, թէ՞ հաւատացողս ձևացաւ, միայն թէ յօժարացաւ նոցա ամուսնութեանը։ Ճաշէն յետ երկուսին էլ իւր առանձնասենեակը հրաւիրեց, ինքը վրան հինաւուրց բարեպաշտ նահապետների դերը առաւ և սկսաւ պէս-պէս խրատներ տալ, որը քաղել էր բազարի մէջ գնած արժանագին գերմանական գրքերէն. յորդորեց նոցա՝ իրար սիրել, աչքերը օտար մարդոց վրա չի անկել և շատ այսպիսի հոգեշահ խրատներ տւեց նոցա, որոնց համար, ինչպէս ամենքը գիտեն, ժլատ մարդիկ խիստ առատաձեռն են։ Ես՝ հեղինակս այս վէպին, իմ կողմանէ կարող եմ հաւատացնել, որ Մարիխէնը այդ ամեն խրատները ճշտութեամբ կըկատարէ։

Այսպէս, ամեն կողմէն միամտւած, ծերունին Աբրահամի, Իսահակի, Յակովբի և Տօբիտի օրհնութիւնները թափում է (գերմանացին շատ սիրում է Աստւածաշունչ կարդալ, այդ ամենքդ գիտէք) այս սիրահարներու գլխուն։

Մի շաբաթից, տէր Գրիգորը—Աստւած լուսաւորի հոգին—Սմօլէնսկի եկեղեցիումը, լռելեայն կատարում է սոցա պսակի ծէսը, և նոյն օրը Պետրոս-Պօղոսի եկեղեցիում գերմանական արարողութեամբ կատարւում է նոյն բանը երկրորդ անգամ։ Միւս օր ծերունին Շմիդտը 3.500 ռուբլի Մարի-

խինի անունով գնում է պետական բանկը, իսկ շաբաթ չանցած՝ ինքն էլ պսակւում է մի աղքատ, բայց շատ սիրուն և քսաներկու տարեկան գերմանացի աղջկայ վրա. և բանը սորանով կըպրծներ, եթէ մի տարուց յետոյ ծերունու նորահարսը մի զաւակ չընծայէր ծերունուն։

1870 թւականին ես Վարշաւ էի գնացել իմ մասնաւոր գործերի համար, և այնտեղ ոչ մի ծանօթ չունենալով, հիւրանոց էի իջել. նոյն հիւրանոցումը, ծառաներէն իմացայ, իջել էր նաև մի հայ քահանայ։ Որքան որ հայերը իրանց կեցած քաղաքումը աշխատում են իրարմէ հեռու լինել, այնքան էլ օտար տեղը նոցա իրար մօտեցնում է։ Ես շուտ ծանօթացայ այդ քահանայի հետ և իմացայ, որ նա յատկապէս Մոսկովէն է եկել՝ մի գերմանացի գեներալի որդին հայ կնքելու։ Հետաքրքրութիւնս շարժեցաւ, և քահանան ինձ պատմեց յետագան.—

Մի պարահանդէսի մէջ գերմանացի գնդապետ, ազգանունը Շթուբէ, սաստիկ սիրահարւում է մի սիրուն որբ հայ աղջկայ վրա, անունը Շուշան, Արղ...ն իշխանական տոհմէն, որ գրեթէ ոչինչ ծանօթութիւն չունենալով իւր հանգուցեալ ծնողաց մասին—որովհետև շատ փոքր հասակի մէջ որբացել է—վարժուհու պաշտօն է կատարում եղել։ Երբոր գնդապետը հնարը գտնում է նորա հետ բարեկամանալու և նորա մօրացւի տունը, ինչպէս փեսացու, հրաւիրւելու, վերջինէն, այսինքն մօրացւէն, իմացել է, որ այդ կարծեցած խեղճ որբը

բաւականին նշանաւոր ժառանգութիւն ունի իր մեռած ծնողներէն՝ կալւածքներով և ոսկեղէն—ակնեղէններով։ Բարի պառաւը յայտնել է գնդապետին, որ Շուշանը ոչ միայն իր հանգուցեալ ծնողաց, այլ և իւր ժառանգն է, և ցոյց է տւել նորան՝ իւր հոգեզաւակի անունով հարիւր հազար ռուբլու բանկային տոմսակ։ Պսակի ծէսը չըկատարած, Շուշանը իւր փեսայի հետ օրինաւոր պայմանաթուղթ է շինել, որով իրմէ ծնած զաւակները, թէ տղայ, թէ աղջիկ, անպատճառ հայ պիտի կնքւին և հայ պիտի դաստիարակւին։ Գնդապետը յօժարել է, ստորագրւել այս պայմանին և ապա կատարւել է նոցա պսակի ծէսը։ Շուշանի ամուսինը այժմ գեներալ է և Վարշաւայի մէջ տէրութեան ծանրակշիռ պաշտօն ունի։

Իսկ բախտախնդիր Ալթմազո՞վը ինչ եղաւ։

Նոյն օրը, որ տիկին Շմիդտի յղութեան աւետիսը հասնում է նորա ականջին, նա ինքը իրան խօսք է տւել, հէնց որ երեխան ողջ և առողջ աշխարհ գայ, նոյն վայրկենին ատրճանակը իր ճակատին արաքացնէ։ Կատարե՞ց արդեօք նա իւր խոստումնքը, թէ ոչ—չըգիտեն. վաղուց է Պետերբուրգէն լուր չունիմ։

Հարցեր՝

Ալթմազովի բնաւորութեան դրական և բացասական գծերը։

Ի՞նչ ազդեցութիւնների ենթարկւեց մանկու-

թեան հասակում, գիմնազիայում և ուսանողութեան ժամանակ։

Ի՞նչը խորտակեց նրա պայծառ երջանկութիւնը.

Սուսաննայի բնոյթագիրը.

Եւգօկիա, իբրև արիստոկրատական շրջանի զաւակ։

Նրա ծնողները։

Արիստոկրատական դասակարգի կենցաղը։

ՇԱՀԱԶԻԶԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԱԶ

Ես լսեցի մի անոյշ ձայն,—
Իմ ծերացած մօր ձօտ էր.
Փայլեց նշոյլ ուրախութեան,
Բայց ափսոս, որ երազ էր։
Կարկաչահոս աղբիւր այնտեղ
Թաւալում էր մարգարիտ.
Նա յստակ էր, որպէս բիւրեղ,
Այն երա՜զ էր ցնորամիտ։
Եւ մեղեդին տխուր, մայրենի
Յիշեց մանկութեան օրեր.
Մօրըս համբոյրն ես զգացի.
Ա՜խ, ափսո՜ս որ երազ էր։
Կուրծքին սեղմեց կարօտագին.
Աչքերս սրբեց—շատ թաց էր,—
Բայց արտասուքս գնում էին...
Ա՜խ, այդ ինչո՜ւ երազ էր։

ԳԻՇԵՐ

Սիրո՜ւն պատկեր։ Պարզ գիշեր էր։
Եւ օդեղէն ովկեանում

Փայլում էին անթիւ աստղեր,
Եւ ուրա՛խ էր սիրտըս զարկում։
Ամբրոսական ծաղիկներ վառ
Անուշութիւն էին բուրում,
Եւ երկնքի ցօղ կենարար
Բնութիւնն էր զովացնում։
Եւ ես անխռով երգում էի,—
Եւ իմ երգըս խիստ մաքուր էր․
Ազատութիւն էի երգում,
Հայրենիքի պարծանք ու սէր։

ՕՐԻՈՐԴԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Հանգիստ իմ անոյշ, անցար, գնացիր,
Միայն վէրք անբոյժ սրտումս թողեցիր։
Սոխակ գեղեցիկ կանաչ պարտիզում,
Երգելով քաղցրիկ, ինձ չէ գրաւում։
Թեզանով միայն երջանիկ էի,
Տիկին ինքնիշխան ինձ կարծում էի։
Ցերեկը մենակ, փակւած սենակում,
Ողբում եմ անյագ,—ոչ ոք չի լսում։
Գիշեր է գալիս—մահիճ եմ մտնում.
Տրտում է հոգիս, քունըս չի տանում։
Ո՛հ սիրտըս այրւած, ողջ քեզ է կանչում,
Ողջ քո անմոռաց անունդ է յիշում։
Մազեր թուխ, երկայն, աչեր գրաւիչ,
Ի՛նչ հասակ, ինչ ձայն, ինչ հոգի կտրիչ։
Անգո՛ւթն ինձ խաբեց, ուրիշին սիրեց.
Ա՛խ, նա ինձ դեռ վաղ պատրաստեց դագաղ։

ՊԱՆԴՈՒԽՏ ՀՈԳԻ

(Նւէր Ս. Նազարեանի յիշատակին)

Հողի կապանքից հոգին ազատւած,
Երկնքի անվերջ տարածութեան մէջ
Թռչում էր ուրախ, նրան գրկաբաց
Ողջունում էին աստղերը անշէջ։

Եւ քերովբէներ այնտեղ վեցթեւեան
Հանդիպում էին խնկով, բուրվառով,
Յանկարծ ցոլացաւ կայծակի նման
Աթոռն ոսկեղէն, լի գոհարներով։

Հանգիստ էր տիրում մշտընջենաւոր
Մարտիրոսների օթեւաններում.
Եւ նրանց գլխին պըսակ փառաւոր,
Ինչպէս արեւըք, հրափայլ շողշողում։

Սահում էր այնտեղ և կենդանի ջուր,
Ինչպէս երեխի արտասուք մաքուր.
Եւ դրախտահաւն ծփերի միջին
Սաղմոս էր ասում Ամենակալին։

Այսքա՛ն կախարդիչ, հրաշալի՛ պատկեր
Ո՛չ մի հողեղէն, մի մահկանացու
Իւր կենդանութեամբ երբէք տեսած չէր,
Եւ ոչ մեծութիւն զգացել Աստըծու։

Եւ մտաւ հոգին խոստացած աշխարհ,
Ուր մեր աշխարհի ո՛չ հոգս կայ, ո՛չ վիշտ.
Ուր մեծ ու փոքըր միմեանց հաւասար,
Եւ Ադօնայի ներկայ նոցա միշտ։

Եւ տխրեց հոգին հողեղէն մարդու,
Նա չընտելացաւ Դրախտի վարդերին.
Ուզում էր թողնել վիճակն կենսատու,
Ուզում էր ասել իւր հըրեշտակին՝

«Թո՛ղ ինձ, թո՛ղ գնամ դարձեալ այն կայանք,
«Ուր հոգս կայ և վիշտ, արցունք, տառապանք.
«Ուր քաղցրութեան հետ կայ և՛ դառն բաժակ,
«Ուր օձ է սողում և՛ վարդենու տակ...

«Սէր ունիմ սրտումս, լո՛յն այս երկնքից.
«Ամփոփել իւր մէջ չէ կարող դըրախտ.
«Խաւար գիշեր է երկինք աստղալից—
«Այնքա՛ն լուսաւոր երկրային իմ բախտ։

«Թո՛ղ ինձ, թո՛ղ գնամ դարձեալ այն կայանք,
Ուր հոգս կայ և վիշտ, արցունք, տառապանք։

ՄԻ ՁԻԱՐԹ ՄԱՆԿԱՆ

Ուրախութիւն քեզ անպակա՛ս,
Ո՛վ դու մանուկ սիրելի,
Ծլե՛ս, ծաղկե՛ս և ծերանա՛ս,
Տալով պտուղ արժանի։
Որպէս ծաղիկ, մանուկ, քաղցր ես
Եւ շնորհագեղ, որպէս օր,
Մանո՛ւկ, մանո՛ւկ, ինձ չխաբես,
Մի՛շտ կաց այդպէս լուսաւոր։
Նայիր վերև, տե՛ս, ինչ սիրուն
Այնտեղ փայլում են աստղեր,
Եւ անթիւ են, և շողշողուն,

Որպէս երկու քո աչեր։
Այնտեղ, հոգեակ, բնակւում է
Մեր սուրբ Հայրը երկնքի,
Նա՛ է, որ մեզ ուղարկում է
Եւ կեա՛նք, և սէր և հոգի։
Նա ծագում է իւր արեգակ
Ամենայն օր քո վերա,
Որ զւարճանաս, որպէս թռչնակ—
Օրհնի՛ր անուն սուրբ Նորա։
Ունի որդի մի Միածին.
Նա՛ է Փրկիչ աշխարհի.
Նա խաչ ելաւ, աւեց հոգին...
Որ դու լինիս մա՛րդ բարի։
Նա սիրելով իւր թշնամիք,
Օրհնեց խաչին և ներեց.
Եւ մեզ գրեց իւրեան որդիք,
Սիրել միմեանց պատուիրեց։
Նա հեզութեամբ յաղթեց Չարին,
Եւ մեզ ասաց, որ և մենք
Հետևենք այդ օրինակին—
Չհպարտանանք մեք երբէք։
Մանո՛ւկ սիրուն, աղօթք արա՛,
Երբ դու գլուխըդ խոնարհած,
Համբուրում ես պատկերըդ անհա,
Ոսկենկար զարդարած։
Եւ ժպտում է, որպէս շուշան,
Անհոդ մանուկն մօր գրկին.
Այսպէս թռչնակը ճիւղի վերան
Օրհնում է իւր հրեշտակին։
Եկէք Հայոց եկեղեցի.
Այնտեղ կտեսնէք զմայլած

Պայծառ դէմքը այդ երկնացի,
Գարնան վարդը կխամրաց։

ՄԵՌԱՒ ԻՄ ՄՈՒՍԱՆ

Մեռաւ իմ մուսան, հանգաւ և կրակ,
Անտառը լցւեց չոր տերևներով.
Երկինքը ծածկւեց, փախաւ արեգակ,
Էլ ես չեմ ապրում ուրախ երգերով։
Այժմ ինձ մնաց միայն փշրանքներ,
Մայր մտաւ ահա և նշոյլ վերջին.
Հանում եմ զրահս, և՛ զէն, և զարդեր,
Յանձնում եմ դորան մանուկ սերնդին։

Զ Ո Հ Ե Ր

(Հ ա տ ւ ա ծ)

...Բայց թող հայկական որդիքն իմանան,
Որ իմ ուսը նոցա վիճակն է եղել,
Որ երբէք վախլուկ զինուորի նման
Թշնամուս առջև վահան չեմ ձգել.
Չեմ երկրպագել ես ոսկի հորթին
Եւ ոչ կուռքերին պաշտել օտարի.
Այլ միշտ հոգւոր կարօտ ծարաւի,
Տւել եմ արժանն ամեն մի մարդին։
Չեմ տաշել դագաղ, ու մատաղ կեանքի
Կանաչ ծառի պէս ծաղկել են յոյսեր։
Սրսկել եմ դրանց ջրով կենդանի,
Որ գալուց ազգին լինին պտղաբեր։

ԼԵՒՈՆԻ ՎԻՇՏԸ

ՊՕԷՄԱ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Ժամանակակից գրում եմ լեզւով,
Որ ամենայն մարդ կարդայ, հասկանայ,
Որ նա չ՚նայէ այլ ակնոցներով,
Որ իւր սեփական քննութիւնը տայ։
Կեանքը ինձ ասաց «Մանուկ, քեզ դափնի,
Գնա նոր խօսքով բան մի զրուցել,
Եւ լաբիրինթոս մութ դրւածքների
Յանցանք համարիր ազգին նւիրել։»
Եւ ես՝ հնազանդ այդ առողջ ձայնին,
Չկամեմ նմանել անառակ որդուն։
Զոհում եմ գրիչս կենդանի լեզւին,
Որքան ձեռնհաս իմ կարողութիւն։
Մանուկ հրաշագեղ, թաթով ոգելից,
Դու աշխարհաբար մեր սրտի թարգման.
Դու մեզ հարազատ ծննդեան օրից,
Թող քեզ նախատեն մարդիկ հնութեան։

Գ Լ Ո Ւ Խ I

ՀԱՏՒԱԾ

Լևոնի վշտի պատճառը

Տխուր, միակերպ անցանում էին
Լևոնի օրերն. սրտառուչ զրկած

Հարազատներից ուել էր վշտին,
Աճելով աճել աշխարհից փախած։
Բայց և հարազատք, արժան է ասել,
Զկարծեմ, որ վիշտն Լևոնի սրտի
Կարողանային մի օր փարատել.
Ո՜վ, շատ կարծր է սիրտն այդպէս մարդի։
Նա կեանք չէր վարում ճգնաւորական
Եւ, միշտ խնդրելով խօսք ու զրոյցներ,
Պատրաստ էր մեկնել ձեռն մտերմութեան,—
Բայց ընդդէմ էին դորան շատ փորձեր։
Ոչ մեծ հանդէսներ, ոչ այլ խրախճանք
Կարող չէր նորան հաղորդել ծիծաղ.
Նա որոնում էր մի ներքին վարանք,—
Ի՞նչպէս կարող էր լինել նա ուրախ։
Եւ ցրտասառոյց խաւար դագաղի
Երբեմն ճակատին ալեկոծւում էր,
Եւ կծու խայթը ներքին տանջանքի
Խաղաղ րոպէք թունաւորում էր։
Ոչոք չգիտէր հարցանել նորան,
Ի՞նչ է պատճառը այդ դառն դրութեան.
Եւ համր կուրծքից ոչ ձայն, ոչ հնչիւն
Չէր գալի վշտի բացայայտութիւն։
Բայց թէ խորամուխ հայւացք ձգէին,
Փոքր առ փոքր նշմարանք ցաւի
Գուշակում էին, որ նա վշտակիր
Սրգում է կորուստն հարազատ ազգի։
Նա տեսանում էր, որ անօրինակ
Ոգևորութեամբ ներշնչւած ցեղեր
Կեանք են նւիրում, որպէս նահատակ,
Մահաբեր դաշտը ծածկում են զոհեր։
Նա տեսանում էր և իտալական

Շաղկապեալ սիրոյ միութեամբ կնքած
Յաջողակ գործը, և գարիբալդեան
Զէնքի յաղթութիւն, այնքան հռչակւած։

Փրկութեան Քրիստոսն յորդորիչ ձայնով
Ընթացաւ ահա ազգերի միջին.
Զարթեց բռնաւոր, նորոգւած ոգով—
Ողջունեց սիրով հասարակ գործին։

Քայլում է դրօշն մեծահոգութեան,
Թափւում է արիւն հայրենասիրի
Իրաւունք, պատիւ, նշանք ազգութեան,
Վերականգնում են, որպէս մի կաղնի։

Ո՜վ ձայն Աստուծոյ —և աշխատեալներ
Գալիս են հանգչել մեծ վաստակներից.
Երկրպագութիւնք, դափնի պսակներ
Բերում են նոցա ամենայն կողմից։

Լուսաւորութիւն, որպէս արեգակ
Հարազատ հողի երկնակամարին,
Սկսում է սփռել ճառագայթարձակ
Եւ ուսում, և կեանք, և բախտ մեծագին...

Բայց Հայոց ազգը—տխուր անապատ...
Անբոյժ նետերով խոցւած վիրաւոր.
Խաւար, նիւթապաշտ, երկչոտ և վհատ,
Սիրող չարութիւն և փառք անցաւոր։

Ահա՛ որպիսի մտածութիւններ
Խոր շարժում էին Լևոնի հոգին.
Նա մինչև անգամ միջոց չունէր,
Որով ձեռնտու լինէր իւր ազգին։
Եւ սորա համար առաւ նա իւր ձեռն

Այս միակ միջոց—որոշեց ջրել
Բիւր սկզբունքներ այն կորստաբեր,
Որով հայի կեանքն իսպառ էր խախտել։

ԳԼՈՒԽ II

(Հատուած)

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼԵՌՆԵՐ

Եւ յառաջ Լեռն։ Սարեր, հովիտներ
Անհետանում են նորա աչքերից․
Մի չնաշխարհիկ բացւում է պատկեր
Սպիտակափառ Կազբէկի գլխից։
Սպիտակ կատարն բարձր լեռների,
Կարծես, երկնքի դիպչում են ամպին
Եւ ձիւնից հիւսած թագ ադամանդի
Պճնում են նոցա հպարտ գագաթին։

Եւ քարանձաւից արծիւ մենաւոր
Թեւերը լայնած՝ գիտէ սաւառնել
Այնքան անթափանց և այնքան հզօր,
Մինչև հեռամուխ աչքերից կորչել․

Ի՜նչ գեղեցկութեամբ փռւում են դաշտեր
Հայեացքի առջև նորատես մարդի,
Ոսկի հասանքով գոյն գոյն ծաղիկներ
Ծօճւում են, որպէս խաղացքն տաւակի։

Անհագին ժայռեր և ապառաժներ,
Ծածկւած լուսով նոր արշալուսի,
Ցրւած են այստեղ։ Մարգագետիններ
Առոգւած ցօղով հանդէս են գալի։
Յառաջ և յառաջ,—և ոչ մի վայրկեան

Չէ կանգնում Լեռն․ Թեքւում են սարեր,
Ծածկւում են կողնիք․—և նոր տեսարան,
Նոր փոփոխութիւն, և նոր հրաշքներ․

ԳԼՈՒԽ IV

(Հատուած)

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Թէ կամիս տեսնել Արարչապետի
Հրաշագեղ գործը ու ճշմարտութիւն,—
Ե՛կ Հայոց աշխարհ․ առաջին օրի
Նա կառաջարկէ քեզ գեղեցկութիւն։
Ի՛նչ ակնահաճոյ տեսարաններով
Առատաբախշւած են դաշտավայրեր․
Ի՛նչ խնկանկար բուսականներով
Խնկահոտում են այստեղ հովիտներ։
Կախւած է գոհարն—ողկոյզ խաղողի,
Ծորում է հիւթը սաթի շիթերով,
Եւ սիրուն թռչնակ մի գաղտագողի
Հիւսում է բոյնը այստեղ մեծ հոգսով։
Փայլում է դեղին—կարմրագեղ ծիրան․
Քօղարկւած կանաչ թփերի հովով,
Լցւած է այստեղ ներդաշնակութեան,
Նոր այգ աւետող կաքաւի երգով։
Վառւում է չքնաղ, ոսկեփայլ նուռը,
Որի նեկտարով արձակւում է լայն
Թաթար խաների դրախտի դուռը,
Երբ անոյշ բուրմամբ ծխւում է կալեան։
Հոյակապ աշխարհ․ այստեղ վառ սալոր․
Այստեղ սերկևիլ՝ խոնարհած երկիր․

Տերեւի տակից ժպտում է խնձոր,
Մի թուշը ոսկի, միւսը կարմիր.
Ես երգ եմ երգում, գոհ է իմ հոգին.
Մեղմ խոխոջում են անհոգ առուներ.
Ինձ նկարում է նոյա ապակին
Վառ այգեստանի քաջառողջ բերքեր.
Բիւր պտուղների յաջողուած խառնուած,
Բիւր ծաղիկների բիւր գունով հիւսուած.
Թէ արձակ հովիտ, թէ ամայի ձոր
Եւ ամէն տեղ այդ զարդեր մեղրածոր.

ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ

ՊԷՊՕ

(ԿՕՄԵԴԻԱ)

ԱՐԱՐՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

(ՀԱՏՒԱԾ)

Տեսիլ 14

ՊԷՊՕ, ԱՐՈՒԹԻՆ

ԱՐՈՒԹԻՆ. Հը, ու՞ր իս էկել, ախպէր.

ՊԷՊՕ. Ա՛յ, համեցէք նստի՛։ (Ինքը մօտ քաշելով մի աթոռ, նստում է).

ԱՐՈՒԹԻՆ. (Նստելով խշտեակի վրա, առանձին)։ Իմ տանը սա է մօհբաթ անում ինձ։ (Պէպօին)։ Ախր, էս չախն ու՞ր իս էկել։

ՊԷՊՕ. Կուշտը քաղցածին ի՞նչ է հարցնում... Բօղազս մի՛ զուս կտրի, ա՛ղա Արութին. թէ էս սըհաթիս չիս տա, վարցկ կ'օնիս, վուր ինձ ապանիս էստի էւէտ։

ԱՐՈՒԹԻՆ. Թէ իքմին պարտ իմ, ախպէր, ըմա գէմարթլէբի։ Ու՞մ փուղն իմ կերել, վուր քու փուղն ուտիմ... Ինչոր բարաթ էիր ասում... Գթո՞ր, բերել ի՞ս։

ՊԷՊՕ. (առանձին, կրծքին խփելով)։ Հ՞մ... (Բար-

ձըր)։ Բարաթը չկայ. խօ գիդիս. դուն քու դաւթըրներումը գթա՞ր թէ չէ։

ԱՐՈՒԹԻՆ. Իմ դաւթըրներում շատ պտռտեցի, հա՛մ Աստծու, ամա մէ ասօ էլ չըգթայ ձիզ համա։

ՊԵՊՕ. Բաս ի՞նչ անինք հիմի։

ԱՐՈՒԹԻՆ. Ի՞նչ պիտի անինք. դուն քիզ համա, 'ես ինձ համա։ (Գրպանից հանում է սաթէ համրիչը և գցում)։

ՊԵՊՕ. Վո՞ւնց թէ՝ դուն քիզ համա, 'ես ինձ համա։ Բաս քու մա՞կուկը պա՞րտ չիս ինձ։

ԱՐՈՒԹԻՆ. Ախպէր, ի՞նչ պիտի պարտենամ. բարա՛թ դուն չունիս, դա՛ւթրումս 'ես վունչիչ չունիմ գրած, ի՞նչ պիտի պարտենամ քիզ։

ՊԵՊՕ. Բաս քո սրտի դաւթրումն էլ վո՞ւնչիչ չըկայ գրա՞ծ։

ԱՐՈՒԹԻՆ. Սրտի դաւթարը վո՞ւրն է։

ՊԵՊՕ. Բաս քու խղճմտանքը վո՞ւնչիչ չէ ասում քիզ, էլի. խօ գի՛դիս, վուր պարտիս։

ԱՐՈՒԹԻՆ. Վուր գիդենամ, խօ կու տամ, էլի՛. էլ ո՞ւր իմ խօսեցնում։

ՊԵՊՕ. Բաս Գիքօն ո՞ւր է ասում... Նրա հալալութինը գիփունանքը գիդին։

ԱՐՈՒԹԻՆ. «Մէլամ», ասում է, «թա՛ւլիսի կուդի մօխըլանա մօծամէթ։»*)

ՊԵՊՕ. Աղա Արութին, վերիւը խօ Աստուծ կայ ու քու սիրտն էլ է կարթում, իմ սիրտն էլ, մըր Աստծէմէն ձեռը մի՛ վիկալնի։

ԱՐՈՒԹԻՆ. Ի՞նչ շառիր իս մօզօնում գլխիս, ախ-

---

*) Վրացերէն է.—Աղուէսն իր պոչը բերեց վկա։

պէր. օմքին լաէ՝ հէնց կու գիդենայ դուրթ իս ասում։

ՊԵՊՕ. Դուն գի՛դիս վուր դուրթ իմ ասում։ Քու վուրթիկերանց արևը սաղաղա խղճա՛ միզ։ Էտ փուղը 'ես ինձ համա չիմ ուզում...

ԱՐՈՒԹԻՆ. (խօսքը կտրելով)։ Տէր ողորմած Աստուած։

ՊԵՊՕ. (շարունակելով)։ Մո՛ւլափ, մո՛ւլափ, ինչըրու վիրչն ա՛նգաճ դի. էտ փուղով իմ քուրը նշնած էր. խոստացել ինք, պլոլինք տա, ու թէ էս սահաթիս չուլինք, բերա թո՛ղնում ին, ուրիշ ախչիկ ին ուզում էս գիշիր։ Ախար, մէ Աստծու այեաղ դատաստանը միտդ բի, է... խօ քիզ էլ կու խօսեցնին էնդի, ինձ էլ. ի՞նչ ջուղաբ կու տաս, վուր չիս տալի։

ԱՐՈՒԹԻՆ. Փի՛է... (Մտածմունքի մէջ է ընկնում)։ Այեաղ դատաստանը գիդենայ վուր դրուստ միտս չէ էտ պարտկը։

ՊԵՊՕ. 'Ես ասում իմ դրուստն, էլի՛, ինձ չիս ավատում։

ԱՐՈՒԹԻՆ. Վա՛, էտ վո՞ւնց կուլի, Պէպան. ամեն մարթ վուր գայ ու էտէնց խօսի, տասը միլիօն էլ վուր ունենամ, մէ օրումը կու հատնի։ Չէ, ախպէր, միր առուտրի հէսաբը էտէնց չէ։

ՊԵՊՕ. (վեր կենալով տեղից և գլխարկը ծածկելով)։ Բաս չի՞ս տալի, էլի։

ԱՐՈՒԹԻՆ. Պարտկով կի վունչիչ տալացու չիմ, ախպէր. ամա քուր իս մարթու տալի, ջո՛ւխտ ա՛ճկիս։ (Ծոցից հանում է պօրտմօնէն։) Ըա՛հա. (թըղթադրամ տալով։) Վարցկ բան է, բռնէ, ախպէր։

ՊԵՊՕ. (գլխարկը վեր առնելով, գլուխ է տալիս)։

Ա՛յ, Աստուծ վուրթիքդ զօրացնէ։ (Առնում է փողը և գլխարկը ծածկում)։

ԱՐՈՒԹԻՆ. Է՛տ հինգ թումա՛ն... համբրէ։ (Պէպօն զունտուում է)։ Դրուստ հինգ թուման է... Հինգ թուման էլ, գուքնօքս ա՛նց կացի, էնդի կըտան. էս սահաթիս օմքին կու ղրգիմ։ Գնա՛, ախպէր, Աստուած բարի վայելումը տայ։

ՊԵՊՕ. (փողին նայելով և շփոթուած)։ Հինգ թուման ու հինգ թումա՛ն... (Լռութիւն) Մնա՞ցածը..., Ախար, իմ քուիր համա հարուր թուման ինք խոստացի։

ԱՐՈՒԹԻՆ. 'Ես ինչ անիմ, վուր խոստացիլ իք. բէհէսապ նամազուլ իք արի, վուր խոստացիլ իք. ո՞ւմ փուղն էիք խոստանում, վուր խոստացիլ իք։ Մարթ իր լհէքի զօրա կու ձքէ վո՞տը թէ չէ։ Դուք էլ վուր հարուր-հարուր թումնիր իք խոստանո՞ւմ, էլ ուրիշն ինչ անէ։ Էս ինչ խարաբ էլաւ աշխարհքն, ա՛խպէր. էլ օչովու համա չափս ու ձիւ չկայ։

ՊԵՊՕ. Մեր բանը մինք գիդինք, պարուն, ձեր բանը դուք. խոստացիլ ինք, մեր փուղն ինք խոստացի, քեզ ինչ դաւի։

ԱՐՈՒԹԻՆ. Խոստացիլ իս ու տար իրան տու, էլի, էլ ինչ իս ուզում։

ՊԵՊՕ Ի՛ս տու, վուր տամ, է. ախար, էս վուր տալիս իս, մասխարա իս գցո՞ւմ, թէ ինչ խաբար է։

ԱՐՈՒԹԻՆ: Ա՛րի ու սրապէններուն վա՛րցկ արա։ Տօ, ինչո՞վ չիս իմանում, վուր վունչիչ պարտ չիմ 'Ես ձիս ու էտ էլ, ինչոր տալիս իմ. հոքուս համա բախշում իմ։

ՊԵՊՕ. Բա՛խշում իս... Գանա 'ես մի՞սկատ իմ, էկիլ իմ օղորմութին իմ ուզում քիմէն. 'Ես իմ

հա՛լխն իմ ուզում, իմ հա՛խը. ինչ կ'օնիմ 'ես քո բախշիշը։

ԱՐՈՒԹԻՆ. Չիս ուզի ու էստի տու, ինձ պէտկը զու քայ։ Ախկատ ու հմպարտ, վուր կ'օսին, էս է, ա՛յ։ Բի՛, էլի՛, բի՛, ինչ իս թամաշա անում։

ՊԵՊՕ: Բաս թամամ չիս տալի, էլի՛։

ԱՐՈՒԹԻՆ. Տօ, գժուիլ իս, թէ ինչ խաբար է. ինչ իս ուզում ինձմէն։ Զոռով պա՞րտկ կու՛լի աշխարքումը՝ շլինքս իս գցո՞ւմ։

ՊԵՊՕ. (առաջ գնալով)։ Սրա օրթում կի թէ պարտ չիս, օրթում կի, էլի՛. մա՛րթ կու՛լիս՝ օրթում կ'ուտիս։

ԱՐՈՒԹԻՆ. Օ՛րթում, հա՛ւատ, Ա՛ստուծ, (Պէպօն զարհուրանք է արտայայտում), 'Երգինք, իմ վուրթկերանց արիւը գիդենայ, վուր վունչիչ պարտ չիմ...

ՊԵՊՕ. (զայրացած)։ Ա՛յ, Աստուծ ու 'Երգինք խռով կենայ գլխիտ։ (Խփելով փողը Արութինի երեսին)։ Հը՛, բռնէ, ա՛ձկդ դի,, կնգատ համա իմքին կ'ունենաս առնելու։

ԱՐՈՒԹԻՆ. (աղաղակելով և տեղից վեր թռչելով)։ Օտկեցէք, ղարաո՛ւլ, սպանեցին, մորթեցին... Ո՞վ կաք էտի...

Ներս են թափւում՝ ձախ դռնից Էփէմիան, աջ դռնից Սամսօնը, հագնուած և զարդարուած, ինչպէս պատկերել էր Էփէմիան երրորդ տեսիլում, իսկ դիմացի դռնից երկու այլ ծառայ ֆրակով և սպիտակ ձեռնոցներով։ Տեսարան։

ԱՐԱՐՒԱԾ ԵՐՐՈՐԴ

(ՀԱՏՒԱԾ)

Տ ե ս ի լ 12

ԱՐՈՒԹԻՆ, ՊԵՊՈ

ՊԵՊՈ. (Ներս է գալիս աջ դռնից, առաջին արարւածի հասարակ հագուստով և գլխարկը ծածկած. Տեսնելով Արութինին, ապշում է)։ Վա՜, դուն էստի՞։

ԱՐՈՒԹԻՆ. (գլխարկը վերցնելով, դնում է սեղանի վրա)։ Հա՛, հէնց 'ես. ինչ ես արմընում։

ՊԵՊՈ. Դանա դու ինքդ չես արմընո՞ւմ, վուր էստի ես, 'ես վո՞ւնց չարմընամ... Մէ ասա, ինչ քամին է բերի քեզ էսթէնը, էս ինչ բարի հրեշտակ է մտի սրտումդ, էս ինչ չար սատանայ բոթի քեզ դէսը։

ԱՐՈՒԹԻՆ. Ղօնաղի մօհբաթ չես գիդացի, Պեպօ։

ՊԵՊՈ. Դո՛ւն՝ իմ ղօնա՞ղ. էրեսդ խէչը հանէ. Քեզ վրա մինձ դուշման չունիմ 'ես աշխրքումը, ու դո՛ւն իմ ղօնա՛ղ։

ԱՐՈՒԹԻՆ. Նստի, հալա հէնց ապրիս։

ՊԵՊՈ. Դուն նստած ես, էլի՛. 'ես էսէնց էլ լաւ իմ։ Մէ ասա՝ ինչ ես ուզում... Թէ ձուգն տանելու ես էկի, եանդլիշ ես. (Դառը ժպիտով և հեգնօրէն), դռդաղա է։

ԱՐՈՒԹԻՆ. Պեպո՛ն... որի, մխալէր, բարիշինք։

ՊԵՊՈ. (ծաղրելով)։ Ծմքին խօ չէ՞ ադօթի քեզ, աղա Արութին։

ԱՐՈՒԹԻՆ. Ադօթիլ ին թէ չին ադօթի, 'ես քեզ ասում իմ, որի բարիշինք։

ՊԵՊՈ. Իմ բարիշիլը ինչի՞ս է հարկաւոր, աղա Արութին. դուն մինձ մարթ, 'ես մէ խիղճ օղորմելի, դուն հարուստ. 'ես աղքատ... (հեգնօրէն։) Վախենում ես, վուր իմ մագիէր քեզ չըղըգին բերթը՛. թէ ճանիրդ գողում է ինձմէն։

ԱՐՈՒԹԻՆ. Տօ, 'ես ուզում իմ քեզ լաւութին անի։

ՊԵՊՈ. Ինչ ձեռնէմէտ էկաւ, խօ որիր. փող էիր պարտ՝ հաշա կերար, էկայ տունդ՝ խնդրելու, տանէմէտ դուս արիր, վերջը բերթն էլ իս ըրգէլ տալի, ուրիշ ինչ լաւութին պիտի դուս գայ ձեռնէմէտ, աղա Արութին։ Էկիլ ես վուր մախարա ըը-ցիս ինձ։ Հերի՛ք է, հերիք, պարոն... Գնա՛, գնա՛, Աստծուն փառք տու, վուր իմ տանն ես ու իմ օ-ճըաքի տակն ես գթնւում, թէ չէ էս էրած սրտիս վրա էլ սաղ չէիր պրծնի իմ ձեռնէմէն։ Միտս է... խօ միտդ է՝ ինչ հանգի դուս արիր ինձ քու տանէմէն... Էն արարմունքը քեզ կու սազ գէր, քեզ, աղա Արութին։ 'Ես քեզ խնդրում իմ, համեցէք գնա, չափա քաշէ, վըլկաց. յօրէս կու տանիս ինձ, էլ վուխտ չըլկայ, ուզում իմ մօրս ու քուրս բարովլիմ։

ԱՐՈՒԹԻՆ, Տօ, էտ բանը իմ ձեռին չէ, էլ չըրգէլ տամ քեզ բերթը, ուրիշ ինչ ես ուզում։ (Պեպօն զարմացած նայում է. իսկ դրսից լսւում է։)

ԿԱԿՈՒԼԻ (ձայնը) Էկա՛ւ։

Տեսիլ 13

ՆՐԱՆՔ, ԳԻՔՕ, ԿԱԿՈՒԼԻ

ԳԻՔՕ. (դիմացի դռանը, Կակուլուն)։ Կորիլին, կորիլ. օչով չկան։

ԿԱԿՈՒԼԻ. (ներս գալով. Գիքօին)։ Տօ, ա՜յ, Պէպօն, ի՞նչ ես ասում։

ԱՐՈՒԹԻՆ. (տեսնելով Կակուլուն, առանձին) Է՛լի էս պաժարնին։

ԳԻՔՕ. (ներս գալով)։ Էս վո՞ւնց էկար, Պէպան, վուր չըտեսայ։ (Արութինին) Ա՛յ, ա՜ղա Արութին, հիմի կու տամ։ (Մատնացոյց անելով Պէպօին)։ Թէ կ'ասէ։։ Է՛տ դուն, էս սա։

ՊԷՊՕ. Էս ի՞նչ խաբար է, չիմ իմանում։

ԿԱԿՈՒԼԻ. Վա՜, աղա Արութինի մօտ դուն ես խօսում ու մի՞զ ես հարցնո՞ւմ։ (Գիքօն անցնում է բեմի ձախ կողմը։)

ՊԷՊՕ. Սրա ասածը խօ ուփրօ չիմ իմանում։ (հեզնօրէն)։ Էկիլ է՝ բա՞րիշինք կ'ասէ։

ԿԱԿՈՒԼԻ. (ծաղրելով)։ Հա՜... (Հեզնօրէն գըլուխ տալով Արութինին)։ Բօս մէ լաւ շնորհակալութին անինք։

ԱՐՈՒԹԻՆ. (առանձին, շփոթւած)։ Մըտի՛կ էս լըփին։

ԿԱԿՈՒԼԻ. (Պէպօին) Տօ, թէ՞ ասում էիր, թէ լաւ մարթ չէ, կ'ասէ, աղա Արութինը։

ԱՐՈՒԹԻՆ. (առանձին)։ Անսկա՜մ։

ՊԷՊՕ. Ի՞նչ գիդիմ, խղճպտանքը զարթիլ է։ (Գիքօն շարժում է գլուխը։)

ԿԱԿՈՒԼԻ. (ժպտալով, Պէպօին)։ Իժում վո՞ւնց է բարիշում. կէսը տալիս է։ (Մօտենալով Արութինին։)

’Ե՛ս քու մարթ աստղին... (Բռունցքը բարձրացնելով։) Դէ հոքիտ պա՛հ տու ու սէրթուկդ հանէ։

ՊԷՊՕ. Կա՛կուլի, Կակուլի։

ԳԻՔՕ. (Պէպօին)։ Տօ, բան-հոքի չանէ։

ԿԱԿՈՒԼԻ. (Արութինին, ձախ ձեռքով նրա օձիքից)։ Ը՛, քու... (Աջու բռունցքը ցոյց տալով։) Դէ՛ գնա, հնա՛ հիմի՛ գա՛նգատ արա..,

ԱՐՈՒԹԻՆ. Տօ, գժւիլ ի՞ս, էյ։

ՊԷՊՕ. (հեռացնելով Կակուլուն Արութինից։) Մո՛ւլափ, Կա՛կուլի, էտ մարթութին չէ։

ԱՐՈՒԹԻՆ. (շորերը ուղղելով)։ Արի՛ ու ձիգ պէծներուն լա՛ւութին արա։

ԿԱԿՈՒԼԻ. (Պէպօի ձախ կողմը կանգնած, Արութինին)։ Լաւութի՛ն... (Պէպօին։) Ի՛նչ պառուղ է... Դիփ հոքու էղնէն է ման գալի, ա՜յ, գա՛նա չիմ դիգի... (Նայելով Արութինին, գլուխը շարժում է։) Աըբա բարաթը չէր լուս ննգի, տեսնեմ թէ վո՛ւնց էր լաւութիւն անում։

ՊԷՊՕ. Ի՞նչ բարաթ։

ԿԱԿՈՒԼԻ. (նոյն դրութեամբ)։ Վա՜, բաս չէր չիս գիդի՞. ա՜յ, էս աղա պարնի բարաթը։ (Գնալով դէպի Գիքօն)։ Տօ՛, բի՛ է։ (Պէպօին)։ Էս սհաթիս ճամփին վուր իմացաւ, ռանգ ու ռունգը գնաց խղճինը... Ուզում էի էնդի էւէտ դրա ժամը դուս բերի. ամա վուխտը չէր. քու կուռն էի շտապում... (Գիքօին։) Դէ՛, չո՛ւստ արա, Գիքօ ջան, է։

ԳԻՔՕ. (գրպանից հանելով մուրհակը։) Մո՛ւլափ, մո՛ւլափ, տիրուչը տամ։ (Մուրհակը մօտեցնում է Պէպօին)։

ԿԱԿՈՒԼԻ. (մուրհակը խլելով Գիքօի ձեռքից և տալով Պէպօին։) Վո՞ւնց է, վո՞ւնց, լօթին։

ՊԷՊՕ. (տնտղելով մուրհակը, հետզհետէ զարմանում է։ Տեսարան)։ Էս էրազ է...

ԿԱԿՈՒԼԻ. Էրազ ու կէս է։

ԳԻՔՕ. Ղո՛ւրդ վուր էրազ, Պէպօ ջան։ Ձի՞ս գիդի թէ...

ԱՐՈՒԹԻՆ. (առանձին)։ Է՛սղաղա էլ խայտառակութի՜ն։

ԿԱԿՈՒԼԻ. (մատնացոյց անելով Գիքօին)։ Սրան թէ խօսեցիր, Պէպօ, օխտը գիւղի հէքիաթի վրա էրգար է էտ բարաթի առակը։

ՊԷՊՕ. Ախար, էս վո՞ւրդանց լուս ննգաւ։

ԳԻՔՕ. (նստելով տախտի վրա և պատրաստւելով պատմելու)։ Ա՛յ, Պէպան ջան, վունց էր...

ԿԱԿՈՒԼԻ. (Գիքօի բերանը ձեռքով ծածկում է)։ Սո՛ւ, սո՛ւ, դուն սո՛ւս, Գիքօ ջան... (Պէպօին)։ Էտ վունցոր լուս ննգաւ, իժում կ'օսինք. ամա դուն էտ անաստծուն թամաշա արա։ (Արութինը սարսափելի դրութեան մէջ է)։

ՊԷՊՕ. (թեթև նայում է Արութինին և իսկոյն դարձնելով հայեացքը մուրհակի վրա, վերցնում է գլխարկը և դէպի երկինք աղաղակում։) Գոհանամ Քի, Տէր. դիփունի դատաստանի վրա Քու դատաստանն է էլի զուրթ... (Գլխարկը ծածկելով, Գիքօին) Սիրտս իմանում էր ախար, է...

ԳԻՔՕ. Գիդէ Աստուծ, վո՛ւր 'ես միզ չունիմ, Պէպօ ջան... (Կակուլին ձեռքով իր բերանը ծածկելով, յորդորում է Գիքօին լռել)։

ՊԷՊՕ. Իմ բարի հրեշտաքն իս դուն էս ահաթիս, Գի՛քօ ջան, ի՞նչ իս ասում։ (Լուռ և անշարժ նայում է Արութինին երկար ժամանակ)։

ԳԻՔՕ. (նոյն միջոցին, ցածր ձայնով)։ Բարի

հրեշտաքն ըլի քու՛ քօմագը, վո՛ւրթի։ (Երկար լռութիւն։ Պատկեր։)

ՊԷՊՕ. (ծանր մօտենում է Արութինին և մուրհակը ցոյց տալիս։) Էս կու ճանչնա՞ս, ա՛ղա Արութին... (Երկար և լուռ նայելով երեսին, գլուխը շարժում է)։ Հիմի իմ իմանում քու էստի գալը... Լա՛յլիղ արիր, հա՛... թէ կ'ասէ վունչինչ պարտ չիմ, թէ վուր օրթում հաւատ արիր, թէ վուր վուրթկերանցով օրթում կերար... Է՞տ է քու օրթումն, էլի՛, Է՛տէնց իս ամեն օր օրթում ուտում, էլի՛. Է՛տով իս աշխրքին խափում, էլի՛, էտ օրթումներով իս մօդ արի էսղադա փուղն, էլի՛... Ա՛յ, խռո՛վ կենայ քիզ քու օրթումները... Ամեն մի քու օրթումը օ՛րթունք կտրէի ջանումդ ու ջանդ ծակծկէի, վուր հոգիդ էգէբա երգնքի լուս տեսնէ... (Աւելի մօտենալով)։ Զէ՛, չիս ամաչո՞ւմ... Խճպտանքը խօ դարդակ քամի է քիզ համա։ (Մուրհակը նորից ցոյց տալով)։ Է՞ս ի՞նչ է, ի՞նչ, էստուրն ի՞նչ կ'օսիս։ Է՛ստումէն էլ չի՞ս ամանչո՞ւմ, էս քու կո՛տրած ձեռովչի՞ս գրի... Ասա՛, չէ, էլի՛, ասա՛. քիզ համա խօ հաշա ուտիլը հիշտ է... Ա՛յ, պե՛դինը մտնիս էտ քու պատւական շուրերով։ (Արութինը սաստիկ շւարում է։)

ԿԱԿՈՒԼԻ. (որ գտնւում է բեմի ձախ կողմը, գլխարկը վեր առնելով բացականչում է)։ Հա՛-ջան, ա՛ղա Արութիւն... (Գլխարկը նորից ծածկելով և փոխելով)։ Թօբա՛, թէ 'ես ուզենամ քու տիղն ըլիմ։

ԳԻՔՕ. (վեր կենալով)։ Էս Շուշանն ի՞նչ էլաւ։ (Գլուխը շարժելով դուրս է գնում ձախ դռնից)։

Տեսիլ 14

ՆՐԱՆՔ, առանց ԳԻՔՕԻ

ԱՐՈՒԹԻՆ. (ուշքի գալով, Պեպօին)։ Տó, ի՜նչ իս սարսաղ-սարսաղ դուս տալի, վուր միտս էր էլի, խó կու տէի, էլի՜...

ԿԱԿՈՒԼԻ. (ձեռքերը բարձրացնելով) Հը՜մ... (Ձեռքերը վայր թողնելով, խփում է միմեանց և յետոյ բթամատները քամարին հագցնում։)

ՊԵՊՕ. (Արութինին)։ Միտդ չէր... Խե՜ղճ օղորմելի. եարաբ վո՞ւնց իս մէ թիքա հաց ճարում ուտելու... Ո՞ւմն իս խափում, ո՞ւմը... Էս սահաթիս դատամէրի մօտ հաշա կերար, վուր քու օրումն էլ ինձ վունչինչ չիս պարտեցի, վուր սուտ շաւիր իմ մօղօնում՝ ես քիզ վրա. էս սահաթիս ձեռք քաշեցիր էտու թըղթերը ու հի՞մի միտդ չէր... ու հի՞մի բարիշինք... Էսղադա վուխտ չարչըրեցիր, էսղադա գլուխտ անիծիլ տուիր ու հի՞մի լաւ մարթացար մէբա՞շ... Վախենում իս, հա՞. վախենում իս վուր աշխարքը չիմանայ քու ղալթաբանդութինը, հա՞. վախենում իս, վուր դատամէրի մօտ էրեսդ չըսևինայ, հա՞... Քու մտկումը, թո՛ղ միզ մօտ սևինայ մենակ, ինչ հաջաթ, մինք անմիղ օմքնիր ինք, ո՛վ ինչ կու իմանայ. օղօնդ խալխը չիմանայ, օղօնդ քու ննդըրտիքը չիմանան... (Ձայնը փոխելով։) Գնա՛, գնա՛, ասում իմ։ (Կակուլին ազատելով ձեռքերը, սպառնալի կերպով խփում է կրծքին)։

ԱՐՈՒԹԻՆ. Խօ պըծա՛ր, ա՛խպէր, ինչ ասելու ունէիր, խօ ա՛սիր, սիրտդ խօ յի՛դ էկաւ։ Հիմի մի ինձ

լսէ. 'ես քիզ ասում իմ՝ փո՛ւղիրտ առ, բարաթս իս տու ու քու բիրթը մօշլա անիմ էս սհաթիս։

ՊԵՊՕ. Կ՚էհամ բիրթը, կ՚էհամ, ես քու օղորմութինը չիմ ուզի ու (մուրհակը ցոյց տալով) էս փուղիրը առանց քու ասելու էլ կու առնիմ։

ԱՐՈՒԹԻՆ. Գժութին մի՛ անի, Պեպան։ (Ձեռքը ծոցը տանելով) Ա՛ռ էս փուղիրտ, ասում իմ։ (Պեպօն գլուխը շարժում է։) Ա՞ռ, մէ իմքին էլ աւելցընիմ. հը՛, ինչ ղադա... մէ հինգ թուման աւելցընի՞մ... տա՞ս... քսա՞ն...

ՊԵՊՕ. (որ արհամարհանքով նայում էր Արութինին, դիմում է Կակուլուն) Մտիկ իս անո՞ւմ, Կակուլի, մտի՛կ իս անում սրա՛ն. ինչըրու հիմի գլուխկն էլ չէր տալի ու հի՛մի աւելցնում էլ է... Է՛սէնց ին, ա՛յ, դի՛փ էսէնց ին. քանի օչով չի գիդի, հախն էլ ին կտրում ու 'եփոր վախենում ին՝ բանն աշքարանայ, էսէնց ին ժաժ գալի, ա՛յ, էսէնց, վուր անումներուն չըկտրուի միթամ։

ԿԱԿՈՒԼԻ. (Պեպօին, ցածր) Տó, ա՛ռ, ա՛ճկը հանէ, ու դրա ջիգրը (բռունցքը ցոյց տալով) 'ես գիդիմ, էտ դա՛լբի դուլաբինը։

ՊԵՊՕ. (շարունակելով, Արութինին) 'Ես քու բախշիշը չիմ ուզում, աղա Արութին, տար ա՛ճկդ դի, ամա ա՛ճկդ կու հանիմ ու գլուխկը, վուրդիոր ինձ էս սահաթիս ստեցիր, էնդի կու առնիմ, էնդի. թո՛ղ դիփունքը ճանչնենան՝ ինչ մարթ էլ իս, թո՛ղ դիփունքն իմանան քու արարմունքը։ Էտու համա բիրթը կի չէ, թէկուզ հո՛ւրումը կու նստիմ, հո՛ւրումը։

ԿԱԿՈՒԼԻ. (Պեպօին) Ը՜, 'ես քու խիլքին ինչ ասիմ։

ԱՐՈՒԹԻՆ. Բանէ, խուսն թուման աւելցնիմ։

ԿԱԿՈՒԼԻ. (մոտենալով Արությունին) Բա՛, 'ես բարիշեցնիմ։

ՊԵՊՕ. (Կակուլուն յետ մղելով) Քու բան չէ, Կակուլի։

ԿԱԿՈՒԼԻ. (յետ գնալով) Ա՛յ սարսա՜ղ։

Տ ե ս ի լ 15

ՆՐԱՆՔ, ՇՈՒՇԱՆ, ԳԻՔՕ

ՇՈՒՇԱՆ. (ղաթիբայով դիմացի դռան շէմքում, Գիքօին, որ հետևում է նրան) Վա՛յ, քոռանամ 'ես, ղուրթ իս ասո՞ւմ, Գիքօ... (Առաջ գալով և ղաթիբան վերցնելով) Վո՞ւրդի է, վո՞ւրդի, միր հոքեհանը... Սա է՞... (Ղաթիբան դցում է տախտի մոտ դըրած աթոռի վրա)։

ՊԵՊՕ. Սա՛, սա՛, դէդի. ա՛յ միր բախտաւորողը։

ՇՈՒՇԱՆ. (Արությունին, շտապով) Ա՛յ, գեդինը պատուի ու քիզ դէւէր տանէ։ Ի՞նչ իս ուզում միզմէն, ի՞նչ... Փուղէներուս հաշա կերար, ախչկաս բօղազը դուս կտրեցիր ու հիմի Պէպօիս էլ բի՛րթն իս ղըրգիլ տալի՛. ջի՛գր իս մտի միզ հի՛դ. ուզում'ս վիր ջնջի մի՛զ։

ԱՐՈՒԹԻՆ. (առանձին) Կարկուտ է՞ անիծածը.

ՇՈՒՇԱՆ. (շարունակելով) Ա՛յ վի՛ր ջնջւի քու անունը, քանդւի ու բրիշակ ըլի տուն ու տիղ. քու անամութ կնգայ սրտումը ընգնի էն կրակը, ի՞նչ կրակ միր սիրտը գցեցիր։

ԿԱԿՈՒԼԻ. (առանձին և կիսաձայն) Ամի՛ն։

ՊԵՊՕ. Դէ՛դի, դէ՛դի։ (Կէկէլը ներս մտնելով աջ

դռնից, դամբի մօտ, անկիւնումը, լուռ լաց է լինում)։

Տ ե ս ի լ 16

ՆՐԱՆՔ, ԿԷԿԷԼ

ԱՐՈՒԹԻՆ. (Շուշանին) Խի՛լքի արի, խի՛լքի, ի՞նչիր իս ասում, դէ՛դի։

ՇՈՒՇԱՆ. (շարունակում է, դառնալով միւսներին) Ո՞ւր է. սիւցրիք էրէսը՞. ո՞ւր է էն սիւ ու մութ բարաթը։ (Արությունին)։ Հի՛մի էլ կ'օսիս, վուր վունչինչ պարտ չիս մի՛զ։

ԱՐՈՒԹԻՆ. Պարտ իմ, պա՛րտ իմ ու տալիս իմ, ուրիշ ի՞նչ իք ուզում։

ՇՈՒՇԱՆ. Բաս բի՛րթն էլ ո՞ւր իս ղրգիլ տալի։

ԱՐՈՒԹԻՆ. Բի՛րթն էլ չըղրգիլ տամ, փո՞ւղն էլ տամ, մէ իմքին էլ աւելցնիմ. ամա վուր չէ բարիշում, 'ես ի՞նչ անիմ։ (Շուշանը զարմացած նայում է)։

ՊԵՊՕ. (Արությունին)։ Հի՛մի բարիշի՞նք, հիմի՛.. (Մօտենալով Կէկէլին)։ Իժում սրան ի՞նչ իս ասում... (Ձախ ձեռքով բռնում է Կէկէլի աջ ձեռքը և առաջ բերում)։ Սրա մօտ վո՞ւնց իս բարիշում։ Սաղ-սաղ գերեզմանը դրիր, օրն ու ումբրը խաւրեցրիր, կինքը հառամ արիր. վո՞ւնց իս բարիշում սրա հիտ, վո՞ւնց... վո՞ւնց իս յիտ տալի սրան, ինչոր խլեցիր սրամէն, վո՞ւնց։ Քու վուխչ հարստութիւնն էլ չի կանա լաւցնի էն եարէն, ինչ եարա բաց արիր դուն սրա սրտումը... Գնա՛, գնա՛, էլ մինք բարիշելու վունչինչ չունինք։ Գնա, քանի սաղ իս աշխրքումը,

սրա արտըսունքները մի՛տդ բի, վուր էգէքա էլ մէկէլներուն չանիս, ինչ սրան արիր։

ԿԷԿԷԼ. (աշխատելով ազատել ձեռքը)։ Թո՛ղ, Պէպօ ջան, թո՛ղ... (Պէպօն թողնում է նրա ձեռքը). Իրան սիւցու իր բարաթը։ (Անցնում է Պէպօի աջ կողմը)։

ԳԻԲՕ. (Պէպօին.) Տօ՛, հա՛զիր բարիշի՛ս։

ԿԱԿՈՒԼԻ. (Շուշանին)։ Ասա՛ դէդի, վուր բարիշի, հազիր ուել է տալի։

ՇՈՒՇԱՆ. Իր ա՛ճկը դնէ ուելլին, թաք Պէպօիս ձեռը չըտայ։

ԿԷԿԷԼ. Բա՛րիշի, Պէպօ ջան, բա՛րիշի։

ԱՐՈՒԹԻՆ. Ա՛րի կտրուի, Պէպան, բարիշինք։

ՊԷՊՕ. Ա՛րի բարիշինք, ա՛րի... Ա՛րի գնանք, վուրդիոր ինձ էս սահաթիս սանցիր, ա՛րի մէկ էնդի էս բարադը շանց տամ, մէ էրևայ վուր սուտը 'ես չիմ, թէգուզ գըրխկէմէն էլ մէ խմբին քեզ փէշքաշ... Ա՛րի, էլի, ա՛րի։

ՇՈՒՇԱՆ. (Արութինին) Գնա՛, գնա՛, վունցոր միր էրեսը սևցրել ես, թո՛ղ հիմի քու էրեսը սևնայ։

ՊԷՊՕ. Ա՛րի, էլի։

ԱՐՈՒԹԻՆ. Էտ վուր ուզենամ, խօ էպաղա էլ ազանչաք չիմ անի։

ՊԷՊՕ. Ը՛ը, գո՛ւզ, ուստա՛կ...

ԿԱԿՈՒԼԻ. (առանձին, կիսաձայն և կրծքին խփելով)։ Վա՜յ մէ... (Դիմացի դուռը դրսից բախում են։ Լռութիւն։ Մօտենալով դռանը և փոքր ինչ բաց անելով, որպէս թէ մէկի հետ խօսում է) Հա՛, էստի է։ (Առաջ վազելով։ Պէպօին։) Տօ՛, գժուիլ իս, քո՛ւթան արա, պրիստա՜վն է։

ԿԷԿԷԼ. ՊԷՊՕ. ՇՈՒՇԱՆ։ (միասին) Պրիստա՞վը։

ԳԻԲՕ. Պրիստա՞ւը։ (Պատկեր)։

ՊԷՊՕ. Հաջաթ չէ, կ'էհամ բիրթը, կու նստիմ. ճնդի խօ չիմ մեռնի... Մի օր կու ազատվիմ ախար, էլի՛. վադէն հեռու չէ... Տա՛տին իս խափի էսէնց, ջա՛ղի գլխին իս օյին էկի էսէնց, շա՛տի բօղազն իս դուս կտրի էսէ՛նց, ու 'ես Պէպօն չիմ ըլի, թէ դիփունանց ջիգրը չիմ հանի... Սա՛ղ աշխրքումը էրեսդ մուր կու շինիմ... Մնա՛ս բարով, դէդի... Մի՛ լաց ըլի, Կէկէլ, Աստուած օղորմած է, խղճի ճա՛կտին էսէնց է գրած։ (Կակուլին կամաց-կամաց գնում կանգնում է դամբի մօտ և հետըդհետէ սպառնալի դիրք ընդունում)։

ԱՐՈՒԹԻՆ. (սաստիկ շփոթւած և առանձին) Ի՞նչ անիմ հիմի։

ԿԷԿԷԼ. (փաթաթուելով Պէպօին) Մի՛ գնա՛, Պէպօ ջան, մի՛ գնա։

ՇՈՒՇԱՆ. (Պէպօին, միւս կողմից) Ի՞նչ իս անում, Պէպօ. իրան սիւցու էտ սև ու մութ բարաթը։

ՊԷՊՕ. Իրան տամ վուր սրա մասխարէն դառնա՛մ... վուր խալխի աճկումը սուտը 'ես էրևամ, դուրթը սա՛... բիրթի ահու գլուխս ծախի՛մ... Չէ՛, դէդի, էս բարաթը Աստուած թուր է դէվէր դրդի ինձ համա... Էսով պիտի կտրիմ 'ես սրա գլուխը... Քա՛նի քի պէսնիրն ին էրւում սրա ձեռնէմէն, քա՛նի (մատնացոյց անելով Կէկէլին) սրա պէսնիրն ին լաց ըլում, քա՛նի ինձ պէսնիրն ին տանջւում... Մէկն էլ է չիմաց անէ աշխրքին սրա արամունքը՛, մէկն էլ է հարայի չըկարենայ տա՜, վուր էս մարթը, վուրին դիփունքը գլուխ ին տա՛լի, դիփունքը յարգում ին ու պատւում ին, դիփունքը մինձացնում,

փառաւուրում ու ’երգինք բացրացնում... սա էն մարթն է, վուրի համա վունչին բան սուրփ չկայ աշխրքումը... Հիմի լաց ըլէք. ինչդադա գուզիք... Խղճի լացը հալբաթ էնդուր է ստիղծի Աստուծ, վուր հարուստի արարմունքը լւացւի։ (Դուռը կրկին բախում են)։ Մնաք բարով... (Դուրս է գնում դիմացի դռնից)։

Տ ե ս ի լ 17

ՆՐԱՆՔ, առանց ՊԷՊՕԻ

ՇՈՒՇԱՆ. (լաց լինելով Պէպօի յետեւից)։ Պէպօ, Պէպօ...

ԿԷԿԷԼ. (նոյնպէս և նոյն միջոցին). Պէպօ ջան, Պէպօ ջա՜ն... (Նետուելով դէպի տախտը. բերանքսիվայր ընկնում է մութաքի վրա և բարձրաձայն հեկեկալով լաց լինում մինչև վերջը)։

ԱՐՈՒԹԻՆ. (սեղանի մօտ կանգնած, երկու ձեռքով գլխին խփելով և առանձին)։ Էս ի՛նչ բան էկաւ գլխիս։ (Մնում է անշարժ)։

ՇՈՒՇԱՆ. (Արութինին, ծառանալով իր ամբողջ բարձրութեամբ)։ Ե՛րգնային Թագաւուրն անէ քու դատաստանը... (Դուրս է վազում Պէպօի ետեւից)։

Տ ե ս ի լ 18

ՆՐԱՆՔ, առանց ՇՈՒՇԱՆԻ

ԳԻՔՕ. (Արութինին)։ Էս էիր ուզում, էլի՛, հէր օխնած։ (Մօտենալով Կէկէլին) Մի՛ լաց ըլի, Կէկէլ ջան, մի՛ լաց ըլի, Աստուծ ողորմած է։ (Գըլուխը քարշ գցած դէպի Կէկէլը, նոյնպէս մնում է անշարժ)։

ԿԱԿՈՒԼԻ. (մօտենալով Արութինին, ձախ ձեռքը կանթ արած, իսկ աջը վայր թողած)։ Հիմի, ա՛դա Արութին, մնացինք ’ես ու դո՛ւն... (Մնում են անշարժ։ ՊԱՏԿԵՐ։ Վարագոյրն իջնում է կամաց-կամաց)։

ՐԱՖՖԻ

ՍԱՄՈՒԷԼ

ՈՒՐԱՑՈՂԸ ԻՒՐ ՏԱՆ ՇԷՄՔԻ ՎՐԱ

Հադամակերտի մայր եկեղեցում սուրբ պատարագը դեռ շարունակւում էր կատարուել։ Չը՛ նայելով, որ այսօր ոչ տօն էր և ոչ կիւրակէ, բայց եկեղեցին լիքն էր բազմութեամբ։

Բեմի հանդէպ, եկեղեցու աջակողմեան անկիւնում, չորս մարմարեայ սիւների վրա, բարձրանում էր մի վերնատուն։ Նրա դէպի սեղանը նայող կողմը կտրուած էր ոսկեզօծ վանդակապատով։ Բեհեզեայ ծանր վարագոյրները միջից ծածկւում էին այդ վանդակապատը և բոլորովին անտեսանելի էին կացուցանում վերնատան ներսը։ Այդ դրութեան մէջ՝ վերնատունը մի փակւած, առանձնացած մատուռի ձև ունէր։

Նրա յատակը ծածկւած էր թանգագին օթոցներով, իսկ մի կողմում դրած էր փառաւոր բազմոց։ Մի տիկին, սուրբ պատարագի խորհրդի համեմատ, երբեմն ծունր էր դնում և աղօթում էր, երբեմն կանգնում էր և երկրպագութիւն էր տալիս, երբեմն նստում էր բազմոցի վրա և խորին ուշադրութեամբ լսում էր։ Նա ներկայացնում էր մի մարմնացած ջերմեռանդութիւն, որ հոգւով և սրտով յափշտակւած էր սուրբ պատարագի արարողութիւններով։

Ոչ մի ժամանակ նրա կրօնական զգացմունքները այնքան վառւած չէին եղել, և ոչ մի ժամանակ նա իւր աղերսն ու պաղատանքը այնպէս սրտագին փափագներով չէր մատուցել սուրբ սեղանի առջև, որպէս այսօր։ Տխուր էր նա, որպէս մի սգաւոր, և ջերմ արտասուքը հեղեղի նման թանում էր նրա վշտալի դէմքը։

Դա Վասպուրականի տիկինն էր—Մեռուժանի մայրը։

Մատուռը, որի մէջ առանձնացած էր նա, Արծրունիների տոհմային աղօթարանն էր։ Արծրունիները, կառուցանելով Մայր եկեղեցին, այդ մատուռը յատկացրին իշխանական տանը։

Նա վերկացաւ, երբ սուրբ խորհուրդը աւարտելուց յետոյ՝ ներս մտաւ պատարագիչ քահանան և մատոյց նրան սուրբ սեղանի նշխարքը։ Նա ընդունեց, համբուրելով տէր հօր աջը։ Այժմ նրա վշտահար դէմքը և այն հեզ աչքերը, որոնց մէջ փայլում էր անհուն բարութիւն, ստացան աւելի խաղաղ և աւելի մխիթարական արտայայտութիւն, որ միայն պատկառանք էին ազդում։—Այդ յարգելի անձնաւորութիւնը միացնում էր իւր մէջ՝ բարձր ազնւականի բարձր յատկութիւնները՝ բարեպաշտ քրիստոնեայի առաքինութիւնների հետ։

—Ի՞նչպէս է, տէր հայր, քո դստեր առողջութիւնը,—հարցրեց նա,—ինձ ասացին, որ շատ հիւանդ է։

—Այժմ բաւական լաւ է, տիկին,—պատասխանեց քահանան։—Վտանգը անցաւ։ Իմ դուստրը իւր

կեանքով պարտական է քեզ, տիկին։ Եթէ Դրան բժիշկը այնպէս շուտ ուղարկած չը լինէիր, գուցէ ես կը զրկուէի իմ միակ զաւակից։ Աստուած քեզ երկար կեանք տայ, տիկին, որ այլոց կեանքի համար այդքան հոգ ես տանում։

—Այդ իմ պարտաւորութիւնն է, տէր հայր, բոլորը իմ զաւակներն են,—ասաց նա։—Ցաւում եմ, որ այս օրերում այնքան զբաղուած պէտք է լինեմ, որ չը պիտի կարողանամ անձամբ այցելել հիւանդին։

—Նա շատ կուրախանայ, տիկին։ Քո բարի սրտը բոլորովին կը փարատէ նրա ցաւերը։

Քահանան հեռացաւ, երբ ներս մտան երկու նաժիշտներ, որոնք սպասում էին մատուռի նախագաւիթում։ Նրանք, բռնելով տիկնոջ աջ և ձախ թևերից, սկսեցին ցած իջեցնել վերնատան քարեայ սանդուղքներից։

Պատարագից յետոյ ժամաւորները դարձեալ մնացին եկեղեցում, որովհետև, Դրան աւագ երէցը պէտք է քարոզ կարդար։ Բայց տիկինը չը սպասեց, և առանձին դռնով դուրս եկաւ եկեղեցուց։

Փողոցում սպասում էր մի փառաւոր պատգարակ. իւր երկու նաժիշտների հետ մտաւ նրա մէջ, և սպիտակ ջորիները սկսեցին հանդարտ քայլերով տանել։ Պատգարակի առջևից ոտով գնում էին երկու զինուած շաթրներ կարմիր զգեստներով, իսկ ետևից՝ մի խումբ դրանիկներ, նոյնպէս ոտով։ Եկեղեցու դռնից սկսած, դէպի փողոցի երկարութիւնը, ձգուել էին երկու շարք աղքատներ, որոնք խորին փափագով սպասում էին այդ բարեխնամ պատգարակին։ Տիկնոջ հազարապետը քսակը ձեռին մօտե-

ցաւ նրանց և առատաձեռն ողորմածութեամբ բաժանեց չքաւորների սովորական պարէնը։

Խորին յարգանքով անցնում էր պատգարակը քաղաքի փողոցներով, և ամեն ոք մեծ թէ փոքր, հասակաւոր թէ երեխայ, կանգնում էին, գլուխ էին տալիս, և ամենայն սիրով ողջունում էին։ Անցնում էր հասարակաց մայրը և երկրի Տիկինը։ Նա, պատգարակի դռնակից գլուխը մեկնելով, բոլորի ողջոյնը ամենայն բարեսրտութեամբ ընդունում էր,

Պատգարակը կանգ առեց իշխանական հոյակապ ապարանքի հանդէպ, որի մուտքի աջ և ձախ կողմերում հսկում էին երկու թևաւոր վիշապներ։ Դա Արծրունիների յատուկ նշանն էր, որ դրուած էր լինում նրանց բոլոր քաղաքների և պալատների դռների մօտ։ Տիկինը ցած իջաւ և, շրջապատուած իր սպասաւորներով, ներս մտաւ։ Նա անցաւ փառաւոր, կանաչազարդ բակերի ճեմելիքներով, որ հովանաւորուած էին դարևոր ծառերով, և մտաւ իր սենեակը։ Սպասաւորները հեռացան, նրա մօտ մնացին նաժիշտները միայն, որոնք փոքր ինչ սպասելով և տեսնելով, որ իրանց տիկինը առանձին հրաման չունի, իրանք ևս հեռացան։

Առաջինը, որ ներս մտաւ տիկնոջ օրհնութիւնն առնելու, նրա հարսն էր—Մերուժանի կինը։ Մօր երկու ձեռքերից քարշ էին ընկած նրա երկու փոքրիկ երեխաները։ Նրանք մօտեցան, համբուրեցին տիկնոջ աջը։ Ամեն օր այդ սովորութիւնն ունէին, երբ նա վերադառնում էր եկեղեցուց։ Տիկինը հանեց իր բերած նշխարքը, բաժանեց և տուեց թէ երկու երեխաներին և թէ նրանց մօրը։ Երեխաները

որոնցից մէկը տղայ էր, իսկ միւսը աղջիկ, իրանց գողտրիկ ձեռիկները դրեցին տիկնոջ ծնկերի վրա և, իրանց փայլուն, հարցասէր աչքերը դարձնելով դէպի նա, հարցրին.

—Ինչո՞ւ տէրտէրի հացը այդպէս քաղցր է լինում, մամիկ։

—Դա Աստծոյ հացն է, զաւակներս, դրա համար այդպէս քաղցր է լինում,—պատասխանեց տիկինը, փայփայելով նրանց գանգրահեր գլուխները։

Նրանց մայրը ոտքի վրա կանգնած էր իր սկեսրոջ մօտ և համարձակութիւն չունէր նստելու։ Նազելի մի կին էր նա, չափազանց նրբակազմ և քնքոյշ։ Նա այնպիսի տպաւորութիւն էր գործում, կարծես ասելիս լինէր՝ մի՛ դիպչէք ինձ, կփշրուեմ ես։ Նա խօսում էր այն ժամանակ միայն, երբ սկեսուրը խօսեցնում էր, և ամեն անգամ նրա սպիտակ այտերի վրա նշմարւում էր մի թեթև կարմրութիւն։ Նա դեռ անմեղ օրիորդի ամօթխածութիւնն ունէր, իսկ հնազանդ հարսի՝ պատկառանքը։

Վասպուրականի Տիկինը այրի էր։ Նրա ամուսինը, Շաւասպ Արծրունին, շատ ժամանակ չէր, որ վախճանուել էր։ Այդ պատճառով, նա դեռ կրում էր իր գլխին սգաւորութեան քօղը։ Զրկուելով սիրելի ամուսնից, նա փոխարինում էր նրան, իր տան մէջ՝— իբրև մի պատրիարք, որի հեղինակութեանը ամենքը խոնարհւում էին, իսկ երկրի կառավարութեան մէջ՝— իբրև մի նահապետ։

Տիկինը Վահան Մամիկոնեանի (Սամուէլի հօրը) քոյրն էր։ Մամիկոնեան տոհմից էր և նրա հարսը — Մեռուժանի կինը։ Խնամութիւնները այդ ժամանակ սովորական էին հայոց մէջ, մանաւանդ նախարարների տների մէջ։ Եւ առաւելապէս Մամիկոնեան տան աղջիկները, իբրև մի շղթայ, կապում էին միմեանց հետ՝ ոչ միայն աւագ նախարարների տոհմերը, այլև թագաւորի տունը, այլ և Հայրապետական տունը։ Այդ տոհմի աղջիկներն էին, որ իրանց առաքինութիւններով զարդարում էին թէ նախարարների պալատները, թէ թագաւորի արքունիքը և թէ Հայրապետի վեհարանը։

—Նախաճաշիկդ պատրաստ է, ասաց հարսը։— Ի՞նչպէս կը հրամայէիր, այստեղ տան, թէ սեղանատանը։

—Ուտելու բնաւ ախորժակ չունեմ, սիրելի Վահանդուխտ,—պատասխանեց տիկինը։— Գիշերը շատ անհանգիստ էի, քնել չը կարողացայ։ Իսկ այժմ հիւանդի պէս եմ զգում ինձ. ականջներիս մէջ մի բան մրմնջում է, և ինձ այնպէս է թւում, կարծես, գլուխս իւր տեղումը չը լինի։

—Հանգստացիր մի փոքր. դու առաւօտեան շատ վաղ վերկացար։

—Ի՞նչպէս հանգստանամ... մի՞թէ կարող եմ հանգստանալ...

Նա նայեց հարսի գունաթափ երեսին և սարսափեց։ Մի գիշերուայ մէջ խեղճ կինը բոլորովին հալուել ու մաշուել էր։ Երևի, նա ևս չէր քնել, երևի նա ևս անհանգիստ էր... Ի՞նչ էր պատահել։

Այդ հոյակապ տունը, ուր միշտ երջանիկ լինելու համար ոչինչ թերութիւն չը կար, այսօր այնպիսի տխուր տպաւորութիւն էր գործում, որպէս թէ, սգաւորի տուն լինէր։ Բոլորի դէմքերի վրա նկարուած է մի անբացատրելի տրտմութիւն։ Ամենքը լուռ էին, ամենքը խորշում էին միմեանց

հետ խօսելուց։ Կարծես, կար մի բան, որից վախենում էին, մի գուցէ մինը միւսին յիշեցնելով, աւելի ևս սաստկացնէ նրա սրտի ցաւերը...

Երէկ լուր ստացւեցաւ, որ Մերուժանը գալիս է։ Այսօր ճաշից յետոյ նա պէտք է մտնէր իւր իշխանութեան Ոստանը։ Թէ մօր համար՝ և թէ ամուսնի համար՝ ի՜նչ աւետիս, ի՜նչ բարի համբաւ կարող էր այնքան ուրախալի լինել, քան թէ այդ, որ նրանց սիրելին, երկար բացակայութիւնից յետոյ, վերադառնում է իւր տունը։ Բայց նրանք, փոխանակ ուրախանալու, տխուր էին։

Նա վերադառնում էր, որպէս ուրացող, որպէս դաւաճան։ Եւ մայրն ու ամուսինը պէտք է գրկէին նրան, պէտք է սրբէին նրա ճակատից ճանապարհի փոշին։—Այդ ծա՜նր էր, մահւան չափ ծա՜նր էր թէ մօր և թէ ամուսնի համար։ Նրանց արդէն յայտնի էին Վանայ աղէտալի անցքերը և իրանց արիւնակցի—դժբախտ Համազասպուհիի ցաւալի նահատակութիւնը։ Նրանք գիտէին և ա՜յն, թէ այլ ևս ի՜նչեր պիտի անէր Մերուժանը...

Մայրը վաղուց լսած էր որդու չար դիտաւորութիւնները, բայց նա ամենայն զգուշութեամբ ծածկում էր իւր հարսից, վախենալով, որ խեղճ կինը, որն առանց դրանց ևս շատ տկար էր իւր առողջութեամբ, չը պիտի կարողանար դիմանալ այդ հարւածներին։ Բայց երկար գաղտնիք պահել՝ անկարելի էր, որովհետև այսօր պէտք է գար նրա ամուսինը։ Այդ էր պատճառը, որ նրան փոքր ինչ նախապատրաստելու համար, երէկ երեկոյեան կանչեց իւր մօտ և յայտնեց բոլորը։

Վանայ ցաւալի կործանումից յետոյ, որպէս

յայտնի է, Մերուժանը միայն իւր թիկնապահների փոքրիկ խմբով կարողացաւ ազատել իւր քաղաքացիների վրէժխնդրութիւնից։ Եւ մտածելով, մի գուցէ իւր Ոստանը մտնելու ժամանակ նոյն վտանգներին հանդիպի,—նա շտապեց կէս ճանապարհից յառաջագոյն մի մարդ ուղարկել իւր մօր մօտ, որպէս զի նախապատրաստէ որդուն ընդունելու։ Այստեղ, իւր տան մէջ, դիտաւորութիւն ունէր փոքր ինչ դադար առնել, հանգստանալ մինչև կը հասնէին պարսկական նոր զօրքերը, որոնց մեծ անհամբերութեամբ սպասում էր նա։

—Ես հրամայել էի՝ ինձ մօտ կանչել քաղաքապետին,—ասաց տիկինը։—Ցանկանում էի իմանալ, արդեօք ի՞նչ կարգադրութիւններ է արել նա։

—Նա այստեղ է,—պատասխանեց հարսը։—Դեռ դու եկեղեցուց չէիր վերադարձել, նա շատ վաղ եկել սպասում էր. Ի՞նչ կարգադրութիւններ պէտք է անէր նա։

Հարցը մնաց առանց պատասխանի։ Այդ միջոցին ներս վազեց մի ուրախ, վառվռուն օրիորդ, որը անդադար իւր վրա նայելով, մօտեցաւ, կանգնեց տիկնոջ առջև և, իւր լի բերկրութեամբ աչքերը դարձնելով դէպի նա, հարցրեց.

—Նայի՜ր, մայրիկ, այդ հագուստով լա՞ւ է։

Դա Մերուժանի քոյրն էր, զարդարւել էր, պատրաստւել էր եղբօրը հանդիպելու համար։ Տան մէջ ամենքը տխուր էին, նա միայն ուրախ էր։ Մայրը նայեց նրա վրա, աչքերը լցւեցան արտասուքով։ Նա խօսք չըգտաւ պատասխանելու իր դստերը։ Ի՞նչ ասէր, ինչպէս վշտացնէր նրա մէջ այն ջերմ սէրը, որ ունէր նա դէպի եղբայրը։ Կարօղ էր բացադրել

նրան, թէ կեանքի մէջ կան այնպիսի հանգամանքներ, որ բաժանում են քրոջը եղբօրից, մօրը որդուց։ Օրիորդը թէև մեծ աղջիկ էր, բայց այդ մասին շատ փոքր հասկացողութիւն ունէր։ Նա լսել էր շատ բան, նրան ասել էին բոլորը, բայց դեռ նա սիրում էր եղբօրը։ Դա այն աղջիկն էր, որին Սամուէլի մայրը նշանել էր իր որդու համար, չընայելով, որ Սամուէլի սիրտը պատկանում էր Ռշտունեաց Օրիորդին—Աշխէնին։

Տաւասպուհին, — այսպէս էր նրա անունը,— նկատելով մօր տխրամած դէմքը, ընկաւ նրա ծնկների վրա և, նրա դողդոջուն ձեռքերը սեղմելով իր բոցավառ շրթունքների վրա, բացականչեց.

—Մայրի՛կ, սիրելի՛ մայրիկ, ինչու ես լաց լինում, եթէ դու լաց լինես, ես էլ լաց կլինեմ...

—Մենք էլ լաց կըլինենք,—ձայն տուեցին երկու երեխաները, որոնք ապշած կերպով նայում էին այդ սրտաշարժ տեսարանի վրա։

Երեխաների մայրը առեց նրանց և այրուած սրտով դուրս եկաւ դահլիճից։

Տիկինը համբուրեց իր դստերը, փայփայելով վեր բարձրացրեց և ասաց նրան.

—Գնա՛, սիրելի զաւակս, ասա՛, որ քաղաքապետին իմ մօտ կանչեն։ Ես նրա հետ շատ կարևոր խօսելիքներ ունեմ։ Պատուիրի՛ր սպասաւորներին, որ ոչ ոքի չեմ ընդունում։ Իսկ եթէ տէր հայրը գալու լինի, նրան իմ մօտ թողնեն։

Օրիորդը կրկին անգամ համբուրեց մօր ձեռքերը և հեռացաւ։

Դահլիճում մնաց միայն տիկինը։ Ոչ մի ժամանակ նրա պայծառ խելքը այնպէս մռայլուած չէր եղել, որպէս այս առաւօտ։ Ոչ մի ժամանակ նա այնպէս անճարացած և այնպէս կաշկանդուած չէր եղել անհնարին դժուարութիւնների մէջ, որպէս այս առաւօտ։ Որքան մտածում էր, մի որև է ելք չէր գտնում։ Մօր զգացմունքները մաքառում էին նրա մէջ։ Ի՞նչպէս ընդունել որդուն,—մոլորեալ որդուն, բայց և—սիրելի որդուն։ Դիցուք թէ ինքն յանձն առնէր հաշտուել նրա հետ, այն յուսով, որ իր ազդեցութեամբ կարող կը լինէր ուղղել նրան, դարձնել նրա չար ճանապարհից։ Բայց կարո՞ղ էր հաշտուել նրա հետ ժողովուրդը։ Նա՛, որ յայտնի պատերազմ էր սկսել ժողովրդի դէմ, կա՛մ հնազանդեցնելու նրան իր չար կամքին և կա՛մ սրի ճարակ տալու նրան,—կարո՞ղ էր հաշտուել նրա հետ ժողովուրդը։ Այդ դա՛ռն, այդ ցաւալի՛ մտքերն էին ալէկոծում նրան, երբ ներս մտաւ քաղաքապետը և հեռուից մի քանի անգամ գլուխ տալով, մօտեցաւ և լուռ, շուարեալ դէմքով կանգնեց տիկնոջ բազմոցի մօտ։

Չնայելով տիկնոջ մի քանի անգամ կրկնած խնդիրքին, որ նստէ, և չնայելով իր հասակին, այդ պառաւեալ ծերունին դարձեալ կանգնած մնաց ոտքի վրա, պահպանելով աւանդական մեծարանքը դէպի յարգելի տիկինը։

—Ի՞նչ արեցիր, Գուրգէն,— հարցրեց տիկինը։

—Ամեն ինչ կարգադրուած է, տիկին,— պատասխանեց ծերունին տխուր ձայնով։ —Ամեն ինչ այնպէս կը կատարուի, որպէս դու հրամայեցիր։

Նա սկսեց մի առ մի պատմել, թէ ընդունելութիւնը ինչ կերպով կը կատարուի, կամ ինչ կարգադրութիւններ են եղած։

—Դու կարծում ես, Գուրգէն, որ անկարգութիւններ չե՞ն պատահի,— հարցրեց տիկինը, դեռ և ոչ բոլորովին հանգստանալով ծերունու տուած տեղեկութիւններով։

—Ես ո՛չ միայն կարծում եմ, այլ հաւատացած եմ, տիկին, որ ոչ մի անկարգութիւն չի պատահի։ Իրաւ է, մեր քաղաքացիք սաստիկ զայրացած են, բայց նրանք կը զայրանան, իսկ երբեք տիրասպան չեն լինի։ Այդ ես գիտեմ, տիկին, հաստատ գիտեմ...

Վերջին խօսքերի միջոցին նա իւր գլուխը մի քանի անգամ դրական կերպով շարժեց, և ապա շարունակեց.

—Ի՞նչ եղաւ տէր հայրը, ուշացաւ տէր հայրը։ Նրա քարոզը թէև փոքր ինչ երկար տևեց, բայց բոլորովին հանգստացրեց ժողովրդին։ Աւետարանից, մարգարէներից, առաքեալներից շատ օրինակներ բերեց։ Եկեղեցուց դուրս գալուց յետոյ, բազմութիւնը չէր հեռանում. խմբուած էին բակում, դեռ տաքացած կերպով վիճում էին։ Տէր հայրը մօտենում էր այս և այն խմբին, խօսում էր, խրատում էր և հանգստացնում էր։ — Այն ուրիշ բան կը լինէր, տիկին, եթէ իշխանը պարսից զօրքերով մտնէր իւր քաղաքը, այն ժամանակ անհնար կը լինէր բնակիչներին զսպել։ Իսկ այժմ գալիս է մի քան մարդիկներով միայն, — և հայ մարդիկներով։

—Բայց հայութիւնը ուրացած մարդիկներով... ընդհատեց տիկինը դառնացած կերպով։

Ներս մտաւ Դրան երէցը։

—Ահա և տէր հայրը — ձայն տուեց ծերունին։

Այդ ալեւոր քահանան, որ դեռ պահպանել էր իւր առոյգ հասակի թէ եռանդը և թէ կենդանու-

թիւնը, իշխանական տան երէցն էր։ Նա մօտեցաւ, ողջունեց և կանգնեց տիկնոջ մօտ։

—Նստի՛ր, տէ՛ր հայր, — ասաց նրան տիկինը։

Նա նստեց և սկսեց հաղորդել իւր արած կարգադրութիւնները։

Վահանդուխտ տիկինը, իւր երկու երեխաների հետ, դուրս գալով դահլիճ, ուղիղ դիմեց իւր սենեակը։ Երկու երեխաներից մեծը տղայ էր, իսկ փոքրը աղջիկ։ Տղան հասկանում էր, որ այն օր գալու էր հայրը, և դեռ յիշում էր նրան, երբ նա գնաց Պարսկաստան։ Երբ նստեցին՝

—Մայրի՛կ, — հարցրեց տղան, իւր փոքրիկ թեւիկներով բարշ ընկնելով նրա պարանոցից, — հայրիկը այսօր կը բերէ՞ ձին։

—Ի՞նչ ձի, — ասաց մայրը տխուր ձայնով։

—Չե՞ս իմանում, երբ հայրիկը գնում էր, ասացի՝ ինձ համար մի ձի բեր, պստիկ ձի. նա պաչ արաւ, ասաց՝ կը բերեմ, շատ պստիկ ձի կը բերեմ, ա՛յ, էսքան։ — Նա ձեռքը բարձրացրեց ձիու մեծութիւնը ցոյց տալու համար։

—Մենք ձիաներ շատ ունենք, զաւակս,— պատասխանեց նրանց մայրը։

—Մերոնքը մեծ են, շա՛տ մեծ են, ես պստիկ ձի եմ ուզում, որ ինքս հեծնեմ։

—Ծառաները կը նստացնեն քեզ։

—Ես խօ Նուշիկ չեմ, որ ծառաները բռնեն ու դնեն ձիու վրա. ես ուզում եմ ինքս նստել։

Նուշիկ փաղաքշական ձևով կոչում էին նրա քրոջը, որի իսկական անունը Միհրանոյշ էր։

Եղբօր նկատողութիւնը, երևի, վիրաւորեց փոքրիկ Նուշիկին, որը ծտի նման թռաւ գահաւորակի

կողքում դրած բարձերից մէկի վրա և, կոլոբիկ ոտիկները շարժելով, ասաց.

—Տեսնո՞ւմ ես, ինչպէս հեծայ։

Մայրը երկուսին էլ գրկեց, համբուրեց, յետոյ յանձնեց դայակներին, որ տանեն դրսում ման ածեն, որպէս զի իրան չը խանգարեն։ Ինքը մնաց միայնակ։

Դժբախտ հանգամանքների դժբախտ ամուսին... Որդիքը ուրախ էին հօր գալուստով, իսկ ինքը ուրախանալ չէր կարող։ Նա սիրում էր իր ամուսնին. նա իր մխիթարութիւնը միշտ նրա մէջ էր գտել։ Իսկ այժմ ինչպէս սիրել «ուրացողին», ինչպէս սիրել չարագործին։ Այդ միտքը կատաղութեան չափ այլեկոծում էր նրան,—այլեկոծում էր, որովհետև սիրտը և միտքը չէին հաշտւում միմեանց հետ։

Իր զաւակներին հեռացնելուց յետոյ, նա գտնւում էր հոգեկան խորին տագնապի մէջ։ Ներքին կռիւը, զգացմունքների սաստիկ մաքառումը՝ դրել էին նրան տենդային հրաբորբոք դրութեան մէջ։ Ահա մի ժամ ևս... ահա երկու ժամ ևս... քաղաքի մունետիկը պիտի քարոզէր բօթաբեր գալուստը, և ամեն ինչ պիտի վճռւէր նրա համար...

Նրա դրութիւնը նմանում էր դատապարտեալի վերջին րոպէներին, որ օրհասական յուզմունքների մէջ սպասում է. ահա բանդի դռները բաց կըլինեն, դահիճները կը մտնեն, և նրան կը տանեն դէպի կախաղանի ոտքը... Ինքը այդպէս պէտք է դիմէր այն մարդու գիրկը, որին ամբողջ աշխարհը մերժում էր։ Եւ նա պէտք է ողջագուրէր իր ամուսնին այն ձեռքերով, որ շաղախւած էին իր հարազատների անմեղ արիւնով։ Մի՞թէ նա չէր լինի հայոց կա-

նանցից ամենաթշւառը։ Բայց նա սիրո՞ւմ էր... այո, սիրո՞ւմ էր...

Նա ձեռքը տարաւ դէպի կուրծքը, սեղմեց բորբոքւած սիրտը, որ փոքր ինչ հանգստութիւն տայ ներքին վրդովմունքներին։ Արտասուքը հեղեղի նըման թափւում էին տառապեալ աչքերից, բայց սըրտի կրակը շիջուցանել չէր կարողանում։ Երկար այդ դրութեան մէջ տանջւում էր նա։

Յանկարծ վեր թռաւ և, որպէս մի խելագար, պղտոր աչքերը դարձրեց դէպի իր սենեակի չուրջը։ Ապշած կերպով նայում էր այս կողմ և այն կողմ, և իր անշարժ հայեացքով, կարծես, մի բան որոնում էր։ Մի քանի քայլ փոխեց դէպի դուռը, բայց իսկոյն կանգ առեց։ Դարձեալ, որպէս մի աներևոյթ զօրութիւնից առաջ մղւելով՝ փոխեց քայլերը, մօտեցաւ և, դողդոջուն ձեռքը մեկնելով, կողպեց դուռը։ Սկսեց՝ գիշերաշրջիկ լուսնոտի նման՝ դեգերել դէպի այս, դէպի այն անկիւնները։ Մօտեցաւ լուսամուտներին, ցած թողեց վարագոյրները։ Կրկին մօտեցաւ դրանը, ստուգելու, արդեօք փակւա՞ծ էր, թէ ոչ։ Նրա դէմքը այժմ խաղաղ էր. նա արդէն գտել էր մի միջոց, որ կարող էր հանգստացնել իրան։ Սկսեց նայել պատուհանները, սկսեց քրքրել բոլոր դարակները, որոնց մէջ պահւած էին իր իրեղէնները։ Բայց որոնածը չը գտաւ։ Նրա աչքին ընկաւ մի գեղեցիկ արկղիկ, որի մէջ պահւած էին իր կարեւոր պարագայքը։ Ուրախացաւ նա, որպէս մի մարդ, որ յանկարծ մի անսպասելի գանձ է գըտնում։ Վազեց դէպի արկղիկը, բացարեց, և նրա միջից դուրս հանեց մի փոքրիկ մկրատ։ Մի քանի րոպէ, այդ փայլուն գործիքը ձեռքում բռնած, հիա-

ցած կերպով նայում էր նրա վրա։ Նա գտաւ ցանկալի առարկան։ Դա կը հանգստացնէր նրան, և կը վճռէր՝ նրա սրտում անվճիռ մնացած տարակուսանքը—նրա զգացմունքների անհաշտ երկբայութիւնը...

Մկրատի սուր ծայրը նախ տարաւ դէպի բաբախող կուրծքը։ Բայց մինչև սիրտը մխելու համար բաւական կարճ էր։ Յետոյ բացարաւ և մօտեցրեց իւր կոկորդին...

Այդ միջոցին, կարծես, փրկութեան հրեշտակը բռնեց նրա ձեռքը։ Մկրատը բարկութեամբ մի կողմ նետեց, ասելով.«Ո՛չ, նա չարժէ, որ ես մեռնեմ նրա համար... Նա, այո՛, դաւաճանեց իւր հայրենիքին, բայց դաւաճանեց և—ինձ»...

Ի՞նչ զօրութիւն էր, որ այդպէս անսպասելի կերպով յեղափոխեց նրա միտքը։ Այն զօրութիւնը, որ ամէն կրքերից աւելի սաստիկ բռնանում է կնոջ զգացմունքների վրա—խանդոտութիւնը։

«Ես ճանաչում եմ նրան,—շարունակեց դառնացած կերպով,—նա այնքան ցած չէր, որ ուրանար իւր կրօնը, նա այնքան անգութ չէր, որ ոտնակոխ անէր իւր հայրենիքի բախտը, և նա այնքան փառամոլ չէր, որ նրան հրապուրէր Շապուհի խոստացած թագաւորութիւնը... Բայց նա այդ բոլորը յանձն առեց, և պարսից արքայի ձեռքում մի անարգ գործիք դարձաւ,—միայն նրա քո՛յրը առնելու համար... Ինձ ասում էին, որ նա սիրահարուած է Շապուհի քրոջ վրա, բայց ես չէի հաւատում... Այո՛, ես չէի հաւատում, որ նա այն աստիճան անհաւատարիմ կը գտնուի դէպի իւր երկու զաւակների մայրը, որ երկրորդ կին կը բերէ Արծրունեաց տան մէջ... Ի՞նչ կը լինի իմ դրութիւնը

այնուհետև... Ես պէտք է պարսից արքայազատեր աղախինը դառնամ և նրա մաշիկները շլտկեմ... Իսկ գեղեցիկ Որմիզդուխտը կը լինի ո՛չ միայն Վասպուրականի Տիկնանց Տիկինը, այլ ամբողջ Հայաստանի թագուհին... Իսկ ես... Ո՛չ, ո՛չ, չարժէ մեռնել նրա համար... Իսկ նա ինձ համար՝—արդէն մեռած է»...

Նստեց բազմոցի վրա, երկու ձեռքով ծածկեց երեսը, և կրկին ջերմ արտասուքը սկսեց հեղեղի նման թափուիլ նրա աչքերից. «Ա՛խ, Մերուժա՛ն, Մերուժա՛ն»... հառաչում էր նա, և դողդոջուն ձայնը խեղդւում էր դառն հեկեկանքների մէջ։

Մի քանի անգամ բաղխեցին սենեակի դուռը։ Վերջապէս, լսեց նա, վերկացաւ, սրբեց աչքերը, և անհաճութեամբ մօտեցաւ, բացարաւ դուռը։ Ներս մտաւ աղախիններից մէկը։

—Ամենքը պատրաստւում են, տիկին,—ասաց նա,—չե՞ս հրամայում՝ հագցնել քեզ։

—Մտիր հանդերձատունը, Սիրանոյշ, և դուրս բեր իմ սև զգեստները,—հրամայեց նա։

—Ինչո՞ւ սև, տիկին։

—Այսօր սո՛ւգի օրէ, Սիրանոյշ,—պատասխանեց նա վշտալի ձայնով...

Կէսօրից չորս ժամ անցել էր։

Մի խումբ ձիաւորներ, փոշու ամպերի մէջ կորած, ամենայն արագութեամբ արշաւում էին էին Արեբանոսից դէպի Հադամակերտ տանող ճանապարհով։ Որքան մօտենում էին քաղաքին, այնքան աւելի փութացնում էին իրանց երիվարների

ընթացքը։ Նրանց թիւը շատ չէր. մեկը ձիաւարում էր ամենից առաջ, որ ձեռքում տանում էր մի կարմիր դրօշակ, նրա ետևից գնում էր մի սպիտակ ձիաւոր, որ բոլորի գլխաւորն էր երևում, իսկ յետոյ ինն ձիաւորներ,—ընդամենը՝ տասն և մէկ հոգի։

Այդ գնում էր Մերուժան Արծրունին, գնում էր դէպի իր նախահարց Ոստանը—իշխանական մայրաքաղաքը—Հադամակերտ։

Այն կենդանի ճանապարհը, որով անցնում էր նրա ասպախումբը, և որը ամբողջ օրը լցուած էր լինում երթեւեկների ուրախ բազմութեամբ, այժմ բոլորովին դատարկ էր։ Ոչ ոք չէր երևում։ Այդ շատ զարմացնում էր Մերուժանին։ Նա անհանգիստ կերպով աչք էր ածում իր շուրջը։ Չէր փայլում հնձւորի մանգաղը, որ օրւայ այդ զովաբեր ժամուն աւելի եռանդով էր գործում. չէր լսւում հերկւորի երգը, որ կենդանացնում էր գեղեցիկ շըրջակայքը, և անհոգ հովւի սրինգն անգամ լռել էր, ոչ ինքն էր երևում և ոչ իր խաշինները։ Նրան այնպէս էր թւում, որ անցնում է անապատների միջով, ուր կեանքն ու գործունէութիւնը վաղուց արդէն դադարել էին։

Բայց նա այլ բան էր սպասում...

Նա սպասում էր, որ իր քաղաքացիք խուռն բազմութեամբ կը դիմաւորեն իրան, այդ ճանապարհի աջ և ահեակ կողմերը ծածկւած կը լինեն արանց և կանանց խումբերով, և բազմութիւնը ցնծութեան աղաղակներով ու նուագարանների հընչիւններով կը տանէ նրան մինչև իր իշխանական ապարանքը։ Բայց ոչ ոք չը յայտնւեցաւ։ Մինչև անգամ իր տոհմայիններից ոչ ոք չը դիմաւորեց

նրան։ Միթէ իր գալուստը յայտնի չէ՞ր նրանց։ Այդ մասին մի օր առաջ իմացում էր տւել իր մօրը։ Ուրեմն ի՞նչ էր նշանակում այդ ընդհանուր բացակայութիւնը մարդիկների,—այդ անապատը։

Այդ միտքը վրդովեցնում էր նրան և լցնում էր նրա ալէծուփ սիրտը մի խուլ տարակուսանքով, որ հետզհետէ կասկածի կերպարանք էր ստանում։ Յետ դառնալ՝ թոյլ չէր տալիս նրա անսահման անձնասիրութիւնը. իսկ առաջ գնալու համար՝ ոչինչ բարիք չէր սպասում. Գուցէ կը հանդիպէր իր քաղաքացիների ապստամբութեանը, գուցէ զէնքերը ձեռքում կը դիմաւորէին նրան... «Ինչ էլ որ պատահելու լինի, փոյթ չէ»,—մտածեց նա խորին դառնութեամբ, և վճռեց առաջ գնալ։

Վերջապէս, հասաւ նա քաղաքադռներին։ Նայեց դռան ճակատին, և սոսկաց։ Այդ հոյակապ դուռը, որի բարձր կամարները՝ ամեն մի հանդիսաւոր մուտքերի ժամանակ՝ զարդարած էին լինում ծաղիկներով ու պսակներով,—այժմ ներկայացնում էր մի տխուր տեսարան։ Դռան ճակատը պատած էր սև պաստառներով, իսկ վերևում փողփողում էին երկու սև դրօշակներ։ Այդպէս անում էին միայն այն ժամանակ, երբ երկրի իշխանի դագաղն էին ներս տանում։ Իսկ այժմ ո՞վ էր մեռելը... ու՞մ համար էր այդ սգաւորութիւնը...

Սրտի խորին բաբախմունքով ներս մտաւ նա։

Առջևից գնացող դրօշակակիր ձիաւորը առեց գօտիից քարշ ընկած շեփորը և մի քանի անգամ հնչեցրեց։ Նրան պատասխանեց կոչնակի ձայնը, որ երեք անգամ լսելի եղաւ Մայր եկեղեցու բարձրութիւնից։ Այդ ձայնը, որպէս Երկնքի սպառնական ձայնը, սարսափ ազդեց «ուրացողի» վրա...

Նա շարունակեց առաջ գնալ։

Ուրախ, աղմկալի Հաղամակերտը ներկայացնում էր մի մեռեալ քաղաք։ Փողոցներում ոչ ոք չէր երևում, չէին երևում և անասուններ։ Ո՛չ մի ձայն չէր լսւում, ո՛չ մի շշունջ անգամ չէր խռովում ընդհանուր գերեզմանական լռութիւնը։

Այն փողոցը, որով գնում էր նա, և որը ուղիղ տանում էր դէպի իշխանական ապարանքը, նրա վրա խիտ ծանր և սպանիչ տպաւորութիւն էր գործում։ Յատակը ծածկւած էր մոխրով։ Բոլոր տների դռները փակ էին, իսկ դռների ճակատները նոյնպէս պատած էին սև պաստառներով։

«Իմ քաղաքացիքը,—մտածում էր նա,—երես են դարձրել ինձանից... Նրանք իմ վրա նայել անգամ չեն կամենում... Նրանք ինձ մեռած են համարում,—այո՛, բարոյապէս մեռած»...

Բարկութիւնը խեղդում էր նրան, երբ մտաբերում էր վաղեմի ժամանակները։ Եղել էին օրեր, երջանիկ օրեր. երբ նա յաղթական փառքով վերադառնում էր պատերազմից, այդ փողոցի յատակը ծածկւած էր լինում ծաղիկներով ու կանաչ տերևներով։ Իսկ աժմ նրանց փոխարէն մոխիր էր ցանած։ Դռների ճակատները զարդարած էին լինում գորգերով, թաւիշներով, գոյնզգոյն կերպասներով և ամենագեղեցիկ գործւածներով։ Իսկ այժմ ամբողջ քաղաքը սուգ էր զգեցել։ Կանայք և աղջիկունք, ծեր և տղայ, տանիքներից ու լուսամուտներից ողջունում էին նրան։ Իսկ այժմ ոչ մի ձայն չէր լսւում։ Սկսեալ քաղաքադռնից, մինչև իր ապարանքը հասնելը, ամեն մի քայլում զոհեր էին մատուցանում նրա առջև։ Քահանայական դասը,

իւր ամբողջ սպասով, զգեստաւորւած ոսկեհուռ զգեստներով, խաչերով ու խաչվառներով առաջնորդում էին նրան, և օրհնութեան շարականներ էին երգում։ Ինքը շրջապատած էր լինում իւր աւագներով, իսկ առջևից տանում էին իշխանական տան նժոյգները, զարդարած ամենաթանգագին ասպազէնքով։ Իսկ այժմ դրանցից և ոչ մէկը չը կատարւեցաւ...

Նա հասաւ իշխանական ապարանքը, բայց դռները իւր առջև փակւած գտաւ։ Այդ սարսափեցրեց նրան։ «Ուրեմն ինձ մերժում է և իմ տունը, և իմ ընտանիքը»... մտածեց նա խորին, սրտատրոփ դառնութեամբ։

Այստեղ ևս նոյն տխուր, նոյն յուսահատական տեսարանը ներկայացաւ նրա առջև։ Իշխանական հոյակապ դռան փառաւոր կամարները պատած էին սև պաստառներով, իսկ նրա աջ և ահեակ կողմերում փողփողում էին երկու սև դրօշակներ։

Անհնարին խռովութեան մէջ՝ կանգնած էր նա հայրենական տան մուտքի առջև, և չը գիտէր ինչ անել։ Այդ ահարկու մարդը, որի համար աշխարհում ոչինչ դժւարութիւններ, ոչինչ արգելքներ չը կային, այժմ գտնւում էր բոլորովին անել և յուսակտուր դրութեան մէջ։ Մտածեց յետ դառնալ։ Բայց ինչպէս յետ դառնալ։ Ամօթը և նախատինքը խեղդում էին նրան։ Մտածեց բախել դուռը։ Իսկ եթէ բաց չանէին։ Եւ անպատճառ բաց չէին անի։ Այդ աստիճան արհամարհանք, այդ աստիճան զզւանք նա չէր սպասում մօրից և, մանաւանդ, իւր կնոջից։ Նրան, որպէս անառակ որդու, թողնում էին դրսում։ Դա մի ծանր ապտակ էր նրա երեսին, դա մի դառն

պատիժ էր նրա համար... Այդ բոլոր հանդերձանքը, այդ բոլոր ցոյցերը ուղղակի ասում էին նրան. «Դու արժանի չես ոտք դնելու հայրենական տան շեմքի վրա... «Ուրացողի» ոտքերը կը պղծեն նրան»...

Նրա մարդիկն ևս գտնւում էին բոլորովին շւարեալ դրութեան մէջ. ոչ ոք նրանցից չէր համարձակւում մի բան ասել։

Դռան բարձրութեան վրա կար մի սիւնազարդ վերնահարկ, բաց երեսով, որ պատշգամբի ձև ունէր։ Առջևից ծածկւած էր վարագոյրներով։ Վարագոյրները յետ գնացին։ Վերևում յայտնւեցաւ մայրը։ Տառապեալ կինը հազիւ հազ կարողանում էր իրան ոտքի վրա պահել։ Նրա ձախ թևքից բռնել էր աղջիկը—Մերուժանի քոյրը, իսկ աջ թևքից բռնել էր հարսը—Մերուժանի ամուսինը։ Վերջինի առջևում կանգնած էին Մերուժանի երկու զաւակները։ Դրանց ետևում կարգով կանգնած էր իշխանական ամբողջ ընտանիքը։ Ամենքը սգաւորի հանդերձով, ամենքը արտասւալի աչքերով։ Տեսնելով նրանց, Մերուժանը ամբողջ մարմնով դողաց։

—Մա՛յր,—խօսեց նա խռովեալ ձայնով,—իմ քաղաքացիքը ինձանից երես դարձրին, այժմ իմ հայրենական տունն էլ իւր դռները փակում է իմ առջև...

—Այո՛, Մերուժա՛ն, — պատասխանեց վերևից մայրը դառնացած կերպով.—քո հայրենական տունը իւր դռները փակում է քո առջև, որովհետև դու քո սրտի դռները փակեցիր թէ Աստուծոյ, թէ քո հայրենիքի և թէ քո խղճի առջև... Ուրացողը, ապստամբը չէ կարող մտնել այդ տունը, Մերուժա՛ն... Այն օ-

րից, որ դու դաւաճանեցիր քո եկեղեցուն և քո թագաւորին,—այն օրից զրկւեցար այդ տան զաւակը լինելուց... Դու, Մերուժան, այժմ այդ տան համար խորթ ես և օտար, որովհետև դու արատաւորեցիր Արծրունիների պայծառ յիշատակը... Ուղղութիւնը միայն կարող է փրկել քեզ, Մերուժան... Դարձի՛ր չար ճանապարհից, դարձի՛ր քո մոլորութիւններից... Լսի՛ր, Մերուժան, մօր ձայնը, որ դեռ սիրում է քեզ, որ իւր դառն արտասուքների հետ այդ խօսքերը թափում է քո առջև... Լսի՛ր, Մերուժան, մօր ձայնը, որովհետև նրա բերանով խօսում է ամբողջ Վասպուրական... Եթէ դու կամենում ես կրկին վայելել քո ընտանիքի և քո աշխարհի սէրը, պէտք է դառնաս չար ճանապարհից... Ահա՛ ուղիղ ճանապարհը, Մերուժան.—Նա ձեռքը տարաւ դէպի Մայր եկեղեցին և ապա շարունակեց.—Քո հայրերը, երբ յոգնած, վաստակած տուն էին վերադառնում պատերազմներից, նախ գնում էին եկեղեցին, գոհութեան աղօթք էին մատուցանում, և ապա գալիս էին իրանց ընտանիքի սէրը վայելելու... Եթէ դու քո նախահարց հարազատ որդին ես, հետևի՛ր նրանց օրինակին... Այնտեղ, Մայր եկեղեցում, քահանայական դասը և քո քաղաքի ծերերը սպասում են քեզ... Գնա՛, Մերուժան, նախ եկեղեցին, հաշտւի՛ր Յիսուս Քրիստոսի հետ, զղջա՛ քո մեղքերը, խոստովանի՛ր քո յանցանքները Աստուծոյ տաճարի մէջ, և ապա վերադարձիր,—այն ժամանակ քո տան դռները բաց կը գտնես քո առջև...

—Այդ երբեք չէ կարող լինել,—մռնչաց նա և երեսը շուռ տւեց։

—Մայրի՛կ մայրի՛կ,—վերևից լսելի եղան երկու երեխաների ձայներ.—ո՞ւր է գնում հայրիկը...

Այդ ձայները խոցոտեցին նրա սիրտը...

Խ Ա Յ Թ

Սոսկալի խռովութեան մէջ, որպէս մի խելագար, դուրս եկաւ Մերուժանը Հադամակերտից։ Նրա ականջներին դեռ զարկում էին մօր կծու խօսքերը և, սուր սլաքների նման, թափանցում էին մինչև սրտի խորքը։ Նրանից չէին հեռանում կնոջ թախծալի դէմքը և սիրելի զաւակների անմեղ ժպիտը, որոնք, տեսնելով հօրը, իւր տան վերնայարկի բարձրութիւնից՝ կամենում էին ծտի նման թռչել, և թևատարած նրա գիրկն ընկնել։ Դեռ նրա առջևն էր սգազգեստ քաղաքը՝ իւր բոլոր տխուր և սգանիշ երևոյթներով։

Ի՞նչ էր այդ։ Իւր սրտին այնքան մօտ պատկերները, իւր համար այնքան թանգագին էակները այժմ, մթին ու մռայլ ուրուականների նման, հետեւում էին նրան, հալածում էին նրան, և ամենևին դադար ու հանգստութիւն չէին տալիս։

Այնտեղ, հայրենական խաղաղ օջախի մօտ, ուր յոյս ունէր նա մխիթարութիւն գտնել, այնտեղ, իւր ընտանիքի ջերմ գրկում, ուր փափագում էր նա վայելել մօր օրհնութիւնը, կնոջ գգուանքը և իւր զաւակների սէրը,—այնտեղից մերժւեցաւ նա, այնտեղից արտաքսւեցաւ նա, որպէս մի անառակ, որպէս մի մոլորեալ որդի։

Կրքերի սաստիկ մաքառումը կատաղութեան

չափ վրդովեցնում էր նրան։ Վասպուրականի տէրն ու իշխանը՝ այժմ նոյն երկրի ապօրինի զաւակն էր։ Նա, որ նայում էր այդ ընդարձակ աշխարհի վրա, որպէս մի մոմի կտորի վրա, համոզուած լինելով, որ նրան ամեն ձև և ամեն կերպարանք կարող էր տալ,—այժմ նոյն աշխարհից մերժւեցաւ։ Այո, մերժւեցաւ, կորցնելով իւր նախնիքներից ստացած մեծ ժառանգութիւնը։ Այն, որ թշնամու ահագին զօրութիւնները չէին կարող խլել նրանից,—խլեց մօր մի քանի խօսքը...

Ի՞նչ էր այդ։ —Այդ հարցը նա անդադար տալիս էր իրան, և նրա վրդովմունքը աւելի և աւելի սաստկանում էր։

Իւր խռովութեան մէջ, դուրս գալով քաղաքից, ամենևին նկատել չը կարողացաւ նա, որ ինքը միայնակ է։ Բաւական հեռացել էր, երբ յետ նայեց, տեսաւ, որ իւր թիկնապահներն իւր հետ չեն։ «Նրանք ևս թողեցին ինձ»... մտածեց նա, և մի դառն ծիծաղ անցաւ զայրացած դէմքի վրա։

Նրա թիկնապահները հադամակերտցիք էին։ Հայրենի քաղաքի տխուր տպաւորութիւնների ներքոյ, որոնք այնքան սաստիկ ազդեցին նրանց սրտերի վրա, նրանք մոռացան իրանց իշխանին։ Միւս կողմից, երկար տարիների բացակայութիւնը և ընտանիքի կարօտութիւնը՝ ձգեց նրանց դէպի իրանց տները։

Արեգակը վաղուց արդէն մայր էր մտել. երեկոյեան թանձր խաւարը պատել էր շրջակայքը։ Մերուժանը այժմ միայն զգաց իւր բոլորովին լքեալ դրութիւնը։ «Ո՞ւր գնամ»... այդ միտքը սկսեց տան-

ջել նրան։ Երկրի տէրը իւր երկրում մի անկիւն չէր գտնում գլուխը դնելու...

Սաստիկ յոգնած էր նա։ Վանայ դժբախտ անցքերից յետոյ, ամբողջ երեք օր ճանապարհի վրա էր, առանց մի տեղ դադար առնելու։ Բացի դրանից, հոգեկան ծանր տանջանքները բոլորովին վատակարեկ էին արել նրան։ Որոնում էր մի տեղ՝ փոքր ինչ հանգստանալու։ Գիւղերը մտնել չէր կարող, գիւղացոց կոպտութեանը չը հանդիպելու համար։ Ո՞ւր գնար։ Ամեն տեղ գիտէին նրա մասին, ամեն տեղից հալածուած էր նա։—Այդ բոլորը անցնում էր նրա մտքով, և նա, առանց մի որ և է որոշման հասնելու, շարունակում էր քշել իւր ձին, թէև չը գիտէր, թէ ուր է գնում։ Յոգնած էր և ձին, որ դժւարութեամբ էր փոխում քայլերը։

Յոգնածութեան հետ սկսեց տանջել նրան և քաղցը։ Ամբողջ օրը ոչինչ չէր կերել։ Նա, իբրև պատերազմական մարդ, սովոր էր բացօթեայ կեանքին, կարող էր մի ժայռի, մի ծառի ներքոյ գլուխը դնել և հանգստանալ։ Բայց ինչ անել քաղցի հետ։ Բնութիւնը իրանը պահանջում էր։ Միւս կողմից, մի խուլ կասկած այէկոծում էր նրան։ Այդ վերին աստիճանի աներկիւղ և անձնավստահ մարդը սկսել էր տատանւիլ։ «Իսկ եթէ հետամուտ լինեն»... մտածում էր նա։ Իւր քաղաքում, մօր երկիւղից, ոչ ոք չը համարձակւեցաւ նրա վրա քար նետել։ Մայրը ի հարկէ, ամենախիստ պատւէրներ տւած կը լինէր այդ մասին։ Բայց ո՞վ էր արգելում մի քանի ստահակների՝ գաղտնի դուրս գալ քաղաքից և նրա ետևից ընկնել։ Նա կեանքից երկիւղ չունէր, բայց կեանքը նրա նպատակների համար հարկաւոր էր։ Այդ մտքով

ջուռ տւեց իւր ձիու գլուխը, և դուրս եկաւ ուղիղ ճանապարհից։

Դուրս գալով ուղիղ ճանապարհից, դիտաւորութիւն ունէր՝ խոտորնակի շաւիղներով հասնել մի ամայի տեղ, փոքր ինչ հանգստանալ և ձիուն հանգստացնել, և ապա շարունակել իւր ուղին։ Նա աշխատում էր չը կորցնել գիշերային խաւարը, այլ մթնով դուրս գալ իւր իշխանութեան սահմանից, որը արևելեան կողմից շատ հեռու չէր։ Այստեղ ամեն ոք կարող էր ճանաչել նրան, այստեղ նա վտանգի մէջ էր։

Երկար ձիավարում էր, բայց տակաւին մշակութեան դաշտերի և անդաստանների միջից չէր դուրս եկել։ Մշակութիւնը նշան էր մարդու ներկայութեան, որից խորշում էր նա։ Որոնում էր անապատ, ամայութիւն։ Տեղորայքը որքան և ծանօթ էին նրան, այնու ամենայնիւ, տիրող խաւարը արգելում էր որոշել, թէ որտեղ է գտնւում։ Նա անցնում էր անգիտակցութեան և տարակուսանքների մէջով։ Վերջապէս, դուրս եկաւ մշակւած դաշտերից։ Այժմ նրա առջև տարածւում՝ էին խոտաւէտ մարգագետիններ։ Այդ արդէն նշան էր, որ մօտենում է լեռների ստորոտներին։

Մի քանի անգամ նրա ականջներին զարկեց շան հաչելու ձայն։ Ոչինչ ձայն չէր կարող նրան այնքան ախորժելի լինել, որպէս այդ ձայնը։ Մտածեց՝ թէ կամ հովիւների է մօտեցել, կամ որսորդների։ Թէ առաջինները և թէ վերջինները նրա համար անվնաս մարդիկ էին։ Ձիու գլուխը դարձրեց դէպի այն կողմը, որտեղից լսւում էր ձայնը։ Երբ բաւական մօտեցաւ, մէկ շան տեղ՝ սկսեցին հաչել մի քանիսը։ Նա շարունակում էր գնալ, մինչև շները խմբով ա-

ռաջ վազեցին և նրա ճանապարհը կտրեցին։ Անհնար էր ազատուել այդ գազաններից։ Նա իւր հետ մի այլ զէնք չունէր, բացի դաշոյնից։ Հասկացաւ, որ հովիւների հանդրուանին է մօտեցել։ Բայց վիրաւորել կամ սպանել հովուի շանը,—այդ նշանակում է՝ սպանել նրա եղբօրը կամ լաւ բարեկամին։ Այնուհետև պէտք է գործ ունենալ ուղղակի հովուի հետ։ Նա միայն պաշտպանողական դիրք բռնեց։ Կատաղի գազաններն ամեն կողմից շրջապատել էին նրան, և ամենայանդուգն կերպով յարձակումներ էին գործում։ Անտարակոյս, պատառ պատառ կանէին, եթէ ձին չը պաշտպանէր նրան։ Որ կողմից որ յարձակւում էին, քաջասիրտ անասունը իսկոյն շուռ էր գալիս և աքացի էր տալիս։

Շների աղմուկից, նիզակը ձեռին, մօտ վազեց մի հովիւ, որը խաւարի միջից հարցրեց։

—Ո՞վ ես, ի՞նչ գործ ունես այստեղ։

Նա պատասխանեց։

—Նախ հանգստացրու շներիդ, յետոյ կիմանաս, թէ ես ով եմ։

—Իմ շները չեն հանգստանայ, մինչև դու չասես թէ ով ես։

Նկատելով, որ կոպիտ հովուի հետ վիճելը բոլորովին ապարդիւն կը լինէր, ասաց նա։

—Ես Որսխրանի՝ սեպուհն եմ. որսորդութեան ժամանակ՝ մութը վրա հասաւ, մոլորեցայ և կորցրի իմ մարդիկներին։

Պատասխանը ոչ միայն գոհացուցիչ էր, այլ շատ փաղաքշական էր հովուի համար, որ Որսխրանի բարձրաստիճան սեպուհը, հանգամանքներից ստիպուած, նրա տաղաւարում գիշերային պատսպարան

էր խնդրում։ Նա սաստեց, շները լռեցին։ Յետոյ, մօտենալով, բռնեց ձիու սանձից, ասաց։

—Հետևիր ինձ, տէր սեպուհ։

Շները նկատելով, որ իրանց մեծաւորը որպիսի բարեսրտութեամբ վերաբերուեցաւ դէպի նորեկը, իրանք ևս հանգստացան, և իւրաքանչիւրը գնաց իւր տեղը։

Տարաժամ հիւրին հովիւը տարաւ իւր տաղաւարը, որը այնքան հեռու չէր։ Իսկոյն լապտերը վառեց և, տարածելով տաղաւարի յատակի վրա մի թանձր թաղիք, խնդրեց նստել, իսկ ինքը մնաց ոտքի վրա՝ նրա սպասում։

—Նստիր և դու, բարի հովիւ,—ասաց նրան Մերուժանը.—մի ծածքի տակ հիւրը և հիւրընկալը պէտք է հաւասար բարձի վրա նստեն։ Հանգամանքները ինձ բերեցին քո տաղաւարը, և ես շատ ուրախ եմ, որ լաւ մարդու հանդիպեցայ։

—Բայց ինձ պէտք է նախ իմ հիւրի հանգստութեան մասին հոգալ, տէր սեպուհ,—պատասխանեց հովիւը, ոտքի վրա մնալով։—Ճանապարհից եկած մարդը ուտելու պէտք կունենայ։

—Իզուր նեղութիւն մի կրիր,—ասաց հիւրը։—Ինչ որ Աստուած տուել է, ինչ որ պատրաստի կայ, ես նրանով ևս կը գոհանամ։ Քեզ մօտ, իհարկէ, հաց կամ պանիր կը գտնուի, իսկ եթէ փոքր ինչ մածուն աւելացնես, դա ինձ համար ամենապատուական ընթրիք կը լինի։ Ես, իրաւ, շատ քաղցած եմ։

Տաղաւարը մի շարժական քառակուսի սենեակի նմանութիւն ունէր, որի ստորին մասը կազմուած էր բարակ և կլորիկ ձողերից, որոնք միմեանց հետ

կապուած էին գոյնզգոյն դերձանների հիւսուածքով, որ զանազան նկարներ էին ձեւացնում։ Իսկ ձեղունը պատած էր նոյնպէս զունաւոր հաստ կապերտներով, որ տարածուած էին գմբէթաձեւ առաստաղի վրա։ Դէպի ամեն կողմ նայելիս, աչքի էր զարկում մի առանձին շքեղութիւն, որ հասարակ հովւի կացարանի համար բաւական շռայլ էր։ Այդ դրդեց Մերուժանին հարցնել.

—Ո՞ւմ հօտերն են արածում այստեղ։

—Տէրունի են,—պատասխանեց հովիւը մի առանձին ձայնով, որ արտայայտում էր նրա անմեղ հպարտութիւնը։

Մերուժանի դէմքի վրա անցաւ մի թեթեւ շփոթութիւն, և նա երեսը իսկոյն շուռ տուեց, որ հիւրընկալը չը նկատէ իւր խռովութիւնը։ «Տէրունի», —մտածեց նա, և մնաց շւարած։ Նա գտնւում էր իւր սեպհական հովիւների տաղաւարում։ Հօտերը «տէրունի» էին, այսինքն՝ պատկանում էին իշխանական տանը։ Բայց միթէ չէ՞ր գտնւի նրա ընկերների մէջ մէկը, որ ճանաչէր նրան։ Նա քաշւեցաւ դէպի տաղաւարի մթին անկիւնը, ասելով.

—Այդ լապտերը փոքր ինչ հեռացրու, և աւելի լաւ կանես, եթէ դրսում բարշ տաս։ Իմ աչքերը սաստիկ խաղղըտւում են լոյսի վրա նայելիս։ Առանց դրան ևս, շուտով լոյս կը լինի։ Ահա, լուսինը դուրս է գալիս։

Հովիւը կատարեց հրամանը և հեռացաւ ընթրիք պատրաստելու։ Նա իւր ընկերների գլխաւորն էր երեւում։ Իսկոյն մի գառն մորթեցին, և տաղաւարից փոքր ինչ հեռու կրակ վառեցին՝ թաժայ հաց թխելու համար։ Իսկ գլխաւորը, իւր հիւրին միայնակ

չը թողնելու համար, կրկին վերադարձաւ նրա մօտ։

Մերուժանը տակաւին գտնւում էր այն մտածութեան մէջ, թէ ինքը որոգայթի մէջ էր ընկած, և թէ Նախախնամութեան կամքը մատնեց իրան այդ պարզամիտ հովիւների ձեռքը, որոնք, որքան բարի էին, նոյնքան աւելի անհամբեր էին դէպի ամեն վատութիւն։ Նրանց համար տէրը, իշխանը ոչինչ նշանակութիւն չունէր, եթէ Աստուծոյ ուղիղ ճանապարհով չէր գնում։ Բայց Մերուժանը սիրում էր ճակատագրի խաղերը, և անհամբերութեամբ սպասում էր, թէ ի՞նչով կը վերջանայ այդ դառն կատակը։

—Նստիր,—կրկին դարձաւ նա դէպի հովիւը։—Դու քո գործը վերջացրիր, այժմ կարող ես նստել։ Ի՞նչպէս է քո անունը։

Հովիւը դարձեալ չը համարձակւեցաւ տաղաւարի ներսումը նստել, այլ տեղաւորւեցաւ մուտքի մօտ, դրսումը, և մի առանձին բաւականութեամբ պատասխանեց.

—Դու իմ անո՞ւնն ես հարցնում, տէր սեպուհ։

—Տէրտէրը իմ անունը Մանէճ գրեց, բայց մարդիկ Մանի են կոչում։

—Ես էլ Մանի կը կոչեմ. այդպէս աւելի լաւ է։—Ասա ինձ, բարի Մանի, ո՞րտեղ է այժմ քո տէրը, ի՞նչ լուր ունես Մերուժանից։

Այդ անունը լսելիս՝ հովւի արեւից այրուած դէմքը աւելի մռայլւեցաւ և, իւր խռովութիւնը ծածկելով, ասաց։

—Ի՞նչ գիտեմ, տէր սեպուհ, այդ դու պէտք է լաւ գիտենաս, թէ որտեղ է նա և ինչ է շինում... Այստեղ, այդ լեռների մթութեան մէջ, մեզ խիստ

սակաւ լուրեր են հասնում, և ինչ էլ որ հասնում են, տխուր են, շատ տխուր... բոլորովին այրում են մարդու սիրտը...

Երևում էր, որ տիրասէր Մանէն չէր կամենում Ռրսիրանի սեպուհի առջև, որպէս մի օտար մարդու մօտ, անվայել կերպով վերաբերել դէպի իւր իշխանը, թէև նրա մասին շատ սակաւ բան գիտէր, բայց որքան էլ և գիտէր, իւր համար սատիկ անմխիթարական էին։

Մօտ վաթսուն տարեկան կը լինէր Մանէն, բայց տակաւին պահպանել էր իւր երիտասարդական ժրութիւնը։ Վասպուրականի լեռների հովիւները դարերով են ապրում և հազիւ են ծերանում։ Խոշոր մարդ էր նա՝ դէմքի նոյնպէս խոշոր գծագրութեամբ, որ արտայայտում էր անկեղծ և ամուր բնաւորութիւն։ Աչքերի մէջ նշմարւում էր մի անբացատրելի թախծութիւն։

—Դու տեսե՞լ ես Մերուժանին,—հարցրեց ծըպտեալ սեպուհը։

—Տեսել եմ, ինչպէս չեմ տեսել,—պատասխանեց նա վշտալի ձայնով։—Բայց այն ժամանակ դեռ շատ երիտասարդ էր, ընչացքները դեռ նոր էին սկսել աճել։ Յետոյ գնաց Պարսկաստան, այնտեղ պարսից անօրէն թագաւորը խելքից հանեց նրան... Այնուհետև շատ ժամանակ է, որ չեմ տեսել։

—Այդ բոլոր հօտերը Մերուժանի՞ն են պատկանում։

—Բոլորը, տէր իմ։ Երկնքի աստղերը թիւ և համբարք ունեն, բայց նրա անասունները չունեն։ Այնտեղ միայն արածում են նրա ոչխարների հօտերը. իւրաքանչիւր հօտը միագոյն է և միատեսակ. սևը առանձին, ճերմակը առանձին, և միւս գոյները

իրանց կարգով։ Բայց անցի՛ր, տէր սեպուհ, այդ լեռան միւս կողմը, այնտեղ կը տեսնես նրա այծերի հօտերը, դարձեալ իւրաքանչիւրը դասաւորած իրանց գոյների և բուրդերի համեմատ։ Մի փոքր հեռու գնա, տէր սեպուհ, դէպի Երւանդունիք, այնտեղ կը տեսնես նրա ձիաների, ջորիների և աւանակների երամակները, և կը հիանաս նրանց վրա նայելիս։ Այնտեղից անցի՛ր, տէր սեպուհ, դէպի Անձևացեաց կողմերը, այնտեղ կը տեսնես նրա արջառները, կովերի և եզների նախիրները։ Յետոյ գնա՛, տէր սեպուհ, դէպի Տիգրիսի ջերմասուն ափունքը, դէպի Ջերմաձորս, այնտեղ ճահճային եղէգնաբոյսերի մէջ արածում են նրա գոմէշների գէր ու պարարտ խումբերը։—Մի խօսքով, ինչո՞ւ ի զուր գլուխդ ցաւացնեմ, տէ՛ր սեպուհ, սկսեալ Զարևանդից մինչև Կորդիք և այնտեղից մինչև Վանայ ծովակը, Մերուժանի անասուններն են արածում։ Ո՞վ ունի այդքան անչափ հարստութիւն, որքան նա ունի։ Աստուած նրան ամեն կողմից լիացրել էր, Աստուած նրան շա՛տ էր տուել, բայց նա չիմացաւ գոհացնել իր Աստուծուն...

Վերջին խօսքերը արտասանելու միջոցին ծերունու ձայնը զգալի կերպով դողդողաց։

—Գալի՞ս է իւր անասունները տեսնելու։

—Ոչ մի անգամ չի եկել։ Նա չը գիտէ, թէ ի՛նչ ունի և ո՛րքան ունի։ Նա մանկութիւնից սկսեց միայն կռիւներով զբաղւել և իւր գործին չը նայել։ Բայց այդպէս չէր հանգուցեալ հայրը։ Ամեն տարի, աշնան ժամանակը, կըգար։ Մենք առաջուց կը լւանայինք, կը մաքրէինք ոչխարները, և սպիտակ, ձիւնափայլ հօտերը կը հանէինք նրա առջև։ Նա կը

նայէր, և փառք կը տար Աստծուն. Այդ տաղաւարի մէջ շատ անգամ կերակրել եմ նրան։ Կը նստէր և մեծ բաւականութեամբ կուտէր հովւի աղքատիկ ճաշը։

—Այժմ ո՞վ է նայում՝ այդքան հարստութեանը։

—Տիկլինը։ Թո՛ղ Աստուած նրան երկար կեանք տայ և մեր գլխից միշտ անպակաս անէ։ Նա խելքի և իմաստութեան մի մեծ ծով է։ Հանգուցեալ նահապետի մահից յետոյ, նա է կառավարում բոլոր գործերը։ Կը գայ, կը տեսնէ, կուրախանայ, և ամէն բանի մասին հարցուփորձ կանէ։ Նա ո՛չ միայն ճանաչում է իւր բոլոր հովիւներին՝ իրանց անուններով և տեղերով, այլ ճանաչում է իւր անասուններից շատերին։ Գիտէ, որը ո՛րքան է մեծացել, կամ՝ որը քանի՛ ձագ է բերել։ Նա էլ ինձ Մանի է կանչում։ Ախորժելի է լինում ծառային, երբ տէրը նրան ճանաչում է և իւր անունով է կանչում։ Բայց այդպէս չէ Միրուժանը։ եթէ մօտից անցնելու լինեմ, չի իմանայ, թէ ես ով եմ, թէև քառասուն տարի ես նրանց անասունների վրա կեանք եմ մաշում։ Այդ փոքր ժամանակ չէ, տէր սեպուհ...

—Ի՞նչ են անում այդքան անասունները։

—Դեռ ես հարցնում ես, տէր սեպուհ,—ասաց նա, և մի զարմացական ժպիտ անցաւ նրա բարի դէմքի խորշոմների միջով։—Ամեն շաբաթ հարիւր հատ ամենաընտիր խոյերից ուղարկում են իշխանական տան խոհանոցի համար։ Գիտե՞ս, ո՛րքան մարդիկ այնտեղ ճաշ են ուտում։ Ամեն օր մի քանի հարիւր հոգի սեղան են նստում։ Այնպէս էլ իւղը, պանիրը, մածունը,—բոլորը գնում է իշխանական տունը։ Յետոյ, ընծաներ են լինում, աղքատներին

են բաժանում, մատաղ են անում, բայց Աստուած այնքան առատութիւն է պարգևել, որ այդքան ծախսւում է, և երբէք չէ սպառւում։

Մինչդեռ անծանօթ տէրը և իւր հովիւը այդպիսի մտերմական խօսակցութեան մէջ էին, լուսինը արդէն բաւական բարձրացել էր սքանչելի լուսաւորութեան մէջ։ Տաղաւարի հանդէպ, փոքր ինչ հեռու, վառւում էր կրակը, և նրա բոցավառ լոյսի միջից երևում էին միւս հովիւները, որ բոլորել էին կրակի շուրջը։ Նրանցից ոմանք փայտեայ շամփուրներով գառան միս էին խորովում, ոմանք երկաթեայ կասկարայի վրա թաժայ հաց էին թխում, բայց մի և նոյն ժամանակ, չէին դադարում շատախօսել, ծիծաղել և զանազան զատողութիւններ անել իրանց որսիրանցի հիւրի մասին։

Որսիրանցիք յայտնի էին իրանց օտարոտի սովորութիւններով, այդ պատճառով, ժողովրդի բերանում ստեղծւած բոլոր ծիծաղելի առակները նրանց էին վերաբերում։ Հովիւներից մէկը ասաց.

—Երկու որսիրանցիք հիւր եղան մեկ տան մէջ. տանտիկինը սև պղոճն ու սև չամիչը խառնեց միմեանց և դրեց նրանց առջև։ Պղոճներն սկսեցին փախչել։ Ընկերը ընկերին ասաց.—«Առաջ այս ոտովներն ուտենք, քանի դեռ անոտներն քնած են»։

Ամենքը ծիծաղեցին և իւրաքանչիւրը սկսեց իւր լսածն ու իմացածը պատմել։ Երկար պատմում էին նրանք, և երբեմն առանձին-առանձին մօտենում էին տաղաւարին, հեռուից հետաքրքրութեամբ նայում էին որսիրանցի հիւրի վրա, կարծես, ստուգելու համար՝ թէ ո՛րքան ճշմարիտ էին իրանց պատմածները։

Ընթրիքի սեղանը Մերուժանի սպասածից աւելի ճոխ գտնուեցաւ։ Փայտեայ խանի մէջ դրուեցաւ նրա առջև թաժայ հաց, պանիր, երկու գլուխ սոխ, իսկ խորոված շամփուրներով տաք-տաք բերում էին, երբ սպառւում էր, դարձեալ կրկնում էին։ Այն մարդը, որ հայոց թագաւորի սեղանի մօտ նախապատիւ և առաջնակարգ նախարարի բարձ ունէր, այն մարդը, որ պարսից թագաւորի հետ շատ անգամ մէկ թախթի վրա էր ճաշել,—երբէք այնպիսի ախորժակով չէր կերել, որպէս ուտում էր նա հովւի պարզ սեղանից։ Բարեսիրտ Մանիի մօտ գտնուեցաւ մինչև անգամ գինի։ Երբ սեղանը դրեցին, նա անցաւ տաղաւարի մի կողմը, ձեռներով փորեց գետինը, և դուրս բերեց մի խեցեղէն փոքրիկ աման, ասելով.

—Ես գինին միշտ այդպէս թաղում եմ, այդպէս աւելի լաւ է լինում, տէր սեպուհ. թէ սառն կը մնայ, և թէ արևի տաքութիւնից չի քացախի։

Մերուժանը խնդրեց նրան, որ ինքն էլ սեղանակից լինի, որը մեծ դժուարութեամբ ընդունեց, ասելով.

—Այդ ինձ համար չափազանց մեծ շնորհ է, տէր սեպուհ։ Թող ծերունի Մանին առիթ ունենայ մարդկանց մօտ պարծենալու, որ իր կեանքում մի անգամ մի սեպուհի հետ հաց է կերել։

Նա նստեց և գինու ամանը դրեց իր մօտ։

Առաջին թասը Մերուժանը քամեց մինչև վերջին կաթիլը։ Այդ տեսնելով, Մանին խրախուսուեցաւ, և սկսեց թէ ինքը խմել, և թէ աւելի յաճախ մատուցանել թասը իր հիւրին։ Երբ բաւական խմել էին, նա դարձաւ դէպի հիւրը, հարցնելով.

—Ասա ինձ, տէր սեպուհ, դու ի՞նչ համբաւ ունես Մերուժանից։ Դու աշխարհի մարդ ես, գիտես նրա չարն ու բարին։ Մենք կտրուած ենք աշխարհից, չը գիտենք, թէ ո՛րտեղ ինչ է կատարւում։ Ճշմարի՞տ է այն, որ խօսում են…

—Ի՞նչ են խօսում։

—Ի՜նչ ասեմ… դու ինձանից լաւ գիտես, տէր սեպուհ… լեզուս չէ բռնում, որ ասեմ…

—Ես էլ ուղիղը չը գիտեմ, բարի Մանի… շատ բան են խօսում… ո՞ր մէկին կարելի է հաւատալ… Ես միայն այդքանը գիտեմ, որ շուտով կը գայ Մերուժանը և, շատ կարելի է, որ նա հայոց թագաւոր դառնայ…

Հովւի խորշոմներով պատած դէմքը բոլորովին մռայլուեցաւ. վերջին խօսքերը, փոխանակ ուրախացնելու նրան, որ իր տէրն ու իշխանը թագաւոր է դառնալու, ընդհակառակն, աւելի տխրացրին։

—Այդ լաւ չէ,—ասաց նա մշտալի ձայնով.— այդ Աստուծոյ կամքին հակառակ բան է։ Թագաւորը պէտք է թագաւոր լինի, իսկ իշխանը՝—իշխան։ Աստուած ինձ կը պատժէր, եթէ ես մտածէի Մերուժան լինել։ Ես նրա հովիւն եմ, և պէտք է գոհ լինեմ իմ վիճակով։

—Բայց Մերուժանի նախնիքը նոյնպէս թագաւորներ են եղել,—ընդհատեց հիւրը։

—Այդ ես չը գիտեմ, եղե՞լ են, թէ ոչ, գուցէ եղել են։ Բայց ինչ ունէր նա պակաս մի թագաւորից։ Նա հէնց իր աշխարհի թագաւորն էր։ Երասխից սկսած մինչև Ձանայ ծովակը տարածւում է նրա իշխանութեան երկիրը։ Մի՞թէ Արշակ թագաւորը այդքան երկիր ունի՞։ Ես շատ եմ թափառել,

տէր սեպուհ, ես շատ տեղեր եմ տեսել։ Ես տեսել եմ և նրա ոչխարների հօտերը, բայց մեր ունեցածի կէսը, կէսը կէսը, չեն լինի։ Ես տեսել եմ Արշակ Թագաւորի որսորդութեան լեռները և նրա անասունների արօտամարգերը. դարձեալ մեր ունեցածի չափ չեն լինի։ Այլ ես ի՞նչ ունէր պակաս Մերուժանը, որ Աստուծոյ կամքին հակառակ գնար... և թէ իւր հոգուն և թէ իւր աշխարհին մեղք աւելացնէր... Դժուա՜ր է այդ բոլորը, շատ դժուար, տէր սեպուհ... Թո՛ղ Աստուած ինքը մի ողորմութիւն անէ, չարը խափանէ և բարին առաջնորդէ...

Վերջին խօսքերը արտասանելու միջոցին, նա լցրեց թասը, նայեց դէպի երկինքը և աղօթելով դատարկեց, կարծես սրտի բոցն ու կրակը հանգցնելու համար։

Մերուժանը զգացուեցաւ։ Մի խուլ խայթ սկսեց խայթել նրա սիրտը...

Երկրորդ թասը լցրեց նա, և առաջարկեց իւր հիւրին ասելով.

—Խմի՛ր, տէր սեպուհ, դու ևս խնդրի՛ր, որ Աստուած չարը խափանէ և բարին առաջնորդէ։ Մերուժանը որպէս իմ, նոյնպէս և քո իշխանն է։ Ես նրա նուաստ հովիւն եմ, իսկ դու նրա յարգելի սեպուհներից մէկն ես։ Աղօթենք մեր իշխանի համար. Տէր Ամենակալը կը լսէ մեր ձայնը։

Դողդոջուն ձեռքով ընդունեց նա բաժակը և մնաց շփոթուած, տատանման մէջ։ Նա պէտք է աղօթէր իւր չարութիւնների համար, նա պէտք է աղօթէր այն Աստուծուն, որին, պարսից արքայի առջև, հրապարակաւ ուխտել էր չը ճանաչել։ Նա

պէտք է աղօթէր, որ այդ Աստուածը դարձնէր իրան չար ճանապարհից։ Նա պէտք է իւր լեզուով կարդար իւր մեղայականը։ Բայց ի՞նչ սրտով կարդար, —դեռ չը զղջացած, դեռ չը հաշտուած սրտով։ Այդ խիստ ծանր էր նրա համար։ Իւր հիւրընկալը սաստիկ դժուարին դրութեան մէջ դրեց նրան։ Ինչպէս կեղծել, ինչպէս խարդաւանել։ Երկար տատանմունքից յետոյ, վերջապէս, կրկնեց նա իւր հովւի խօսքերը և թասը դատարկեց...

Նա իսկոյն հեռացաւ սեղանից։ Հովիւը նկատեց նրա թախծութիւնը և կարեկցաբար հարցրեց.

—Դու, տէր սեպուհ, որպէս ճանապարհից եկած մարդ, երեւում է, որ շատ յոգնած ես։ Ես իսկոյն կը պատրաստեմ քո անկողինը։ Անուշ քունը միակ դարմանն է յոգնածութեան։ Քո անկողինը թէև անշուք կը լինի, բայց հանգիստ կը լինի. քեզ կը տամ իմ վերարկուն, կը փաթաթուես նրա մէջ և կը քնես։ Իսկ բարձի փոխարէն, այդ տոպրակը կը դնես գլխիդ տակին։ Նա լցուած է խիստ փափուկ խոտով. փետուրից աւելի կակուղ է այդ խոտը։

Մերուժանը, շնորհակալութիւն յայտնելով բարեսիրտ հովւի հոգածութիւնների համար, ասաց...

—Գիշերը գեղեցիկ է, Մանի, իսկ սիրուն լուսինը խլեց իմ քունը։ Բայց քո գինին այնքան ախորժելի էր, որ բորբոքեց իմ գլուխը։ Կը ցանկանայի մի փոքր ման գալ, մի փոքր ցրուել սրտիս ամբոխմունքը։ Առաջնորդի՛ր ինձ, բարի Մանի, որ քո շները կրկին չը խանգարեն ինձ։

Մերուժանը վերկացաւ, իսկ Մանին առեց իր ցուպը, ընկաւ նրա առջևը, հարցնելով թէ դէպի ո՞ր կողմն է ցանկանում գնալ։

—Դէպի լեռան կողմը,—պատասխանեց նա։

Նրանք անցան անտառների լուռ և խաղաղ հանդրւանի միջով և մօտեցան լեռան ստորոտին։

—Դու ինձ միայնակ թող, բարի Մանի, ասաց նրան Մեռուժանը։ Այստեղ ես փոքր ինչ կը թափառեմ, յետոյ կը նստեմ մի ժայռի վրա, և նրա բարձրութիւնից կը նայեմ, թէ ինչպէս լուսինը սահելով ընթանում է թափանցիկ ամպերի տակով, և կը լսեմ լեռնային վտակի անուշ ձայնը։

Պարզամիտ Մանին ոչ սակաւ զարմացած էր իշխանի յուզւած տրամադրութեան վրա։ Այդ անակնկալ փոփոխութիւնը վերաբերում էր նա գինու ազդեցութեանը։ Եւ կամ, ո՞վ գիտէ, ինչ անյայտ զգացումներ ալեկոծում էին նրա սիրտը։ Նա իր հիւրին թողեց միայնակ և հեռացաւ։

Մեռուժանը մնաց միայնակ։ Երկար նա խորին այլայլութեան մէջ, թափառում էր լեռան ստորոտում, և իր սրտի յուզմունքներին հանգստութիւն տալ չէր կարողանում։ Տխուր էր նա այն յուսահատական տխրութեամբ, որ մարդուս անհնարին շւարման մէջ է դնում։ Երբէք նրա հզօր կամքը այնպէս տկարացած չէր եղել, որպէս այդ գիշեր։ Նա յենւեցաւ մի ժայռի վրա և կանգ առեց։ Նայում էր դէպի իր շուրջը տիրող մռայլը, որ լուսաւորւած էր լուսնի աղօտ լուսով։ Նայում էր դէպի թախծալի երկինքը, որ պատած էր մոխրագոյն ամպերով։ Լուսինը երբեմն յայտնւում էր, երբեմն ծածկւում էր ամպերի անթափանցիկ պատառների տակ։ Եւ նրա հետ՝ խաւար շրջապատը րոպէապէս լուսաւորւում էր, և դարձեալ խորասուզւում էր գիշերային մթութեան մէջ։—

Յոգնած էր նա,—յոգնած էր հոգով, յոգնած էր և մարմնով։ Նստեց ժայռի վրա։ Նստեց իւր լայնատարած իշխանութեան մի կտոր քարի վրա, որպէս մի փախստական, որպէս մի թշւառ արտաքսեալ, որ իւր սեպհական երկրի վրա իւր ոտքը դնելու մի հաստատ կռւան չունէր։ Մտաբերում էր այն օրւայ տխուր անցքերը, մտաբերում էր իւր մօր և իւր հովւի կծու խօսքերը, և նրա սիրտը խոցոտւում էր դառն կսկիծներով…

Նա ցած իջաւ ժայռից, կանգ առեց և, իւր լի սրտմտութեամբ դէմքը դարձնելով դէպի երկինքը, արտասանեց հետևեալ խօսքերը.

«Ի՞նչը ձգեց ինձ այդ թշւառ դրութեան մէջ… Արդեօք փառասիրութի՞ւնը… Ոչ, հազար անգամ ոչ… Հայոց գա՞հը, Հայաստանի թագն ու գաւազանը, որ խոստացաւ ինձ պարսից Շապուհ արքան, երբէք չէին կարող հրապուրել ինձ, երբէք չէին կարող մի անարգ գործիք դարձնել ինձ արքայի ձեռքում… Ես այնքան վատ չէի, ես այնքան անսիրտ չէի, որ ոտանակոխ անէի սուրբ պարտականութիւնը և ապստամբւէի իմ թագաւորի դէմ… Ես աւելի մեծ յօժարութեամբ կընդունէի մահը, և իմ պատիւը ինձ հետ գերեզման կը տանէի, քան թէ իմ ճակատի վրա կընդունէի դաւաճանի սև կնիքը… Ուրեմն ի՞նչը ձգեց ինձ այդ թշւառ դրութեան մէջ… Արդեօք վրէժխնդրութեան անզուսպ կի՞րքը, արդեօք արեան անշէջ ծարա՞ւը… Դարձեալ ոչ… Արդարև, իմ հայրերը, իմ ամբողջ ազգատոհմը սրի ճարակ դարձան և անխնայ կերպով խողխողւեցան Արշակունիների ձեռքով… Եւ սկսեալ մանկութիւնից, վրէժխնդրութեան սրբազան պարտքը միշտ քարոզում էր ինձ՝

վրէժխնդիր լինել և դրանով հաշտուել իմ նախահարց ուրուականների հետ, որ ամեն բոպէ և ամեն վայրկեան տանջում էին ինձ... Բայց ես չէի ցանկանայ իմ նախահարց արեան վրէժը Արշակունիների թագաւորութեան կործանման մէջ գտնել, և իմ դաւաճանութեամբ յափշտակած գահը դնել նրանց դըժբախտ աւերակների բեկորի վրա... Ուրեմն ինչը ձգեց ինձ այդ թշուառ դրութեան մէջ... Ի՞նչը հարկադրեց ինձ՝ ուրանալ իմ Աստուծուն, ուրանալ հայրական կրօնը, ուրանալ ամեն ինչ, որ նուիրական էր ինձ համար, և երկրպագութիւն տալ պարսից աստուածներին... Ի՞նչը քարացրեց իմ հաւատը, ինչը խեղդեց իմ մէջ ազգային բոլոր սուրբ զգացմունքները...—Միայն դու, քո սէրը միայն, ով Որմիզդուխտ...

Այդ անունը արտասանելու միջոցին՝ նա խոնարհեցաւ, ծունր դրեց գետնի վրա, կարծես, երկրպագութիւն էր մատուցանում մի երկնային աստուածուհու։

«Ես սիրում էի քեզ, Որմիզդուխտ. խելագարութեան չափ սիրում էի քեզ... Այդ գիտէր քո թագաւոր—եղբայրը, և այդ թուլութիւնից օգուտ քաղեց նա... Ամեն խոստմունքներ, ամեն պարգևներ, ինչ որ ամենաբարձր էր մարդկային փառքի և վայելչութեան համար, — խոստացաւ նա ինձ, բայց չը կարողացաւ խախտել իմ հաւատարմութիւնը՝ թէ դէպի իմ հայրենիքը և թէ դէպի իմ թագաւորը։ Իսկ քեզ տալով, նա խլեց ինձանից բոլորը, ինչ որ սուրբ էր ինձ համար, ինչ որ թանգագին ամենաւատ ցանկութիւնները, միայն քեզ ստանալու համար ով Որմիզդուխտ...

Մի քանի բոպէ տիրեց նրան մի խորհրդաւոր լռութիւն։ Ջերմ արտասուքը հեղեղի նման թափւում էր աչքերից, և խուլ ապաշաւանքը ալէկոծում էր նրա սիրտը։

«Սիրո՛ւմ եմ... չեմ կարող սպանել իմ մէջ այդ սէրը»... յանկարծ բացականչեց նա, և բարձրացաւ իւր տեղից։

Նա կրկին աչքերը դարձրեց դէպի երկինքը և, երկու ձեռքերը դէպի վեր տարածելով, գոչեց.

«Ո՛վ Տէր Տէրանց, ով Աստուած Աստուծոց, ցոյց տուր ինձ այն անօթը, որ կրում է իւր մէջ սիրոյ կենսատու կաթիլները, ցոյց տուր, ով Տէր, ես կը փշրեմ, ես կը խորտակեմ այդ անօթը, որովհետև նրա մէջն է ամփոփուած իմ բոլոր թշուառութիւնը... Ինչո՞ւ դրեցիր իմ մէջ այդ անօթը. ով Տէր, ինչո՞ւ վառեցիր իմ սիրտը այդ անշէջ կրակով... Թո՛ղ չը լինէր կնոջ սէրը, թո՛ղ յաւիտեան չը լինէր նա, և ես աւելի բախտաւոր կը լինէի... Այդ սիրոյ համար ես կատարեցի և պիտի շարունակեմ կատարել դըժոխային բարբարոսութիւններ... Ես թոյլ եմ, ես անզօր եմ, ով Տէր. քո հզօր ձեռքը միայն կարող է մահացնել նրան... Աղաչում եմ, մեռցրո՛ւ նրան և բոլորովին ցամաք անապատ դարձրո՛ւ իմ սիրտը, որպէս զի դադարեն իմ մէջ բոլոր կրքերը»...

Յանկարծ լռեց։ Դարձեալ արտասուքը սկսեց հոսել նրա աչքերից։ Դարձեալ զգացմունքների կատաղի մրրիկը սկսեց ալէկոծել նրան։ Երկար այդ խռովութեան մէջ տանջւում էր նա, մինչև խելագարի նման ձեռքը տարաւ դէպի բորբոքուած ճակատը, դողդոջուն ձայնով արտասանեց.

Ո՛չ, ո՛չ, ով Տէր, ես սիրում եմ... առանց նրան

ինձ համար լոյս և կեանք չը կայ... Դու ստեղծեցիր սէրը, Դու դրեցիր իմ մէջ սէրը, և Դու պէտք է լինիս նրա զօրաւիգը... Նա Քո արարչագործութեան ամենամեծ արդիւնքն է... Ժամանակներից առաջ Քեզ յայտնի էր նրա եւ մահացուցիչ զօրութիւնը... Դու գիտէիր, թէ որպիսի անողորմ ձեռքով պէտք է դարձնէ նա մարդկանց սրտերը՝ թէ դէպի չարը... Ինձ ձգեց վերջին ճանապարհի վրա, և պէտք է շարունակեմ առաջ գնալ... Թող աշխարհի մէջ մի անարգ նշաւակ դառնամ ես, թող ապագայի համար յաւիտենական դատապարտութեան առարկայ դառնամ ես, թող ամեն օր անէծքով արտասանէ իմ անունը,—բայց ես սիրում եմ, և կը սիրեմ... Իմ անգին Որմնզդուխտը պէտք է լինի Հայաստանի թագուհին, իսկ ես պէտք է դառնամ թագաւոր, միայն նրան արժանի լինելու համար... Թող արիւնով ոռոգւի այն ուղին, որ տանում է ինձ դէպի Հայոց գահը... Թող դիակներով կազմւի այն սոսկալի ամբարտակը, որ կը հասցնէ ինձ մինչև այդ բարձրութիւնը... Բոլորը քա՛ղցր է ինձ համար, բոլո՛րը ախորժելի է ինձ համար, որովհետև այդ բարձրութեան վրա պէտք է վայելեմ նրա սէրը...

Առաւօտեան, դեռ արևը նոր էր ծագել, դեռ նոր հօտերը քշում էին դէպի մերձակայ արօտները, երբ Մանիի տաղաւարին մօտեցան երեք սպառազինւած ձիաւորներ։

—Այստեղից անցա՞ւ մի սպիտակ ձիաւոր,—հարցրեց նրանցից մէկը։

—Նա գիշերը ինձ մօտ հիւր էր,—պատասխանեց հովիւը։

—Ի՞նչ եղաւ։

—Գնաց։

—Ե՞րբ գնաց։

—Նա եկաւ գիշերով և գնաց գիշերով։

—Ո՞ւր գնաց։

—Մութն էր, ես նրա ետևից երկար նայեցի, բայց նկատել չը կարողացայ, թէ ո՛ւր գնաց։—Ո՞վ էր նա,—հարցրեց հովիւը, ինքն ևս հետաքրքրւելով։

«Ա՜խ, եթէ գիտենայի՛»... իւր մտքում ասաց հովիւը և մնաց շւարած։

«Ա՜խ, եթէ փոքր ինչ շուտ հասնէինք»... մտածեցին ձիաւորները և հեռացան։

ԽԵՆԹ

(ՀԱՏՒԱԾՆԵՐ)

ՏԱՆՈՒՏԷՐ ԽԱՉՕԻ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

Բագրևանդի գաւառում, Ս. Յովհաննու (Ուչ-Քիլիսայի) վանքից ոչ այնքան հեռու, Եփրատի վերին վտակներից մէկի ափի մօտ, գտնւում էր O... հայաբնակ գիւղը։ Նա դրւած էր մի բաւական ընդարձակ հովտի մէջ, ուր բնութիւնը չէր խնայած այն բոլոր նկարները, ինչ որ պէտք էին նրան գեղազարդելու համար։ Հովիտը տարածւել էր երկու լեռնաշղթաների մէջ, որոնք ալիքաւոր բարձրութիւններով շուրջանակի սեղմել էին նրան իրանց գրկում, տալով նրա տարածութեանը ձւաձև կերպարանք։ Մէջ տեղից ոլոր-մոլոր պտոյտներով անցնում էր Եփրատի վտակը, որին տեղացիք կոչում էին Աղ-սու, այսինքն սպիտակ ջուր։ Նա այնքան մաքուր էր, որ արժանի էր այդ կոչմանը։ Հովտի չորս կողմի սարերը պատած էին ճոխ արօտամարգերով, որոնք առատ սնունդ էին տալիս այնտեղ արածող բազմաթիւ անասունների հօտերին, իսկ տափարակի ամբողջ հարթութիւնը պատած էր ցորենի, գարու, կտաւհատի և զանազան ընդեղէնների արտերով։ Այստեղ երկրագործի աշխատող ձեռքը չէր թողել ոչ մի կտոր հող անմշակ։ Հովտի մէջ, մինը միւսից հեռու, գտնւում էին մի քանի հա-

յաբնակ գիւղեր, որոնք թաղնւած էին այգիների և ձեռատունկ ծառերի մէջ, և հեռուից նայողի աչքին ներկայանում էին որպէս կանաչազարդ անտառիկներ, որոնք առանձին խմբերով որոշւում էին տափարակի մերկութիւնից, որ զուրկ էր ծառերից։

Հովտի բոլորովին ծայրումն էր դրած O... գիւղը և գոգաւորւած ձորակի մէջ։ Տանուտէր Խաչօի բնակարանը — նրա իսկական անունը Խաչատուր էր — էր այն տներից մէկը, որ թէ իր մեծութեամբ և թէ հարստութեամբ որոշւում էր միւսներից։ Այս տնից ամեն առաւօտ քշում էին դէպի նախիրը հարիւրի չափ անասուններ։ Նրա կովերը, գոմէշները, եզները և ձիաներն էին ամենաընտիրները ամբողջ գիւղի մէջ։ Այս տանն էին պատկանում հազարի չափ ոչխարներ, որոնք սեփական հովիւների հսկողութեան ներքոյ արածում էին մերձակայ լեռների վրա։ Այդ տանն էր պատկանում այն ահագին ձիթահանը — ձէթ դուրս բերելու գործարանը, — որ գտնւում էր գիւղի մէջ։ Այս տանն էր պատկանում այն գեղեցիկ ջրաղացը, որ գտնւում էր գիւղից դուրս, ուր անիւները տարւայ բոլոր եղանակներում անդադար բանում էին։ Բայց այն, որ աւելի նշանաւոր էր Խաչօի հարստութեան մէջ — դրանք էին նրա եօթն որդիները, որոնք մինը միւսի ետևից հասած, ներկայացնում էին նրա տան հարստութեան սիւները։ Որդիները բոլորը ամուսնացած էին, և տունը լցւած էր ամեն հասակի երեխաներով։ Ամուսնացած էին և նրա թոռներից մի քանիսը. նրանք նոյնպէս զաւակներ ունէին։ Եւ ծերունի Խաչօն իր աչքի առջև տեսնում էր մի քանի սերունդ, որ ապրում էին միասին, որ կազ-

մում էին մի փոքրիկ աշխարհ։ Գիւղում առակի ձև էր ստացել այն խօսքը, թէ «Խաչօն այնքան զաւակներ ունի, որքան անասուններ»։

Խաչօի եօթն որդիներից առանց ամուսնանալու մնացել էր ամենակրտսերը, մանկահասակ Ստեփանիկը, որը դեռ նոր էր մտել իր տասն և վեց տարեկան հասակի մէջ։ Բայց նրա դէմքին նայելով, կարելի էր իսկոյն նկատել, որ տարիները դեռ չէին տուել նրան այն պատանեկական հասունութիւնը, որ յատուկ էր այդ հասակին, մանաւանդ մի այնպիսի տաք երկրում, ուր պատանիները խիստ վաղ այրանում են։ Ստեփանիկի դէմքը դեռ կրում էր իր վրա մանկական նուրբ քնքշութիւններ իրանց հրապուրիչ թարմութեամբ։ Խաչօի բոլոր որդիները դրսում իրանց առանձին պարապմունքները ունէին թէ հողերի մշակութեան մէջ և թէ անասունների դարմանելու մէջ, և խիստ հազիւ էին տանը գտնւում։ Միայն Ստեփանիկն էր, որ շատ փոքր էր մասնակցում նրանց աշխատութիւններին։ Նա Խաչօի Յովսէփ գեղեցիկն էր, որին ծերունի նահապետը չէր հեռացնում իր աչքից։

Ստեփանիկի և Յովսէփ Գեղեցկի մէջ կային շատ նմանութիւններ, ոչ այն պատճառով միայն, որ նա Իսրայէլի որդու պէս սիրուն էր, խելացի էր և համակրական էր,—այլ և այն պատճառով, որ ինչպէս Յովսէփի, այնպէս էլ Ստեփանիկի հագուստի և զարդարանքի վրա առանձին ուշադրութիւն էին դարձնում։ Նրա հագին միշտ կարելի էր տեսնել Հալէպի ծաղկաւոր բեհեզից գոյնզգոյն զօլերով կարած պատմուճանը, որի վրա հագած ունէր ծիրան մահուդից պատրաստած թիկնոցը, որ զարդարած էր

ոսկի թելերով։ Մէջքը պնդած էր Քիրմանի շալի գօտիով։ Լայն շալւարը պատրաստւած էր Վանայ նուրբ կերպասից։ Ոտներին հագած ունէր Արզրումի կարմիր կօշիկներ։ Գլխին ծածկած ունէր կարմիր ֆէս մետաքսեայ սև փունջով, որ փաթաթած էր գունաւոր տուրբանով, նոյնպէս մետաքսեայ նուրբ գործւածներից։ Ֆէսի տակից թափւել էին նրա շագանակի գոյն մազերը, որ սփռւել էին ուսերի վրա։ Մի բանով միայն որոշւում էր Յովսէփ-գեղեցկից, որ Յովսէփի եղբայրները նախանձում էին հօրից սիրւած որդու վրա, բայց Ստեփանիկի եղբայրները բոլորը սիրում էին նրան։

Ծերունի Խաչօի տունը հեռուից բոլորովին հին և նախնական ամրոցի տպաւորութիւն էր գործում։ Նա գտնւում էր մի բարձրաւանդակի վրա, և թէ իր շինւածքով, թէ դիրքով, ունէր այն բոլոր յարմարութիւնները, որ պէտք էին մի բնակութիւն ազատ պահելու համար արտաքին թշնամիներից։ Այդ ամրոցը պատած էր չորս ահագին պարիսպներով, որոնք քառակուսի ձևով միմեանց հետ միանալով, թողնում էին իրանց միջնավայրում բաւական ընդարձակ տարածութիւն, որի վրա կառուցւած էին զանազան շինութիւններ։ Դրսից ոչինչ չէր կարելի տեսնել, բացի չորս բարձր աշտարակներից, որոնք միացնում էին պարիսպների չորս անկիւնները։ Ամրոցի շրջապարսպի մէջ զետեղւած էին բոլոր բնակութիւնները, բոլոր ծածկոցները, որ պէտք էին մի կանոնաւոր տնտեսութեան համար։ Այստեղ էր ոչխարների գետնափոր գոմը, այստեղ էր ձիերի, կովերի և գոմէշների փարախը, որ, անասունների տեսակի համեմատ, առանձին-առանձին բաժանմունք-

ներ ունէր։ Այստեղ կային և մի քանի խուղեր, որոնց մէջ բնակւում էին ծերունի Խաչօի հովիւները և ծառաները իրանց ընտանիքներով, որոնք բոլորն ազգով քուրդ էին. կնիկները ծառայում էին, որպէս աղախիններ, իսկ տղամարդիկը, որպէս նախրապաններ, հովիւներ կամ երկրագործական մշակներ։ Մի խօսքով, այդ ամրոցի մէջ բովանդակւում էր մի փոքրիկ գիւղ, որի միակ տէրը և պետը ծերունի Խաչօն էր։

Նրա գերդաստանի համար որոշւած բնակարանները իրանց շինւածքով և բաժանումներով այնքան բազմատեսակ և բաղադրեալ չէին, որպէս այս յօրինել է մեր նոր քաղաքակրթւած աշխարհը։ Այլ դեռ ևս պահպանել էին այն նախնական պարզութիւնը և ձևը, երբ մի ամբողջ ընտանիք ապրում էր մի վրանի տակ, այն զանազանութեամբ միայն, որ այժմ այդ վրանին փոխարինում էր քարեղէն շինւածքը։ Նրա բազմաթիւ որդիների համար, որոնց իւրաքանչիւրը իր զաւակներով մի մեծ ընտանիք կարող էր կազմել, առանձին սենեակներ չը կային, այլ բոլորը ապրում էին մի և նոյն յարկի տակ, մի և նոյն սենեակում, որ ուրիշ ոչինչ էր, եթէ ոչ չորս պատ, ծակած ահագին գերաններով։ Այստեղ վառում էին, այստեղ թխում էին, այստեղ կերակուր էին պատրաստում, այստեղ բոլորը միասին ուտում էին և այստեղ բոլորը միասին պառկում էին։ Այստեղ կարելի էր տեսնել նորածին հորթեր, փոքրիկ ուլեր, որոնք խառնւած երեխաների հետ, վազվզում էին, թռչկոտում էին, աղաղակում էին և տունը լցնում էին կենդանի աղմուկով։ Այստեղ հաւերը շատ անգամ ներս էին մտնում և յատակից քաղում էին

փշրանքներ կամ ուրիշ այս տեսակ բաներ, որոնք երեխաների ձեռքից անխնայ ցած էին թափւում։ Մի խօսքով, դա Նոյի տապանն էր, ուր զետեղւած էին ամեն տեսակ կենդանիներ։ Այդ բնակարանին կից էր մի երկրորդ։ Դա առաջինից զանազանւում էր նրանով միայն, որ առջևի ճակատը բոլորովին բաց էր և նայում էր բակին։ Դրան կոչում էին սրահ և ծառայում էր, որպէս ամառւայ բնակարան։ Սրահի միջից բացւում էր մի դուռն գլխաւոր սենեակի մէջ, և այսպիսով նա ներկայացնում էր բուն բնակարանի նախադաւիթը։ Դրանց կողքին կար մի առանձին փոքրիկ սենեակ, որին կոչում էին օդայ. նրա դռները բացւում էին այն ժամանակ միայն, երբ տանը հիւր էր գալիս, և միշտ պահւում էր մաքուր ու զարդարւած։

ԳՈՄՇԱՄԱՐՏԸ ԳԱՐՆԱՆ

Չը նայելով կեցութեան այդ անշուք և պարզ ձևին, կեանքը այդ նահապետական տան մէջ սահում էր ուրախ և լի ամէն բաւականութիւններով։ Աշխատանքը անդադար եռ էր գալիս և Աստուծոյ օրհնութիւնը թափւում էր այստեղ իր բարութիւններով։ Ծերունի Խաչօի ամբարները միշտ լիքն էին լինում ցորենով, իւղով, ձէթով և գինիով։ Տարւայ բոլոր եղանակներից օգուտ էր քաղում նա. թէ ցուրտ և թէ տաք օրւայ համար նա միշտ գործ և պարապմունք ունէր։

Ահա՛ լեռների ձիւնը սկսեց հալւել, դաշտերը վաղուց ժպտում էին գեղեցիկ կանաչով։ Գարուն է։ Օդը տոգորւած անուշահոտ ջերմութեամբ՝ կեանք է է սփռում դէպի ամէն կողմ։ Ջրերի միջից վազում են հարիւրաւոր աղմկալի վտակներ և օձապտոյտ ընթացքով տարածւում են հովտի մէջ։ Նորեկ ծիծեռնակը հրաւիրում է մշակին դէպի գործ։ Խաչօի որդիները արդէն պատրաստել են արօրը և գութանը։

Արևը դեռ նոր էր սկսել ծագել. դեռ նոր սարերի ձիւնապատ գագաթները վառւում են վարդագոյն ճառագայթներով։ Ծերունին դառնում է առաւօտեան ժամից, աջ և ձախ ամէն հանդիպած մարդուն «ողորմի Աստուած» ասելով։ Նրա որդիները այսօր առաջին անգամ պէտք է դուրս բերեն եզներին և գոմէշներին, որոնք ամբողջ ձմեռը ախոռում

կերել, գիրացել, հանգստացել են, և ամենևին դրսի լոյսը չեն տեսել։ Մեծ զւարճութիւն է գիւղացու համար այս տեսարանը, և այս պատճառով նրանցից շատերը հաւաքւել էին Խաչօի տան դրան մօտ, որ տեսնեն, թէ ինչպէս էին պահել և խնամել նրա անասունները։

—Աչքդ լոյս, տանուտէր Խաչօ, հարցրեց նրան գիւղացիներից մէկը.—այսօր տղերքը ուզում են «խամից հանել» գոմէշներին։

—Հա՛, ժամանակ է, մինչև երբ ներսումը պահենք. տէրտէրից հարցրի, ասաց «օրը բարի է». ես էլ կամեցայ, որ այսօր դուրս հանեն, պատասխանեց տանուտէրը, մի առանձին նշանակութիւն տալով քահանայի խօսքերին։

Այս միջոցին ներսից լսեցան զանգակի ձայներ, և բազմութիւնը յետ քաշւեցաւ ճանապարհ բաց անելու համար։

—Այդ Զօրան է, լսելի եղաւ ամէն կողմից։

Զօրա կոչում էին տանուտէրի նշանաւոր գոմէշներից մէկին, որի ճակատը սպիտակ լուսնաձև պիսակ ունէր և որը հռչակւած էր ուժով և մեծութեամբ։ Վիթխարի անասունը փնչալով, փնչելով, դուրս պրծաւ տան դռնից։ Գետինը դողդողում էր նրա ոտների տակ։ Նա յանկարծ կանգ առեց դրան առջևի հրապարակի վրա, և գլուխը վեր բարձրացնելով, սկսեց նայել իր շուրջը։ Նոյն միջոցին ծերունի տանուտէրը զարկեց նրա ճակատին մի ամբողջ անեփ ձու։ Ձուն փշրւեցաւ և դեղնագոյն հեղուկը տարածւեցաւ սպիտակ ճակատի վրա։ Այդ նրա համար էր, որ չարը խափանւի և նրան «աչք

չառնէր։ Զօրան այդ գործողութիւնից խրտնեցաւ, և եղջիւրները թափ տալով, մի սարսափելի թռիչք գործեց և յարձակւեցաւ այնտեղ հաւաքւած ամբոխի վրա։ Նոյն միջոցին վրա հասան ծերունու որդիները և անհագին մահակներով աշխատում էին յետ դարձնել ամեհի անասունին։ Մարդկային ուժը պատերազմում էր վայրենի ուժի դէմ։ Փարախի մթութիւնից դէպի լոյս աշխարհ դուրս գալով, Զօրայի անսովոր աչքերին ամեն առարկայ անորոշ ձևով և մռայլի մէջ էր տեսնւում։ Նա այժմ մինչև անգամ չէր ճանաչում իր տէրերին, որ ամբողջ ձմեռը նրան կերակրել էին և որոնց ձեռքերը շատ անգամ խոնարհութեամբ լիզել էր նա իր հանգստութեան ժամանակ։ Կատաղի մոլեգնութեան մէջ յարձակւում էր նա այս կողմ և այն կողմ։ Ընդդիմադրութիւնը անհնարին էր։ Խաչօի վեց որդիները ամեն կողմից հարւածում էին նրան։ Բայց անհագին մահակների հարւածները ընդունում էր նա, որպէս մի թեթև տաշեղի զարկը։ Տէրունի տանուտէրը հեռու կանգնած լի հրճւանքով նայում էր այդ սոսկալի կռւին, որ կարող էր պատիւ բերել ամենանշանաւոր հռոմէական կրկէսին։ Նրա աչքերի առջև հանդիսանում էին երկու չափազանց ուժեր. մէկը իր քաջ որդիների ուժը, միւսը իր վիթխարի անասունի ուժը։ Երկուսն էլ հաւասար նշանակութիւն ունէին նրա համար։ Այդ երկու ուժերից կախումն ունէին նրա տնտեսութեան բոլոր աշխատութիւնները։ Այժմ կռիւը աւելի սաստկացաւ, որովհետև կուրեցաւ Զօրայի վզի հաստ շղթան, որից քարշ էին տւած մի ահագին գերանի կտոր, որպէս զի արգելէր նրա համարձակ քայլերը։ Գիւղացիները չւաններով վրա

վազեցին, որ կաշկանդեն նրան։ Բայց ամեհի անասունի ամեն մի շարժումը բաւական էր չւանները կտրատելու համար։ Նա յարձակւում էր դէպի ամեն կողմ, և ամբոխը ճանճերի նման փախչում էր նրա առջևից։ Այդ զարհուրելի խռովութեան միջոցին կատարւեցաւ մի հրաշալի քաջութիւն։ Տէրունի տանուտէրի միջնակ որդին, որին կոչում էին Ապօ, առիւծի արագութեամբ վրա վազեց և բռնեց Զօրայի պոչից։ Կատաղած անասունը, նկատելով այդ արհամարհական յանդըգնութիւնը, շտապեց գլուխը յետ դարձնել, որ իր եղջիւրներով պատժէ անզգամին։ Գործւեցան մի քանի սաստիկ պտոյտներ։ Զօրան աշխատում էր յետ դառնալ, որ հարւածէ իր հակառակորդին, բայց Ապօն նրա պոչից պինդ բռնած, պտոյտւում էր նրա հետ։ Այդ մենամարտութիւնը տևեց մի քանի րոպէ։ Ամեն կողմից լսելի էին լինում զարհուրանքի ձայներ։ Զայրացած գազանը մռնչում էր և գետնի մէջ ակօսներ էր ձգում իր ոտների շարժումներով։ Թանձր փոշին վեր էր բարձրանում, և երկու կռւողները կորած էին հողեղէն ամպի մէջ։ Նոյն միջոցին վրա հասան Ապօի եղբայրները և շղթաներով կաշկանդեցին Զօրային։ Ամեն կողմից այժմ լսելի եղան ուրախութեան ձայներ։

Տէրունի տանուտէրը մօտեցաւ Ապօին և նրա ճակատը համբուրելով, ասաց.

— Աստուծոյ աչքը թող քո վրա լինի, որդի՛, իմ երեսը սպիտակացրիր։

Այս խօսքերով նա կամեցաւ յայտնել, որ Ապօն չը թողեց հօրը ամաչել ժողովրդի առջև։ Ցեռոյ

նա մօտեցաւ Զօրային, որպէս իր միւս զաւակին, և ձեռքով նրա գլուխը շոյելով, ասաց.

—Զարաճճի, ինչու էիր այսպիսի գժութիւն անում։

Բայց Զօրան այժմ հանգիստ էր. Նրա աչքերի մռայլը փարատել էր. նա այժմ ճանաչում էր իր տէրերին, և, կարծես, փօշմանել էր իր գժութեան վրա։ Նրա պարանոցից կրկին կապեցին հաստ շղթան, կրկին շղթայից քարշ տւեցին ահագին գերանի կտորը, որի միւս ծայրը հասնում էր գետին և անցնում էր անասունի առջևի երկու ոտների միջից, և այնուհետև սկսեցին քշել դէպի գետը, որ լւանան, որ զովացնեն նրան սառը ջրի մէջ։

Գիւղացիների բազմութիւնը դեռ չէր հեռացել ծերունի Խաչօի տան դռնից, որովհետև Զօրայից յետոյ պէտք է դուրս բերէին միւս գոմէշներին, որոնք մինը միւսից աւելի ամեհի էին։ Բայց այս անգամ ծերունու որդիները աւելի զգուշութիւններ գործ դրեցին և մի առանձին անկարգութիւն չը պատահեցաւ։ Նրանք հերթով դուրս էին բերում գեղեցիկ, առողջ, գէր ու պարարտ անասուններին, որոնց իւրաքանչիւրը ամեն մի գիւղատնտեսական հանդիսարանի մէջ կարող էր առաջին մրցանակը ստանալ։ Տանուտէրը հիացմունքով նայում էր նըրանց վրա և փշրում էր նրանց ճակատին կախարդական ձուն, որ ազատ պահէ չար աչքից։ Բացի դրանից, նա տէրտէրին գրել էր տւել մի-մի թիլիսմանական աղօթք, և եռանկիւնի ձևով կանաչագոյն կաշու մէջ կարելով, քարշ էր տւել իր անասունների պարանոցից։ Գիւղացիները տեսնելով, գովում էին Խաչօի որդիներին, որ կարողացել էին. այնպէս

լաւ պահել իրանց անասուններին։ Հայրը, լսելով իր որդիների գովասանքը, ուրախանում էր։ Այսպէս պէտք է նրանք ամեն օր դուրս բերէին „խամ պահած“ անասուններին, մինչև մի փոքր ընտելանային, մինչև մի փոքր սովորէին դրսի օդին և լոյսին, որ այնուհետև սկսէին հերկը հերկել։

ՊՌՈՇՅԱՆ

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՕՆԸ

(ՀԱՏՈՒԱԾ)

Համբարձման չորեքշաբթի օրն ամեն տան էլ պատրաստութիւն կայ․ որոնք ձիան են ճարել, պտի գնան Ծաղկեվանք ուխտ, որոնք էլ չեն ուզում գնալ, պտի գնան ծաղիկ քաղելու։ Թունդրներիցը անուշ գաթի հոտը հէնց ա վեր էլել, որ աշխարհքս բռնել ա, պաշար ա, որ կապում են․ խաչալւայ գինի ա, որ տկերի մէջն են լցնում։ Ըխտաւորի տուտը գետի կարմունջն անց ա կացել։

Անուշին էլ իրա քեռակինը հետը տարաւ Ծաղկեվանք, որ իրանց ուրախացնի, ջանգիւլումով, ծաղիկ զովլի։

Ամեն ձիու վրա նստած են իրեք հոգի․ մի կնիկ, մի աղջիկ թարքին, մի երեխայ էլ առաջին։

Ըխտաւորները գնացին․ Մնացողները ամեն կնիկ իրան թոռունն առած՝ գնացին մի նոր պըսակւածի տիրոնջ տուն, որ էրթան յիքանիքը, ձորերը, եա Պառուելակոնդը ծաղիկ քաղելու։

Էլ յետ յիքանիքը լցւեցին քօմմա կարմիր ու աղրի մաշկներով, պառաւ կնանիքն իրար մօտ հաւաքւած քչփչացին, զրից ուէին, սրա՝ նրա վրա բամբասանք արին, համա ջահել աղջկէքն ու հարսները կանանչ ու կարմիր շորերով, վաղէվազ անելով, ընկան յիքանոնց թմբերի, եա թէ չէ դուերի (քարոտ տեղեր) մէջը։

Մինը վազում ա մի ծաղկի վրա որ քաղի, մէկէլը տեսնելով նրան, ինքն էլ զառան նման թըռչկոտելով գալիս ա նրա մօտն ու նրա ձեռքիցը հըմբում (խլել), ինքը քաղում, որ ասի, թէ ես շատ եմ քաղել։ Ծաղիկ ա, որ գոգերը լցրած բերում են։ Մինը փշատու ճուղքը կոացրած՝ նրա ծաղկներն ա ճղքով կոտրատում․ մէկէլը դեղին ու կարմիր խընկածաղիկը փէշը լցրած՝ ծիծաղելով պարծենում ա ընկերի կշտին, թէ իմ քաղածը լաւն ա քունիցը․ մինը ծացւենալուկի ծաղիկ ա խոխտ արած բերում, որն էլ բուլի-բուլի ծաղիկ, եա թէ չէ տատաշի ծաղիկ գոգն ածած՝ բերին ափումը կնանոնց կշտին կիտեցին, էլ յետ դառնան ուրիշ ծաղկի։

Վարդիթերն էլ մի քանիսի հետ ծաղիկ քաղելու էր գնացել, նա էլ իրա քաղած ծաղկները բերուց ընտեղ։

Ծաղիկը քաղելուց յետոյ, էկան, բոլորւանքի նստեցին։

*Ամեն աղջիկ իրա բերած ծաղիկը քաշեց առաջ ու սկսեցին փունջ-փունջ կապել, կանանչ խոտի վրա կիտել։ Վարդիթերն էլ ծաղկամէրը *) ձեռն առաւ, մի օրինաւոր հազար թուրլու (բազմերանգ) ծաղկից կապեց։*

Ծաղիկը զովլին սկսեց եալլիբաշի Խանումը,

**) Ծաղկամէրն է խաչաձև փնջած ծաղիկ, որ ծաղիկը բաժանելուց յետոյ նւիրում են եկեղեցուն։*

որ մէկէլների էլ լիզուն բացուի.—Աղջկէք, ասեց, դուք ձէն պահեցէք, ես ասում եմ ջան գիւլումը.—

Ասեց ու վեր կալաւ բարակ ձէնով.

Խնձոր ունիմ կծած ա,
ջան գիւլում ջան, ջան,
Չորեք կողմն էրծաթած ա,
ջան ծաղիկ ջան, ջան.
Ախպէրս ուզեց չի տուի,
ջան գիւլում ջան, ջան,
Ասի եարի ղրկած ա,
ջան ծաղիկ ջան, ջան։
Ա՛յ տղայ, հիլ անիլ տուր
մատնաչափ գիր անիլ տուր,
Ինձանից էլ քեզ ճար չի կայ—
քաքուլըդ վէր անիլ տուր։
Ես աղջիկ եմ, ալ կուզեմ—
միջքինս չալ չալ կուզեմ.
Երբ ես էկայ ձեր տունը—
ոսկին սարէսար կուզեմ։
Ամպել ես ամպի նման—
շաքար ու ղանդի նման.
Իմ նշանն ինձ ո՛նց ա պահել—
ծալած գիւլբանդի նման։
Ամպել ա, ձուն չի գալիս,
մթնել ա, տուն չի գալիս.
Էս անտէր բարձի վրա—
առանց եար քուն չի գալիս։

Ծաղիկը գովեցին պըծան, բերին սուփրէն փռեցին կանանչ խոտի վրա, ամեն կնիկ իրա բօխչի միջինը լցրուց մէջտեղ։

Գինու գալը ձեռն առաւ Թանումը, հարսնեներին ու աղջկերանցն էլ ասեց, որ երեսները դէն արած՝ նստեն, ինքն էլ կոտրած քթալի ղէս մէջ ընկած՝ նրանց էլ հաց, խորակ, տուուց, մին էլ թէրմունի գալը։

Կնանիքը ջոկ նստեցին քէֆ արին, հարս ու աղջկէքը ջոկ։

Վարդիթերի մէրը մի երեխի ձեռով մի սուփրա էլ շինեց ապաղ տղէքանցը, որ յիքու մէկէլ դինը հաւաքուած էին։

Իրիկուան ժամը ուէին ու հացից վեր կացան. Էս Թօքունը գնաց Վարդիթերենց տունը, չունքի նրանց նորահարս ունէին, նրա ծաղկաքաղն էր։ Մի քիչ դէսից դէնից զրից ուէին ու Վարդիթերը մէջտեղ բերուց ծաղիկը, որ յիքումը գովել էին՝ ծաղկամէրն էլ մէջտեղը դրած։ Հիմի կարգին նստեցին նորից նոր գովիլ. էն թաւը չէր. օրէնքը հիմի ա։

Իմ միջկինս քամար ա—
քու ունքերդ կամար ա,
Ա՛յ տղայ, ինչ ես միտ անում—
իմ ջանս քեզ համար ա։
Գութանը հաց եմ բերել—
բերանը բաց եմ բերել։
Տես քեզ ինչքան եմ սիրում—
ձկնով տապկած եմ բերել։
Էրթկի վրէն թինդնել ես—
էրթկի կոճը բռնել ես.
Հէրս քեզ աղջիկ չի տալ—
ափսոս քունդ կտրել ես։

Յետոյ խանումը սկսեց հաւկիթը շուռ տալ։ Տեփուրն առաւ ձեռը ու շուռ տալով ասեց.

Սկլա՛, սկլա՛, պատին տո՛ւր,
հաւկիթը շուռ տո՛ւր,
Վախում եմ քնիմ, քունս տանի,
չարաւս տանիլ տամ։

Մին էլ շուռ տուեց տէփուն ու ասեց.

Սկլա՛, սկլա՛, պատին տո՛ւր,
հաւկիթը շուռ տո՛ւր,
Վախում եմ քնիմ, քունս տանի,
շալս տանիլ տամ։

Ամեն մի հետ տեփուրը շուռ տալումը, մի հետ «սկլա» էր ասում, ու գլխաշորիցը բռնած՝ ընչանք մաշկները մի մին տանիլ տալի. վերջին էլ ասեց։

Սկլա՛, սկլա՛, պատին տուր,
հաւկիթը շուռ տո՛ւր,
Վախում եմ քնիմ, քունս տանի,
մաշկներս տանիլ տամ։

Յետոյ մի քաղցր ձէնով, աղջկէքն էլ հետը ձէն ձէնի տուած, ասեցին.

Համբարձում, եայլա՛,
եայլա՛ ջան, եայլա՛,
Համբարձումն էկել ա,
մեր բաշին կաննելա,
Լաչակ ա գցել մէկ մէկի վրա,
Մինը տակևանց, մինը վերևանց.
Քա խաթուն Գիւլազ, հունարդ երևաց
Համբարձում, եայլա՛, եայլա՛ջան և այլն։

Խանումը, հէնց որ հաւկիթը շուռ տուին պրծան, վեր կալաւ Վարդիթերի մօրը, թէ—Խնամի ջան,

աչքդ լիս, փառք Աստու, անշառ, անխաթա անց կացրինք էս հաւկիթը, Աստուած մին էլ ուրախ սրտով, ցամաք աչքով էս օրը հասցնի։

—Աղբիւրդ անապառ, խնամի ջան, շնորհակալ ենք, լաւ ուրախութիւն արիր, մեր աչքի վրա, մեր գլխի վրա. բարեկամներ, դուք էլ բարով հազար բարի, Աստուած էս ուրախութիւնը ամենիդ տանն էլ ռաստ բերի։

Իրար շնորհակալութիւն արին, Աստծուն փառք տուին պրծան։

—Դէ բերէք, Վարդիթեր ջան, վիճակի բղուղը (աման) ասեց Խանումը, որ առաջ էր կաննել ամեն բանումը։

Մէջտեղ էկաւ վիճակի բղուղը լցրած մի քիչ ջուր, մի երկու բուռը խոժոռ աւազ։

Վէր դրին մէջ տեղն ու առաջ պառաւ կնանիքը մինը մի մատանիք, մէկէլը մի օղ, մինը մի քորոց, մէկէլը մի սև փող, եա դանակի չղպլինգ (անկոթ դանակ) քցեցին մէջն ու ասեցին։

—Գնացի սաղ աշխարհքը ման էկայ, շատ խէր ու բարի տեսայ, շատ փորձանքների ռաստ էկայ, էկայ ընկայ էս բղղի մէջը։

Հէնցն էլ կար, որ իրեք չորս բան էր քցում, ամեն մընի համար մտքումը մի խորհուրդ անելով. յետոյ ամենքն էլ մի մին բան քցեցին բղղի մէջը, Աստուածածնից խնդրեցին, որ խէրով բարով վիճակ ըլնի ու տարան պահեցին, որ առաւօտանց գան բանան, ամենքն իրանց վիճակըն իմանան։

—Մուղայթ կացէք, ձէն տուուց Խանումը, ազապ տղէքանց էլմը փէլմը (հնարագիտութիւն) ոչով չի իմանալ, կըգողանան, խաղք ու առակ կըլնինք. ա-

ման, Վարդիթեր ջան, տար հէնց տեղ դէր, որ ախպէրտինքդ չիմանան, մեր խեղճ երեխի բախտը ես գիտեմ. նրա խաթէն իր հետ ա. ուղուրը (ճակատագիր) լաւ չի, թէ որ գողանան. Ջահել աղջկէք, դուք էլ եկէք, էս ծաղիկը տարէք, պահեցէք, որ էքուց ման պտի ածւի. էդ ձեր բանն ա։

Մեր քէյվանքին (տանտիկին) էս իրիկուն ըսէնց անց կացնելից յետոյ, մնաք բարով ասին Վարդիթերի մօրն ու ամենքը գնացին իրանց տները։

Արի հիմի Սօսիցը հարցրու. հէնց որ յիքանոնց խիզանը (ընտանիքները) ցրւեցին, իրիկւայ ժամն էլ տըւին, Գարեգինը բաց թողուց Սօսին, գնաց ժամ. նա էլ ջոկւեց հետի տղէքանցիցը, մեն մենակ հետ դառաւ, էկաւ քարափի գլխին նստեց, աչքերը քցեց գետի խշխշան տեղը, մի քիչ միտք անելուց յետոյ մին էլ վառւեց ու ջունուն դառած՝ վեր կալաւ ջան գիւլումը էսպէս.—

Քո սիրուդ ինձ կսպանեմ—
աղջի՛, քու չարը տանեմ.
Դու իմ խօսքիս կամ արի—
նանիդ ռազի կանեմ։
Ձիթ մինթանէդ հնձաշ ա—
ունքերդ ղալմաքաշ ա.
Աղջիկ, ի՞նչ ես միտք անում—
իմ ջանս քեզ փէշքաշ ա։
Աղջի՛, ի՞նչ լաւ մազ ունիս—
սոխակի փարւաղ ունիս.
Խօսքիս ջուղաբ չես տալիս—
ի՞նչ շատ էշխ ու նազ ունիս։

Սօսը «ջան գիւլումով», քարափ դողացնելով, բան չի շինեց. գիժ մոզու պէս վեր թռաւ տեղիցը,

էկաւ իրանց տունն ու լուռ ու մունջ նստեց, ոչ պռօշը կպցրուց, ո՛չ բերանը մանանա դրուց։ Մէրը, ախպէրտինքը ինչքան էլ զոռ արին, եա բան հարցրին, հօ նրան ասած՝ հօ սար ու քօլին՝ մին ա թէ դու ձեր տանիցը ջուղաբ ուզիր, նա էլ քեզ հետ։

Խեղճ մէրն ու ախպէրտինքը տեսան, որ էլ չի խօսում, իրանք էլ սուս կացան. իմացան, թէ ընչի համար էր նրա լալանալը։

Հացից յետոյ մէրը տեղերը քցեց, տղէքանցը քնացրուց, Սօսին էլ ասեց, որ մաքի դրածից յետ կենայ. գիտէր, որ պտի քշերս տղէն անքուն մնայ. վախենում էր, թէ գլխին մի փորձանք չի գայ։ Համա Սօսը քառի պէս քառացել, լալի պէս լալացել էր. ոչ լսեց, ո՛չ էլ ծպտաց։

Խեղճ մէրը, որ անջախ կրակներումն էր էրւում ու շւաքներումը չէր հովանում, մտաւ տեղն ու տաք արուց. չուզեց քնի, որ տեսնի թէ տղէն ինչ ա ընում. համա ինսան էր, քնի գալու վախտը աչքերըն իրանց խփւեցին։

Սօսը նստել ու տեղումն աչքերը բաց էր պահում. քուն ու երազ իրանից փախել են. Միտք ա անում, թէ երբ մաքի դրածը կատարւի։

Աստծու լիսը բացւեց, կարմիր արեւը ոսկու պէս պսպղին տալով՝ Մասիսի վրիցը սաղ աշխարհքը բռնեց. տասը տարեկանից ցած աղջկէքը միմին տեփուր գլխներին՝ ծաղկի փնջերով լիքը, դռնէ դուռը ման են գալի, ամեն տան մի փունջ տալի ու ասում.—«ծաղկամօր փայը տւէք»։ Նրանք էլ կաթն ու ձու են տալի կամ բրինձ, որ տանեն իրանց համար կաթնով փլաւ եփեն. ընչունքի էս օր ամեն աղքատ տան էլ պտի կաթնով կերակուր

էփվի. ունևորը չունևորին կըղրկի։ Ծաղկամէրն էլ, ծաղիկ բաժանելուց յետոյ, տանում են Նարմրաւոր եկեղեցու դուռը համբուրում ու ընտեղ վէր դնում։

Վարդիթերի մէրն էլ Համբարձում հինգշաբթի քշերհանայ վէր կացաւ տեղիցը. կաթնովն եփեց ու ղրկեց իրիկուան վիճակ քցողներին, կանչել տւեց, որ գան վիճակը հանեն։

Վարդիթերի սիրտը տըրփ-տրփում էր, թէ Երբ պտի վիճակը հանեն, որ իր բախտը փորձի։

Խալխը հաւաքւեցին ու Խանումը, որ աղաջբաշին էր, բերուց մի պստի հինգ տարեկան անմեղ աղջկայ, որ խէր ու շառը չէր ճանանչում. Նստացրուց նրան մէջտեղը, գլխին քցեց մի կարմիր քօղ ու վիճակի բղուղը տւեց ձեռը, որ հանի։ Ինքն էլ վէր կալաւ ու ասեց.

Սիրել եմ սերն երեսին,
Ռեհան թերն երեսին,
Ով իմ սիրածն ինձ չի տայ,
Աստու կրակն երեսին։

Երեխէն ձեռը տարաւ ու հանեց մի աղջկայ մատանիք։ Ամեն մի տեղից ձէն տւին.—աչքդ լիս լաւ կըլինի բանդ, վիճակդ լաւ դուս էկաւ։ Յետոյ Խանումը մի տուն էլ բան ասեց, մինն էլ դուս էկաւ, համա չի սազեց։ Խեղճ վիճակի տէրը սկսեց նոթերը կիտի։ ու հոգէց քաշելով յետ քաշւիլ դրաղ. համա ըէյւանի կնանիքը տսին, որ մէկէլ քցեն բղղի մէջը, բալքի սխալւեց։

Յետոյ ամեն կնիկ մի մին դհից մի բան ասեցին. որի վիճակը լաւ դուս եկաւ, որինը վատ։ Վերջը Խանումն ասեց.

Երթիկ երթիկ բունել ես,
Երթկատակին կաննել ես,
Իմ նանը քեզ աղջիկ չի տալ,
Անուշ քունդ կտրել ես։

Արի քօռ Թալանը (կոյր բախտ) տես, վա՛յ նըրան, ինչ Աստուած չի յաջողի. էս վայը Վարդիթերի գլխին եկաւ. էգուցը դրա մատանիքը դուս էկաւ։ Ամենն էլ մտիկ տւին խեղճ աղջկայ երեսին, որ հէնց տեսաւ իր մատանիքը թէ չէ, աչքերից գլգլալով վէր ածեց ու հէնց ուզում էր առնիլ գընալ յետ. մէրը մին էլ քցիլ տւեց, թէ ինչ ա, բալքի Աստծու աչքը վրէն քաղցրանայ, աղջկայ սրտովն ըլնի վիճակը։

Մի քանիսիցը յետը մին էլ ասեցին.

Ծաղիկ ունիմ ալայ ա,
Ալայ չի ալւալայ ա.
Եար բոնիլը լաւ կըլի,
Բաց թողալը բալայ ա։

Էլի երեխէն ձեռը տարաւ, բղղիցն էլի իրանը դուս էկաւ. Ջըլխս սիրտը կոտրած, աչքերը գետինը քցած՝ ասեց. մին էլ քցեցէք, հանքն իրեքումն ա, բալքի ով գիտայ, իմ վիճակն ընէնց ա։ Վերջը մին էլ ասեցին.

Էս օր ուրբաթ ա, պաս ա,
Ծոցինդ էրծաթէ թաս ա.
Հոգիդ դառի, վարդապետ,
Խիստ իր ասում չըհաս ա։

Մարդի բան որ մի հետ թարսւի, օխտը տարի էլ չարչարւես, չես կարող դըստիլ. էս էլ մեր խեղճ աղջկանը դուս էկաւ։ Ամենքը ջուր դառան ու սա-

ուած մնացին իրար երեսին մտիկ տալով. տեսան, որ աղջիկը ռանգը չմի քցեց, սկսեցին ամենքը մի դհից սիրտ տալ։ Մինն ասեց. Վիճակն ինչ ա, որ աւատում ես. մէկէլը՝ թէ սարքովի բան ա, կնանոնց խելքից դուս էկած ու դհա ուրիշ ըսէնց խօսքերով՝ ուզեցան Վարդիթերին ուրախացնեն։

Վիճակը որ պրծան, բողի ջրիցը ածեցին մի թասի մէջ ու երկու կնիկ իրանց ըթերովը բոշ բռնեցին, մէկէլը սրտումը մի մուրազ արեց ու ձեռը ջրի երեսին քսելով՝ ասեց.—Թէ աջ պտուի, խէր գայ։ Թասը էն ոհաթը առանց ժաժ տալու՝ պտուեց աջ. էս դհիցը աչքալիս խօսացին, որ նրա սրտի մուրազը կատարուեց։

Յետոյ ամեն կնիկ էլ սրտումը մի մուրազ առնելով՝ ձեռներ քսեցին. որինը աջ էր պտուում, աչքալիս էին խօսում, որինը ձախ՝ ասում էին՝ սուտ բաներ են, սրտի ումուտներ են, ուրիշ ոչինչ։

Մեր Վարդիթերն էլ մտքումն էս դրուց. Սօփին թէ կարողանամ էս աշունքին ուրախացնել, աջ պտուի։ Համա ինչ օգուտ, նրանը ձախւելուցն էր վեր կացել էս օր։ Կնանիքը տեսան, որ նրա բանը չի յաջողեց, ասին.—էս օր քեզ վրա չէկաւ, օրիցն ա, թէ չէ մի հետ էլ ա լաւ կըլինէր վիճակդ. համա նա իր գլուխը հէնց առաջի վիճակումը լաց էլաւ. ըստոնք աւելորդ էին։

Ամեն բանը երբ որ վերջացաւ, սուփրէն բերին քցեցին. պառաւները ջոկ նստեցին, հարսն ու աղջկէքը ջոկ. կաթնովի ամանները առաջ քաշեցին, կերան ու վրէն էլ խորովածը, նրա վրէն էլ ոսկուռանց գինին մին-մին խմեցին ու օրհնեցին էս օր-

ւան վիճակը, որ ումը լաւ դուս էկաւ՝ լաւ. ումն էլ վատ դուս էկաւ, Աստուած տայ, որ լաւանայ։

Երբոր հացից պրծան, շնորհակալութիւններ անելով՝ ամենքը իրանց երեխէքը վեր կալան ու գնացին։ Հիւանդատէրերն էլ վիճակի ջրիցը մի մին թաս լցրած տարան, որ նրանով լեղացնեն, բալքի սաղանան. աղապ աղջկատէրերն էլ տարան աղջկերանց գլուխը լւանան, որ մազերը երկարի։

Մեր Սօսն էլ մի կնկայ մի դանակ էր տուել ուրիշի տանը, որ իր համար վիճակ քցի. էս խեղճի վիճակն էլ հէնց էն էր դուս էկել.

Երթիկ երթիկ բռնել ես,
Երթկատակին կռնել ես.
Իմ նանը քեզ աղջիկ չի տալ,
Անուշ քունդ կտրել ես։

Սօսը հէնց որ իր անխէր վիճակի համար լսեց, գլխին կրակ վառուեց, ազբար էլած՝ (շւարած) ընկաւ յիքանիքը ու ինքն իրան կորցրածի պէս թառակէ թառակ (թաղէ ի թաղ) ման էր գալի, ընչանք ընտեղանք քարէքար գիպաւ, որ իրիկնապահը մօտեցաւ. յետոյ տեսաւ, որ բան չի դառնում, յետ դառաւ գեղը, գնաց Գարեգինենց տունը, չունքի մի օղ էլ Անուշին էր տուել, որ Ծաղկէվանք իրա համար վիճակ բանայ. տեսաւ, որ Անուշն էկել ա, ու հէնց իրան տեսաւ, տխուր, սրտում ասեց՝ ողորմի Աստուած։

—Ողորմի ծնողացդ, դիլակդ տայ (իղձդ կատարի), ասեց Սօսը. կերած խմածներդ ձեզ անուշ, տեսածներդ պատմէ. հլա մի առաջ ասա, տեսնիմ, ալչու ա վէգս, թէ թօխան ա (այսինքն յաջողուեց, թէ չէ)։

—Էհ, ալչու. Թօխանով որ մարդի գլխի գալացուկը իմացել էր, ունքերը վրա տալով ասեց Անուշը, հիմի էլ ի՞նչ մնացած կընէր աշխարհքումս Թաքուն. սաքի ի՞նչ ասեմ. սար ու քօլ էլ քեզ հետ յինատ (թշնամի) են էդ բանումը, Աստուած ա մնացել. փիճակդ լաւ չի դուս էկաւ. ուխտատեղից նոր եկած՝ կարալ չեմ քեզ խափիլ։

Սօսը երբ լսեց, իքսան (կրկին) դարդերը աւելացան. վեր կացաւ տեղիցը, որ դուրս ընի. համա Գարեգինը բարկացաւ նրա թիլ սրտի վրա՝ թէ դու կնիկ ես, ի՞նչ ես, որ էդ թահրը ային-օյին, պառաւական բաներին հաւատում ես։

—Չէ, ասեց Սօսը, քշերս ինձ ամէնն էլ յայտնուեց. Մաջլունի խօսքերը սրտիս ումուդը կտրեցին, տունս քանդեցին. ինձ բատուց յետոյ մնացել ա՝ գլուխս առնիլ կորչիլ աշխարհքէ աշխարհք։

—Տօ, նամի, ա՛յ խելքապակաս, ասեց Գարեգինը. տես ի՞նչ լաւ պատմութիւն ա անում Անուշը. ի՞նչ բաներ ա անց կացել Ծաղկեվանք։ Աղջիկ, արի մին էլ պատմի տեսածներդ։

Անուշն էկաւ տափ վրա կաննեց ու ասեց.— Էհ, ի՞նչ կար. ամեն տարւայ պէս մի տարի էլ էս էր։ Էն Ծաղկեվանքայ ձորը բերնից հետ լիքն էին ըխտաւորներով. Ասպրանու կնանիքը եզների վրա նստած՝ կարմիր ջուբէքը հաքներին, մի-մին գաթըրի (ջորի) գոտեքանցից (գանդակ) մենծ էրծաթէ չարք չլընքներին զնգզնգացնելով, աղջկերանց պնչերը ծակած՝ մի քիչ էրծաթ անցկացրած, բրթէ թելի մազերի ուսերքով, երեսներին տեղ-տեղ կապիտ խալ արած, մարդիկը զռւթնի անթարիք (երկար բաճկոն) հաքներին, մուջասիմի աղլուխով փաթա-

թած քօլօզները գլխներին։ Նրանցից լաւ-լաւ, մեր դաստուրի շորերը հաքներին, ջահէլ տղէրանց մահուտ չուխէքանց թևերը ուսերին քցած՝ կարմիր ղանաւուզ աստառով, խաղ կանչելով, թևանք քցելով, իրար քամակից ձի քշելով, իրար գտակ գլխիցը փախցնելով. կնանիքը ձիանոց վրա չարսաւաւորուած՝ նստած, մի-մի Բաղդատի աղլուխ չարսաւի վրիցը բերանները կապած, խաս-խաս շորերը հաքներին, սազրի մաշքները ոտներին։ Դաշտեցիք, որը ոտնաբաց, որը կարմիր ջուբով, որը մինթանով գալիս լցւում էին էն խոր ձորի մէջը։ Մի մարդ որ խօսում էր, քարափներն ծառերը նրանցից բարձր էին ձէն հանում, ո՞ւր մնաց որ էսքան ղալմաղալիցը մարդը մարդի խօսած չէր հասկանում. մատաղացու գառների ու ոչխարների ձէնիցը վիրի ոչխարներն ու մարալներն էլ էին հաւէսի ընկնում, որ գան իրանք էլ մատաղ ընին. մուխն ու ծուխը սաղ ձորը բռնել էր. դափ ու զուռնէն մարդի ճռներն էր ընկում. խաղ կանչող տղէքանց քաղցր ձէն լսողի խելքն էին տանում, քարափներն էին ձէն քաշում նրանց. ձորի միջիցը ընչանք սուրբ Վառվառիա կուսի յէրի (այր) դուռը, մարդ ու կընկայ ձեռից ոտ փոխելու տեղ չըկար, մրջմի քարվանի պէս տասը վիրև էր գնում, քսանը ներքև գալի. յէրի մէջը շունչ քաշել չէր ըլում համբուրողների ձեռիցը. էն ապառաժ քարապիցը ջուրը կաթ-կաթ թափում էր. շատ չըեր կնանիք գնում էին կաթիլքի տակին կաննում, որ ընկնի գլխներին, երեխայ բերեն։ Որի մուրազը կատարւում էր, նրա գլխին մի կաթ ընկնում էր. որինը չէ՝ կաթիլքը տեղիցը փախչում, ուրիշ տեղ էր վեր ընկնում.

յէրի միջի հաւուզը վախտ ջրով լցւում էր, վախտ ցամաքում. դէլակ անողները գալիս էին ձեռները կոխում մէջը, տակիցը մի բուռն աւազ հանում. ում դէլակը տալիս էր, աւազի միջին եա քորոց, եա ուլունք, եա աւեղ, եա՜ թէ չէ ուրիշ բաներ էր դուս գալի. թէ չէ ումը որ չէր կատարում, աւազ էր դուս գալի. ես էլ ձեռս տարայ, մի վէգ դուս էկաւ. իմացայ, որ հարսս տղայ պտի բերի։ Տէրտէրները փարաջէքը զոտիկները խրած՝ մի էջմիածնա թւանքչի էլ հեռները քցած՝ երկու էլ ուրիշ մարդ, էրի ու մորթի էին կիտում. հաժա ինքը առաջնորդը, վեղարը վէր կալած, գերեզմանի վերևը նստած, խէչհամբուր քցողներին օրհնում էր, յէրի շոքութիւնիցը ճակատի քրտինքը տուի պէս էր վէր գալի, մարդ չէր կարում կէս սհաթ մնա յէրի մէջը, նա սաղ օրը ընտեղից վէր չի կացաւ. ինսաֆ նրա համբերութիւնին. հալբաթ իրան սրբութիւնն ա, որ ընէնց դիմանում ա, թէ չէ մենք խո՞ չենք կարում։ Իրիկունն էլ մեր չադրի տակին վիճակ բանալ կար, խայտառակ էլանք։ Ծաղկեվանքայ սարի ծաղիկը բօլ, էնքան քաղել էինք, որ էրկու խուրձը բերինք, լաւ, սիրուն ջան գիւլումով զովեցինք, փնջեցինք. վիճակն էլ՝ լաւ տեղը տեղին քցեցինք ու վէր կացանք. մեր չադրի առաջը դուզ էր, ընտեղ մի լաւ եայլի բռնեցինք. լիսնեակ էր, ինչ ցերեկ։ Ապրին ազապ աղէրքը, հացը նրանց հալալ. համ վիճակը գովացան, համ էլ Արամենց Նոյեմզարի գլխից Բաղդատի աղլուխը փախցրին. եայլին քանդւեց, շփոթ դառաւ. մեր չադրի աղէքանցիցը մի քանիսն ընկան յետևներիցը, սաքի բռնեն, համա պոչը իրանց տակին էր, սատանութիւնը իրանցում էր. իրանք էլ

հնկեր էին, թէ չէ ճար ու մումքին չի կար. հէնց տեղ էին պահել բղուղը, որ սատանէն չէր գտնիլ. «գողը, որ տանուընի, եզն երթկովը դուս կըքաշի»։ Մենք վերջն իմացանք. փախցնողը Վարագդատենց Բաբկէնն ա էլել ու Արբակենց Անուշաւանը։ Նոյեմզարի աղլուխն էլ որ փախցրին, ի՞նչ պտի անէինք, կռները հօ կտրելու չէ՞ինք. առաւօտենց տասը միջնորդ ենք քցել, օխտը ձիու մուննաթ արել, որ կարացել ենք էդ ղօչաղ աղէքանցը մի քանի գաթա, երկու խաշած հաւ, մի երկու բաժին մատաղ էլ տալ, որ ձեռներիցն առել ենք, վիճակը բաց արել։ Ես գիտեմ, լաւ դուս կըգար քու վիճակը, համա հարամւեց վիճակը, աղէքանց ձեռն ընկաւ, ընդուր համար խելքը գլխին ոչովինը չէր...

—Լա՜ւ, լա՜ւ, խօսքը կտրելով ասեց Գարեգինը. ամակդ Երուսաղէմ։ Գնա՛ մի քիչ մատաղ ու խաչալւայ բեր, մենք էլ թամթախենք։

Գարեգնի մէրը վաղուց հացը շինել էր, վէր դրել. երբ որ լսեց, էն սհաթը դաստախունը (սփռոց) փռեց, մի քիչ գաթա, մատաղ ու ծաղկեվանքից յետ բերած կերակրներիցը դրուց առաջները, դաւն էլ պաշարի գինուցը լցրուց, կշտներին վէր դրուց։ Սօսը գինին ձեռն առաւ ու ասեց.—իմ բաժինս շնորհաւոր բարեկենդան. ես էքուցւանից սուրբ Կարապետու պասն եմ, ընչանք Վարդիվորը. իմ փայ մինը ձեզ հալալ, էս օր յետ ու առաջի միս ուտիլս ա, բարով հասնենք էն օրը, մին էլ ո՞վ սաղ, ո՞վ մեռած՝ լաւ աչքը պտի, որ տեսնի. լաւ Աստծու դիրեկան տղայ պտի ըլնի, որ իր մուրազն առնի։ Տէր Աստուա՛ծ, քեզ փառք։ Ասեց ու խմեց իրա

վերջի գինին ու հացը կերաւ Գարեգնի հետ, ուտիսի ծէրին կապ տուեց, բերանը լւաց ու ընչանք Վարդիւոր կիրակին պաս մնաց։ Համա շաբաթ կիրակի նաւակատիկ էր պահում, ոնց որ հայ-քրիստոնի օրէնքն ա...

Ա Ղ Ա Յ Ե Ա Ն

ԱՐԵԳՆԱԶԱՆ

(Հատուած)

ԱՐԵԳԸ ԳՏՆՈՒՄ Է ԱՆՄԱՀԱԿԱՆ ՋՈՒՐԸ

Արեգնազանը գնաց։

Զարմանալի մի էակ էր Արեգնազանը. միշտ աշխոյժ ու զւարթ, միշտ անահ ու անհոգ. Նեղութեան մէջ ընկած ժամանակ էլ իր ուրախ տրամադրութիւնը չէր փոխում։ Նա գնաց իր Բազիկ ձիով, որ երեք-չորս օրուան ճանապարհը մէկ օրումն էր անցնում։ Նա պտըտեց մի քանի թագաւորութիւն. շատ տեղ հարցուփորձ արաւ, շատ բան տեսաւ, շատ նեղութիւններից ազատւեց, մինչև հասաւ Կախարդական աշխարհը, ուր ամեն մի քայլափոխում մի նոր հրաշք էր տեսնում, մի նոր զարմանալիք։

Մէկ օր սաստիկ արև էր։ Շոգը որ շատ նեղեց Բազիկին, Արեգնազանը իջաւ մի լճի մօտ, Բազիկին քաշեց կապեց մի խիտ ստւերի մէջ, ինքն էլ մօտը նստեց, հանեց իր ճանպի պաշարը և սկսեց ճաշել։ Հէնց այդ միջոցին մէկ էլ տեսաւ, որ ահա մի խումբ աղաւնիներ թռած եկան և իջան լճի ափին՝ իրանից շատ մօտիկ։ Նետաղեղը լարեց, որ մի որս անէ, մէկ էլ տեսաւ, որ բոլոր աղաւնիները հանեցին փետուրները և աղջկէք դառնալով՝ թափւեցին ջուրը լողանալու։

Արեգնազանը մնաց ապշած մի րոպէ. յետոյ մտածեց մի խաղ խաղալ և տեսնել ինչ կըլինի հետևանքը։ Կուզէ-կուզ մօտեցաւ ափին, այնպէս որ իրան չըտեսան, և վերցրեց նրանցից մէկի փետուրները։ Երկու մեծ թև էր աղաւնու, մնացած փետուրներն էլ վրան։

Զանցաւ մի քանի րոպէ, բոլոր աղջկէքը դուրս եկան, հագան իրանց թևերն ու թռան, բայց մէկը, որ իր թևերը չըգտաւ, ամաչեց մերկ կանգնել ջրի ափին, իսկոյն իրան գցեց ջուրը։ Արեգնազանը այս նկատելով, թևերը ձեռին մօտեցաւ աղջկանը։ Աղջիկը ջրումն ընկղմուած, միայն գլուխը դուրս հանած, մօտեցաւ Արեգնազանին և սկսեց երգել.

Ա՛յ տղայ, սիրուն տղայ,
Թևերըս տո՛ւր, թևերըս,
Թևերըս տո՛ւր, թռչիմ, գնամ,
Ի՛նչ կամենաս, քեզ կըտամ։
Իմ օրումս չեմ տեսած
Քեզ պէս սիրուն մի տղայ,
Այդքան գեղեցկութեան մէջ
Սիրտ չի լինիլ անզգայ.
Խնայիր ինձ, աղաչում եմ,
Թևերըս տո՛ւր, թևերըս,
Թևերըս տո՛ւր, թռչիմ, գնամ,
Ինչ կամենաս, քեզ կըտամ։
Եթէ իրաւ տղայ ես,
Կուզեմ դառնաս դու աղջիկ,
Որ քո սրտում չըլինի
Քեզ հաւասար գեղեցիկ.
Տե՛ս, ահա ես քեզ օրհնում եմ.
Թևերըս տո՛ւր, թևերըս

Թևերըս տո՛ւր, թռչիմ գնամ,
Ինչ կամենաս, քեզ կըտամ։

Աղաւնի աղջիկը լռեց, և վիզը ծռած, մի ամենաքնքուշ ժպիտ բերանին՝ նայում էր Արեգնազանին՝ և սպասում, որ իր թևերն ստանայ։

Արեգնազանին այնքան դուր եկաւ Աղաւնի աղջկայ երգի եղանակը, որ ասում էր՝ «ո՛չ ուտեմ, ո՛չ խմեմ, սա երգի, ես լսեմ»...

—Շարունակի՛ր, շարունակի՛ր, մի քիչ էլ երգի՛ր, խնդրեց Արեգնազանը։ Քո երգն ինձ շատ է դուր գալիս. դեռ այդպէս բան լսած չըկամ կեանքումս։ Միայն մի բան ես չըհասկացայ, սիրուն աղջիկ։ Դու ասում ես՝ «Եթէ տղայ ես, աղջիկ դառնաս». այդ ինչպէս կարելի է։

Աղջիկը շարունակեց երգել.

Ամենայն ինչ կարելի է,
Ոչ մի դժուար բան չըկայ.
Եթէ իրաւ աղջիկ դառար,
Հիմա դարձի՛ր քաջ տղայ։
Թո՛ղ երեսիդ մորուք բըսնի
Թուխ ու երկայն բեխերով,
Թող կոշտանայ սիրուն դէմքըդ
Հաստ ջղերի գծերով։
Ո՛հ, տեսնում եմ, դու փոխւում ես...
Թևերըս տո՛ւր թևերըս,
Թևերըս տո՛ւր թռչիմ գնամ,
Ինչ կամենաս, քեզ կըտամ։

Մի վայրկենական ուշաթափութիւն եկաւ Արեգնազանի վրայ, և նա զգաց մի անսովոր բան, բայց շատ հաճոյական։ Նայեց ջրի երեսին, ուր՝ ինչպէս հայելու մէջ՝ պատկերացաւ մի դէմք, բոլորովին

Արեգնազանին նման, միայն նորածիլ բեխերով ու մօրուքով։ Այդ պատկերն առաջ մի քիչ խորթ թուաց Արեգնազանին, բայց յետոյ այնքան զմայլելի եղաւ, որ վրան նայելից չէր կշտանում։

«Այս ես կլինիմ անպատճառ», ասեց ինքն իրան։ «Ես հիմա ճշմարիտ որ Արեգն եմ»։

—Սիրուն աղջիկ, դու տուիր ինձ այն, ինչ որ իմ միակ ցանկութիւնս էր. այժմ դու ազատ ես։ Ես չէի սպասում քեզանից այսպէս բան. ուրեմն դու ինձ կասես, դու անպատճառ կիմանաս, թէ ո՛րտեղ է գտնւում անմահական ջուրը, որի համար ես ահա քանի ժամանակ է թափառում եմ։

Աղջիկն սկսեց երգել.

Թո՛ղ Նունուֆարդ ուրախանայ,
Որ ճանկ գցեց քեզ պէս փեսայ,
Հիմա հասար քո մուրազին,
Եկար աղջիկ, կերթաս մանչիկ։
Անմահական ջո՞ւր ես ուզում...
Թեւերս տո՛ւր, թեւերս,
Թեւերս տո՛ւր, թռչիմ գնամ
Եւ իմ կտցով բերեմ տամ։
Գնա՛ օգնիր տկարներին,
Հոգի ու շո՛ւնչ տուր քարերին.
Թէ որ կուզես, ինչպէս հիմա,
Մնալ փոխուած այդպէս տղայ.
Իսկ եթէ ոչ, լաւ գիտենաս,
Որ տղայից քար կդառնաս,
Երբ քարացած քաղաքի մէջ
Կախարդ կնկան կմօտենաս։
Թեւերս տո՛ւր, թեւերս,
Թեւերս տո՛ւր, շուտ հագնեմ,

Թռչիմ գնամ եւ քեզ համար
Անմահական ջուր բերեմ....

Աղջկայ վերջին խօսքերից շատ բան չըհասկացաւ Արեգը, բայց չուզենալով այլեւս ուշացնել նրան, թեւերը տուաւ իրան։ Աղջիկը թեւերը հագնելուն պէս՝ դարձաւ աղունակ եւ թռաւ գնաց։ Մի քանի րոպէ չանցած՝ մի փոքրիկ շիշ կտցին, անմահական ջրով լիքը՝ բերաւ Արեգին տուաւ եւ ինքը կրկին թռաւ գնաց։

Արեգը ձին հեծաւ եւ ճանապարհ ընկաւ՝ ձիու հետ խօսելով.

—Բա՛զիկ, ես հիմա տղայ եմ, գիտե՞ս, էլ աղջիկ չեմ։ Առաջ աղջիկ էի. այդ ոչ ոք չըգիտէր. գուցէ դու էլ չըգիտէիր. հայրս պատուիրել էր, որ ոչ ոքի չասեմ, թէ ես աղջիկ եմ. բայց հիմա տղայ դառայ։ Օ՜, որ գիտենաս, Բա՛զիկ, ինչքան ուրախ եմ հիմա։ Դու չես իմանում. թէպէտ աղջիկն էլ լաւ է, բայց տղայի՛ն ո՛րտեղ կըհասնի։ Ես հիմա չըգիտեմ, ուր եմ գնում, Բա՛զիկ. դու ինքդ գնա՛ որ կողմ կուզես. այսուհետեւ ինձ համար միեւնոյն է... Բայց սպասի՛ր, ես մի աշտարակի ծայր եմ նշմարում, նա անպատճառ մի քաղաք կլինի, գնանք դէպի այն կողմը։ Զարմանալի անհոգ եմ ես, Բա՛զիկ. մէկ չես ասում, թէ ինչո՞ւ այդ իմաստուն աղջկանը չըհարցրիր, թէ՝ ով դու գեղեցիկ եւ իմաստուն աղջիկ, ո՞ր կողմով պիտի յետ դառնամ ես իմ աշխարհքը։ Դեռ լաւ էր որ նա առանց իմ ասելուն՝ ինձ տղայ դարձրեց. որ բանն ինձ մնար, ես դեռ էլի աղջիկ կլինէի։ Ի՞նչ կարող էի մտածել, որ այդպէս բան կարող է պատահել։ Բայց երբ որ տեսայ, թէ այդպէս բան լինում է, ինչո՞ւ չասացի՝ սիրուն աղջիկ, ինձ որ

տղայ դարձրիր, մեր Բազիկին էլ մարդ դարձրու, կամ եթէ ոչ, գոնէ խօսելու ձիրք տուր. հը՞, ինչ կասես, Բա՛զիկ։

—Ոչինչ, դու տղայ դառար, ես էլի մնացի ձի։

—Իրաւ, իրաւ, այդ լաւ չեղաւ։ Մի բան տեսնելիս այնպէս յափշտակւում եմ, որ բոլոր մնացած բաները մոռանում եմ. յետոյ միտս է գալիս, բայց ուշ է լինում...

Այսպէս ձիու հետ խօսելով և նրա փոխանակ ինքը պատասխանելով՝ մեր վերանորոգւած Արէգը դիմեց դէպի երևացող աշտարակը։

ՊԱՐՏԻԶՊԱՆ

Ամառն է. կարծես կրակ է բարձրանում
Գետնի երեսից և հուրհըրատում.
Ոչ շունն է հաչում, ոչ ճիճին երգում,
Գորտն էլ է լռել, էլ չի կռկըռում։

Ամենքն էլ փախել, հով տեղ են գտել.
Իրանց բներում լռւել պապանձւել.
Միայն մի հատիկ մարդ է երևում,
Խոր ընկած դաշտում, առուի եզերքում։

Կանգնած է մարդը արևի տակին,
Ոտն ու ծունկը բաց, բահը դրած ուսին.
Մի շապիկ միայն ունի նա հագին
Եւ մի սպիտակ թասակ կայ գլխին։

—Բայց ինչ մարդ է նա և ինչ է շինում,
Արևի տակին ինչու է այրւում.

—Նա պարտիզպան է, պարտէզ է ջրում,
Սեխն ու ձմերուկը այնպէս է հասցնում։

ՋԱՂԱՑՊԱՆԻ ՆՆՋԱՐԱՆԸ

Երեք-չորս հատ ջաղացաքար
Կարգով շարւած պտըտւում են,
Իրանց անհոգ գռգըռոցով
Ամբողջ շէնքը դղըրդում են.

Ջանչախների չըխչըխկոցից
Մարդի ականջ խլանում է,
Իսկ ջաղացպանն ալրաթաթախ,
Խոր քունն ընկած խըռըմփում է։

Բայց ջաղացը եթէ յանկարծ
Կորէ ձայնը, լռէ, սառչի,
Ինչպէս մի թունդ թնդանօթից՝
Ջաղացպանը վեր կըթռչի...

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Դաշտը սիրուն է դալար բոյսերով,
Եւ անուշահոտ գոյն-գոյն ծաղկներով,
Ուսումնարանը նոյնքան սիրուն է
Իր ուշիմ, խելօք ժիր մանկիկներով։

Սիրուն է ծառը կանաչ ճղներով,
Փունջ-փունջ կախուած իր պտուղներով,
Ուսումնարանը նոյնքան սիրուն է
Իր առաջինի խելօք սաներով։

Աստուած, պահպանիր Դու շատ օրերով
Մեր անդաստանը իր մշակներով.
Եւ մենք նրանում զուգւինք, զարդարւինք
Գեղեցիկ ուսման գոյն-գոյն փունջերով...

90-ԱԿԱՆ ԹՒԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ

Յ Ո Վ Հ Ա Ն Ն Ի Ս Ե Ա Ն

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ահա քեզ ձեռըս, ընկեր թանգագին,
Սեղմիր դու նորան անվախ, անկասկած—
Բարեկամ է նա լքեալ թշուառին,
Փորձութեան բովում կոշտերով ծածկուած.
Թող ծանր վշտից անցած օրերի
Հանգչի քո սիրտը գոնէ մի վայրկեան—
Արի իմ գիրկը, ընկեր սիրելի,
Ես իմ ջերմ կուրծքին օրօրեմ նորան.
Եւ ցաւակցութեան այրող արցունքով
Տանջանքիդ այդ կուռ շղթան կործանեմ,
Գուցէ և սիրոյ դիւթական շողով
Մի րոպէ ես քեզ հանգիստ պարգևեմ...

Մընա՛ք բարով, արև, գարուն
Եւ խնկաբոյր ծաղիկներ,
Կարկաչահոս վտակ սիրուն,
Կանաչազգեստ բլուրներ.
Մընա՛ք բարով, համբոյր և սէր,
Դէմքով հրեշտակ կոյս չքնաղ,
Վայելչութեան պայծառ ժամեր,

Թաղցըր ժպիտ, կեանք մատաղ...
Աղքատութիւն ես սիրեցի,
Խեղճի լացը, հառաչանք,
Ես քընարըս նուիրեցի
Վիշտ երգելու և տանջանք։

Արազն էկաւ լափին տալով,
Ժէռ քարերին, ափին տալով,
Ո՞րտեղ թաղեմ ես իմ դարդը,
Զոր գլուխըս տափին տալով։
Ա՛յ իմ Արազ, ջուրըդ վարար,
Սիրուն եարիս եարաբ տեսա՞ր.
Ես չըհասայ իմ մուրազին,—
Արա՛զ, եարաբ կարօտս առա՞ր։
Ամպերն ընկան Մասիս սարին,
Կարօտ մնացի ես իմ եարին.
Աստուած սիրես, էրուած սրտիս
Ջուղաբ բերես էկող տարին։
Գիշերն անքուն գիր կըգրեմ,
Արտասունքս գետ կըշինեմ.
Արա՛զ, ծէգը ջրիդ չառած՝
Իմ սև դարդը քեզ կը բերեմ։
Կ'առեմ՝ շողքը քարին ընկաւ,
Կըրակըն իմ սրտին ընկաւ.
Կամար ունքից, թուխ աչքիցը
Ցաւն իմ ջիւան ջանին ընկաւ։
Արազն էկաւ լափին տալով,
Ժէռ քարերին, ափին տալով,
Ո՞րտեղ թաղեմ ես իմ դարդը,
Զոր գլուխս տափին տալով...

---

*

Ալագեազ բարձր սարին
Ձին ա կիտուել կատարին.
Սարի ճամբէք, բաց էլէք,
Էթամ, հասնեմ իմ եարին։
Ա՛խ, իմ ճամբէն քարոտ ա,
Սիրտս էրուած, եարոտ ա.
Ղարըբի օրն ընի սև,—
Ազիզ եարի կարօտ ա։
Եարիս տեսայ, լալիս էր,
Լալիս, գլխին տալիս էր.
Ճամբայ ունէք, ա՛յ սարեր,
Ձեռով արի՝ գալիս էր։
Էն ինչ դուշ ա էն քարին...
Սիրտս կաթում ա արին,
Ա՛յ իմ թառլան, թև տուր ինձ,
Թռնեմ, հասնեմ իմ եարին։

ԱՇՈՒՂ

Առ՝ աշո՛ւղ, ա՛ռ չունգուրըդ, մեզ բան ասա սրտալի.
Կարօտ ենք քու անուշ ձէնին, մի բան ասա սրտալի.
Սրտի խօսք ենք ուզում քեզնից, որ վեր հանի մեր հոգին—
Ա՞ռ չունգուրըդ, դարդոտ աշուղ, մեզ բան ասա սրտալի։
Գիտենք, որ դու միշտ տանջւում ես հազար ու մի ցաւերով,
Հայրենիքիդ խոր խոցերը համարում ես դարերով.
Ձեռ լուանայ էդ խոցերը արտասունքի ծովերով...
Ա՛ռ չունգուրըդ, ցաւոտ աշուղ, մեզ բան ասա վշտալի

Լաւ մընալով մեր վէրքերին դու չես անի դեղ
դարման.
Արար-աշխարհք գիտի՝ չըկայ մեր դարդերին չափ,
սահման.
Մնջութիւնն էլ նըշան հօ չի՞ մի գովելի յատկութեան—
Ա՛ռ չունգուրըդ, մեզ բան ասա՛, թող խօսքդ ըլնի
ցաւալի։

Էդպէս խօսքեր շատ ենք լսել, էլ կըլսենք անտրտունջ,
Մեր չըխօսկան ըլնելուցն է՝ մնացել ենք անտէ-
րունջ.
Լաւ է ազատ լաց ըլնիլը, քանց դարդ տանիլն ան-
մռունչ,
Ասա՝ լսենք, ի՞նչ անենք, որ խօսքըդ կ'ըլնի ողբալի։

Տեսնում ես, որ մենք թմրած ենք, քունն անուշ է
մեզ թըւում.
Է՞ր ես դու էլ մեզ բոլորիս մաշող քընիցն յաղթւում.
Ա՛ռ չունգուրըդ, տո՛ւր լարերին, կըրակ վառի՛ր մեր
սրտում,
Մեզ ամենիս նոր շունչ տւող մի բան ասա սրտալի։

ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

Անցաւ, եղբա՛յր, մեր պարզամիտ մանկութիւն,
Էլ հրաշքների չենք հաւատում մենք վաղուց.
Եւ մեր աչքում չունին այլ ևս թովչութիւն
Աւանդ հասած առասպելներն հինաւուրց։
Բայց մի զրոյց, որ սրբութեան դրոշմով
Դարէ ի դար հասել է մեզ պապերից
Եւ իբրև գանձ նուիրական խնամքով

Պահպանւել է մոռացութեան աւերից,
Միշտ սրբազան ակնածութեան մի զգացում
Եւ վեհ խոհեր յարուցել է իմ հոգում։
Ամեն անգամ, երբ վերջալոյս ծիրանի
Հանգչում է մեղմ Արագածի կատարին,
Եւ զերդ մանկան պայծառ աչեր գեղանի
Աստղերն երկնից փայլ են տալիս կամարին,
Նայում եմ ես և ըսպասում, որ վառւի
Մի այլ հրագ ծերուկ լերան ճակատին։
Ոչ բնութեան ստեղծւած է այն հրաշալի
Եւ ոչ կերտւած ճարտարարւեստ մարդկային,
Այլ մի ուրիշ չնաշխարհիկ զօրութեան,
Արարչութեան խորհրդաւոր մի գաղտնիք.
Այն մեր հոգու լուսոյ ջահն է նուիրական,
Ողջոյն ազգի կենդանութեան երաշխիք։
Եւ այդ հրագն, եղբա՛յր, անշէջ կլինի,
Քանի վառող Աջն է մեզ միշտ հովանի։

Տ Ղ Մ Ո Ւ Տ

Մըթաւ արև. Աւարայրին մութ պատեց,
Սև ամպերով երկնից դէմքը քօղարկւեց.
Բնութիւնը մի քուն մըտած հեշտասէր
Վայելում է անուշութեան վառ ժամեր։
Չէ նըւագում քաղցըր սրինգն հովւական,
Թռչունների քնքուշ տաղեր լռեցան.
Ծաղիկները նիրհած փափուկ մարգերում
Երբեմն մեղմիկ հովի հետ են համբուրւում։
Բայց այդ քունը մօտ չէ գալիս հեշտագին
Ծեր Տղմուտի արինակոխ աչքերին

Այն սև օրից, երբ որ կուրծքը կուսական
Ոռոգւեցաւ արիւնովը հայութեան։
Անցան դարեր. դեռ Տղմուտը հեծելով
Գիշերները խանգարում է անվրդով
Աւարայրի անուշ քունը, և չունի
Մինչև այսօր նա ողբակից իւր վշտի։
Եւ ծերունին հառաչում է սրգաւոր.
Արիւն դարձած կոհակները ալեոր
Գրնում, գալիս, զարնւում են ափերին,
Անցած փառքը յիշեցնում են հայերին։
«Ձեր նախնեաց էլ չեք նըման դուք, հայե՛ր,
Չունիք այլ ևս հայրենասէր այն ոգին։
Նոքա մեռան, և կուրծքերը անվեհեր
Արեամբ բուսած անմահ վարդեր պսակեցին։
Նոքա գըլուխ չըտւեցին բռնութեան,
Չըծախեցին նոքա խիղճը և ամօթ,
Ազատութեան երկրպագու կանգնեցան,
Հաւատալով փառքի լուսոյն անաղօտ։
Եւ անթառամ զարդարւեցան պըսակով,
Անմահացաւ այն վեհ հոգին արութեան.
Եւ հայրենեաց [illegible]անք տւեցին արիւնով
Ահեղ մարտի դաշտում հայ մարդ, հայ կուսան։
Դուք ինչ արիք, դուք, փառաւոր նախորդաց
Սերունդ ծընած, անփառք սընած զաւակներ.
Հայ սար, հայ դետ, հայ դաշտօրայք շունչ առած
Պիտ ամօթով այրեն ձեր սև երեսներ։
Ազատութեան սուրբ պատկերը կործանած,
Դուք ծաղրում էք ազատասէր ըղձացմունք.
Նոր Յազկերտի անարգ բագին էք կանգնած
Եւ խայտառակ կատարում էք պաշտամունք։
Ո՛հ, թէ ելնէր կորած մոռցւած դամբանից

Վարդանների առիւծական այն հոգին,
Եւ երկաթի խարազանը թունալից
Տար ձեր ժպիրհ, ամօթապարտ ճակատին,
Եւ արցունքով համբուրէիք սուրբ շիրիմ,
Ուխտ կապէիք նորից խաչով ու սըրով
Կանգնեցընել նոր Արտաշատ, Խոխոցիմ,
Վերջ տալ անարգ այս վիճակին արիւնով»...
Եւ Տղմուտը հառաչում է սրգաւոր.
Արիւն դարձած կոհակները ալեոր
Գրնում, գալիս, զարնւում են ափերին,
Անցած փառքը յիշեցնում են հայերին։
Անցան դարեր. դեռ ծերունին հեծելով
Գիշերները խանգարում է անվրդով
Աւարայրի անուշ քունը, բայց չունի
Նա ույժ քունը խանգարելու հայերի...

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻՆ

Մի՛ թողնիր, երգի՛չ, քնարըդ կախած,
Որ նորան ժանգով տարիքը պատեն,
Ոսկի լարերին դու ոգևորւած
Զարկի՛ր մատներով, թող դարձեալ հնչեն։
Թող հնչեն նորից հին երգը անմահ
Եւ վառեն սիրով սրտերը մարդկան.
Թող նոքա նորից օրհներգեն անահ
Գործերը բարւոյ և կարեկցութեան։
Ինչպէս չէ կարող ձմեռն արգելել
Գալուստը շքեղ ծաղկաբոյր գարնան,
Նոյնպէս ճշմարիտ խօսքը խափանել
Չէ կարող ձայնը անմիտ չարութեան։

Ա Ր Տ Ա Ւ Ա Զ Դ

Զարկեցէք, դարբիններ, կռանը սալին,
Զարկեցէք կռանը — շղթայքն ամրանան,
Անիծեալ արքայի կապանքն ամրանան.
Զարկեցէք, դարբիններ, կռանը սալին։
Անհարկու ամպերը եկան ժողուեցան,
Տէր Մասեաց ճակատին սև քող փաթթեցին.
Գոռում է փոթորիկ գազանի նըման,
Հառաչում, սուլում է կատաղած քամին։
Զարկեցէք կռանը. խորունկ քարայրից
Ահա չար հողմի հետ հասնում են ձայներ...
Ցոլացաւ փայլակը — արքայի աչքից
Դէպի վեր թռչում են բարկութեան կայծեր։
Կամի նա ելանել վրէժխնդիր հոգով
Իւր անվերջ տանջանքի թոյնը մահաբեր
Աշխարհի չորս կողմը շաղ տալու մտքով,
Բայց ամուր են նորա ծանըր շղթաներ։
Մտերիմ գամփռերը կրծում են կապանք,
Կրծում են անդադար կապանքն արքայի...
Արտաւազդ, վերջ չունի հոգուդ տառապանք,
Եւ դեռ շատ հեռու է վախճանն աշխարհի։
Եւ անզօր չարութեան քո կուռ հարուածներ
Դեռ պիտի փշրւին մեր մուրճի տակին —
Մենք սպասում ենք դեռ ևս գեղեցիկ օրեր,
Դեռ հաշտ է երկինքը մեղսոտ աշխարհին։
Բայց եթէ քարացած՝ մենք չենք լսելու
Նոր կեանքի կոչն հուժկու, և վերածնութեան
Սրբարար աւազան մեզ չէ փրկելու, —
Արտաւազդ, փշրւի թող մեր կուռ կռան
Մենք էլ չենք զարկելու երկաթի սալին,

Թող կրծեն գամփռերդ ոտքիդ շղթաներ,
Արձակւին բազուկներդ, և դու աշխարհին
Դուրս արի բերելու կոտորած, աւեր...
Բայց ո՛չ. հաւատում ենք դեռ մենք փրկութեան,
Մեզ մի նոր երկնքից նոր լոյս կը բացւի,
Եւ տեսնում ենք ահա արդէն ծիածան
Մենք ազատ, լուսաւո՛ր մի նոր վիճակի...
Զարկեցէք, դարբիններ, կռանը սալին,
Զարկեցէք կռանը — շղթայքն ամրանան,
Անիծեալ արքայի կապանքն ամրանան.
Զարկեցէք, դարբիններ, կռանը սալին։

ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՄ ԵՐԳԸ

Ինձ մի խնդրիր, ես չեմ երգի
Իմ տըխրութիւնն անհագին,
Աղեկըտուր նորա ձայնից
Կըխորտակւի քո հոգին...
Ո՛չ, քեզ համար այսպիսի երգ
Երգելու չեմ ես երբէք։
Ես երգողի սարի վըրա
Ու չորացած խոտ ու վարդ,
Անապատ է այնտեղ հիմա,
Մի՛, ամայի անապատ։
Հառաչանքից այրւած սարում
Էլ ծաղիկ չի դալարում։
Բոյր ու զեփիւռ ես կուզէի
Եւ արշալոյս ոսկեվառ,
Որ մի պայծառ երգ հիւսէի
Ու երգէի քեզ համար...
Բայց իմ սիրտը բռնած են դեռ
Հուր հառաչանք, սև գիշեր։

ՀԱՄԵՐԳ

Վըտակը ժայռից ներքև է թըռչում,
Թափ առած ընկնում քարերի գըլխին,
Զարկւում աւազին, շաչում է, ճըչում,
Ծըչում անհանգիստ, փըրփուրը բերնին։
Ինչպէս ծերունին, ձայնով պառաւած,
Ձայնակցում է ժիր թոռնիկի երգին,
Այնպէս է ծերուկ անտառը կամաց
Արձագանք տալի ջըրի աղմուկին։
Սակայն բընութեան գըւարթ համերգի
Ունկընդիրն անխօս, յաւիտենական,
Ժայռը մըտախոհ իր մըռայլ մըտքի
Ետևից ընկած լըսում է նըրան։

ՀԻՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Կանաչ, վիթխարի ընկուզենու տակ,
Իրենց հատուկի կարգով, ծալպատակ,
Միասին բազմած,
Մի շըրջան կազմած,
Քէֆ էին անում
Եւ ուրախանում
Մեր հըսկայ պապերն ու մեր հայրերը՝
Գիւղի տէրերը։
Մենք, առոյգ ու ժիր գեղջուկ մանուկներ,
Երեք դասընկեր,
Նըրանց առաջին գըլխաբաց կանգնած,
Ձեռքներըս խոնարհ սըրտներիս դըրած,
Ձիլ, ուժեղ ձայնով նըրանց ըմպասում
Տաղ էինք ասում։

ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՄ ԵՐԳԸ

Ինձ մի խնդրիր, ես չեմ երգի
Իմ տխրութիւնն անհագին,
Աղեկտուր նորա ձայնից
Կխորտակվի քո հոգին...
Ո՛չ, քեզ համար այսպիսի երգ
Երգելու չեմ ես երբեք։
Ես երգերի սարի վրա
Ու չորացան խոտ ու վարդ,
Անապատ է այնտեղ հիմա,
Սեւ, ամայի անապատ։
Հառաչանքից այրուած սարում
Էլ ծաղիկ չի դալարում։
Բոյր ու գեփիւռ ես կուզէի
Եւ արշալոյս ոսկեվառ,
Որ մի պայծառ երգ հիւսէի
Ու երգէի քեզ համար...
Բայց իմ սիրտը բռնած են դեռ
Հուր հառաչանք, սեւ գիշեր։

ՀԱՄԵՐԳ

Վտակը ժայռից ներքեւ է թռչում,
Թափ առած ընկնում քարերի գլխին,
Զարկւում աւազին, շաչում է, ճչում,
Ճչում անհանգիստ, փրփուրը բերնին։
Ինչպէս ծերունին, ձայնով պառաւած,
Ձայնակցում է ժիր թոռնիկի երգին,
Այնպէս է ծերուկ անտառը կամաց
Արձագանք տալի ջրի աղմուկին։
Սակայն բնութեան զուարթ համերգի
Ունկնդիրն անխօս, յաւիտենական,
Ժայռը մտախոհ իր մռայլ մտքի
Ետեւից ընկած լսում է նրան։

ՀԻՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Կանաչ, վիթխարի ընկուզենու տակ,
Իրենց հասակի կարգով, ծալպատակ,
Միասին բազմած,
Մի շրջան կազմած,
Քէֆ էին անում
Եւ ուրախանում
Մեր հսկայ պապերն ու մեր հայրերը՝
Գիւղի տէրերը։
Մենք, առոյգ ու ժիր գեղջուկ մանուկներ,
Երեք դասընկեր,
Նրանց առաջին գլխաբաց կանգնած,
Ձեռքներս խոնարհ սրտներիս դրած,
Զի՛լ, ուժեղ ձայնով նրանց ըմպասում
Տաղ էինք ասում։

Երբ զըւարթաձայն մեր երգը լըռեց,
Մըռայլ թամադէն բեխերն ոլորեց,
Նըրա հետ վերցըրին լիք բաժակները
Բոլոր մեծերը
Ու մեզ օրհնեցին.—Ապրէք, երեխէք,
Բայց մեզ պէս չապրէք...
Ժամանակ անցաւ, նրանք էլ անցան,
Զըւարթ երգերըս վըշտալի դարձան.
Եւ ես յիշեցի մեր օրը լալիս,
Թէ մեզ օրհնելիս
Ինչու ասացին.—Ապրէք, երեխէք,
Բայց մեզ պէս չապրէք...
Խաղաղութիւն ձեզ, մեր անբախտ պապեր,
Ձեզ տանջող ցաւը մեզ էլ է պատել։
Այժըմ, տխրութեան թէ քէֆի ժամին,
Մենք էլ՝ օրհնելիս մեր զաւակներին՝
Ձեր խօսքն ենք ասում.—Ապրէք, երեխէք,
Բայց մեզ պէս չապրէք...

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ

Արի, գութան, վարի, գութան,
Օրն եկել է, ճաշ դառել,
Առը շուռ տուր, խոփիդ ղուրբան,
Օրհնեալ է Աստուած, հօրօւէլ։
Քաշի՛ր, եզը, ուսիդ մատաղ,
Քաշի՛ր՝ քաշենք, վար անենք.
Ծի՛պտին արա, քըշի՛ր, հօտաղ,
Մեր սև օրին ճար անենք։
Պարտքատէրը գանգատ գընաց,

Քեօխւէն կըգայ, կըծեծի,
Տէրտէրն օրհնեց, անվարձ մընաց,
Կըբարկանայ, կանիծի։
Էն օրն եկան թուջի արին,
Հարկ են ուզում տէրութեան,
Ինչ տամ կոռին ու բէգեարին...
Վարի, վարի, իմ գութան։
Ձեռըս պակաս, ուժըս հատած,
Հազար ու մի ցաւի տէր,
Ինձ են նայում մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ։
Արի, գութան, վարի, գութան,
Օրն եկել է, ճաշ դառել,
Առը շուռ տուր, խոփիդ ղուրբան,
Օրհնեալ է Աստուած, հօրօւէլ։

Ա Խ Թ Ա Մ Ա Ր

(Բալլադ)

Ծիծաղախիտ Վանայ ծովի
Փոքրիկ գիւղից առափնեայ
Ծովն է մըտնում գաղտագողի
Ամեն գիշեր մի տըղայ։
Ծովն է մըտնում, առանց նաւակ,
Բազուկներով առնացի
Ջուրը ճողփում, լող է տալի
Դէպի կըղզին դիմացի։
Խաւար կղզուց պարզ ու պայծառ
Մի լոյս կանչում է նըրան,
Մի վառ փարոս նըրա համար,

Չըմոլորի իր ճամբան։
Սիրուն Թամարն ամեն գիշեր
Այնպէս կըրակ է անում,
Եւ ըսպասում է անհամբեր
Այնտեղ՝ մօտիկ դարանում։

* * *

Ծըփում է ծովն ալեծածան,
Ծըփում է սիրտը տըղի.
Գոռում է ծովն ահեղաձայն,
Նա կըռւում է կատաղի։
Եւ Թամարը սըրտատըրոփ
Արդէն լըսում է մօտիկ
Ջըրի ճողփիւն, ու ողջ մարմնով
Սիրուց այրւում է սաստիկ։
Լըռեց։ Ծովի խաւար ափին
Կանգնեց սև-սև մի ըստւեր...
Ահա և նա... իրար գըտան. .
Կասկածաւո՜ր լուռ գիշեր...
Միայն ալիքը Վանայ ծովի
Մեղմ դիպչում են ափերքին,
Հըրհըրելով հեռանում են
Շըշունջներով անմեկին։
Նըրանք ասես փըսփըսում են...,
Ու աստղերը կամարից
Ակնարկելով բամբասում են
Լիրբ, անամօթ Թամարից...
Բամբասում են կուսի սըրտում...
Ժամ է արդէն... ու կըրկին
Մինն ալեկոծ ծովըն է մըտնում,
Միւսն աղօթում եզերքին...

* * *

Բայց միանգամ չարկամ մարդիկ
Նըրանց գաղտնիքն իմացան,
Լոյսը հանգցրին սև ու սաստիկ
Մի մութ գիշեր դիւական։
Մոլորւեցաւ խաւար ծոցում
Լուղորդ տըղան սիրահար,
Ու բերում է հողմը, բերո՜ւմ
Հառաչանքներն—«Ա՜խ, Թամա՜ր...»
Մօտ է ձայնը. խօլ խաւարում,
Ժայռերի տակ սեպացած,
Ուր ամեհի ծովն է գոռում,
Մերթ կորչում է խըլացած
Ու մերթ լըսւում ուժասպառ,
«Ա՜խ, Թամա՜ր...»

* * *

Առաւօտեան ծովը ծըփաց,
Ափը ձըգեց մի դիակ,
Նըրա շուրթին, պաղ, կարկամած,
Ասես, մեռած ժամանակ
Սառել էին երկու բառ.
«Ա՜խ, Թամա՜ր»։
Այն օրւանից սըրա համար
Կըղզին կոչւեց «Ախթամար»։

Ա Ն Ո Ւ Շ

(ՊՈԷՄԱ)

Ե Ր Ր Ո Ր Դ   Ե Ր Գ

(Հատուածներ)

Ձըմռան մի գիշեր կար մի հարսանիք.
Հըրճւում էր անգուսպ ամբողջ գիւղը.

Գիւղն էին իջել հովիւ պատանիք
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի։
Ու պարից յետոյ լայն հըրապարակ
Բաց արին մէջ տեղն արձակ գըլխատան,
Զուռնաչին փըչեց կոխի եղանակ,
Ահել ու ջահել իրարով անցան։
Հարա՜յ են տալի — «քաշի՛ հա, քաշի՛...»
Ու դուրս քաշեցին զոռով երկուսին.
Մինը մեր Սարօն, իսկ միւսն Անուշի
Անդրանիկ եղբայր զառնարած Մօսին։
Ողջ գիւղը կանգնեց պարըսպի նըման,
Զոկւեց, բաժանւեց երկու բանակի,
Ամեն մի բանակն ընտրեց փահլևան,
Կանգնեց թիկունքին տըղերանց մէկի։
Գոռում են, գոչում երկու բանակից.
—Սըրտապինդ կացէ՛ք, մի՛ վախէք, տըղե՛րք,
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջըկերք։
Ու տաքանում են տղերքը սաստիկ,
Փէշերը հաւաք խըրում են գօտին.
Գետին են զարկում ձեռքերը հաստլիկ,
Իրար են հասնում թափով մոլեգին...
Ադաթ կայ սակայն էն մութ ձորերում,
Ու միշտ հընազանդ հընոց ադաթին,
Ամբոխի առջև իգիթն իր օրում
Գետին չի զարկիլ ընկեր իգիթին։
Ու իրա՛ր բըռնած Սարօն ու Մօսին
Քաշում են, ընկնում խողապարկուկի.
Ընկնում են գետին, ելնում միասին,
Դըժւար է իբրև յաղթել մէկ մէկի։
Իզուր է գոռում ամբոխը հարբած,

Զուր սըրտատըրոփ նայում աղջիկներ,
Եւ զուր է Անուշն, իր շունչը կըտրած,
Սառել ու կանգնել, ինչպէս մի պատկեր։
Անուշը կանգնա՜ծ... Սարօն նըկատեց,
Թունդ առաւ սիրտը ու զարկեց արագ.
Աչքերի առջև մըլարը պատեց,
Մոռացաւ ընկեր, ադաթ ու աշխարք,
Ու մինչդեռ Մօսին ընկերախաղի,
Կատակի տալով թողած էր իրեն,
Ուժ արաւ Սարօն, ծընկեց կատաղի,
Գետնեց ընկերին ու չոքեց վըրէն։
Ամբոխը թափւեց հարա-հըրոցով,
Վեր թըռցրեց ջահել փահլևաններին
Եւ՝ ուրախութեան աղմուկ-գոռոցով
Յաղթողին փեսի թախտի մօտ բերին։
Ցընծութեան ձայնից, ծափերի զարկից
Շարժւում են, դողում պատեր ու օճորք,
Իսկ նորեկ հարսի փարդի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջըկերք։

———

Եւ աղմըկալի հարսանքի տանից
Դուրս եկաւ Մօսին սաստիկ վիրաւոր.
Արիւն է կաթում սևակնած սըրտից,
Գնում է ըշտապ, քայլերը մոլոր։
—Ամօթ քեզ, Մօսի՛, թո՛ւք ու նախատինք,
Ամօթ քեզ նըման գոված իգիթին,
Մի անունդ յիշիր, մի բոյիդ մըտիկ.
Դեռ քու թիկունքը չէր տեսել գետին։
Ի՞նչպէս վէր ընկար դո՛ւ սարի նըման,
Երբոր նայում էր ողջ գիւղը կանգնած...

Դո՛ւ... կուճ գաս տա՛րին Սարօի ծընկան,
Նըրանից յետոյ երևաս կանանց...
Ընկած էր էս բանն իսկի քու գըլխին...
Ծաղրատեղ դառար բովանդակ գեղին...
Դէ մեռիր էլի, գետինը մըտի՛ր,
Տանը վեր ընկի՛ր՝ իլիկ պըտըտիր»...

Ու էն հարսանքից թըշնամի դարձան
Ախպէր տըղերքը էս դէպքի համար.
Ընկեր, բարեկամ գընացին, եկան,
Կըրկին հաշտութեան չեղաւ մի հընար։
Անկոտրում Սօսին էլ ո՛ր Մօսին էր,
Որ՝ աչքը դեռ բաց, էս լուս աշխարքում,
Իրեն հարազատ քըրոջը տեսնէր
Նամարդ ընկերի—Սարօի գըրկում։
Գուցէ գիշերս էլ՝ իր հերսից անքուն՝
Ուզում է ջահել քըրո՛ջն ըսպանի,
Սարօի անունն ու սէրը թաքուն
Խանչալի ծայրով սըրտից հանի։
Ով գիտի՝ գուցէ հէնց այս գիշեր էլ
Իգիթ ոսոխներն, անհաշտ ու յամառ,
Մէկմէկու հօտից ոչխար են քըշել,
Մէկմէկից վըրէժ առնելու համար,
Կարող է նոյնպէս պատահել յանկարծ,
Որ մէկի դէզը, աբդինքը հընձի,
Գիշերւայ ժամին, հըրով բըռընկւած,
Երկնահաս բոցով աստղերը խանձի։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԳ

(Հատուած)

Լալիս է Անուշն երեսին ընկած,
Կանգնած են շուրջը կանայք հարևան,
Ու խօսք չեն գըտնում ասեն անարգւած,
Տարած ետ բերած, անբախտ աղջըկան։
Աստւած խընայեց՝ կոպիտ եղբայրը
Հեռու հանդերից դեռ տուն չէր դարձել,
Իսկ խոժոռադէմ, ալևոր հայրը
Սկսաւ փըրփըրած թըքել, անիծել։
—Դո՛ւրս գընա, կո՛րի, ա՛յլիրը անըզգա՛մ,
Սև ու սուգ լինի թագ ու պըսակըդ,
Կո՛րի, չերևաս աչքիս միւս անգամ,
Գետինը մտնի երկար հասակըդ։
Տեսա՞ր, որ նըրան ատում է Մօսին,
Չեն ուզում, տեսար, նըրան հէրն ու մէրդ,
Դու քանի գըլուխ ունիս քո ուսին,
Որ վեր ես կենում փախչում նըրա հետ»։
Խռնըւած գիւղացիք կըտուրից իջան
Մեղմելու կոպիտ բարկութիւնը հօր,
Յայտնըւեց նոյնպէս գիւղի քահանան,
Մի պատկառելի հսկայ ալևոր։
—Դո՛ւրս գընացէք, դո՛ւրս, գոչեց տէրտէրը,
Անուշը թողէք ուղիղն ինձ ասի,
Թողէք նա յայտնի իր միտքն ու սէրը,
Նըրանից յետոյ բանը կը պարզի։
Մի լա՛ր, իմ աղջի՛կ, ինձ խոստովանի՛ր,
Սիրո՞ւմ ես նըրան, քու կամքո՞վ փախար...
Եթէ սիրում ես՝ էլ դարդ մի՛ անիր,
Պիտի պըսակեմ ես ձեզ անպատճառ...

—Ի՞նչ են հառաչում... էն ո՞վ էր, մի տես,
Որ դուրսը յանկարծ աղմըկեց էսպէս...
Ո՞վ է ըսպանել... Մօսի՜ն... ո՜ւմ... ո՜ւր...
Անո՜ւշ, հէյ Անո՜ւշ... Ջուր հասցրէ՛ք, ջո՜ւր...

———

Ինչպէս մի հեղեղ վեր կենար յանկարծ,
Երկընքի մըթնած ամպերից իջնէր,
Ինչպէս փոթորիկ սաստիկ սըրնթաց,
Գիւղից սըլացան մի խումբ կըտրիճներ։
Ցաւից տաքացած էլ բան չեն հարցնում,
Թըռչում են, ասես ահից հալածուած,
Ու նըրանց առջև ահռելի բացւում,
Թըշշում է ձորը արիւնով լըցուած։
Գիւղը դատարկւեց մի ակընթարթում,
Լո՜ւռ, սըրտատըրոփ ականջ են դընում,
Նայում են ներքև... ձայն չի գալի դեռ.
Դեբեդն է միայն անդընդում՝ յուզւած՝
Խըլաձայն ողբով սուրում դէպի ցած։

———

Ու մարդասպանը դուրս եկաւ ձորից,
Դէմքը այլայլած, քայլւածքը մոլոր.
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
Եւ կերպարանքը փոխւած է բոլոր։
Առանց նայելու մարդկանց երեսին,
Առանց խօսելու, սևակնած, դաժան,
Մօտեցաւ սրահին, կախ տըւաւ սընին
Սև հըրացանը, սև օձի նըման։
Պապանձւեց նոյնպէս ամբոխը մեխւած,
Ոչ ոք ծըպըտալ չի համարձակւում,

Մենակ մի հոգի անզուսպ, կատաղած՝
Հարա՜յ է կանչում, երեսը պոկում։
Մեռած չոքանի պառաւ նանն է նա՝
Ցաւից խելագար բառաչում, լալիս.
Տարաբա՜խտ ծընող, վազում է ահա,
Ձորիցն է տըխուր գոռոցը գալիս։

———

Անլըռելի վըշվըշում է
Պըղտոր ջուրը Դեբեդի,
Նըրա ափին կանաչում է
Մենակ շիրիմն իգիթի։
Նրա շուրջը հէգ սիրուհին
Թընդացնում է ողբ ու լաց,
Ձայն է տալիս իր Սարօին
Ու պըտըտւում մոլորւած։
Եւ հոսում է գիշեր-ցերեկ
Արցունքն անբախտ աղջըկայ,
Բայց իր սիրած տըղան երբէք
Չըկա՜յ, չըկա՜յ ու չըկայ...
Վըշվըշում է գետը—վո՜ւշ, վո՜ւշ;
Ու յորձանք է տալիս յորդ,
Ու կանչում է՝ «Արի՛, Անո՜ւշ,
Արի՛, տանեմ եարիդ մօտ»...
—Անո՜ւշ, ա՛յ աղջի՛, Անո՜ւշ, տուն արի...
Կանչում է մայրը վերևից, կանչո՜ւմ.
Լուռ են ձորերը, լուռ են ահռելի,
Դուշման Դեբեդն է պղտոր մըռընչում։
Վուշ-վո՜ւշ, Անո՜ւշ, վուշ-վո՜ւշ, քուլի՛կ,
Վո՜ւշ քու սէրին, քու եարին,
Վուշ-վո՜ւշ, Սարօ, վուշ-վո՜ւշ, իգի՛թ,
Վո՜ւշ քու սիրած սարերին...

———

ԾԱՏՈՒՐԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՍ ՉԵՄ ԵՐԳՈՒՄ

Ես չեմ երգում։ Իմ երգերում վշտալի
Այն թշուառն է՝ անարգ բախտից հալածուած
Իւր վիճակը անվերջ ողբում ու լալի,
Իւր ցաւերը երգով պատմում նա մարդկանց…
Ես չեմ երգում. Իմ երգերում ցաւատանջ
Այն հարազատ իմ տառապեալ խեղճ եղբօր
Դուք լսում էք խուլ հեծեծանք ու հառաչ
Եւ կարդում էք ազգիս վիշտը դարևոր…
Ես չեմ երգում։ Իմ երգերը լալագին
Արձագանք են մարդկանց վշտի, դառնութեան…
Քնարիս ձայնով արդարադատ երկնքին
Բողոքում են անմեղ զոհեր չարութեան…
Երբ կըգայ օր, մի օր վսեմ, փրկարար,
Կըխորտակուի չարն աւերիչ ու թունոտ,
Եւ թշուառը օրհնելով բախտն ու աշխարհ
Կը ողջունէ մի նոր կեանքի առաւօտ…
Երբ չարանենգ, խաւար ոգին բռնութեան
Կըսարկանայ, որպէս անզօր մի գերի,
Եւ արդարի ազատ ձայնը անխափան
Կըխլացնէ խուլ շաչիւնը շղթայի…
Երբ համաշունչ եղբայրական սուրբ սիրով

Կըհալածուի չար Բաալը աշխարհից,
Եւ այդ սէրը, այդ մեծ սէրը վեհ փառքով
Քաջ յաղթութեան կ՚առնէ պըսակ երկնքից.—
Յայնժամ տխուր, լացող երգչի շըթունքից
Դուք կըլսէք ուրախութեան երգ ու տաղ.
Յայնժամ միայն նորա երգում վշտալից
Դուք կըկարդաք և խնդութիւն և՛ ծիծաղ.
Յայնժամ երգիչն անհոգ, ուրախ, բախտաւոր
Լի ցնծութեամբ նա ձեռք կ՚առնէ իւր քընար,
Եւ կըերգէ յաղթանակըդ փառաւոր
Ո՛վ դու վսեմ եղբայրութեան գաղափար…

——

ԱՌԱՔԵԱԼ

Խօսի՛ր, առաքեալ վեհ ճշմարտութեան,
Քանի չեն փակել քո սուրբ շըթունքներ.
Անարգի՛ր «եսը» գոռոզ մարդկութեան,
Հալածի՛ր անխնայ նորա չար գործքեր…
Թո՛ղ նա կատաղի, որպէս փոթորիկ.
Կարկուտ ու հեղեղ թափէ քո վերան,
Դու այդ համարի՛ր մի անզօր ալիք,
Եւ ազատ քայլէ՛ քո փշոտ ճամբան…
Մարտնչի՛ր անվախ, որպէս քաջ զինուոր,
Անկաշառ խօսքի դրօշակն ձեռքում.
Եւ մի՛ վհատիր, թէ դու էլ մի օր
Պիտ ընկնես կեանքի դառն պատերազմում։
Այո՛, դու կընկնես—և քո անշունչ դին
Մայր-երկրի կրծքում փոշի կըդառնայ,
Բայց քո վեհ քարոզ, քո հպարտ հոգին
Յաւիտեան կապրեն աշխարհիս վերա։
Եւ անվերջ դարեր քո հըզօր բարբառ
Կըհնչուի ազատ. ահեղ թնդիւնով

Նա կըխորտակէ մահաշունչ խաւար,
Մեզ անշէջ լուսոյ տաճար կանգնելով…

Թ Շ Ւ Ա Ռ Ի Ն

Ո՞վ ես դու, եղբա՛յր,—քեզ չեմ ճանաչում.
Բայց քո սրտամաշ լացը տեսնելիս,
Ե՛ւ ես վշտացած արցունք եմ թափում.
Ցաւում է սիրտս, տանջւում է հոգիս։
Մի՛շտ տխուր, տրտում, մի՛շտ լուռ, միայնակ,—
Դու չես մասնակցում կեանքի խնճոյքին.
Չկա՛ն քեզ համար ո՛չ սէր, ո՛չ բերկրանք,
Լացն ու տանջանքն է միայն քո բաժին։
Թափառում ես դու խուլ փողոցներում,
Փախչում, ծածկւում ես մարդկանց հայեացքից.
Կարծես մարդկանցում էլ չես հաւատում
Գտնել անկեղծ սիրտ վշտիդ կարեկից։
Կարծես քո աչքին բովանդակ աշխարհ
Սառցապատ ծով է անկարեկցութեան,
Եւ քո արցունքը—աշխարհիս համար
Անսպառ աղբիւր վայրագ խնդութեան։
Օ՜հ ո՛չ, հաւատա՛, եղբայր իմ թշուառ,
Դու հոգուս անկեղծ, խորին զգացման.
Հաւատա՛, որ քո տանջանքի համար
Շա՛տերն են անկեղծ տանջւում ինձ նման…։

— —

ՄԻ՛ ԼԱՐ, ԲԼԲՈՒԼ…

Մի՛ լար, բլբո՛ւլ, քեզ մի՛ տանջիր,
Որ փոթորիկն անիրաւ

Վարդըդ սիրուն, վարդըդ կարմիր
Թփից պոկեց ու տարա՜ւ…
Կանցնեն օրեր… Կըգայ կրկին
Մի նո՛ր գարուն վարդաբեր.
Եւ մոռացած քո վիշտը հին,
Նորից կերգես վարդին սէր։
Բայց վա՛յ կեանքի այն խեղճ երգչին,
Որ վաղաժամ որբացած,
Իր սիրելի, խօսուն վարդին
Ցուրտ հողին է նա յանձնած…
Երգչի համար գարուն չի՛ գայ,
Ո՛չ նա նոր վարդ կըսիրէ.
Նա պէտք է լայ, պէտք է սըգայ,
Մինչ յաւիտեան կըլռէ…

— —

Գ Ե Տ Ա Կ

Քի՛չ էլ լացիր, գետա՛կ վճիտ, կարկաջիւն,
Անկեանք ձըմրան ցուրտ կապանքը կըրելով.
Քի՛չ էլ սպա… և ուր որ է քեզ գարուն
Նոր կեանք կըտայ՝ քո լաց-սուգին վերջ տալով։
Եւ ազատուած սառցէ մաշող կապանքից,
Նորից, գետա՛կ, կըթռչկոտես համարձակ,
Եւ կարկաջըդ՝ ազատ ելած քո կըրծքից՝
Խոր անտառում կառնէ առատ արձագանք։
Քեզ վերևից կըփայփայէ ժպտելով
Գարնան անամպ պարզ երկինքը կապուտակ,
Եւ դիւթական, հըրապուրիչ գոյներով
Քո ջըրերում կըշողշողայ արեգակ։
Եւ վաղորդեան հով զեփիւռը գարնային
Մեղմ կը յուզէ մաքուր կուրծքդ կուսական.

Դալար ափիդ պարզ ժըպիտը երեսին,
Քեզ ամօթխած կըողջունէ հեզ շուշան։
Քի՜չ էլ լացիր, գետա՛կ վճիտ, կարկաջիւն,
Դաժան ձըմրան ցուրտ կապանքը կըրելով.
Քի՜չ էլ, քի՜չ էլ... և ուր որ է վառ գարուն
Նոր կեանք կըտայ՝ քո լաց-սուգին վերջ տալով...

ՍԻՐԵԼԻ՛ ԸՆԿԵՐ, ԴՈՒ ՄԻ ԶԱՐՄԱՆԱՐ

Սիրելի ընկեր, դու մի՛ զարմանար,
Որ մատաղ կեանքիս եռուն հասակում
Այնքան տխուր է հնչում իմ քընար,
Վիշտ ու թախիծ ես կարդում իմ երգում...
Ծնուած հէգ երգիչ թշուառ էպոքի—
Միշտ մռայլ տեսայ երկինքը գլխիս.
Ես շատ վաղ ուսայ տանջանքը կեանքի,
Վաղ մտերմացաւ վշտի հետ հոգիս։
Անմեղ հասակից, օրօրոցիս մօտ,
Ուր պէտք է ականջս մեղմ օրօր շոյէր,
Ուր պէտք է ժպտար կեանքի առաւօտ,—
Ես տեսայ միայն սև ու մութ օրեր...
Օ՛, անգին ընկեր, դու մի՛ զարմանար,
Որ ինձ չես տեսնում ուրախ, խնդալից,
Արիւն—արցունքով ներկուած իմ քընար
Մարդկան վշտին է արձագանք տալիս...

ԵՐԳ ԵՒ ՄԵՏԱՂ

Երգիչը քեզ երգ նուիրեց,
Մեծատունը—իւր ոսկին.
Երգիչը քեզ «կեանք» անուանեց,

Մեծատունը—«սիրուն կին»...
«Տո՛ւր ինձ ձեռքըդ»—հարուստն ասաց—
«Իմ ողջ գանձըս քեզ պարգև».
Իսկ երգիչը սիրուց տանջուած՝
Միայն ողբաց քո առջև...
Բայց դու, զաւա՛կ փարթամ կեանքի,
Երգչի երգը մերժեցիր,
Եւ քո սիրտը ժանգ-մետաղի
Խաւար փայլին զոհեցիր...

Ի Դ Է Ա Լ Ի Ս Տ

(«Գրչի հանաքներից»)

Երբ ուսանող էր համալսարանում,
Իդէալ էր փնտրում նա ամեն բանում.
Նա միշտ ասում էր,— «առանց իդէալի
Կեանքն է անապա՛տ, մարդն է խղճալի»...
Բայց ահա կեանքի նա դպրոց մտաւ.
Եւ գիտէ՞ք իդէալն ի՞նչ բանում գտաւ—
Հարուստ օժիտով մի աղջիկ առաւ
Եւ կնկայ փողով յայտնի մարդ դառաւ...

Պ Օ Է Տ Ի Ն

Պօէտ, դու հպարտ, սէգ արծուի նըման,
Բարձրից մի՛ նայիր տգէտ ամբոխին.
Եւ կծու երգով մի՛ ծաղրիր նորան,
Շանթեր մի՛ թափիր խղճուկի գըլխին։
Ի՞նչով է, ասա՛, ամբոխն յանցաւոր,
Որ խորթ են նորան քո հոգու ձայներ.

Դու վարդ ես երգում, պօէտ բախտաւոր,
Երբ նորա կեանքին պատած են փշեր...
Ի՞նչ անէ ամբոխն, ի՞նչպէս հասկանայ
Քո գողտրիկ տաղերն, երբ թևեր առած,
Դու միշտ ապրում ես ամպերի վերա,
Կեանքից անջատուած, եթեր վերացած...
Ամբոխը, պօէտ, զաւակ է երկրի,
Լուսազուրկ զաւակ, քրթնաթոր մշակ,
Նա միշտ կարօտ է կեանքի երգերի—
Երգի՛ր նորան հաց և արդար վաստակ։
Երգի՛ր նորան լոյս, բարիքներ ուսման,
Եղի՛ր ամբոխին ուսուցիչ—ընկեր.
Նստի՛ր նորա հետ մի ճաշի սեղան,
Շօշափի՛ր մօտից դու նորա վէրքեր...
Ապրի՛ր նորա հետ, նորա տանջանքով,
Մի՛ զզուիր նորան ձեռքդ պարզելու.
Դու ոյժ ներշնչի՛ր նորան քո երգով—
Խաւարի կապանքն անվախ փշրելու...
Եւ տե՛ս, ո՛վ պօէտ, քեզ այն ժամանակ
Որպիսի սիրով կը սիրէ ամբոխ.
Սէրն, այո, կը հիւսէ քեզ դափնէ պսակ,
Սէրն այդ կը կանգնէ քեզ յաւերժ կոթող...

ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՒԱԿ

Վազի՛ր, իմ նաւա՛կ, հասի՛ր ծովափին՝
Ալիքի կուրծքը պատառոտելով.
Այնտեղ թող հանգիստ գտնեմ վերստին՝
Իմ տառապանքը ծովին յանձնելով։
Իմ շուրջը խաւար, ահռելի գիշեր,
Հողմերի սաստիկ ահեղ մռընչիւն.
Չորս կողմըս ջըրեր և անվերջ ջըրեր,
Չորս կողմըս անհուն սև տարածութիւն։
Բայց այնտեղ, հեռու, աստղիկի նըման
Փայլում է մի լոյս պայծառ ու մենակ,
Այն նայում է մեզ փարոս փրկութեան—
Վազի՛ր դէպի նա, սիրուն իմ նաւակ։
Թո՛ղ մռընչելով սև ալիքները
Սոսկալի անդունդ բանան առաջիս.
Թող խաւարի մէջ վայրագ հողմերը
Սպառնական ձայնով սուլեն ականջիս—
Դեռ յոյս ունիմ ես սրտումս պահած,
Որ միշտ ինձ առաջ առաջ է տանում.
Եւ քանի նա կայ, քանի չէ մարած,
Ոյժ կայ վարելու և իմ ձեռներում։
Եւ խաւարը չէ յաւիտենական,
Յաւիտենական չէ ալեկոծում.
Ես հաւատում եմ արևի ծագման,

Ես հաւատում եմ ծովի հաշտւելուն։
Բաղձալի ափին կըհասնեմ շուտով,
Շուտով կըտեսնեմ սիրելի դէմքեր.
Եւ նոքա անկեղծ, ուրախ ողջունով
Կըլուսաւորեն մըռայլ իմ պատկեր։
Վազիր, իմ նաւակ, հասիր ծովափին՝
Ալիքի կուրծքը պատառոտելով.
Այնտեղ թող հանգիստ գըտնեմ վերստին՝
Իմ տառապանքը ծովին յանձնելով։

——

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Ահա՛ առաջին ամպի որոտում...
Նա աւետում է արար-աշխարհին,
Թէ արդէն մօտ է ծաղկաբոյր գարուն,
Թէ պիտի ցընծայ մարդկային հոգին։
Բայց չըկայ մէկը, որ բանար բերան
Եւ որոտագոչ մարգարէանար,
Թէ արդէն մօտ է ոսկի ապագան,
Որ սպասում է մարդկութեան համար։

— —

ՄԵՐ ՆՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻՆ

Անվհատ հոգով և միաբերան
Բարձըր հընչեցրէք ձեր ազնիւ տաղեր,
Ինչպէս անտառում նորադարձ գարնան
Երգում են աշխոյժ նորեկ թըռչուններ։
Ծառերի վերա սև ագռաւները
Միասին խըմբւած՝ թող անվերջ կռռան,
Միթէ հընչական ձեր նըւագները
Խըռպոտ ձայներում պիտի խըլանան։

Երգեցէք խըրոխտ... փոյթ չէ. թըշնամին
Թող մաղձով լըցւած՝ ձեզ ծաղըր անէ.
Հաւատի եղէք—գալիք սերունդին
Նոցա ծաղրանքը չը պիտի հասնէ։
Բայց ձեր երգերի լայն ալիքները
Երկա՛ր կըզարնւեն մարդկանց սըրտերին,
Ինչպէս բարկութեամբ լի կոհակները
Զարնւում են ժէռոտ—քարոտ ափերին։

— —

ՄԱՆՈՒՇԱԿ

Ո՛հ, մի՛ ողբար դու, թառամած
Եւ դալկացած մանուշակ,
Որ քո անոյշ բոյրըն առած՝
Քեզ ձըգեցին ոտի տակ։
Աւելի պարզ էր շողշողում
Իմ գարունը մանկութեան.
Բայց ինձ համար այս աշխարհում
Նա չըքացաւ յաւիտեան։
Ո՛հ, մի՛ ողբար դու, թառամած
Եւ դալկացած մանուշակ,—
Գուցէ էգուց անշընչացած
Դու ինձ տեսնես հողի տակ։

——

ՄԻԱԿ ՃԱՆԱՊԱՐՀ

Արդէն որոշւած է իմ ճանապարհ,
Որով գընում եմ աներկբայ հոգով.
Որքան էլ դըժւար լինի ինձ համար,
Ես պիտի երթամ իմ ընտրած շաւղով։

—«Անփորձ պատանի,—մի ձայն եմ լըսում,—
Փոխիր տատասկոտ, փըշոտ այդ ուղին.
Շուտով քո առջև անդունդ է բացւում,
Ուսկից վերադարձ չըկայ անցորդին»։—
—Ես պէտք է երթամ, թէկուզ և իմ բեռը
Սուրբ խաչի նըման ծանրանայ մէջքիս.
Ես պէտք է երթամ, ուր որ իմ քայլերը
Տանելու լինին թըշուառականիս։

——

ՕՐ. Վ-Ի Ն

Որպէս մըրրիկը քըշում է ուժգին
Երկնի երեսից ճընշող ամպերը,
Եւ պայծառացած երկընքում կըրկին
Բացւում փայլում են մաքուր աստղերը,—
Նոյնպէս դու, հոգեակ, իմ սըրտի միջից
Վանեցիր իմ ողջ տանջող մըտքերը,
Եւ այս պարզ սըրտում, ուր չըկայ մի բիծ,
Փայլում է այժմ միայն քո սէրը։

——

ԿԵԱՆՔԻՍ ԸՆԿԵՐԻՆ

Ցեղյեղուկ բախտի շատ հալածանքներ
Գուցէ սպասում են մեզ ապագայում.
Բայց դու, իմ կեանքի մըտերիմ ընկեր,
Օ, մի վըհատիր երբէք քո օրում.
Աւելի, քան քէն և թշնամութիւն,
Անդաւաճան, խոր սէրն է զօրեղ.
Եւ ուր որ կայ սէր և մտերմութիւն,
Բախտաւորութիւն կենում է այնտեղ։

——

ՅՈՅՍ

Ո՛չ, դեռ տակաւին յոյսըս չէ մարած,
Որ կը գայ ժամը վերածընութեան,
Երբ որ մեր հոգին՝ նոր թևեր առած՝
Կը զարթնի քընից իր խոր թըմրութեան,
Եւ մի նոր թափով կը թըռչի վերև,
Մըտորումների ծանօթ աշխարհը,
Ուր այնպէս պայծառ փայլում էր արև
Եւ ուր հընչում էր կեանքի քընարը։
Օ՛, շուտով արի, նոր գարնան բանբեր,
Նոր օր անընչալի վերածընութեան.
Թո՛ղ կըրկին հընչեն ընդհատուած երգեր
Մոռացուած սիրոյ և ճըշմարտութեան։

——

ԲՆՈՒԹԵԱՆ ԳՐԿՈՒՄ

Եթէ յոգնեցիր կեանքի կըռւի մէջ
Եւ հոգիդ կարօտ է լուռ հանգըստեան,
Ջըգիր առօրեայ հոգսերըդ անվերջ
Եւ թըռիր դէպի գիրկը բընութեան։
Որպիսի՜ հեշտանք խաղաղ անկիւնում
Թափառել շըքեղ ծառուղիներում,
Շընչել անտառի կենսարար օդը
Եւ զադար առնել ախորժ ըստւերում,
Ուր թաւշի նըման քընքոյշ է խոտը.
Կամ խոր ձորի մէջ, գետակի ափին,
Ուր կորագըլուխ նիրհում է ուռին,
Քարերի վըրա նըստած երազել
Եւ ջըրի ձայնին ունկընդիր լինել։
Ի՜նչ երանութիւն—լեռների գըլխից

Հիանալ շքեղ տեսարաններով
Եւ հեռու երկրի տառապանքներից՝
Ուրախ և ազատ երգել անխռով,
Մոռանալ տանջող վշտերըն անթիւ
Եւ բիւր հոգսերից մի պահ ազատուած՝
Մի վայրկեան ըզգալ իրան վեհ արծիւ՝
Կորովի թափով ամպերին հասած։

Ա Շ Ո Ւ Ն

Աշնանային քամիները փչեցին,
Ծառ ու ծաղկունք տերևները թափեցին.
Երկինքը մռայլ, գիշեր-ցերեկ ամպամած.
Սար ու ձորեր մէգ մառախուղ է պատած։
Ամայացան անդաստաններ, այգիներ.
Թռչունների ուրախ երգը դադարեց.
Խոպանացան աղմըկալից ճամբաներ,
Եւ սայլերի անցուդարձը ընդհատուեց։
Յոգնած եզներն հանգըստացան գոմերում,
Օջախի շուրջ գեղջուկները խըմբուելով
Աշխատանքի պտուղներն են վայելում
Ուրախ-զըւարթ, մինչև գարուն ապահով։

Ե Ղ Ե Ւ Ի Ն

Օ՜, մի՛ նայիր այդպէս տխուր մազերիս,
Որ օրէցօր ճերմակում են, ճերմակում.
Նայի՛ր ներսըս, նայի՛ր սիրտըս ու հոգիս—
Այնտեղ, հոգեակ, դեռ նոր գարուն է բացւում։
Տեսե՞լ ես դու ցուրտ հիւսիսում մեծացած

Անտառի մէջ ըսքանչելի եղևին.
Ամբողջ ձըմեռ ճերմակ ձիւնով է ծածկւած,
Բայց ձիւնի տակ նա կանաչ է տակաւին։

ԱՆԻԻ ԱՒԵՐԱԿՆԵՐԻ ՎՐԱ

Օ՜, անցած փառքի վերջին բեկորներ...
Նորից զարթեցնում էք դուք իմ հոգում
Անդարձ օրերի անգին պատկերներ
Եւ խորին ցաւով իմ սիրտը լըցնում։
Ամեն մի բուռըն հող և ամեն մի քար
Վըկայ է այստեղ դարաւոր փառքին,
Այստեղ բոլորը սուրբ է ինձ համար,
Ինչ որ ընկած է աչքիս առաջին,—
Եւ այս տաճարներ, բարեպաշտութեան
Եւ ճոխ արւեստի անխօս վըկաներ,
Եւ այս արքունիք թագաւորական,
Եւ այս կիսաւեր, խարխուլ պարիսպներ...
Այն եռուն կեանքի ուրախ աղմուկից
Այսօր մեզ համար էլ ոչինչ չը մնաց.
Բըլուրների տակ ծածկւած աչքերից՝
Ամեն բան թաղւած, ամեն բան լըռած։
Բայց լուռ չէ միայն հէգ Ախուրեանը
Եւ գիշեր-ցերեկ նա ողբ է ասում.
Նա դեռ յիշում է իր հին օրերը
Եւ յուսահատւած ափերին զարնւում։
Զարնւում ափերին և, համբոյր տալով,
Կոծով վազում է հարազատ վայրից,
Նըման խեղճ այն մօր, որ հեկեկալով
Դառնում է միակ որդու շիրիմից։

Դէ՛պի վեր

(ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՊՕԷՄԱ)

Տեսարան I.

Ս. ՅԱԿՈԲԱՅ ՎԱՆՔԸ ՄԱՍԻՍԻ ՍՏՈՐՈՏՈՒՄ

(Հ ա տ ւ ա ծ)

ՊԱՐՐՈՏ ԻՐ ՈՒՂԵԿԻՑՆԵՐՈՎ, ԱԲՈՎԵԱՆ, ՎԱՆԱՀԱՅՐ

Պարրոտ. Ողջոյն ձեզ, հայր սուրբ։
Վանահայր. Ձեր գալը բարի, իմ ուսումնական պատուելի հիւրեր։
Պարրոտ. Մեր խումբը մեծ է, բայց և մեծայոյս,
Որ մեզ բոլորիս դուք սիրողաբար
Կը պատըսպարէք այս մենաստանում
Քանի մի օրւայ կեցութեան համար։
Վանահայր. Իմ աչքիս վըրա, այստեղ բոլորդ
Ունիք ապահով ապաստան։ Խընդրեմ,
Ներս հրամայեք և հանգըստանաք։
Պարրոտ. (Աբովեանին). Առաջ թող տանեն իրեղէնները
Եւ տեղաւորեն։ (Գիւղացիները ներս են տանում իրերը)։
Իսկ մենք մի փոքըր կը հանգստանանք
Այստեղ, հրաշափառ լերան դէմ առ դէմ։
Վանահայր. Անշուշտ առաջին անգամն է, որ դուք
Շընորհ էք բերում մեր այս երկիրը։

Պարրոտ։ Առաջին անգամ։
Վանահայր. Թոյլ տուէք նոյնպէս ծերիս իմանալ,
Ո՞ր երկրից էք դուք, և ինչով արդեօք
Մեր մենաստանը, այս խուլ անկիւնը,
Արժանացաւ ձեր ուշադրութեան։
Պարրոտ. Դորպատից ենք մենք, հայր սուրբ։ Երևի,
Լըսած կը լինիք դուք այս անունը։
Մենք բոլորեքեան—գիտութեան խոնարհ
Ծառայողներ ենք։ Մեզանից մէկը
Ուսուցչապետ է, միւսը ուսանող,
Մի երրորդըն էլ—աստղաբաշխ... Այսպէս
Բարեկամական մի խումբ կազմեցինք
Եւ հեռու տեղից եկանք ձեր աշխարհ,
Որ տեսնենք ինչ կայ, ինչ չը կայ այստեղ։
Իսկ եթէ կուզէք ասեմ աւելին—
(Ցոյց տալով դէպի Մասիսը)
Ահա՛ իսկական մեր նըպատակը։
Վանահայր. Մասի՞սը։
Պարրոտ. Այո՛,
Այս Արարատեան դաշտի կոթողը,
Որ Աստուած ընտրեց, իբրև մարդկութեան
Առաջին օրրան։ Գիտութեան համար
Նա մինչև այսօր ծածկուած էր մըթին
Անյայտութեան մէջ. դարերից ի վեր
Ոչ մի հողեղէն դեռ չէ յանդգնել
Մերձենալ լերան վերամբարձ ծայրին։
Մենք կամենում ենք բարձրանալ այնտեղ...
Վանահայր. Բարձրանա՞լ այնտեղ։ (Ժպիտով և թերահաւատութեամբ շարժում է գլուխը)։

Պ ա ր ր ո տ. Այո՛, բարձրանալ և ջինջ բարձունքից
Նայել աշխարհին և սքանչանալ
Արարչապետի ստեղծագործութեամբ.
Եւ մի հայեացքով ընդգրկել երկրի
Այնպիսի անհուն մի տարածութիւն,
Որքան մարդու աչք կարող է կտրել։
Վ ա ն ա հ ա յ ր. Եւ դրա համար այդչափ նեղութիւն...
Պ ա ր ր ո տ. Ի՞նչ, չարժէ՞ր, հայր սուրբ։ Բայց մեր աշխարհում
Պիտի իմանաք, մարդիկ սիրում են
Եւ գիտեն յարգել բնութեան արտակարգ
Տեսարանները... Բայց այդ չէ բանը։
Այս հսկայ սարի յատկութիւնները,
Որ շահեկան են գիտութեան համար,
Մենք մտադիր ենք ուսումնասիրել
Ստորոտից մինչև գագաթը—
Զանգուածի կազմը, մթնոլորդային
Երևոյթները, նրա բարձրութիւնը...
Վ ա ն ա հ ա յ ր ը. Տայ Աստուած ձեզ ոյժ և կարողութիւն
Հասնել ցանկալի ձեր նպատակին։
Բայց ո՞ւր է խիզախ այն մահկանացուն
Որ համարձակւէր ոտ կոխել այնտեղ,
Սրբազան լերան երկնաճեմ գլխին,
Ուր մինչև անգամ թևաւորները
Կորովի թափով չեն զօրում երբէք
Թռիչներն ուղղել այնքան վերամբարձ։
Ո՛չ, զուր, ապարդիւն կանցնեն մարդկային
Ամենայն ջանքեր։
Եղէք մի այծեամ, որ ճարպիկաբար

Պիտէ ցատկոտել ժայռից դէպի ժայռ,
Ի՞նչ շահ, երբ ամէն մի քայլափոխում
Բացւում են մարդու աչքերի առաջ
Անյատակ գոռ վիհ, պատառւածք, ժայռեր՝
Անչափ ահռելի, սեպաձև և թեք,
Որ միայն տեսքից արիւն է սառչում,
Սարսռում հոգի... Եւ այդ է միայն.
Իսկ ցո՞ւրտը, բո՞ւքը, թօ՞նը, տարափը,
Ճայթիւմո՞ւնքըն ահեղ փոթորիկների...
Իսկ ձեան հիւսերը, որ գիտեն փլըթել
Զօրեղ թընդիւնով, իսկ սահեցմունքը
Սառցակոյտերի, քարերի վիժմունքն,
Ապառաժներից փըլւած բեկորներն,
Որոնց մի հատիկ միայն կըտորը
Լիովին բաւ է, որ ամբողջ քարւան,
Մըրջիւնների պէս, իր տակ ջախջախի...
Պ ա ր ր ո տ. Ես հաւատում եմ, հայր սուրբ, վերելքը
Կապւած է անթիւ դըժւարութեանց հետ,
Բայց մենք կը փորձենք։
Վ ա ն ա հ ա յ ր. Սուրբ Յակոբըն էլ հին ժամանակում
Փորձեց բարձրանալ լերան գըլուխը,
Որպէս զի այնտեղ իր աչքով տեսնի.
Նոյի տապանը։
Բայց Տիրոջ կամքին հակառակ էր այդ.
Եւ ըսքանչելի ծերունին հազիւ
Քիչ վեր բարձրացաւ, սաստիկ ծարաւից
Սկսեց նեղւել և այնպէս յոգնեց,
Որ միանգամայն ուժասպառ և թոյլ
Վայր ընկաւ, թեքեց գըլուխը գետնին
Եւ դառը լացով սկսեց աղօթել...

Աչքերից հոսած արտասուքից
Բղխեց մի աղբիւր, որ մինչև այսօր
Արդար Յակոբայ անունն է կրում:
Երբ որ ծարաւը փարատեց սուրբը,
Ոյժ առաւ, կրկին վեր կացաւ, գնաց
Դժուարամատոյց ապառաժներով.
Եւ արդէն մօտ էր սարի կատարին,
Բայց էլ չը կար ոյժ և կարողութիւն
Իր ճանապարհը շարունակելու:
Աչքերը կպան, ու մըտաւ խոր քուն:
Եւ ահա երազ: Հրեշտակը եկաւ
Եւ կանգնեց սուրբի գլխավերևը.
Ու ասաց. «Յակոբ, Յակոբ, քո Տէրը
Լսեց քո աղերս և աղաչանքը—
Եւ կատարում է. ահա քո մօտ է
Տապանի մասը—վերցրու և գնա
Եւ ի զուր էլ մի՛ տքնիր տեսնելու
Այն, ինչ յաւիտեան Արարչի կամքով
Պիտի մնայ անտես»:—Ասացէք հիմա.
Եթէ սուրբ մարդուն արգելեց Աստուած
Մերձենալ սարի գլխին, ո՛, միթէ,
Միթէ թոյլ կը տայ Նա մեզ, հողեղէն
Մեղքերով լեցուն արարածներիս:
Պարրօտ. Զարմանալի է: Այստեղ ամենքը
Ասում են նոյնը. «անկարելի՛ է»,
«Անհնարի՛ն է»: Եւ չը կայ մէկը,
Որ մեզ յուսադրէր: Սկսած հայր սուրբից
Մինչև գիւղերի վերջին ռամիկը
Ահով ու դողով յորդորում են մեզ
Թողնել վերելքի մեր «անմիտ» փորձը:
«Անկարելի՛ է, անհնարի՛ն է:»

Զօրս կողմից հնչում է միաբերան:
Եւ մի դարաւոր նախապաշարում
Մինչ ո՛ր աստիճան կարողացել է
Կապել, կաշկանդել մարդկային միտքը
Եւ մտածմունքը: Կարծես ամենքի
Պաշտամունքն է—«չը շարժուել տեղից,
Քայլ առաջ չերթալ, քայլ առաջ չանել
Դէպի վեր, դէպի լուսոյ աշխարհը»:
Բայց գիտութիւնը, որ մեծազօր է,
Պիտի բաց անէ իր ճանապարհը.
Նորա նորոգիչ ճառագայթները
Պիտի թափ անցնեն աշխարհի մթին,
Խուլ անկիւնները. և խաւարի մէջ
Լոյս պիտի շողայ:
Երկնահուպ լերանց կուսական բարձունք,
Խորունկ յատակըն ովկեանոսների,
Երկինքըն անթիւ լուսատուներով—
Ամբողջ տիեզերք—իրանց գաղտնիքը
Բոլորը պիտի երևան հանեն
Գիտութեան առաջ:
Քաղցըր է նոյն իսկ դառնագին մահը
Յանուն նորանոր յայտնագործութեանց,
Որոնումների... Հեռո՛ւ ուրեմն
Վեհերկոտութիւն և մահուան երկիւղ.
Քաջարի լինինք, ուղեկիցներըս,
Լարենք մեր կամքը, բարձրանանք վերև
Եւ առաջինը բոլոր մարդկանց մէջ
Մեր ոտը դընենք հըսկայ Մասիսի
Վեհապանծ գլխին:

—

Տեսարան III

ՆՈՅՆ ՏԵՍԱՐԱՆԸ

ՊԱՐՐՈՏ, ԱԲՈՎԵԱՆ

Պարրոտ. Թոյլ տուէք կրկին սեղմեմ ձեր ձեռքը
Ի նշան իմ ջերմ շնորհակալութեան.
Մի աջակցութիւն ցոյց տուիք դուք ինձ,
Որ իմ կեանքումը չեմ մոռանալու։
Աբովեան. Բարի պրոֆեսոր...
Պարրոտ. Ասացէք։
Աբովեան. Կարծեմ, դուք պիտի մեկնէք։
Պարրոտ. Այո, և շուտով։ Արդէն վերջացաւ
Մեր ուսումնական առաքելութիւնը։
Ես—կրկին Դորպատ։ Կարգի կը բերեմ
Արարատ լերան վերաբերութեամբ
Դիտողութիւններս, յետոյ բոլորը
Ի մի ամփոփած՝ ես լոյս կընծայեմ
Ի ծանօթութիւն գիտնականների։
Աբովեան. Ա՛խ, ինչպէս յայտնեմ ես իմ
սրտինը...—
Պարրոտ. Դուք, երիտասարդ բարեկամ, կարծեմ,
Մի ինչ որ բան էք կամենում անել,
Բայց վարանում էք...
Աբովեան. Այո, պաշտելի պրոֆեսոր, իրաւ,
Ես ունիմ մի իղձ։ Հաւատացէք ինձ.
Երբ մենք բարձրանում էինք սարն ի վեր,
Ջըրի ծարաւը չէր նեղում այնչափ,
Որչափ այսուհետ ես պիտի տանջւիմ
Մի այլ ծարաւից։ Դուք, որ ինձ տարաք
Լերան բարձունքը և ցոյց տուիք ինձ

Արար-աշխարհի գեղեցկութիւնը,
Այժըմ էլ ձեզ հետ ինձ տարէք վերն՝
Մինչև գիտութեան այն բարձըր կէտը,
Ուր ընդլայնում է մտքի հորիզոն,
Ուր ազնուանում է մեր բիրտ հոգին,
Եւ մարդ հասնում է կատարելութեան...
Թո՛ղ օրհնուած լինի այն օրն ու ժամը,
Երբ ճանաչեցի ես ձեզ։ Այն օրից
Սեփական անձիս նուաստութիւնը
Իմ աչքով տեսայ—և անասելի
Կարօտ ըզգացի հոգու և մտքի
Վերածընութեան...
Պարրոտ. Ես Ասիայի նախադըռան շէմքում
Գըտայ այնպիսի խոշոր ադամանդ,
Որ մի վայրենի պիտի լինէի,
Եթէ ոտի տակ ընկած թողնելով
Այն ադամանդը, ես հեռանայի։
Այո, բարեկամ, մեծայոյս եղէք.
Խաւարի միջից ես ձեզ կը տանեմ
Դէպի լոյս-աշխարհ, կրկին դէպի վեր,
Դէպի նոր բարձունք, ուսկից կը տեսնէք
Նորանոր անթիւ գեղեցկութիւններ
Հանճարեղ մտքի և մարդկային վեհ
Ստեղծագործութեան։
Աբովեան. Ա՛խ, երբ կը հասնեմ այդ երջան-
կութեան...
Պարրոտ. Այստեղ ապրում է մի հէգ ծողովուրդ,
Որի հարազատ զաւակըն էք դուք.
Նա խարխափում է տգիտութեան մէջ.
Ամեն ինչ թըմրած, ամեն ինչ ծածկուած
Հընութեան փոշով. չորս կողմը խաւար

Եւ մեռելութիւն, և կեանքը կանգնած,
Ինչպէս մի ճահիճ։ Այդ ժողովրդին
Լուսաւորութեան առաքեալ է պէտք,
Եւ եթէ ճիշտ է վըկայում սիրտըս,
Դուք պիտի լինէք այդ առաքեալը։
Աբովեան. Ծառայել նըրան անձնըւիրաբար,
Որքան կը ներէ անհատի ոյժը,
Թըմրած գոյութեան նոր կեանք ներշնչել,
Նըրա խաւարտչին մըթնոլորդի մէջ
Ծաւալել վառ լոյս, կեանքի ջերմութիւն—
Ահա իմ իղձը և նըպատակը։
Սակայն ես ինքըս դեռ այնքա՜ն անզօր
Եւ այնքա՜ն թոյլ եմ... Օ՛, տարէք ձեզ հետ
Եւ տարէք, որքան կուզէք, դէպի վեր,
Միայն թէ ինձ լոյս, ո՜, լո՜յս տըւէք ինձ։
Գարրօտ. Ցանկալի լոյսը նաև ձեզ համար
Կը փայլի մի օր։ Դուք կը գաք Դորպատ,
Եւ ձեզ գըրկաբաց կընդունէ իր մէջ
Գիտութեան տաճար՝ մեր alma mater.
Աբովեան. Երնէկ այն օրին...
Գարրօտ. Այնտեղ կուսանէք և կը զօրանաք
Հոգով և մըտքով. և վերածընւած
Ու պայծառացած գիտութեան լուսով՝
Կըրկին հայրենիք կը վերադառնաք,—
Եւ այն ժամանակ,
Որպէս փող Գաբրիէլ հրեշտակապետի,
Թո՛ղ բարձըր հընչէ վերածընութեան
Փըրկարար խօսքը... Եւ թո՛ղ ամբոխը
Ըսթափւի քընից, բանայ աչքերը,
Եւ՝ ողջունելով կեանքի արշալոյս՝
Թո՛ղ եռանդալից ձեռնամուխ լինի

Իր աշխարհաշէն գործունէութեան....
Աբովեան. Օ՜, սըրտիս խորքից գոչում եմ ամէն։
Գարրօտ. Դուք Ասիայի բոլոր ազգերից
Ամենից առաջ երես դարձըրիք
Առասպելական ձեր հին կուռքերից,
Եւ, մինչդեռ ձեր շուրջ, դարերից ի վեր,
Տիրում էր խաւար հեթանոսական
Եւ գազանային բարբարոսութիւն,
Հետևեցիք նոր և ըսքանչելի
Վարդապետութեան
Եւ մըկըրտութիւն առաք փըրկարար
Աւազանի մէջ։—Նոյնպէս և այժըմ
Լուսաւորութեան ճառագայթները
Առաջին անգամ թո՛ղ այստեղ փայլեն
Եւ ապա լոյս տան դըրացիներին.
Թո՛ղ ծագի այստեղ նոր կեանքի արև,
Թո՛ղ ամենուրեք սըփռւի կըրթութիւն
Եւ կըրթութեան հետ տիեզերքի սէր
Եւ եղբայրութիւն... Այո՛, բարեկամ,
Ուրախ և անհոգ եղէք. կը լինի։ (Գնում է)։
Աբովեան. (Մնում է մենակ։ Յափշտակւած ու-սուցչապետի խոստումներով և ապագայի գեղեցիկ հեռանկարով, ծունկ է խոնարհում և ձեռքերը տա-րածում դէպի վեր)։
Տէ՛ր, իմ ապաւէն և հըզօր պաշտպան
Տո՛ւր միտումներիս ցանկալի վախճան։

ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Գիշերն եկաւ, զով-հովն ընկաւ,
Աստղունք լուսնին ձէն տուին.
Լուսնեակն ելաւ, մով-ծովն ընկաւ՝
Հաւքերն ինձի ձէն տուին։
Ես վեր ելայ ոգի առած՝
Զարկի սրտիս լարերին.
Սիրտս խնդաց, կուրծքս թնդաց.—
Եւ լարերը կտրուեցին...
—Մենակ սիրոյ լարը մնաց
Սրտիս անհուն խորքերում.
Ու վառ սիրոյ երգը շողաց
Կեանքիս ամեն ծալքերում...

ԻՄ ՓԵՐԻՆ

Կէս-գիշերին գետի ափին
Ես նստած եմ սիրավառ.
Գետն հոսում է—և հոսանքին
Ես նայում եմ միալար։
—Ո՞վ է աստղոտ, զով գիշերին
Քընած գետը վրդովում.
Ալիքները խըփում ժայռին.—
Ծերուկ ժայռը լըւանում։
Ո՞վ է աստղոտ, զով գիշերին
Լուսնի շողով զարդարւում.
Շուշան-կրծքին, սև մազերին
Գոհար-ցօղեր սըրսկում։
Ո՞վ է չըքնաղ բարի-լուսին
Ծաղիկները համբուրում.
Փրփուրի մէջ մըշուշային
Արշալոյսին ողջունում։
—Նա հեզ գետի լուռ փերին է,
Ցընորքներիս սիրելին։
—Նա իմ սրտի դիցուհին է,
Վառ երգերիս նազելին...
Եւ մինչև լոյս գետի ափին
Ես նստած եմ քարացած,
Գետն հոսում է—և հոսանքին
Ես նայում եմ շըւարած...

ՄԱՅՐԻԿԻՍ

Հայրենքից հեռացեր եմ,
Խեղճ պանդուխտ եմ, տուն չունեմ,
Ազիզ մօրէս բաժանուեր եմ,
Տըխուր-տըրտում, քուն չունեմ։
Սարէն կուգաք, նըխշուն հաւքեր,
Ա՜խ, իմ մօրըս տեսեր չէ՞ք.
Ծովէն կուգաք, մարմանդ հովեր,
Ախը՞ր բարև բերեր չէ՞ք։
Հաւք ու հովեր եկան կըշտիս,
Անձէն դիպան ու անցան.
Պապակ-սըրտիս, փափաք-սըրտիս
Անխօս դիպան ու անցան։

Ա՛խ, քու տեսքին, անշուշ լեզուին
Կարօտցեր եմ, մայրիկ ջան.
Երնէկ, երնէկ երազ լինիմ,
Թռանիմ մօտըդ, մայրիկ ջան։
Երբ քունըդ գայ, լուռ գիշերով,
Հոգիդ գըրկեմ, համբոյր տամ.
Սըրտիդ կըպնիմ վառ կարօտով
Լամ ու խընդամ, մայրկի՛կ ջան...

——

Բ Ի Ն Գ Ե Օ Լ

Շընկշընկալով հովն է փըչում
Զով Բինգեօլի լանջերից.
Գոչգոչալով ուղխն է վազում
Խոր Բինգեօլի ձորերից։
Հօրուտ-Մօրուտ ծաղկանց ծովում
Բուրում է բոյր ու երգեր.
Շուխիկ-Հիւրին լըճի ծոցում
Լողանում է անընկեր։
Հըրեշտակը երկրի կեանքից
Դիւթուած, ապշած լիուլի՝
Վայր է ընկնում աստղոտ երկնից—
Ընկնում գիրկը Բինգեօլի։
Փէրուզ-երկինքն հըրեշտակին
Կարեկցում է, ցաւակցում.—
—«Ա՛խ, ափսո՜ս քո անմահ կեանքին,
Որ չըր փայլեց դըրախտում...»
Բիւրեղ լըճից ցօղն է ելնում
Միածանի ծըպիտով.
Ծաղիկների ջինջ բողբոջում
Հանգ է առնում շողալով։

Զըմրուխտ- երկիրն հըրեշտակին
Ողջունում է փաղաքշում,
—«Ա՛խ, երնէկ քո մատաղ կեանքին,
Որ պիտ ծաղկի Բինգեօլում...»
Վառ անուրջում ուղխն է մընչում,
Ծըփում են սէզ ու արօտ,
Բըլբուլների հոյլքն է շընչում,
Շընչում է սէր ու կարօտ.
Անուշ-անո՜ւշ հո՜վն է փըչում,
Զով Բինգեօլի լանջերից,
Ոլո՜ր-մոլո՜ր ուղխն է փախչում
Խոր Բինգեօլի ձորերից...

——

Դարդըս լացէք, սարի սըմբուլ
Ալւան-ալւան ծաղիկներ.
Դարդըս լացէք, բաղի բըլբուլ,
Ամպշող երկնուց զով հովեր...
Երկինք-գետինք գըլխուս մըթնան,
Անտուն-անտէր կուլամ ես.
Եարիս տարա՜ն—ջանիս տարա՜ն,
Հոնգուր-հոնգուր կուլամ ես...
Ա՛խ, եարս ինձի հանեց սըրտէն,
Անճար թողեց ու գընաց.
Սըրտիս սուգէն-խորունկ եարէն
Անդեղ թողեց ու գընաց։
Դարդըս լացէք, սարի սըմբուլ,
Ալւան-ալւան ծաղիկներ,
Դարդըս լացէք, բարի բըլբուլ,
Ամպշող երկնուց զով-հովեր...

——

Սուրեցի, եարըս տարան.
Եարայ տըւին ու տարան,

—Էս ի՜նչ զուլում աշխարհ է,
Գողեցի՜ն սիրտս ու ապրանք։
Ցաւըս խորն է, ճար չը կայ։
Ճար կայ, ա՜խ, ճարող չը կայ։
—Էս ի՜նչ զուլում աշխարհ է,
Սրտացաւ ընկեր չը կայ։
Լա՜ւ օրերը գընացի՜ն,
Ափսո՜ս ասի՜ն, գընացի՜ն.
—Էս ի՜նչ զուլում աշխարհ է,
Սև դարդերը մընացի՜ն…

—

Մաճկալ ես, բեզարած ես,
Առը շուռ տո՛ւր, շո՛ւռ արի.
Ծովի պէս քրտընած ես,
Եզներն արձկի՛, տուն ա՛րի։
Կաթի սերը քաշեր եմ,
Դըրեր եմ հովի՜ն՝ սառի,
Ալ-գոգնոցս փըռեր եմ,
Արի՛ թաղլան, թը՜ռ, արի,
Տեղ եմ քցեր շըւաքում,
Բամի՜ն կուգայ, զով կանի.
Լուսնի շողքն է մեր ծոցում,
Զափ տո՛ւր, չափ ա՛ռ-շուռ ա՛րի։
Դադրած, բեզարած եա՜ր ջան.
Ամպերն ելան, դէ՜հ արի.
Բեզարած ջանիդ ղուրպան,
Ծոցիս թև առ, թէզ արի…

—

Սև-մութ ամպեր ճակտիդ դիզւան,
Դուման հա՛գար, Ալագեա՛զ,
Սրտումս արև էլ չի ծաղկում,
Սիրտս էլ դուման Ալագեա՛զ։

Ջառ փէշերըդ անցայ, տեսայ,
Առանց դարդի սիրտ չը կար.
Ե՜խ, իմ դարդս, ջա՛ն Ալագեազ,
Իմ դարդիս պէս հէչ չը կար…
—Է՜յ, Մանթաշի Նըշխուն հաւքե՛ր,
Իմ դարդս որ՝ ձերն եղնէր,
Ձեր էդ զառ—վառ, խաս-փետուրներ
Կը սևնայի՜ն, քանց գիշեր։
—Է՜յ, Մանթաշի մարմանդ հովե՛ր,
Իմ դարդս որ՝ ձերն եղնէր,
Ձեր ծաղկանուշ բուրմունքը նուշ
Թոյն ու տօթի կը փոխուէր։
Հէ՜յ վա՜խ… կոտրան իմ թևերս,
Ընկայ գիրկըդ, Ալագեա՛զ.
Ա՜խ, մեծ սըրտիդ սըղմեմ սիրտըս,
Լամ, արուն լամ Ալագեազ…

—

—«Որսկան աղբէր, սարէն կուգաս,
Սարի մարալ կը փնտռես.
Ասա՛, եարաբ դուն չը տեսար
Իմ մարալըս, իմ բալէս…
Դարդի ձեռքէն սարերն ընկաւ
Իմ արևս, իմ բալէս.
Գըլուխն առաւ քարերն ընկաւ
Իմ ծաղիկըս, իմ լալէս…
—«Տեսայ, քուրի՛կ, Նըշխուն բալէդ
Կարմիր-կանանչ է կապեր,
Սիրած եարի համբուրի տեղ
Սըրտին վարդեր են ծըլեր»։
—Որսկան աղբէր, ասա, եարաբ
Ո՞վ է հարսը իմ բալիս,

Ո՞վ է գրկում չոր գլուխը
Իմ մարալիս, իմ լալիս,
—Տեսայ, քուրիկ, դարդոտ բալէդ
Քարն է դըրեր բարձի տեղ.
Անուշ քնով տաք գընդակն է
Կըրծքում դըրկեր եարի տեղ։
Սարի մարմանդ հովն է շոյում
Ճակտի փունջը մարալիդ,
Ծաղիկներն են վրան սըգում,
Ազիզ բալիդ, խեղճ լալիդ»...

———

Շըղարշ-ամպերն երկինքն առան,
Լուսնեակն աղօտ կը շողայ.
Լըռիկ ճաճճում՝ հարհանդ-մարմանդ
Եղեգնը նուրբ՝ կը դողայ։
Արագիլը՝ մենակ ու լուռ,
Եղեգնի մօտ կը քայլէ,
Կը մըտորէ՝ խոր ու տխուր,—
Ճահիճն նուազ կը փայլէ։
Մըռայլ ափին մենակ նստած՝
Սիրտըս անուշ կը թախծի.
Ու անուրջում միտքս թաղուած՝
Քունն աչքերիս կը հանգչի...

———

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԶԱՆԳԸ

...Եւ ես ապատում, և անապատում
Լուռ թափառում եմ հոգիս ծանրացած,
Հոգիս մըտորուն, վըշտով տոգորուն։
Եւ յանկարծօրէն՝ պարզ ու աննըսեմ
Ես իսկ ըզգում եմ, ահա տեսնում եմ՝
Տիեզերքը ողջ—մի մեծ, անհուն զանգ

Եւ հոգիս—նըրա լեզուակը վըսեմ...
Եւ հրաշքներով, վեհ լըռութեան մէջ
Տիեզերքն անծիր՝ ղօղանջում է խոր
Երգն անհունութեան, և յաւէրժութեան,
Ե՛ւ ճըշմարտութեան, և գեղեցկութեան։
Եւ ղօղանջում է տիեզերքն ամէն.—
Եւ իմ հոգումս է, իմ Ոգին է այն,
Որ ղօղանջում է—ես մարգարէ եմ...
Եւ ահա այնտեղ՝ ամբոխն է ծըփում
Ծանըր ու թանձըր՝ ովկեանի նման.
Եւ գո՜րշ, հարթ է նա—զանգուած մի հսկայ.
Եւ հոգուս խորքից բարբառ եմ լսում—
Ղօղանջը զանգի տիեզերական.
Եւ դէպի ամբոխն իջնում եմ ահա
Նո՛ր՝ կտակներով, նոր պատգամներով.
Դէպ՝ նըրա հոգին գահավիժում եմ
Նըրան խայթելու, և քարոզելու,
Եւ արտասուելու, և այրըւելու...

Ց Ա Ն Կ

	էջ
Յառաջաբան	3—
Ալամդարեան	5— 8
Թաղիադեան	9— 27
Աբովեան	28— 76
Դորպատան ուս. երգերը	77— 82
Նազարեան	83— 96
Նալբանդեան	97—138
Պատկանեան	139—216
Շահազիզեան	217—228
Սունդուկեան	229—247
Րաֆֆի	248—303
Պռօշեան	304—320
Աղայեան	321—328
Յովհաննէսեան	329—337
Թումանեան	338—349
Ծատուրեան	350—351
Մանուէլեան	352—373
Իսահակեան	374—381

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

էջ.	տող	Տպւած է	Պէտք է լինի
3	8	այգ	այդ
9	4	Թանդում	Թանգում
80	11	գառն	դառն
133	9	տյս	այս
134	16	հրատակէիր	հրատարակէիր
140	11	սւսցուց	ուռցուց
141	5	կոհանկներըս	կոհակներըս
139	14	քաղագրախօս	քաղցրախօս
170	9	սւնումնական	ուսումնական
216	4	բնոյթագիրը	բնութագիրը
224	8	գրոյցնըր	գրոյցները
226	6	լռներ	լեռներ
304	2	——	Սօս և Վարդիթեր
321	18	ինքն է	ինքն էլ
345	21	սատտիկ	սաստիկ
345	29	կանդնած	կանգնած
346	24	աբդիւնքը	արդիւնքը
350	20	ըռնութնան	բռնութեան

Յառաջ
Ալամդար
Թաղիադ
Արովեան
Դորպատ
Նազարեա
Նալբանդ
Պատկանե
Շահազիզ
Սունդուկ
Րաֆֆի
Պռոշեան
Աղայեան
Յովհաննէ
Թումանե
Ծատուրե
Մանուէլե
Իսահակե

ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տիգրանուհի սպառուած . . .	—	50 կ.
Ջալաբիների արշաւանքը, սպառուած .	—	10 »
Խորտակուած կեանք, սպառուած .	1 ր.	—
Բանաստեղծութիւններ և պօէմաներ I սպառուած	—	50 »
Դօկտոր Բօշայեան	—	50 »
Նկարիչ Թաշճեան, սպառուած . .	—	35 »
Վերածնուածը սպառուած . .	—	35 »
Դէպի վեր, սպառուած . . .	—	10 »
Բանաստեղծութիւններ և պօէմաներ II	—	40 »
Ռուսահայ գրականութեան պատմութիւն I	—	40 »
Ռուսահայ գրականութեան պատմութիւն II	—	40 »
Ռուսահայ գրական. պատմութիւն III	—	50 »
Ռուսահայ գրականութեան պատ. IV	—	50 »

. Ժողովրդական դպրոցների մեթոդիկա, Ռուդէի գերմ. փոխ. Յ. Տէր. Միրաքեանի 1 50
. 29. Հայկական վայելչագրութիւն և գեղագրութիւն, Գ. Լեռնեանի, տետրակ Ա. 40 կ. տետր. Բ. 40 կ. և տետր Գ. . . — 40
. Ընդհանուր աշխարհագր. դաս. Արեղեանի — 70
. Սենեօբոս, Համառօտ պատմութիւն քաղաքակրթութեան ամենահին ժամանակներից մինչև մեր օրերը. Ֆրանս. թարգմ. Մ. Նուպարեան . . . . 1 —
. Հայոց եկեղեցական դպրոցների ուսումնական ծրագիրը. Ս. Տիգրանեանի . . — 40
. Կլէյն. Գործնական կաթնատնտեսութիւն 48 նկարով, թարգմ. Ա. Մխիթարեան — 50
. Բօկլ. Անգլիայի քաղաքակրթութեան պատմութիւնը, թարգմ. Վարդգէս Աղանեանց . — 75
. Լունկևիչ. Նախամարդու կեանքը, պատկերազարդ թարգմ. Յ. Թաղէոսեան . . — 25
. Ընդհ. աշխարհագրութեան դասագիրք. ընդհ. կան մաս, 85 նկարով, Լ. Բաբայեանի (յարմարեցրած է և ինքնուսուցման համար) . — 60
. Ախիլ Լօրիա. Սօցիօլօգիա. Pessimist. . — 60
3. Փոթորկից առաջ, Ա. Յովհաննիսեանի. . 1 —
. Գրաբարի հոլովումը և խոնարհումը Ստ. Մալխասեանի . . . — 25
. Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց 1 —
. Мысли стараго служаки, Шеварднадзе. — 25
2. Դասագիրք ընդհանուր պատմութեան Վինօգրադովի, միջին դար, թ. Գ. Խաժակ 1 —
3. Այվազեան Բ. Անիի կործանումը պատկեր. 1 —
4. Ժողովրդական թատրոն Արաքսեանի. Ժողովածու մասն Ա., բովանդակութիւն. 1. Թանգագին համբոյր. 2. Ցանկալին և անսպասելին. 3. Լուսանկարչութեան պատուհաս. 4. Բաբելօնեան խառնակութիւն. 5. Աւետիս աղայ. 6. Շփոթուած ծառայ . . 1 —
5 Ժողովրդական թատրոն. Արաքսեան. Ժողովածու մասն Բ., բովանդակութիւն. 1. Գող 2. Պաշտօնս է խամփալ. 3. Զօքանչի գալուստը. 4. Կրէչինսկի իւրկայով. 5. Սիրահարուած մայիօր. 6. Արեգն դէպք. . 1 —
6. Հանրյոց գրականութեան պատմութիւն Վ. Փա-

փաղեանի . . . . .
47. Երիտասարդութեան մեղքեր, Համմոնդի, թ. . 1 50
Արայ Արայեան . . . .
48. Շարլ Մ. Հիգրս. դրամա, թ. Վ. Փա- 1 —
փաղեանի . . . . . — 50
49. Դասագիրք ընդհ. պատմութեան, Վինօգրա-
դովի, Հին-դար, թ. Գ. Խաժակ . . 1 25
50. Հասարակական գաղափարները Ռ Պատկանեա-
նի և Ս. Շահազիզի բանաստեղծութիւնների
մէջ, Բ. Իշխանեանի . . . . 1 —
51. Կենսագրութիւն «Գուտտենբերգի» . . — 40
52. Հայերէն գրագիտութիւն ուսուցանելու բա-
նաւոր նախապատրաստութեան մասին ու-
սուցիչների համար Ղ. Աղայեանի . . — 10
53. Աղա-Նեգրի. Բանաստեղծութիւններ, թարգ.
Յ. Յակոբեանի երկու հատոր . — 50
54-55. Դասընկեր, Ռաշմաճեանի և Զիլինգարեանի
Ա. մաս. 40 կ. Բ. մաս. . . . — 50
56-57. Հայ գրողներ Ա. մաս, կազմ. Ահարոնեան,
Աղայեան, Թումանեան և Փափազեան 2 —
Բ. մաս. . . . . . 2 —
58. Պօլէնց, Գիւղացի Բիւտնէրը. թարգմ.
Ս. Թառայեանց 1 25
59. Բէն Հուր, թարգ. Տիրայր վարդ. . 1 —
60. Գ. Աւետեան. Թատրոնական գրադարան I 1 —
61. Տէրն ու բանուորը, Տօլստոյի, Խան-Ազատ 20
62. Հայոց Պատմութիւն, մասն. ա. Խանազատի
և Վարդանեանի . . . . — 50
63. Գ. Աւետեան Թատրոնական գրադարան . II 1 —
64 Л. Меликсетъ-Бековъ. Родство грузинъ съ
испанцами 25
65. Դասընկեր III տ. 60
66. Арм. древности въ Аккерманѣ. Л. Мел.-Бекъ — 25
67. Կարգ Աստուածպաշտութեան Գ. Աղանեանց
տ. ք. VII տպ. . . . . — 50
68. Л. Толстой. Живой трупъ . . . . — 25
69. Լ. Մանուէլեան. Ռուսահայ գրականութեան
պատմութիւն Գ. . . — 50
70. Լ. Մանուէլեան. Գրական նմուշներ . 1 —

Դիմել՝

Тифлисъ Книжный магазинъ „Гуттенбергъ“.

ԳԻՆՆ Է 1 Ր.

ՀՀ Ազգային գրադարան
NL0385071

64.451

891.99.09
Ն- 27